10264
F, A.

20(35)
Ջ-20
100
107-Ա.
1655-Ա.Հ

ՎԱՐՔ
ՆԱԽՆԻՈՒՄԱՏԱՍԻՐՈՒՅ
ՀԱՄԱՌՕՏԵԱԼ

Ի Հ. ՅԱԿՈԲՈՍԷ ՎԱՐԴԱՊԵՏԷ
ՃԷԼԱԼԵԱՆ
Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄՈՒԱԲԱՆԻՑ

Արդեամբք և ծախիւք
Պարոն Աղեքսանդրի Ռաֆայելի
Ղարամեան

Հ.Ս.Հ. ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆ
Հանրային գրադարան
Հանրային գրադարան
118817
1001

Ի ՎԵՆԵՏԻԿ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՍ
1826. Ի 1 ԱՊՐԻԼԻ

1φ

ԱՌ ԸՆԹԵՐՑՈՂՍ

Մտութիւն կենաց և վարուց ականաւոր արանց յիրաւի ամենեցուն ցանկալի վասն չքնաղ գեղոյ հանճարոյն որ 'ի նոսա երևեալ յիւրաքանչիւր կարգի։ Եւ վասն զի ըստ ամբառնալ 'ի ըղդալեաց և յիմանալիսն հպել առաւել է աղնուականութիւն հանճարոյ, ապա աղնուագոյն ևս յիմաստասէրսն է հանճար. և վարուց նոցա և ուսմանցն տեղեկութիւն յաւէտ ևս զուարճալի և շահաւէտ մտաց։ Նմին իրի զվեհան յիմաստասիրաց խորհեցաք 'ի տեսիլ ածել 'ի գիրս յայս 'ի զբօսանս ուսուցնասէր մերոյին համբակաց, առաջնորդ կալեալ զմեծին Ֆենելոնի գաղղիացւոյ զհամառօտութիւն վարուց իմաստասիրաց։

Այլ փութիւքեմք զի զուարճաբար և յուղղութիւն կենաց խրախուսեսցէ սա ընթերցողն՝ արտաքնոցն զգաստութեամբ։ Զի յորժամ զայնպիսի ուղղագործութիւնն նոցա տեսանի-

ցեն, զոր հասարակաց ևեթ մտօք ուղ-
ղեցին, առ որ և 'ի ճահ ելցէ արդեօք
զԱռաքելոյն առնուլ, թէ որ զօրէնսն
ոչ ունէին հեթանոսք՝ բնութեամբ զօ-
րինացն գործեցին, ամաչեսցեն թերևս
ոյք յետ շնորհացն 'ի նոցա առաքինու-
թենէն յետնեալ գտանիցին։ Իսկ զան-
ուզղայսն նոցա գործս ընդ ուղիղսն
պատմագրել, այն վասն ամբողջու-
թեան նկարագրին է. ուշիմ ընթերցո-
ղին թողեալ մեղուաբար 'ի գիրսս մատ-
չել, որք ոչ յանուշից միայն 'ի ծաղ-
կանց, այլ և 'ի դառինց զքաղցրութիւն
ծծեն զմեղու. սակայն և նորա շահ ան-
ձին առեալ 'ի պիտանեացն, և 'ի թիւ-
րոցն խրատ զգուշութեան, ընդ նմին
և զքեզ շնորհացն զօրութիւն ծանիցէ,
որ միայն կատարէ իմաստունս և առա-
քինիս, և առանց այնորիկ հարկ էր այ-
լոցն թերի լինել։

Արդ եթէ ինչ 'ի նկատելոց աստի օ-
գուտ գործեսցի, և մեք չհամարիցիմք
անավաստակ եղեալ։

Der König Guggler
Jammerruhe by grupen.

ՀԱՄԱՌՕՏ

ՎԱՐՔ

ԻՄԱՍՏԱՍԻՐԱՅ

ԹԱՂԷՍ

Ծնաւ յառաջնում ամի երեսներորդ հինգերորդ ողիմպիադին. մեռաւ 'ի յիսուն և ութ ողիմպիադին՝ 'ի հասակի լիննսուն և երկուց ամաց։

ԹԱՂԷՍ միլետացի կամ միլեսացի հայրենեաք 'ի Փիւնիկեայ, սերեալ 'ի Կադմոսէ յորդւոյն Ադենորայ։ Զայրացումն ծնողաց նորա ընդդէմ բրոնաւորացն՝ որք հարստահարէին զարս բարեկիրս, բռնադատեաց զնոսա լքանել զհայրենիս իւրեանց։ Գնացեալ բնակեցին 'ի Միլետոն քաղաք Յոնիայուր ծնաւ Թաղէս յառաջնում ամի երեսներորդ հինգերորդ ողիմպիադին. այն է՝ իբր 640 ամաք նախ քան զՔրիստոս։ Այլ սա եղև առաջին 'ի ստանալ զգ-

պանծալի անուն Խմասոնոյ. և եղև հե-
ղինակ փիլիսոփայութեանն, որ ընկա-
լաւ զյորջորջումն յոնիական՝ յանուա-
նէ հայրենեաց իւրոց։

Պարապեցաւ զժամանակ ինչ յա-
տենական գործառնութիւնս. և յետ
քաջանուն 'ի գլուխ հանելոյ զերևելի
երևելի աւադութիւնս, ցանկացեալ
խելամտել գաղտնեաց բնութեան, ե-
թող զկնճիռն գործոց հասարակաց։
Գնաց յԵգիպտոս՝ ուր յայնմ ժամա-
նակի ծաղկէին գիտութիւնք. անդ
ընդ ամս բազումս եկաց ընդ քուրմն՝
որք էին վարդապետք աշխարհին. մար-
զեցաւ 'ի գաղտնիս դենի նոցա, և յա-
ւէտ իմն փութով հետամուտ եղև
երկրաչափութեան և աստղաբաշխու-
թեան։ Ոչ եկաց երբէք առ ոտս վար-
ժապետի ուրուք, և բաց 'ի կենցա-
ղակցութենէն ընդ քրմաց Եգիպտոսի
'ի ճանապարհորդութեան անդ, ստա-
ցաւ և փորձով և խորին զննութեամբ
օգտակար ծանօթութիւնս՝ որոք ճո-
խացոյց զփիլիսոփայութիւնն։ Վիճա-
կեալ էր թաղէս վսեմական հոգւոյ.
սակաւս խօսէր, և բազումս խորհրդա-
ծէր. առ ոչինչ համարէր զանձին օ-
գուտ, և նախանձախնդիր էր հասա-
րակապետութեան։

Յորնաղ 'ի խօսելն յաղագս այնո-

ցիկ՝ որք համարէին թէ վրէժխնդրու-
թիւնն լցէ բարի ինչ առաւել ցան-
կալի քան զկեանս գլխովին. այդ խոր-
հուրդք, ասէ, հեռի է յոյժ 'ի խորհրդ-
դոց անտի Խրիւսիպպոսի և 'ի քաղց-
րութենէն Թաղեսի.

Թէ քէն վրիժուն լցէ բարի՝ և քան
զկեանս քաղցրատենչիկ,

Ոչ Խրիւսիպպոս զդոյն ասաց, ոչ
Թաղեսի ոգին հեզիկ։

Իբրև դարձաւ Թաղէս 'ի Միլետոն,
եկաց յառանձնութեան, պարապեալ
'ի զննութիւն ընթացից երկնից։ Առ-
սէր խնաստութեան ընտրեաց զհան-
դարտութիւն անամուսին կենաց՝ քան
զհոգս որք կցորդ են ամուսնութեան։
Եւ մինչ էր 'ի հասակի քսան և երից
ամաց, մայր նորա Կղէոբոլինա՝ յոր-
դորեաց զնա ընտրել զշահաւէտ իմն վի-
ճակ ամուսնութեան, որ առ ձեռն կայր
նմա։ Ասէ Թաղէս, մինչդեռ մանուկ
է ոք, չև է նմա ժամ ամուսնանալոյ.
մինչ ծեր է, անադան է ժամանակն.
և մարդ հասակաչափ՝ չունի ժամանակ
բաւական 'ի խորհիլ զընտրութենէ
հարսին։ Ասեն ոմանք թէ մօտ 'ի կա-
տարած կենաց իւրոց առ 'ի կնութիւն
զեգիպտուհի ոմն, որ յօրինեաց զբա-
զում գրաւոր գործս ընտրականս։

Յաւուր միում յանցանել ոմանց

օտարականաց միլետացւոց ընդ Կոմ կղզի, սակ արկին ընդ ձկնորսաց գնել 'ի նոցանէ զոր ինչ և որսացեն յառաջին ուռկանի անդ։ Եւ ահա ձգեցին եռոտանի մի ձոյլ ոսկի. զոր՝ որպէս աւանդի՝ ընկէց 'ի տեղի անդր Հեղինէ՝ մինչ դարձ առնէր 'ի Տրոյիոյ, ըստ խրատու ուրուսն պատգամախօսի։ Ծագեաց զառաջինն անդ տարաձայնութիւն մեծ 'ի մէջ ձկնորսացն և օտարականաց յաղագս այսր եռոտանւոյ. մինչև 'ի վէճ գրգռեցան և քաղաքք, և իւրաքանչիւր թեկն ածէին իւրեանցայոցն։ Եւ մինչ մերձ էր գրգռել պատերազմ, միաբանեցան յերկուց կողմանց՝ մնալ վճռոյ պատգամախօսին։ Առաքեցաւ ոք 'ի Դեղփոս հարցանել զՊիւթիա. որում ետ պատասխանի, զայս ոսկեղէն եռոտանի արժան է շընորհել առն իմաստնագունի։ Վասն որոյ առաքեցաւ նախ առ Թաղէս, որ յղեաց զայն առ Բիաս։ Սա առ չափաւորութեանն յղեաց վերստին առ այլ ոմն, և նա առ այլ միւս, որ և նա առաքեաց առ Սողոն։ Ասէ Սողոն, զի՞նք ոք ճշմարիտ իմաստուն, բայց միայն Աստ. և վասն այսորիկ ետտանել զեռոտանին 'ի Դեղփոս, և նուիրեաց Ապողոնի։

Յաւուր միում ոմանք յերիտասարդ-

դաց Միլետոնի յերեսս իսկ նախատէին զԹաղէս, թէ դիտութիւն քո յոյժ անարդասաւոր է, վասն զի 'ի կարօտութեան մնացեալ ես։ Կամեցաւ Թաղէս յայտ առնել նոցա, զի թէ իմաստունք ոչ հաւաքեն բազում ինչս, այն է լոկ սակս արհամարհելոյ նոցա զհարստութիւնս. և թէ դիւրին է նոցա շահել՝ զորս յոչինչ համարին։

Կանուխ զդացեալ, որպէս ասի, աստղաբաշխական դիտողութեամբք զարգասաւորութիւն տարւոյն, փութացաւ գնեաց յառաջ քան զկութս՝ զամենայն ձիթապտուղս ձիթաստանեաց որք էին շուրջ զՄիլետոնիս. և եղեն կութքն ամենառատ։ Ամբարեաց անտի Թաղէս արդիւնս յոլով. այլ զի չէր շահախնդիր, ժողովեաց զամենայն ըստ վաճառականս Միլետոնի, և յիւրոց շահուց բաշխեաց նոցա։

Սովորութիւն էր Թաղեսի շնորհս մատուցանել աստուածոց, նախ՝ զի ծնաւ բանական և ոչ անբան. երկրորդ՝ այր և ոչ կին. երրորդ՝ Յոյն և ոչ Բարբարոս։

Սոյն սա համարէր զաշխարհիս յօրինուած զոր տեսանեմք՝ յանսկիզբն և յանվախճան իմն հանճարոյ կազմեալ այսպէս։

Սա եղև առաջին 'ի Յոյնս, որ ուսոյց զանմահութիւն հոգւոյ։

Յաւուր միում այր ոմն եհարց, թէ կարօղ եմք ծածկել զգործս մեր յաստուածոց։ Եւ պատասխանի. նաև ներքին խորհուրդք մեր յայտնի են նոցա։

Ասէր հինաւուրց է ՝ուծ, վասն զի է անսկիզբն. և թէ յիրս աշխարհի առաւել մեծագոյնն է տեղին, վասն զի բովանդակէ զամենայն էակս։ Գեղեցիկ է աշխարհս յոյժ, զի ՝ոյ գործած է։ Հզօրագոյն է հարկն, զի նա յաջողէ հնարս յամենայնի։ Շարժնագոյն է հոգին, որ 'ի վայրկեան պահու յածի ընդ ամենայն տիեզերս։ Իմաստուն քան զամենայն է ժամանակն, զի յայտնէ զվիթին իրս. իսկ քաղցր քան զամենայն և յոյժ հաճոյական է՝ կատարել զյօժարութիւն կամացն։

Յաճախակի ասէր. խօսելն բազումն՝ չէ նշան հանճարոյ։ Օրէն է հաւատալ բարեկամաց և յանհաւատալիսն իսկ. այլ թշնամեաց՝ թէպէտ և զհաւատալիսն պատմեսցեն, չէ պարտ հաւատս ընծայել։ Զբարեկամ՝ եթէ մերձակայ և եթէ բացակայ, միօրինակ յիշեսցես։ Մի ելցէ ինչ բան 'ի բերանոյդ, որ զքեզ կասկածելի արասցէ յաչս մտերիմ սիրելւոյդ։ Յորժամ իրաւամբք յանդիմանես՝ օգտակար թըշ-

նամի լինիս. բայց թէ ստութեամբ դո-
վես, յայնժամ բարեկամ վնասակար
գտանիս։ Առ քոյինսդ լեր բարեհամ-
բոյր։ Եթէ իշխան ես, անձամբ զանձն
քո ուղղեա։ Խօսելի են հաւանա-
կանքն, այլ լռելի անհաւատալիքն։
Զոր հանդերձեալ ես առնել, զգոյշ
լեր ասել։ Դժուարին է՝ այլ բարի՝
ճանաչել զանձն. զի այս է ըստ բնու-
թեան օրինի քաղաքավարիլ։ Առ ծնօղս
լեր ողոք և ամոք բարուք։ Որպէս վա-
րիս դու առ ծնօղսդ, զդոյն ամենայնիւ
ակնկալ լիր ընդունել յորդւոց քոց՝
յորժամ ծերասցիս։ Յամենայնի վնա-
սակար է անբարեխառնութիւնն. պա-
հեա՛ զեղանակ։ Մի՛ լինիր դատարկ-
անձն, թէ և լի իցես մեծութեամբ։
Պարտ է դարման տանել ծնողացն,
առ 'ի լինել արժանի դարման գտանե-
լոյ յորդւոցն։ Զիք ինչ անհաճոյ քան
տեսանել զբռնաւոր ծերացեալ։ Որ
մխիթարէ զմեզ 'ի վիշտս մեր՝ այն է,
տեսանել զտանջողս մեր թշուառա-
ցեալս իբրև զմեզ։ Զէ պարտ գործել
զայն, զորս յայլս պախարակեմք։ Ճըշ-
մարիտ երջանկութիւնն սահմանի 'ի
վայելս կատարեալ առողջութեան.
ունել զչափաւոր նպաստս, և ոչ ան-
ցուցանել զաւուրս իւր 'ի մեղկու-
թեան և 'ի տգիտութեան։

Հարցին ցնա, զինչ է՝ որ առաւել քաղցր է 'ի ստանալ. ասէ, այն է՝ որ ոչ ոք ցանկայ մարդ։ Հարցին և զ. զիարդ կարէ մարդ արդարապէս կեալ. ասէ՝ թէ առնէ զայն, զոր հրամայէ այլոց։ Նա է երջանիկ յայսմ աշխարհի, որ առողջ է մարմնով և լի հոգւով, և 'ի ընէ յաջողակ 'ի վերանորոգել։ Մի դիմաք, այլ մտաք ջանա լինել մաքուր և գեղեցիկ։ Ծածկեա՛ զառտնին ջարիս։ Մի ամենայնի հաւատար։ 'Ի կամիլդ գործել զչար, յանձնէ երկիր առանց վկայի։ Մի լինիր հարուստ տարօրինակ՝ 'ի հարստացուցանել զորդիս։

Թուէր Թաղեսի՝ թէ ջիք ինչ այնպէս դժուարին, որպէս ճանաչել զանձնիւր։ Եւ վասն այսորիկ հանձարեաց զայն գեղեցիկ առած, որ յետոյ փորագրեցաւ 'ի վերայ ոսկեղէն տախտակի, և ընծայեցաւ 'ի տաճարին Ապողոնի. Ծանի՛ր զ՚ԷԿ։

Ոչինչ խստիր դնէր ընդ կեանս և ընդ մահ. և յասել ոմանց ցնա, թէ ընդէ՞ր ոչ սպանանես զքեզ. ետ պատասխանի, վասն զի կեանք և մահ համահանդէտ գոլով, ոչ մի ինչ ստիպէ զիս ընտրել զմին քան զմիւսն։

Զբօսանէր երբեմն երբեմն յօրինել զոտանաւորս։ Սմա ընծայեն զգիւտ վեցոտնեան ոտանաւորաց։

Այր ոմն ամբաստանեալ իրաւամբք յաղագս շնութեան, եկն յաւուր մի-ում հարցանել նմա, եթէ օրէն ի՞նչ արդարացուցանել զանձն երդմամբ։ Պատասխանի ետ Թաղէս այպն առ-նելով զնովաւ. մի՞թէ ստերդմնութիւնն ի՞նչ յանցումն թեթևագոյն՝ քան ըղ-շնութիւն։

Մանտրեթէս պրիենեցի՝ որ էր ա-շակերտ իւր, եկն 'ի Միլետոն յայց նմա. և ասէ ցԹաղէս, զինչ տրիտուր կամիս՝ զի տաց քեզ ո՞վ Թաղէս, 'ի ցու-ցանել քեզ զիմ երախտապարտու-թիւն յաղագս ամենայն պիտանի ուս-մանց առանդելոց 'ի քէն առ իս։ Ասէ Թաղէս. եթէ դիպեսցի քեզ մարդել զայլս, տո՛ւր իմանալ նոցա թէ ես եմ վարժապետ այդր վարդապետութեան։ Այս լիցի քեզ չափաւորութիւն գովե-լի, և ինձ տրիտուր մեծագին։

Թաղէս եղև առաջին 'ի Յոյնս՝ որ պարապեցաւ 'ի բնախօսութիւն և յաստղաբաշխութիւն։ Համարէր թէ ջուրն է առաջին սկիզբն ամենայն ի-րաց. թէ ոչ այլ ինչ է հող, այլ ջուր խտացեալ. օդն՝ ջուր անօսրացեալ. թէ ամենայն իրք անդուլ փոփոխին 'ի մի-մեանս, բայց 'ի վերջին վերլուծու-թեանն ամենայն ինչ 'ի ջուր լուծա-նի. և թէ տիեզերս է հոգևորեալ և

լցեալ աներևոյթ էակօք, որք յար 'ի շարժման են։ Երկիրս է 'ի միջոց տիեզերաց, և շարժի շուրջ զեւրով կենդրոնաւ. զորև ասէր լինել կենդրոն տիեզերաց։ Դնէր՝ թէ ջուրք ծովուն յորոց վերայ հաստատեալ է երկիր, դրդուեցուցանեն զնա, և այն է պատճառ շարժման իւրոյ։

Զարմանալի գործք մադնիտի և սաթի, և համակրութիւնն 'ի նոյնաբուն իրս, կարծիս ընդ միտ արկին նորա՝ թէ ամենայն ինչ հոգևորեալ է։

Համարէր՝ թէ պատճառ յորդութեան գետոյն Նեղոսի են կանոնաւորեալ հողմք, որք 'ի շնչելն 'ի հիւսիսոյ 'ի հարաւ յամեցուցանեն զջուրս գետոյն, որ հոսէ 'ի հարաւոյ դէպ 'ի հիւսիս. և բուռն առնեն զեղուլ յանդաստանս։

Սոյն սա եղև առաջին՝ նախագտող խաւարման արեգական և լուսնի. և զննեաց զբաղմօրինակ շարժմունս երկուց լուսաւորացս։ Համարէր թէ արեգակն է մարմին ինքնալոյս, որոյ մեծութիւնն ի՝ցէ հարիւր և քսանիցս աւելի քան զլուսնոյ։ Եւ թէ լուսինն է մարմին անթափանց՝ որ ցոլացուցանէ զլոյս արեգական, միայն կիսով մասամբ մակերևութի իւրոյ. և ըստ այսմ կարծեաց մեկնէր զանազան կերպա-

բանան, ընդ որովք լուսինն երևի մեզ։

Սա հետաքննեաց նախ՝ զսկզբունս հողմոց, զնիւթս կայծականց, զպատճառս փայլատակմանց և որոտմանց։

Ոչ ոք յառաջ քան զսա գիտաց զեղանակ չափելոյ զբարձրութիւն աշտարակաց և բրգանց միջօրեայ ստուերաւ իւրեանց, մինչ արեգակն ելեալ 'ի զուգօրութեան։

Հաստատեաց զտարին յաւուրս երեքհարիւր վաթսուն և հինգ։ Սահմանեաց զկարգ եղանակաց տարւոյ. և բաշխեաց զիւրաքանչիւր ամիս յերեսուն օր. յետ երկոտասան ամսոց՝ յաւելոյր և զհինգ աւուրս 'ի ընուլ զընթացս տարւոյն։ Զայս կարդ էառ յեգիպտացւոց։

Սա ետ ճանաչել զԱրջն փոքր, որով փիւնիկեցիք վարէին յիւրեանց նաւագնացութեանն։

Յաւուր միում եղեալ սորա 'ի բնակութենէ իւրմէ 'ի զննել զաստեղս, անկաւ յանդգոյշս 'ի խորխորատ մի։ Կին մի պառաւ աղախին տան իւրոյ՝ առժամայն ընթացաւ առ նա, և հանեալ զնա անտի, ասէ ընդ կատակս. զի՞արդ, ո՛վ թագէս՝ կամիս գիտել զայն որ 'ի բարձունս է. և ո՛չ տեսանես և զոր առ ոտս կան։

Յամենայնի մեծարգի համարեալ էր Թաղէս, և խորհուրդ հարցանէին նմա 'ի ծանր ծանր գործառնութիւնս։ Կրեսոս ձեռնարկեալ 'ի պատերազմ ընդդէմ Պարսից, յառաջ խաղայր հզօր բանակաւ մինչև յեզր Ալիս գետոյ. բայց դժուարին եղև նմա անցանել ընդ այն։ Ոչ կային նմա ոչ կամուրջք, և ոչ նաւակք. և գետն խակ չէր ծանծաղ։ Թաղէս 'ի նմին ժամու ընդառաջ դիպաւ նմա յարտորէս իւր, վստահացոյց զնա գտանել հնարս անցուցանելոյ զզօրս նորա ընդ այն գետառանց կամրջի և նաւակի։ Անդէն վաղվաղակի ետ հատանել խրամ խոր 'ի ձև կիսալուսնոյ, որ սկսանէր 'ի միոյ ծայրէ անդաստանին և յանկէր 'ի միւսն։ Սովին հնարիւք գետն բաժանեցաւ յերկուս առաջս, երկաքանչիւրն ծանծաղ. և ամենայն բանակն էանց առանց ինչ դժուարութեան։ Ոչ թողացոյց Թաղէս թէ յայսմ 'ի սոյն ձեռնարկ միլետացիք դաշնաւորեսցին ընդ Կրեսոսի, որում նա 'ի խնդիր էր ժտելով։ Այս հանճարեղ խորհուրդ նորա եղև պատճառ պահպանութեան հայրենեաց իւրոց. վասն զի Կիւրոս՝ յաղթականն լիւդացւոց, յաւարի էառ զամենայն քաղաքս՝ որք մտեալ էին 'ի դաշնաւորութիւն ընդ լիւդա-

ցիս, և խնայեաց 'ի միլետացիս, որք ոչ զինեցան ընդդէմ նմա։

Մինչդեռ 'ի յետին ծերութիւն հասեալ էր Թաղէս, յաւուր միում տարան զնա 'ի հովանոց մի՝ կալ անդ 'ի զնին արդնընկէց խաղուց 'ի թէատրոնի։ Սաստիկ ջերմութիւնն ներգործեաց 'ի նմա բօւռն այլայլութիւն, մինչև մեռաւ յանկարծակի 'ի տեղւոջ անդ՝ ուստի հայէր 'ի մրցմունսն։ Այս եղև 'ի 58 ոլիմպիադի, և 'ի 92 ամի կենաց իւրոց։ Մեծաշուք կատարեցին միլետիացիք զհանդէս յուղարկաւորութեան նորա։

1881
Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.С.Р. Публичная Библиотека
7/XI 1922
Именная, Масна и на
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՍՈՂՈՆ

Ծնաւ յերրորդ ամի երեսներորդ հինգերորդ ոլիմպիադին. կարգեցաւ իշխան յԱթէնս յերրորդ ամի քառասներորդ հինգերորդ ոլիմպիադին. մեռաւ 'ի սկզբան յիսներորդ հինգերորդ ոլիմպիադին, 'ի հասակի 78 ամաց։

Սողոն հայրենեաց աթենացի, ծնաւ 'ի Սաղամինա 'ի 35 ոլիմպիադին։ Հայր նորա Էքսեկեստիդէս էր 'ի զարմէ Կոդրոսի արքայի, և մայր նորա յազգականութենէ տանն Պիսիստրատեայ։ Զամն բազումն յերիտասարդութեան իւրում պանդխտեցաւ յԵգիպտոս, որ զայնու ժամանակաւ ժողովարան էր համբաւոյ իմաստասիրաց։ Վարժեալ նորա անդ 'ի հրահանգս կարգաց պետութեան, և 'ի զննութիւն օրինաց և սովորութեանց աշխարհին, դարձ արար յԱթէնս, յորում բազմարդիւն վաստակ նորա և ազնուականութիւն ամբարձին զնա 'ի մեծապատիւ բարձ աւագութեան։

Այր ղգօն էր Սողոն, քաջասիրտ,

անյողդողդ և աննենգ։ Պերճախօս ա-
տենաբան էր, բանաստեղծ, օրէնսգէտ
և հմուտ 'ի գործ պատերազմի։ Յամե-
նայնի նախանձախնդիր եղև ազատու-
թեան հայրենեացն, ոխերիմ թշնամի
բռնաւորաց, և ոչինչ ջանացեալ 'ի մե-
ծութիւն ազգատոհմի իւրոյ։ Ոչ ու-
մեք երբէք եկաց յաշակերտութեան՝
ըստ օրինակի Թաղեսի։ Զանց արար
զհետաքրքրութեամբ պատճառաց բը-
նութեան, առ 'ի տալ զանձն բուսան-
դակ 'ի բարոյական և 'ի քաղաքակա-
նութիւն։ Նորա համարի հռչակա-
ւոր այն առած. Պարտ է յամենայնի ղէտ
ոնել։

Մինչդեռ էր զժամանակ ինչ 'ի Մի-
լետոն՝ ուր ձգեալ էր զնա համբաւ
Թաղեսի, յետ ընդ աւուրս ինչ կենցա-
ղակից լինելոյ ընդ այնմ իմաստասիրի,
ասէ ցնա. աքանչանամ, ո՛վ Թաղէս՝ զի
ընաւ չէ՛ յօժարեալ քո յամուսնու-
թիւն. քանզի լինէին քեզ որդիք, զորս
ախորժ հաճութեամբ դաստիարա-
կէիր։ Ոչինչ պատասխանի ետ նմա
Թաղէս առժամն։ Յետ քանի ինչ ա-
ւուրց՝ երևեցոյց զայր ոմն իբրու տար-
աշխարհիկ ոք այր՝ եկեալ առ նոսա
յայցելութիւն. որ և ասաց թէ այն
ինչ հասանէ ՅԱԹԵՆԱՅ։ Քա՛ջ է, ա-
սաց Սողոն. և զի՞նչ անտի արժանի

լսելոյ։ Ոչինչ գիտեմ՝ ասէ այրն օտա-
բական. բայց միայն յուղարկաւորէին
'ի թաղումն պատանի զոմն աթենացի,
զորոյ զհետ գնայր ամենայն քաղաքն
'ի յուղարկաւորութիւն, վասն ազ-
նուականութեանն և մեծապատիւ շը-
քոյ հօր նորա՝ զոր ունէր 'ի ժողովրդե-
նէն. և այդ այր, յաւել ասել օտարա-
կանն, 'ի ժամանակաց հետէ 'ի բա-
ցեայ կայ յԱթենայ. բարեկամք նորա
խորհուրդ 'ի մէջ առին զգուշութեամբ
վարել 'ի զգացուցանել նմա զերսն, զի
մի՛ մորմոք սրտին մահու զրաւեսցէ զնա։
Աւաղ հօրն տարաբաղդի՝ գոչեաց Սո-
ղոն. և զինչ անուն է նորա։ Լուայ ես
զանուն առնն՝ պատասխանի եւ այրն.
այլ այժմ ո՛չ ևս յիշեմ զնա. զայս գի-
տեմ զի ասէին ամենեքեան թէ այր ի-
մաստուն էր։ Սողոն որ ժամ 'ի ժամէ
յուղեալ տատանէր 'ի խորհուրդս,
խռովեցաւ, և ո՛չ ևս ժուժեալ եհարց,
մի արդեօք Սողոն ելցէ։ Ասէ այրն շու-
թափելով. այո՛ նա ինքն է։ Դղրդե-
ցաւ Սողոն 'ի բուռն և 'ի հրատապ
շարժութենէ անտի, մինչ զպատմու-
ճանն պատառել, զվարսան փետել, և
ծեծել զգլուխն. և ոչինչ եթող յայնմ
ամենայնէ զոր սովոր են առնել ընկ-
ճեալքն 'ի ցաւոց։ Ասէ ցնա թա-
ղէս. զո՞ կոծես, և այդչափ տագնա-

պեալ ես վասն մահու մանկանդ, ո-
բում չկարեն դարման տանել համ-
բէն արտասուք աշխարհի։ Վա՜հ. այդ
իսկ է՝ ասէ Սողոն, որ ինձ կոծել տայ.
կոծեմ զաղէտսն անդարմանելի։ Յե-
տոյ ուրեմն ծիծաղեցաւ Թաղէս 'ի վե-
րայ այլ ընդ այլոյ արարիցն Սողոնի, և
ասէ ցնա. ո՛վ Սողոն, բարեկա՛մ իմ,
ահա այդ է՝ որ խիթալի արար ինձ զա-
մուսնութիւն. երկիւղ ունէր զիս 'ի
լծոյ նորա. և խելամուտ եմ 'ի ցաւոց
խնաստնագունին 'ի մարդկանէ՝ թէ
սիրտ անդրդուելի չկարէ ժոյժ ունել
դառնութեանն որ 'ի հոգոց և 'ի խնա-
մոց զաւակաց։ Մի՛ և ես վշտագներ
զանձն քո, զի որ ինչ ասացաւ աստէն՝
հաճոյական իմն հնարագիտութիւն է։

Ընդ ժամանակս բաղումս մղէր
մարտ անադորուն ընդ մէջ աթենա-
ցւոց և մեգարացւոց 'ի սակս Սաղամի-
նայ կղզւոյն։ Յետ բաղում կոտորա-
ծոց յերկոցունց կողմանց, աթենա-
ցիք որոց առաւելագոյն էր զեան, և
պարտաւորեալք էին 'ի բաղում կոտո-
րածոյ, մահու պատուհաս սահմանե-
ցին ընդդէմ առն՝ որ իշխեսցէ յիշա-
տակ առնել նորոյ պատերազմի 'ի վե-
րայ Սաղամինայ, զոր յայնժամ ու-
նէին մեգարացիք։ Երկեաւ Սողոն թէ
մի՛ գուցէ այդ զրոյց 'ի վատութիւն

իւր կրթեսցի, կամ թէ 'ի լռելն իւ-
րում՝ զեան բերցէ հայրենեաց լռու-
թիւն իւր, խորհեցաւ նա՝ խելացնոր
երևեցուցանել զանձն, զի ընդ սովին
պատրուակաւ՝ շնորհեսցի նմա առնել
անպատուհաս՝ զոր ինչ կարևոր դա-
տեսցէ։ Վասն որոյ ետ զհամբաւի հար-
կանել 'ի քաղաքին թէ թափեալ է 'ի
մտաց։ Յօրինեալ նորա եղերերգու-
թիւնս իմն, և զայն 'ի բերան առեալ,
ել 'ի դուրս 'ի տանէ իւրմէ, հանդերձ
պատառատուն արկեալ զիւրև, տոռն
'ի պարանոցի, և խոյր 'ի գլուխս հին և
աղտեղի. և համօրէն ժողովուրդն կու-
տեցան 'ի վերայ նորա։ Ելեալ Սողոնի
'ի վերայ վիմին բարձու, որ էր բեմ
հրապարակախօսութեան, արտասա-
նեաց զոտանաւորսն նուագելով ասէ.
Լցէ՛ թէ հաճեսցին դիք՝ զի մի՛ ևս ինձ
հայրենիք գրեսցի Աթէնք. երանի՛ թէ
ծնեալ էր իմ 'ի Փոլեգանդա կամ 'ի
Սիկինա, կամ յայլում դժնդակագոյն
և 'ի խուժադուժ վայրի, զի գէթ ո՛չ
ևս մորմոքէի՝ տեսեալ զի մատամբ ցու-
ցանեն զիս և ասեն, ահա՛ այր աթե-
նացի ամօթապարտութեամբ փախու-
ցեալ 'ի Սաղամինայ։ Վրէժ խնդրես-
ցուք անյապաղ զնախատանացն զոր 'ի
մեզն ընկալաք, և գրաւեսցուք դար-
ձեալ զզուարճութեան կայանսն, զոր

յանիրաւի կորզեցին 'ի մէնջ թշնամիք։ Այս բանք այնպէս իմն աղդողագոյն գտան 'ի սիրտս աթենացւոց, զի անդէն վաղվաղակի զառաջին պատուէրսն ապախտ արարեալ, վառեցան զինու, և 'ի մարտ պատրաստեցան ընդդէմ մեդարացւոց։ Սողոն՝ առաջնորդ կարդեցաւ զօրուն. եմոյծ զզօրս իւր 'ի յոլով նաւակս ձկնորսաց։ Զհետ գայր զնորա, ցռկանաւ երեսուն և վեց թիակք. այսպէս գնացեալ խարիսխ արկառ Սաղամինաւ։ Մեդարացիք որք 'ի քաղաքին էին, զգաստ եղեալ իրացն, տագնապաւ 'ի զէնս ընթացան։ Զատուցին զմի նաւուց իւրեանց՝ և յղեցին իմանալ զոր ինչ էրն։ Այն նաւ քանզի կարի իմն մերձեցաւ, անկաւ 'ի ձեռս Սողոնի, որ անդէն վաղվաղակի 'ի կալանս արկեալ զամենայն մեդարացիս որ 'ի նմին էին, եմոյծ 'ի նաւ նոցա զընտիր ընտիրս յաթենացւոց, և հրամայեաց նոցա՝ դէպ ուղիղ գնալ 'ի Սաղամինա՝ կալով 'ի թագըստի՝ որչափ մարթ լցէ։ Առ Սողոն ընդ իւր զմնացորդս զօրուն, և եղ 'ի ցամաք ընդ այլ կողմն. գնաց ընդառաջ մեդարացւոց ուր բանակեալ էին. և մինչդեռ 'ի կռուի էին, նոքա՝ զորս յառաջն յղեալ էր նաւու, հասին և կալան զքաղաքն։ Յետ վատթարելոյ

Սողոնի զմեդարացիս, եթող յաղա-
ղութիւն առանց փրկանաց զդերիսն
զըմբռնեալս 'ի պահու մարտին. և կանդ-
նեաց մեհեան 'ի պաշտօն դիցն Արե-
սի 'ի տեղւոջն յորում 'ի գլուխ տա-
րաւ զյաղթութիւնն։ Զկնի ժամա-
նակաց ինչ 'ի զուր ջանահնար եղեն
մեդարացիք՝ դարձեալ ընդ ձեռամբ
գրաւել զՍաղամինա, մինչև հուսկ ու-
րեմն միաբանեցին կողմանքն երկոքին՝
իրաւարարս կարգել դատին զլակեդե-
մոնացիս։ Յայտ յանդիման կացոյց Սո-
ղոն առաջի հրեշտակացն Սպարտիոյ՝
թէ Փիլէոս և Եւրիփակէս որդիք
Այաքսայ արքայի Սաղամինայ եկեալ
բնակեցին յԱթէնս, և թէ նոքա ետուն
աթենացւոց զայդ կղզի՝ պայմանաւ
գրելոյ ընդ քաղաքակիցս աթենացւոց։
Ետ բանալ զբաղում շիրիմս, և եցոյց
թէ սաղամինացիք դարձուցանէին զե-
ղեսս մեռելոց իւրեանց ընդ այն կողմն՝
յոր և աթենացիք. իսկ մեդարացիք
դարձուցանէին ընդ հակառակն կոյս.
և ևս՝ զի դրոշմէին 'ի դագաղսն զանուն
աղգատոհմի մեռելոյն. որ սեփական
էր աթենացւոց ևեթ։ Սակայն մեդա-
րացիք ոչ յետ բազում ժամանակաց
խնդրեցին զվրէժն. քանզի տարաձայ-
նութիւնք որ 'ի վաղուց բռնացեալ զօ-
ղացեալ էին՝ ընդ մէջ տանն Կիլոնի և

Մեդակլեայ՝ աճեցին յոյժ յոյժ, մինչև կորուսանել և զքաղաքն ողջոյն։ Կանխաւ այս խորհուրդք էին Կիլոնի՝ տիրել Աթենայ. յայտնեցաւ դաւն. սպանաւ հանդերձ գործակցօք իւրովք. և որք միանգամ ապրեցանն՝ ապաստան եղեն 'ի մեհեանն Աթենասայ։ Մեդակլ՝ որ էր 'ի ժամուն իշխան, համոզեաց զնոսա բանիւք իւրովք՝ գալ յանդիման լինել 'ի դատաստանի, ունելով թել 'ի ձեռին՝ պնդեալ զծայրէն յարձան չաստուածուհւոյն, զի մի 'ի դերև լիցի յոյս ազատութեան իւրեանց։ Իբրև իջանէին նոքա 'ի մեհենէն, խղեցաւ լարն. ասէ Մեդակլ, դոյն այդ յայտնի նշանակ է մերժելոյ զձեզ աստուածուհւոյն 'ի հովանաւորութենէ իւրմէ. և կալաւ զյոդունս 'ի նոցանէ, որք անդէն առ նմին քարկոծմամբ սպանան 'ի ժողովրդենէն. իսկ որք անկան 'ի սեղանս դից՝ ամենեքին գոդցեա կոտորեցան, առանց ինչ 'ի տեղւոյն ակնածելոյ. բաց յոմանց սակաւուց վասն որոց միջնորդ գտան կանայք իշխանացն, և թողին յազատութեան։

Այդ խժդժական գործ ատելի երևեցոյց զաւագանին և զորդիս նոցա, որք յետ աղետիցդ գարշեցեալ էին 'ի ժողովրդենէն։ Յետ ամաց բաղմաց սե-

բունդք Կիլոնի զօրացան յոյժ յոյժ, և ատելութիւնն տարրացեալ ընդ մէջ կողմանցն երկոցուն՝ աւուրց յաւուրս վառեալ բորբոքէր։ Սողոն՝ որ իշխան էր նոցա, խիթացեալ թէ մի արդեօք երկփեղկել նոցա՝ աւերածս ածցէ քաղաքին համօրէն, հաւանեցոյց երկաքանչիւր կողմանց անսալ խորհրդոց դատարարի՝ զի յանկ ելցէ տարաձայնութիւն նոցա. դատարարքն վճռեցին 'ի նպաստ Կիլոնեանց։ Տարագրեցան ամենայն սերունդք Մեկադլեայ, և ոսկերք մեռելոց նոցա հանան 'ի գերեզմանացն, և ընկեցան արտաքոյ սահմանացն Աթենայ։ Մեղարացիք դէպ ժամանակ յաջողութեան դտեալ զայդ, մինչդեռ նոքա զաղմկաւ էին, զինու վառեալ տիրեցին Սաղամինայ։

Այն ինչ լռեալ էր խռովութիւնն՝ ահաւասիկ այլ խուժեաց 'ի վերայ, որոյ չարիք ոչ ինչ նուազ էին քան զառաջնոյն։ Ընդ ծանր պարտեօք հեծէին աղքատք, զորս պարտատերքն նոցա աւուր աւուր 'ի դատ վարեալ իբրև ընդ գերիս՝ աշխատել տային նոցա, կամ վաճառէին զնոսա ըստ հաճոյից իւրեանց։ Կուտեցան բազումք յամբոխէն՝ եղեալք 'ի մտի ընտրել զոք գլուխ, որ խափան արկցէ՝ զի մի ոք յայնմ հետէ 'ի ստրկութիւն դրաւեսցի վասն ոչ

հատուցանելոյ զպարտսն 'ի ժամանակեալ աւուրն. ևս և բռնադատել զաւագանին բաշխել յամենեսին հաւասարութեամբ զամենայն ստացուածս, զորօրինակ արարեալ էր Լիկուրգոսի 'ի Սպարտա։ Ամբոխն և խռովութիւն զայրացեալ էր յոյժ, մինչև անհնար լինել՝ գտանել ելի աղագս 'ի խաղաղել զնոսա։ Երկուստեք հաւանութեամբ ընտրեցաւ Սողոն՝ օրինօք սիրոյ 'ի գլուխ հանել զայն. հրաժարեաց դառաջինն 'ի խիստ գործոյ անտի. միայն իղձ սպաս հարկանելոյ հայրենեացն յօժարեցոյց զնա. ամենեցուն լուեալ էր յառաջագոյն 'ի նմանէ՝ ասել թէ հաւասարութիւն տարադիր առնէ զամենայն հակառակութիւնս. և ամենայն մարդ յանձն իւր հանէր զթարգմանութիւն բանիդ. կարծէին աղքատք թէ կամք իցեն նմա հաւասարել զամենայն մարդիկ. և ճոխք ընդհակառակն՝ համարէին թէ բաշխել կամիցի ըստ իւրաքանչիւր ազնուականութեան և պատուոյ։ Այս զնա սիրելի կացոյց երկաքանչիւր կողման, որք և յօժարեցուցանէին զնա ընդունել զաւագութեան զբարձն։ Իսկ որք անմասն էին 'ի հերձեաց աստի՝ ոչինչ այլ լաւագոյն դարման գտանելով յանդորրութիւն իրացն, մտադիր սի-

րով յանձին կալան ընդունել իբրև Տէր զայրն՝ որ համարեալն էր իմաստուն քան զամենայն մարդիկ։ Բացէ 'ի լաց հրաժարեաց Սողոն, վկայութիւն եդեալ՝ բնաւ ոչ անսալ այնմ. մինչև ստգտանել զնա և մտերիմ բարեկամաց նորա։ Այր պարզամիտ ես ասէին ցնա, որ պատճառանօք անուան բռնաւորի՝ խորշիս 'ի միահեծան տէրութենէ, որ յապագայ ժամանակս յիրաւունս համարեսցի քեզ. ոչ ապաքէն և Տիմոնդաս անուանեցաւ երբեմն թագաւոր Եւբէայ։ Ո՛չ և այժմուս թագաւորէ Պիտտակոս 'ի Միտիլենէ։ Ո՛չ խոնարհեցաւ Սողոն առ այս ամենայն բանս։ Յիրաւի, ասէ, օրինաւոր իշխանութիւն և բռնաւորութիւն՝ աւադութիւնք են վերամբարձք, սակայն և շուրջ պատեալ են 'ի վախից, և չէ ուստեք ճանապարհ անտի 'ի դուրս ելանել՝ յետ միանգամ անդր մտանելոյ։ Անհնարին եղև հաճեցուցանել զնա՝ յանձն առնուլ զօդտակար զայն ընտրութիւն. վասն որոյ և բարեկամք նորա իբրև մոլեալ համարէին զնա։ Զեռն էարկ Սողոն կամակար մտօք խաղաղել զխռովութիւնն զյարուցեալս յԱթէնս. հրաման եառ խափանել զամենայն զհին պարտիս, և զի մի ումեք իրաւունք ինչ իցեն 'ի

վերայ պարտապանաց իւրոց. և վասն տալոյ օրինակ հասարակաց՝ հրաժարեաց յեօթն տաղանդաց որք նմա անկէին իբրև ժառանգութիւն հայրենի։ Նոյնպէս և ապախտ արար զամենայն զպարտս որ լինիցին յետ այնորիկ՝ 'ի վնաս իւրաքանչիւր պարտատեառն առ 'ի խնայանել յապագայս զձախողակի պատճառս այս ամենայն տարաձայնութեանց։ Զառաջինն անդ երկոքին կողմանքն զչարեցան ընդ այս դատաստան. ցասնուին մեծատունք ընդ կորուստ ստացուածոց իւրեանց. ո՛չ նուազ քան զնոսա սրտմտէին և աղքատք ընդ այն՝ զի ո՛չ հաւասար բաշխեցան ինչք. սակայն և երկոցուն հաւսու գտեալ օգտի սահմանադրութեանցն Սողոնի, դարձեալ կրկին ան գամ ընտրեցին զնա 'ի խաղաղել զաղմուկն որ յերիս պատառէր զԱթէնս. և իշխանութիւն 'ի ձեռս ետուն նմա օրէնս հաստատել որպէս ինչ հաճոյ թուիցի նմա, և զտարազ պետութեանն օրինադրել ըստ հաճոյից իւրոց։

Բնակիչքն լերանց կամէին՝ զի ժողովուրդն ինքնին տնօրէն լիցի ամենայն իրաց. իսկ բնակիչք դաշտավայրաց պնդէին 'ի բանս իւրեանց՝ իշխան կարգել ընտրանաւ զոմանս յաւադաց. և

ծովեզերեայք կամէին կառուցանել զնախարարակոյտ ատեանն յերկոցունց միանգամայն։ Ի բաց մերժեաց Սողոն, որ կարգեալն էր գերագոյն հրամանատար, զամենայն օրէնս Դրակոնի զնախորդին իւրոյ. քանզի տարապայման էր խստութիւն նոցին։ Ամենայն դոյզն յանցանք մահու նշաւակ էին իբրև զեղեռն չարիս, և վտանգ էր միօրինակ՝ կալ դատարկ, գողանալ միրգս կամ բանջարս, և սեղանակապուտ լինել, կամ մարդասպան. և որինչ այլ ևս դժնդակակագոյն։ Եւ վասն այնորիկ սովորութիւն էր ասել՝ թէ արիւնագիր դրոշմեալ են այն օրէնք։ Յաւուր միում հարցաւ Դրակոն՝ թէ ընդէր անխտիր պատուհաս մահու սահմանեաց վասն ամենայն յանցուածոց. ետ պատասխանի. Քանզի թեթև յանցանք՝ մահու պարտական են. իսկ վասն ծանրագունիցն՝ չգտանեմ այլ պատուհաս խստագոյն։

Բաշխեաց Սողոն զքաղաքացիս յերիս դասս՝ ըստ չափու ճոխութեանն՝ զոր ունէին այր իւրաքանչիւր։ Համարձակեաց ամենայն ժողովրդեան՝ միսիլ ի գործակալութիւն ատենական. բաց յարուեստաւորաց ոմանց, որք կէին վաստակօք ձեռաց իւրեանց։ Մերժեալ էին սոքա յաւագութեանց և

չէին կցորդք 'ի շնորհս այլոց։ Օրէնս կարդեաց ընտրել զբարձերէցս յաւագանւոյն յառաջին դասէ քաղաքացեաց։ Զի թէ ոք յաղմկայոյզ տարաձայնութեան՝ ոչ յարեսցի 'ի մին 'ի կողմանցն՝ վատանուն երևեսցի։ Զի թէ ոք ամուսնացեալ ընդ դստեր մեծատան, անկարող գտանիցի, իշխան է կինն լինել ընդ միոյ 'ի մերձաւոր ազգականաց առն իւրոյ։ Զի մի օժիտ մեծածախս տարցեն կանայք առ արս իւրեանց, բայց միայն երիս հանդերձս, և քանի մի կարասի թեթևագին։ Զի օրէն էր անպատիժ սպանանել զշնացողն՝ ըմբռնեալ 'ի գործն անդ անարժանութեան։

Սահման եդ ծախուց տիկնայց. և խափան արկ բաղում տարադէպ սովորութեանց նոցա։ Արդել զբամբասանս մեռելոց։ Թողացուցանէր որոց ոչ ունէին որդիս՝ ըստ կամի կարդել զայլ ոք 'ի ժառանգ, միայն թէ ոչ իցեն ցնորեալ մտօք 'ի պահու կտակագրութեանն։ Զի վատանուն լիցի որ վատնիցէ զինչս իւր, և մերժեսցի յամենայն պատուոյ. նոյնպէս և որ ոչն դարմանէ զհայր իւր և զմայր 'ի ծերութեան նոցա։ Որդիք չէին պարտապան խնամ ունել հարց իւրեանց՝ թէ նոցա չէր հոգ տարեալ վարժել զնո-

սա 'ի մանկութեանն յարուեստս ինչ։ Զի ո՛չ ոք այր օտարական գրեսցի քա-
ղաքացի Աթենայ, մինչև ի՛ցէ անդարձ տարագրեալ 'ի հայրենի երկրէ իւրմէ. և մինչև ի՛ցէ հաստատեալ բնակու-
թեամբ յաթէնս համօրէն տամբ իւ-
րով վաստակել յարարս ինչ։ Նուա-
զեցոյց յոյժ զյաճախակի սովորեալ
մրցանակս ըմբշամարտկաց։ Սահման
եդ հասարակաց ծախիւք սնուցանել
զմանկունս անկելոց 'ի պատերազմի
վասն հայրենեաց։ Զի այր ոք խնամա-
կալ մանկան կրտսերոյ՝ մի՛ բնակեսցէ
ընդ մօր որբոցն այնոցիկ. և զի՝ մի՛ ըն-
տրեսցի 'ի խնամակալութիւն որ մեր-
ձաւորն է 'ի կարգի ժառանգութեան։
Զի ամենայն գողութիւն՝ մահու
պատժեսցի. և որ կուրացոյց զոք ըստ
միոյ ականն, պատժեսցի կուրութեամբ
երկուց աչացն։

Ամենայն օրէնք Սողոնի փորագրե-
ցան 'ի տախտակս։ Ծերակոյտն միա-
համուռ երդումն երդուաւ պահել զը-
նոսին, և հսկել յանվրէպ կատարումն
նոցին։ Եւ նոքին իսկ որոց յանձն էր
խնամք իրացդ՝ երդուան 'ի հանդիսի,
զի թէ ոք 'ի նոցանէ ապախտ արասցէ
զիւրիք յօրինաց անտի, պարտական լի-
ցի նուիրել 'ի տաճարն Ապողոնի ար-
ձան ոսկի ըստ կշռոյ մարմնոյ իւրոյ։

Էին անդէն և դատաւորք մեկնիչք օրինացն՝ 'ի ծագել ինչ խնդրոյ 'ի վերայ նոցին 'ի մէջ ժողովրդեան։

Յաւուր միում մինչդեռ գրէր Սողոն զօրէնսն, ծաղրեաց զնովաւ Անաքարսիս, և ասէ. Զինչ, համարիս դու յանձին քում՝ գրութեամբ իւիք սանձել զապստամբութիւն կրից մարդկան։ Այդոքիկ պատուիրանք նման են անշուշտ ոստայնից սարդի, որք միայն զճանճս գիտեն պարանել։ Պատասխանի ետ Սողոն. անշարժութեամբ ունին մարդիկ զոյն ինչ՝ յոր միանգամ ձայնակից և հաւան գտցին. այնպէս կարդեցից ես զօրէնս իմ՝ զի խելամտեսցին ամենայն քաղաքացիք՝ թէ շահ է նոցա հնազանդիլ օրինացս, քան անցանել զսոքոք։

Հարցաւ թէ զի՞ ոչ օրինադրեաց ինչ վասն հայրասպանաց։ Ո՛չ կարծէի, ասէ, թէ գուցեն մարդիկ չարախտավատք՝ որք իշխեսցեն սպանանել զհայր կամ զմայր իւրեանց։

Սովորութիւն էր նորա ասել առ բարեկամն՝ թէ այր անցեալ զեօթանասնամենիւք՝ չպարտի երկնչիլ 'ի մահուանէ, և ոչ բողոք ունել զաղետից մահուն։ Թէ պալատականք թագաւորաց՝ նման են համարաթիւ խերևէշից, և է զի շատ՝ և է զի նուազ ունին

զօրութիւն ըստ կամս թագաւորաց։ Թէ որք բարձակցին թագաւորաց՝ մի՛ տացեն նոցա խորհուրդ կհաճոյն, այլ զոր շահաւորն ի՛ցէ։ Թէ հաւատարիմ առաջնորդ մեր միայն բանն է. և թէ՝ չէ՛ արժան ասել ինչ կամ առնել՝ մինչ և խորհուրդ հարցեալ առ 'ի նմանէ։ Թէ օրէն է յաւէտ հաւատալ երկիւղածութեան մարդոյ, քան երդման նորա։ Թէ չէ 'ի դէպ անխտիր յաճախել բարեկամ. և վտանգ մեծ է քակել զհիմնացեալ բարեկամութիւն։ Թէ հնարագիտութիւն ճահաւոր առ 'ի բաց մերժել զանիրաւութիւն՝ է մոռանալ զայն։ Թէ չէ օգուտ միջամուխ լինել 'ի հրամանատարութիւն, մինչ և ուսեալ հնազանդիլ։ Թէ խաբէութիւն խորշելի լեցի առ ամենայն մարդկան։ 'Ի գլուխ ամենայնի՝ պա՛րտ է պաշտել զաստուածս, մեծարել զծնօղս, և մի՛ կցորդել ընդ ամբարիշտս։

Ասէր ևս. Զանյայտս դուշակեա՛ 'ի ծանօթ եղելոց։ Մի՛ նստցիս դատաւոր. ապա թէ ոչ թշնամի լեցիս դատելւոյն։ Յորժամ ուսցիս կառավարիլ, գիտասցես կառավարել։ Փախի՛ր 'ի ցանկութենէ, զի ծնանի զտրտմութիւն։ Յղփութիւն 'ի մեծութենէ ծնանի, և 'ի յղփութենէ խօթամտութիւն։ Կնքեա՛ զբանս քո լռութեամբ.

իսկ զլռութիւն ժամանակաւ։ Զոր միանգամ տեսցես, մի ասասցես. 'ի գի-տել անդ լռեսջիր։ Ընդ ուստերս և ընդ դստերս քո մի ծիծաղեսցիս, զի մի յետոյ լայցես զնոսա։ Լաւ է 'ի ծա-ծուկ յանդիմանել զմերձաւորն. քան յայտնի գովել։ Քաղաքացւոց մի զհա-ճոյականս, այլ զվայելչականս դիցես առաջի 'ի խորհրդեան։ Սմա ընծայեն ոմանք զայս բան ածաբանական. 'ի վախճանի տէրն զգայթակղութիւն մարդկան զգենու և ընդ աղօտ երևի յերկրի. և 'ի սահմանս անմեղադրելի ածութեանն, զապականութիւն չար-չարանաց խափանէ. և աստ ժողովեալ հաւատացեալ. կախեալ կամաւ զթա-բար, զամենեսեան առ ինքն ժողովէ զօրութեամբ։

Ծանեաւ Սողոն թէ Պիսիստրատոս հաւաքէ իւր բազում թեւակիցս յԱ-թէնս, ջան 'ի վերայ եղեալ՝ տիրել բռնանալ 'ի վերայ ամենեցուն. գուն գործեաց ամենայն հնարիւք զդէմ ու-նել խորհրդոց նորա։ Խմբեաց զժողո-վուրդն 'ի հրապարակ անդր. ուր եկն և ինքն վառեալ զինու զարդու, և 'ի վեր եհան զդաւանս Պիսիստրատեայ. ձայն եբարձ առ նոսա. Նախահայեաց եմ ես ամ Աթենացիք քան զանդէտս ամբարշտութեան խորհրդոց Պիսիս-

տրատեայ, և հղօրադոյն քան զորս դի-
տենն, և զանդիտեն 'ի դիմի հարկանիլ
նմա՝ առ երկիւղի, կամ առ տկարու-
թեան։ Աւասիկ ես ինքնին հասեալ
կամ առաջնորդել ձեզ՝ 'ի մարտնչել
քաջութեամբ վասն աղատութեան։
Ժողովուրդն որ զկողմն ունէր զՊի-
սիստրատեայ, իբր ընդ այր ցնորեալ
վարեցան ընդ Սողոն։ Յետ աւուրց
ինչ անցանելոյ՝ անձամբ զանձն խոցո-
տեալ Պիսիստրատոսի՝ ետ տանել զինքն
կառաջ՝ բովանդակ արիւնաշաղախ 'ի
հրապարակն. ասաց՝ թէ թշնամիք իւր
դաւաճանեցին ինքեան, և յայդ ա-
ղէտս հասուցին։ Անդէն վաղվաղակի
վառեցաւ ռամիկն 'ի զայրոյթ, և ըն-
թացան 'ի զէնս՝ պաշտպան կալ Պի-
սիստրատոսի։ Այլ Սողոնի յառաջ
մատուցեալ ասէ ցնա. Ո՛վ որդի Հի-
պոկրատեայ՝ ո՛չ ես նմանիս դու հոմե-
րականն Ողիսեայ. զի դու գործես
զայդ 'ի պատրել զքաղաքացիս քո. իսկ
նա խոցոտեալ զանձն՝ պատրեաց այ-
նու զթշնամիս իւր։ 'Ի խմբել ժողովը-
դեանն խնդրեաց Պիսիստրատոս վասն
իւր յիսուն թիկնապահս։ Ընդդէմ ե-
կաց նմա Սողոն արիագոյնս՝ յայտ
յանդիման կացուցեալ զբազմամտանդ
հետևանս այնր նորահնար գործոյն.
սակայն ո՛չինչ ազդել մարթացաւ 'ի

առանիկն զայրացեալ. զի շնորհեաց Պի-
սիստրատեայ՝ ունել զիւրև թիկնա-
պահս չորեքհարիւր, և զօրաժողով լի-
նել՝ առ 'ի տիրել ամրոցին։ Զարհու-
րեալ յիրացն աւադանի քաղաքին՝ 'ի
բաց խուսէին անտի։ Ո՛չինչ սրտաբեկ
եղև Սողոն. և կշտամբեալ զժողո-
վուրդն վասն հեղգութեան և վատու-
թեան նոցա, ասէ ցնոսա. Յառաջն
դիւրագոյն էր ձեզ խափանել զբռնա-
կալութիւնդ. այլ զի այժմ սերտա-
գոյնս ամրացաւ, 'ի շքեղ փառս յան-
կեսցի ձեզ աղարտել զայն, և քանցել
արմատաքի։ Սակայն տեսեալ զի այս
ամենայն բանք ազդեն ինչ ո՛չ՝ զգաս-
տացուցանել զժողովուրդն յապշու-
թենէ իւրեանց, 'ի բաց մեկնեցաւ. և
տարեալ զզէնս իւր եդ առաջի դրան
ծերակուտին, աղաղակելով. Ո՛վ հայ-
րենիք իմ սիրելի՝ ես օգնեցի քեզ որ-
չափ ինչ ձեռնհաս գտայ բանիւք և
արդեամբք. վկայ են ինձ դիք՝ զի բնաւ
ո՛չ դանդաղեցի պատսպար լինել օրի-
նաց և ազատութեան հայրենեաց իմոց։
Ո՛վ հայրենիք անուշակ. ահա գնամ
ես աստի, և յաւիտեան թողում ըզ-
քեզ. զի ես միայն մնացեալ եմ թշնա-
մի բռնակալին, և այլք ամենեքին յօ-
ժարամիտ են ընդունել զնա 'ի գլուխ
իւրեանց։

Բացէ՛ի բաց հրաժարեաց Սողոն ընդ
իշխանութեամբ կալ Պիսիստրատեայ.
և զի խիթայր թէ մի՛ գուցէ աթենա-
ցիք բուռն առնիցեն նմա՝ փոփոխել
զօրէնսն՝ յորոյ երդուեալ էին՝ ի պահ-
պանութիւն, լաւագոյն վարկաւ՝ կա-
մովին յանձն առնուլ զտարագրու-
թիւն, և տարադէմ գնալ ճանապար-
հորդել՝ և ճանաչել զաշխարհ, քան
կեալ տհաճութեամբ յԱթէնս։ Անց
յԵգիպտոս, ուր եկաց ժամանակ ինչ
յարքունիս Ամասիս արքայի։ Իսկ Պի-
սիստրատոս որ մեծապատիւ մեծարէր
զՍողոն, կարի ինն խռովեալ յոգի իւր
ընդ մեկնել նորա, գրեաց նմա թուղթ
թախանձանաց, անդրէն յետս դար-
ձուցանել զնա։ „Ո՛չ ես միայն՝ ի յու-
նաց՝ տիրեցի արքայութեամբ հայրե-
նեաց իմոց, ո՛չինչ գործեմ ես հակա-
ռակ օրինաց կամ դից, քանզի արիւն
եմ Կոտրոսի՝ որում երդուան աթե-
նացիք՝ յաւերժ պահել զթագաւորու-
թիւն սերնդոց նորա։ Ջան՝ ի մտի
եդեալ է իմ՝ պատկառ կալ պահպա-
նութեան առ՝ ի քէն օրինացդ՝ առա-
ւել զգուշութեամբ, քան զոր՝ ի տի-
րել ռամկաց համախումբ։ Շատ հա-
մարիմ ինձ զհարկսն զորս յառաջնմէ
հաստատեալ գտի. և բաց՝ ի շքոյ մե-
ծարանաց աւագութեանս ո՛չ այլ իւիք

զանազանիմ 'ի սոսկական մարդկանէ։ Ոչինչ դժկամակ եմ ընդ քեզ, վասն հրատարակելոյ քո զխորհուրդ իմ։ Հաւանեալ եմ 'ի խորհուրդս իմ՝ թէ այդ յաւէտ առ սէր հայրենեաց էր, քան առ ատել զիս. քանզի դու ոչ գիտէիր զնպատակ խորհրդոց իմոց. զոր թէ կանուխ զգացեալ էր քո, թերևս ոչ առ ոտն կոխէիր զհնարս իմ։ Արդ ծանիր աներկիւղ, և հաւատա՛ բանից. զի ոչ բնաւ երկիցէ Սողոն 'ի Պիսիստրատեայ. քանզի և ոչինչ զչարեցայ առ որս յառաջն եղեն իմ թշնամիք։ Կալայց զքեզ մտերիմ բարեկամ, և դու կացցես առ իս յանխռով անդորրութեան, քանզի գիտեմ զքեզ թէ չես այր դաւաճանող։ Թէ կան քեզ փաստք իրաւացիք խափանարարք դարձի քո յաթէնս՝ շնորհեալ քեզ կալ ուր և կամիցիս. և ինձ շատ լիցի գիտել քեզ՝ թէ ոչ յինէն է վտարանդութիւն քո,,։

Արար նմա Սողոն պատասխանի այսու օրինակաւ. ,, Հաւաստեալ եմ ճշմարտիւ զի ոչինչ արասցես ինձ չար. քանզի մինչև բռնակալեալ քո՝ ես քեզ բարեկամ էի. այլ արդ ատելի եմ քեզ քան զամենայն ատեցողս բռնակալութեան։ Թող այր իւրաքանչիւր զյանկաւորն ընտրեալ կալցի, որ օգուտ է աթենացւոց, կառավարիլ 'ի միոյ

յինքնիշխան տեառնէ, թէ 'ի համա-
խումբ ատենակալաց։ Անշուշտ եմ 'ի
խորհուրդս իմ՝ զի դու լաւագոյն ես
'ի բռնակալս, այլ տարադէպ համա-
րիմ զդառնալն իմ յԱթէնս. քանզի
յետ միանգամ հիմնելոյ իմ անդէն
զազատ պետութիւն, և հրաժարելոյ
յիշխանութենէն մատուցելոյ ինձ, ա-
մենայն մարդոյ իրաւունք են դարձել
զիս, և կարծել՝ հաւանել ինձ ընդ քո
բռնակալութիւնդ, եթէ դարձայց
այդրէն „։

Գրեաց Սողոն և այլ թուղթ առ
Եպիմենիդէս ըստ այսմ օրինակի։
„Քանզի օրէնք իմ ոչ մարթացան
շնորհել օգուտ բազում, նոյնպէս և 'ի
դերեւանալն ոչ եդիտ քաղաքն յոլով
շահ։ Ո՛չ աստուածք, և ոչ օրէնսդիրք
բաւական ինչ են օգտակար լինել քա-
ղաքին, այլ որոց վարեն զժողովուրդն
ըստ կամս իւրեանց՝ յորժամ բարւոյն
ակն եղեալ ի ցեն։ Օրէնք առ յինէն
սահմանեալ՝ չեղեն օգտաբեր. սակայն
ոչք լուծին զայնս, առ հասարակ խան-
դարեցին զհասարակապետութիւն,
յոչն խափանել նոցա զբռնակալու-
թիւն Պիսիստրատեայ։ Կանուխ դու-
շակեցի ես զոր ինչ լինելոցն էր. այլ
ոչ հաւատացին ինձ։ Պիսիստրատոս
որ շնթէր աթենացւոց՝ հաւատարմա-

գոյն երևեցաւ քան զիս՝ որ զՃշմարիտն ազդէի նոցա։ Նախագրաւ եղէ՝ կալ 'ի դլուխ քաղաքացւոց առ 'ի զառաջս ունել զարկածիցն որ արդիւնացան. իբրև ընդ անմտի նայեցան յիս, և շնորհեցան Պիսիստրատոսի թիկնապահք՝ որովք վարեցաւ նա՝ 'ի գերութիւն գրաւել զքաղաքն ողջոյն. վասն որոյ և ես լաւ համարեցայ մեկնիլ անտի„։

Զայնու ժամանակաւ Կրեսոս արքայ լիւդացւոց կացոյց 'ի հարկի ծառայութեան իւրոյ զամենայն զյոյնս բնակեալս յԱսիա. և բազում արք նշանաւորք յայնմ դարու լքեալ զԵլլադա 'ի սակս այլ և այլ պատճառաց, փոխեցան 'ի Սարդիա մայրաքաղաք թագաւորութեան Կրեսոսի. որ մեծապէս բարգաւաճ էր յայնժամ մեծութեամբ և ճոխութեամբ. և զի յամենայն մարդոյ լսելի լինէր գովութեամբ անուն Սողոնի, կամակար յօժարեցաւ Կրեսոս տեսանել զնա։ Յղեաց աղաչեաց զնա՝ գալ և բնակել առ իւր։ Սողոն ետ նմա պատասխանի այսպէս.

„Մեծ է ինձ բարեկամութիւնդ առ իս. վկայ են աստուածք՝ զի թէ չէր իմ վաղուրեան եղեալ 'ի մտի բնակել յաղատ քաղաքի, նախապատիւ

ընտրէի բնակել 'ի թագաւորութեանդ
քում, քան եթէ յԱթէնս, ցորչափ
բռնացեալ տիրէ անդէն Պիսիստրա-
տոս։ Այլ ես յանդորրու կամ աս-
տէն՝ 'ի քաղաքի յորում թագաւորէ
հաւասարութիւն. սակայն և այնպէս
եկիցառ քեզ՝ ախորժ կամաք բնակել
զժամանակ ինչ ընդ քեզ,,։

Գնաց Սողոն 'ի Սարդիս՝ հարկեալ
'ի ժտելոյ Կրեսոսի, որ եռանդեամբ
բորբոքեալ էր տեսանել զնա։ Յանցա-
նելն ընդ Լիւդիա՝ դիպաւ նախարա-
րակոյտ բազմութեան. և ընդ նոսա
ծառայք և սպասահարկութիւն սաս-
տիկ, որ կարծէր թէ թագաւորն ինքն
անդր իցէ։ Իսկ իբրև լինէր նմա յան-
դիման լինել Կրեսոսի՝ որ մնայր նմա
բազմեալ յարքունի դահուն, պեր-
ճացեալ շքեղ փառաք ամենայն զար-
դուն իւրով, ոչինչ զարմանս երևեցոյց
Սողոն ընդ այն տեսիլ մեծաշուք։ Ասէ
ցնա Կրեսոս. Հիւր իմ, գիտեմ զիմաս-
տութիւն քո 'ի համբաւոյ քումմէ,
գիտեմ զի երկայն ուղի հատեալ ըն-
թացար ընդ աշխարհս յոլովս, ասա՛
ցիս. տեսեր ուրեք զայր ոք շքեղապանծ
զգեցեալ քան զիս։ Այո՝ ասաց Սո-
ղոն. փասեանք, աքաղաղք և սիրա-
մարգք պարծ շրջին քան զքեզ. քանզի
որ ինչ նոցա պերճութիւն է՝ 'ի բնու-

թենէ է. զի ոչ խնամ կալան նոքա զարդարել զինքեանս։

Այս անակնկալ պատասխանի ապշեցոյց զԿրեսոս. հրաման ետ իւրոցն՝ բանալ զամենայն զգանձս իւր, և ցուցանել Սողոնի զցանկալի ցանկալի սպասս ապարանից իւրոց։ Կոչեաց զնա երկրորդ անգամ առաջի իւր, և ասէ ցնա. Տեսեր բնաւ այր երջանիկ քան զիս։ Այո, կրկնեաց Սողոն, զՏելլոս աթենացի, որ եկեաց իբրև այր առաքինի 'ի բարեկարգ հասարակապետութեան. եթող երկու որդիս առաքինիս, և ստացուած չափաւոր՝ բաւական 'ի պէտս նոցա, և երջանկացաւ՝ մեռանելով զէն 'ի ձեռին, յաղթութիւն տարեալ 'ի գլուխ 'ի փառս հայրենեաց. որում և շիրիմ կանգնեցին նմա աթենացիք՝ 'ի տեղւոջն ուր անկաւ, և մեծաշուք պատուեցին զյիշատակ նորա։

Առաւել ևս զարմացեալ Կրեսոսի՝ ապուշ զոմն համարեցաւ զՍողոն։ Իսկ արդ՝ ասէ, ո՞վ իցէ երջանիկ 'ի մարդկանէ յետ Տելլոսի։ Ետ պատասխանի. Էին երբեմն երկու եղբարք. միոյն անուն Կլէոբիս, և երկրորդին Բիտոն, արք քաջալանջք, որ յաղթական երևեցան յամենայն մրցմունս, և սիրէին զմիմեանս սերտ սիրով։ 'Ի տօնս ուրեք՝

մայր նոցա քրմուհի դիցն Հերայ՝ զոր սիրէին խանդակաթ սիրով, հարկաւորեալ էր գնալ մատուցանել պատարագ 'ի մեհեանն. և զի յապաղեաց 'ի վարել զեզինսն, Կլէոբիս և Բիտոն կառամուտք եղեն՝ և ածին զնա 'ի դէմ եղեալ տեղին։ Համբէն ժողովուրդն լիաբերան ներբողէր զնոսա. և մայր նոցա յափշտակեալ 'ի խնդութենէն, աղերս արկ Հերայի՝ զփոխարէնն առատաձեռնել որդւոցն. և ապա յետ նուիրացն և ընթրեաց, մտեալ նոցա 'ի մահիճս, ո՛չ ևս առաւօտեցին. զի դտան մեռեալ. արժանի եղեալ կատարիլ 'ի մեծ փառսն՝ անվնաս և անցաւ։ Յայնժամ ցասուցեալ Կրեսոսի՝ իսկ դու ո՞չ դասես ասէ՝ զիս 'ի համար հասելոցն յերջանկութիւն։ Եւ պատասխան Սողոն. Արքայդ լիդացւոց, կան քո ճոխութիւնք բազում, տէր ես բազում ժողովրդոց. սակայն կեանք մարդկան յեղափոխ են. վասն որոյ անհնար է հաւաստի սահմանել զբարեբաստութիւն մարդոյ յառաջ քան զկատարած կենացն։ Աւուր աւուր ծնանի ժամանակն անակնկալ պատահարս՝ զոր ոչ ոք կարծէր երբէք. չէ ումեք հաւաստի լինել ընդ յաղթութիւն՝ մինչև 'ի գլուխ հասեալ պատերազմին։ Գ.ժ.ամնեցաւ ընդ

այն Կրեսոս. և ոչ ևս յօժարեաց տեսանել զնա։

Եսովպոս որ ընդ ժամանակս ընդ այնոսիկ 'ի Սարդի էր՝ եկեալ անդր հրամանաւ Կրեսոսի 'ի զուարճացուցանել զնա, ոչ հաճեցաւ ընդ դործս արքայի 'ի մերժելն զայնպիսի այր զգօն. և ասէ ցնա. Ո՛վ Սողոն. կամ չէ՞ արժան խօսել ընդ Թագաւորս, կամ միայն զհաճոյականսն ասել նոցա։ Նա՛ մանաւանդ, ասէ Սողոն, կամ չխօսել բնաւ ընդ նոսա, կամ ըստ պատեհ ժամուն զբարիոքն խորհուրդ տալ, և միշտ զճշմարիտն ասել ցնոսա։

Կիւրոս պարսից արքայ բանտարդել պահէր զԱստիագէս զհաւ իւր մայրենի, կապտեալ զնա 'ի Թագաւորութենէն. սրտմտեալ ընդ այն Կրեսոսի, կուսակից եղև Աստիագէսի, և դիմեաց հասանել մարտիւ պատերազմի 'ի վերայ պարսից։ Եւ քանզի էին նորա բազմութիւն դանձուց. և 'ի գլուխ կայր աղդի՝ քաջամարտիկ հանդիսացելոց ընդ համօրէն աշխարհ, դիւրաւ առ ձեռն պատրաստ կարծէր զամենայն ինչ։ Այլ ձախողակ բաղդիւ խորտակեցան զօրք նորա, և ինքն փախուցեալ անկաւ 'ի Սարդիա, յորում պաշարեցաւ և ձերբակալ եղև՝ յետ չորեքտասանօրեայ մաքառման։

Իբրև յանդիման եղև Կիւրոսի՝ հրամայեաց 'ի շղթայս պնդել զնա, և հանել 'ի փայտակոյտ բարձր, և անդ կապեալ զնա ընդ չորեքտասան մանկունս լիւդացիս, զի այրեսցին առաջի Կիւրոսի, և ամենայն պարսից։ Իբրև հուր հոտոտէր 'ի փայտակոյտն՝ յայնմ աւաղելն պահուն յիշեաց Կրեսոս ըզբանսն Սողոնի. յոգւոց եհան. Ո՛վ Սողոն. Սողո՛ն Սողոն։ Հիացաւ ընդ այն Կիւրոս. եհարց՝ ո՞ր աստուած է առ որ կարդայ յարկածս իւր։ Ո՛չ ետ պատասխանի Կրեսոս. իսկ իբրև բռնադատեցաւ 'ի խօսել, ճնշեալ 'ի դառնութենէ սրտին՝ ասէ. Եղո՛ւկ զիս. յիշեցի ես զայրն՝ զոր պա՛րտ էր թագաւորաց ցանգ առ իւրեանս պահել, և յարգել զխորհուրդս նորա՝ առաւել քան զգանձս և զմեծութիւնս իւրեանց։ Ժոտեցաւ ասել՝ ո՞վ այն էցէ. յաւել նա 'ի բանս իւր. Այր ոչ իմաստուն յԵլլադայ, զոր ես փափաքանօք յղեալ կոչեցի երբեմն՝ սքանչացուցանել զնա ընդ յաջողուածս իմ. նորա բնաւ ո՛չ զարմացեալ 'ի տեսիլ անբաւ ճոխութեանց իմոց, ետ ինձ պատասխանի անխռով իբրու խելամտել զիս կամեցեալ, թէ այդ ամենայն անմիտ ընդունայնութիւն է. այլ օրէն է մեալ կատարածի կենաց,

և մի յանձնապաստան լինել ընդ յա-
ջողուածս՝ որ ոտնակոխ է յոգունց
թշուառութեանց։ Արդ հասու լի-
նիմ ճշմարտութեանն առ 'ի նմանէ
ասացելոց։ Մինչդեռ զայսոսիկ խօսէր
Կրեսոս, ծաւալէր ճարակէր բոց հրոյն
զստորոտս փայտակուտին, և ցոլանայր
'ի վեր։ Խանդաղատեցաւ Կիւրոս ընդ
բանս Կրեսոսի։ Աղիողորմ վիճակ առն
թագաւորի որ երբեմն հզօրացեալ՝ սը-
րագոյնս թափանցանց եղև ընդ սիրտ
նորա. խիթացաւ՝ մի գուցէ յապա-
գայն և ինքն նմին վիճակի հանդիպես-
ցի. անդէն վաղվաղակի հրաման ետ
շիջուցանել զհուրն, արձակեաց վնա
'ի ծանրակիր կապանաց շղթայիցն.
ամբարձ յաւագութիւն, և խորհըր-
դովք նորա վարեցաւ յիրս ծանուցեալ։

Իսկ Սողոն իբրև մեկնեցաւ 'ի Կրե-
սոսէ՝ գնաց բնակել 'ի Կիլիկիա. ուր
կանգնեաց քաղաք՝ յիւր անուն ա-
նուանեալ Սողոս. և անդ լուաւ թէ
տակաւին բռնակալէ Պիսիստրատոս,
և ստրջացեալ են աթենացիք զի ոչ խա-
փան արկին ձեռնարկութեան նորա։
Գրեաց նոցա Սողոն թուղթ օրինակ
զայս. „Անիրաւէք դուք թէ բողոք
ունիք ընդդէմ աստուածոց վասն տա-
րաբաղդիկ վիճակիդ ձերոյ. և այժմ
զի վիշտ նեղութեանց հասեալ կալեալ

է զձեզ՝ մեղադիր լերուք յողդողդու-
թեան և անմտութեան ձերոյ՝ որ ոչ
անսացէք արանց հայրենասիրաց. և
զի կապեցայք 'ի խոստմունս և 'ի հնա-
բագիտութիւնս առն նենգաւորի։
Դուք ինքնին շնորհեցէք նմա թիկնա-
պահս առնել զիւրև, որք օժանդա-
կեսցեն նմա պնդել զձեզ 'ի գերու-
թեանդ զամենայն աւուրս կենաց ձե-
րոց,,։

Պերիանդր բռնաւոր կորնթացւոց
լիագոյնս ծանուցեալ Սողոնի զվճռակ
թագաւորութեան իւրոյ, աղաչեաց
զնա լինել ինքեան խորհրդակից բա-
րեաց։ Գրեաց նմա Սողոն զբանս զայ-
սոսիկ։ ,, Գրես դու ինձ թէ բազումք
են դարանակալք կենաց քոց։ Թէ-
պէտև ազատեսցիս դու 'ի թշնամեաց
քոց՝ սպանանելով զնոսա, ո՛չ 'ի լաւա-
գոյն ինչ յանկեսցի վճռակ քո։ Յորս
յուսացեալ ես, նոքին իսկ դաւաճա-
նեսցեն զքեզ. և թերևս այր այնպի-
սի՝ որ խիթայցէ վասն անձին իւրոյ,
կամ որ անգոհ իցէ ընդ կեղակարծ
արարս քո, և կամ որ համարիցի պաշ-
տօն հարկանել հայրենեաց։ Լաւա-
գոյնն յոր քեզ հնար իցէ ձեռն ար-
կանել՝ տեղի տուր իսպառ 'ի բռնաւո-
րութենէդ։ Իսկ թէ ոչ այդպէս՝ կա՛ր
քեզ սպայակոյտ զօրս՝ որք սանձահա-

րել կարասցեն զերկիրդ, զի ոչ ևս տե-
զի երկիւղի մնասցէ քեզ, և ոչ զոք տա-
բադրեսցես յօտարութիւն։

Անց Սողոն 'ի Կիպրոս՝ ուր կապե-
ցաւ բարեկամութեամբ ընդ Փիլոկի-
պրոսի թագաւորի Եպիայի. և զի յան-
արգասաւոր տեղւոջ շինեալ էր այդ
քաղաք, խորհուրդ ետ նմա Սողոն յար-
գաւանդ երկիր փոխել զքաղաքն. ընտ-
րեաց դաշտավայր դեղեցիկ և բերրի,
և ինքնին ձեռնարկեալ 'ի նոյն, ժամ-
անեաց յամբոկ գործոյն։ Եւ 'ի յիշ-
ատակ երախտեաց նորա, կոչեաց Փի-
լոկիպրոս զքաղաքն Սողէս։

Սողոնի բնաւորութիւն 'ի կեանս
իւրում էր ինչ թշնամի ամբարար
զուարճութեանց։ Սիրէր զերախանս
կոչնոց, և զերաժշտութիւն, և որ ինչ
սատար էր հեշտութեան կենաց։ Իսկ
անհաշտական ատելութիւն ունէր
ընդ տեսարանս յորս լինէին մտացածին
բանք ինքնաստեղծք ըստ հաճոյս. վասն
զի զայն ամենայն պատճառ վնասուց
դնէր հասարակաց, և զի բազմադիմի
խռովութիւնք ծնանին անտի։ Մինչ-
դեռ յաթէնս էր 'ի մեծաշուք փառս,
երևեցաւ Թեսպիս՝ ողբերգել զողբեր-
գութիւնսն զորս յօրինեալ էր։ Եւ
քանզի արդիւնք էին նորօրինակ հնա-
բագիտութեան, կարի իմն սփոփանս

էին ժողովրդեան իրքն այն։ Եւ զի յո-
ժարամիտ էր Սողոն 'ի զուարճու-
թիւնս, յաւուր միում գտաւ անդէն.
և 'ի կատարել խաղուցն՝ կոչեաց առ
ինքն զԹեսպիս, և ասէ ցնա, չամաչես
դու սատիսսել առաջի ժողովրդեան։
Այդ չէ ինչ՝ ասէ Թեսպիս, զի ընդ
խաղս է։ Ցասուցեալ Սողոնի՝ յաւել
'ի վերայ, քաջ է. այլ եթէ 'ի ծիծա-
ղել նոցա հաճոյական դատիցեն ըզ-
ստուերիւնդ, ո՛չ յետ բազում ժամանա-
կաց տպաւորեալ գոցուք զայդ յա-
բարս մեր և 'ի գործս կարևորս։ Եւ
յաղագս այսորիկ յորժամ Պիսիստրա-
տոս երևեցաւ 'ի հասարակաց հրապա-
րակի՝ հանակ յարեան թաթաւեալ,
յիշատակեալ Սողոնի զթատերական
տեսարանս՝ յոգւոց եհան. Ահաւա-
սիկ աղբերակն դառնութեան՝ յորմէ
հոսեն այս ամենայն խաբէութիւնք։

Են որք Սողոնի համարին զհաստա-
տութիւն Արիսպագին. որ էր կառու-
ցեալ 'ի մեծամեծ աւագորերոյ, որոց
'ի դլուխ տարեալ էր զամենայն դոր-
ծակալութիւնս յԱթէնս։ Հարցաւ
Սողոն յաւուր միում. որ է պետու-
թիւն քաջ բարեկարգեալ։ Եւ պա-
տասխանի. այն է, յորում նոքին իսկ
որք ոչն արհամարհեցան՝ ջանան եռան-
դեամբ դարման տանել վնասուն եղե-

լոյ այլուամ, որպէս թէ անձանց իւ-
բեանց էր տոյժն։

Մօտ 'ի կատարած կենաց իւրոց
ձեռն արկեալ էր նորա 'ի քերթուածս
յաղագս որոց լուեալ էր յԵգիպտոս
'ի վերայ Ատլանտեան կղզւոյ որ անդր
քան զծանուցեալ ովկիանոսն։ Մե-
ռաւ 'ի Կիպրոս՝ մինչչև աւարտեալ
քերթողութեանն 'ի ծե ողիմպիադին,
իբրև զութսնամենիւք։ Պատուիրեաց
տանել զմարմին իւր 'ի Սաղամինա.
և անդ կիզեալ 'ի հուր սփռել զա-
ճիւնն ընդ անդաստանս։ Յետ մահու
նորա կանգնեցին նմա աթենացիք ար-
ձան պղնձի, ունելով 'ի ձեռին զմա-
տեան օրինացն իւրոց, 'ի հանդերձս
իշխանի ժողովրդեան։ Նոյնպէս կանգ-
նեցին և բնակիչք Սաղամինայ՝ 'ի տա-
ճարաղ աստենաբանի հրապարակախօսե-
լոյ առ ժողովուրդն, ծածկեալ ունե-
լով զձեռսն ընդ զգեստովն։

ՊԻՏՏԱԿՈՍ

Ծաղկեալ 'ի քառասներորդ երկրորդ ողիմպիադին. մեռաւ յերրորդ ամի յիսներորդ երկրորդ ողիմպիադին. 'ի հասակի եօթանասուն ամաց։

ՊԻՏՏԱԿՈՍ որդի Իրրադիոսի, ազգաւ Թրակացի. ծնաւ 'ի Միտիլինէ 'ի փոքրիկ քաղաքի Լեսբոս կղզւոյ ղքսաներորդ ինն ներորդ ողիմպիադաւ։ Յերիտասարդութեան անդ իւրում արիասիրտ գտաւ, քաջ զօրական, և զօրավար մեծանուն, և յամենայնի այր բարի։ Այս բան էր հանապազ 'ի բերան նորա. պարտ է յարմարել զանձն ըստ ժամանակին, և յամենայնէ կթել շահ։

Առաջին գործ մեծահանդէս արութեան նորա՝ եղև դաշնաւորել ընդ եղբօրն Ալկէոսի ընդդէմ բռնակալին Մելանկրեայ, որոյ բռնացեալ տիրեալ էր Լեսբոս կղզւոյ, և խորտակեաց զնա։ Այսու ձեռնարկութեամբ զհամբաւի հարաւ քաջութիւն նորա։ 'Ի բաղում ժամանակաց հետէ անհաշտական պատերազմաւ զայրացեալ էին

ընդ միմեանս միտիլենացիք և աթե-
նացիք՝ վասն տէրութեան կալուածոց
իրիք՝ անուանելոյ Աքիլլիտիդէս. յո-
րում առաջնորդէր զօրուն միտիլե-
նացւոց՝ Պիտտակոս. իբրև հանդիպե-
ցան միմեանց ճակատքն երկոքին, և
մերձ էին բախել ընդ միմեանս, խոր-
հուրդ կալաւ Պիտտակոս մենամար-
տութեամբ վճարել զիրսն. վասն որոյ
ձայնեաց առ Փրինոն զօրավար աթե-
նացւոց, որ յաղթական դտեալ էր յա-
մենայն պատերազմունս, և բաղում
անդամ պսակեալ յողիմպիական մրբ-
ցանսն, դալ ելանել 'ի ճակատ։ Յան-
ձին կալաւ Փրինոն զկռիւն. և սահման
եդաւ զի որ յաղթիցէ անխափան տէր
լիցի գետնոյն՝ վասն որոյ կռիւն է։ Յա-
ռաջ խաղացին զօրապետքն երկոքին
ընդ մէջ երկուց ճակատուց. և քանզի
թագուցեալ էր Պիտտակոս ընդ վահա-
նովն ցանց իմն, և 'ի յաջող պահուն
յեղակարծում թակարդապատեաց
նովին զՓրինոն, որում ոչ ակն ունէր
նա. և ձայն բարձեալ աղաղակեաց,
ոչ մարդ որսացայ, այլ ձուկն. սպան
զնա Պիտտակոս առաջի զօրացն երկո-
ցուն, և տիրեաց վիճակին։ Աստի
սկիզբն կալաւ ցանցս երևեցուցանել
'ի տեսարանի 'ի զուարճութիւն ժո-
ղովրդեան։

Ընդ անցանել աւուրց երիտասարդութեան Պիտակոսի՝ զիջաւ և ետ ռանդն արեան նորա, և զհետ եղև առ սակաւ սակաւ ճաշակել զքաղցրութիւն իմաստասիրութեան։ Միտիլենացիք քանզի մեծապէս պատուէին զնա, ետուն նմա զառաջնորդութիւն քաղաքի իւրեանց։ Երկարաձիգ և բազմաշխատ փորձ իրաց քաղաքականութեան՝ ուսոյց նմա անխռով հաստատութեամբ ակնարկել ընդ այլ և այլ պատահարս բաղդին։ Սահմանեալ անդէն զհանգամանս հասարակապետութեանն արդար օրինօք՝ հրաժարեաց յիշխանութենէն զոր կալաւ ընդ ամս երկոտասան. և ամենևին թողթափեաց յանձնէ զվիշտ զբաղանաց։

Արհամարհեաց Պիտակոս զբարիս բաղդի՝ յետ ընդերկար փափաքելոյ նոցուն. իսկ Միտիլենացիք 'ի շնորհս մեծամեծ վաստակոց նորա զոր վաստակեալ էր յօգուտ նոցա, մատուցին նմա կալուած գետնոյ 'ի վայրս ուրեք զուարճութեան, ոռոգեալ 'ի վտակաց, շրջափակեալ անտառօք և այգեօք, թոռ և զանդաստանս, յորոց 'ի մուտս դիւրին էր նմա վարել կեանս մեծապատրաստ հանդերձանօք յառանձնութեան անդ իւրում։ Այլ Պիտակոսի նետընկէց եղեալ ամենայն զօրութեամբ

իւրով, շատ համարեցաւ անձին զքա-
ռակուսի չափ նետաձգութեանն։
Աքանչացեալ աւագանւոյն ընդ սակա-
ւապիտութիւն նորա՝ թախանձանաք
հարցին ցնա զպատճառն։ Պիտտակոս
համառօտիւ ետ պատասխանի. մասնն
օգտակար է քան զբոլորն։

Գրեաց առ նա Կրեսոս արքայ Լիւ-
դացւոց՝ գալ առ ինքն, և տեսանել
զճոխութիւնս իւր. պատասխանի ա-
ռաք նմա Պիտտակոս ըստ այսմ օրի-
նակի. Կոչես զիս գալ այդր 'ի Լիւ-
դիա 'ի զնին պերճութեան քո. ոչինչ
երկմտեմ ես՝ թէ որդին Ալիատեայ
չիցէ հզօրագոյնն 'ի մէջ թագաւորաց.
սակայն ես թէ և ունիցիմ զամենայն
զոր դուդ ունիս, ոչ արդեաք մեծատուն
լինիցի։ Ինչք չեն ինձ պիտոյ. շատ հա-
մարիմ ես զսակաւն որ կարևորն է 'ի
պէտս իմ, և ոմանց բարեկամաց իմոց։
Սակայն և 'ի վերայ այսր ամենայնի՝
ժամ գտից հաճել կկամս քո։

Իբրև ընդ իւրով իշխանութեամբ
նուաճեաց Կրեսոս զոր յԱսիա զՅոնս,
եդ 'ի մտի նաւահանդէս կազմել՝ և
ձգել զձեռն իշխանութեան իւրոյ 'ի
վերայ կղզեաց, յայնժամ գնաց Պիտ-
տակոս 'ի Սարդիա. եհարց ցնա Կրե-
սոս. զինչ զբոյցք իցեն յԵլլադայ. ա-
սէ ցնա Պիտտակոս, գնոյ առին բնա-

կիչք կղզեաց տասն հազար երիվարս, և կամակար պնդեալ են վառել ընդ դէմ քո, և հասանել հարկանել զԱրդիա։ Ճշմարտութեամբ կալեալ զայս Կրեսոս, ասէ. Իցէ՞ թէ շարժեսցեն զիք զընակիչս կղզեաց՝ դալ այրուձիով հարկանել զլիւդացիս։ Պատասխանի ետ Պիտտակոս, ապա ուրեմն փափաքես դու տեսանել ձիաւորեալս զընակիչս կղզեաց և հասեալս այսր 'ի ցամաք։ Կարի յիրաւունս. բայց գիտիցես արդեօք զի ծաղրեն նոքա զքեզ 'ի լսելանդ՝ թէ դու նաւամարտիկ պատերազմաւ յարձակիս 'ի վերայ նոցա. հապշտապ 'ի ծով ընթանան նոքա՝ 'ի դիմի հարկանիլ քեզ և լիւդացւոց, վրէժ լուծանել զաղետից Յունաց զորս 'ի գերութիւն վարեցեր։ Հաւատաց Կրեսոս հաստատութեամբ թէ հասու է Պիտտակոս խորհրդոց իւրոց. վասն որոյ զանց արար զպատրաստութեամբ նաւուց. և դաշնաւորեցաւ բարեկամութեամբ ընդ Յոյնս բնակիչս կղզեաց։

Անդեղեայ էր Պիտտակոս պատկերաւ. աչքն ցաւագին. յոյր էր և դանդաղ. և ընթացքն խեղաթիւր՝ վասն ցաւոց ոտիցն։ Առեալ էր նորա կին զդուստր Դրակոնի օրէնսդրի. այլ կինն ըստ բուսոյ բարուց դոռոզ էր և

ամբարտաւան. արհամարհութեամբ դնայր ընդ այր լուր 'ի սակս տգեղութեան նորա, և զի համարէր զանձն յականաւոր աղդատոհմէ։ Յաւուր միում մինչդեռ ընթրիս տայր Պիտտակոս բազմաց 'ի բարեկամաց իւրոց իմաստասիրաց, և ամենայն ինչ կազմ էր. կին նորա որ անդուլ դժպհին էր, գնացեալ թաւադլոր կործանեաց զսեղանն և զոր 'ի վերայ նորա կերակուրս։ Ոչինչ զբարեցաւ ընդ այն Պիտտակոս, միայն ասաց առ կոչնականսն. ցնորեալ է 'ի մտաց, և արժանի է կարեկցութեան։ Այս անանդորը երկպառակութիւն ընդ նա և ընդ կին նորա՝ մեծապէս խորշելի եցոյց նմա զտարաբաղդիկ ամուսնութիւն։ Եհարց ցնա երբեմն այր ոմն, թէ զո՞ր առնուցու 'ի կնութիւն յերկուց՝ որոց միոյն վիճակ համահանդէտ էր իւրումն, և երկրորդին՝ աղնուական հարստութեամբ և սերնդեամբ։ 'Ի վեր ամբարձ զգաւազանն յոր յեցեալն էր, և ասէ ցնա. դնա՛ ընդ կողմն ընդ այն, ուր խաղան մանկունք, և արա՛ զոր նոքա տան քեզ խորհուրդ վասն այդր։ 'Ի գնալ անդր առնն՝ տեսանէ զմանկունսն զուարթամիտ բերկրեալ 'ի խաղս, և ասէին ցմիմեանս. ընտրեա՛ զհաւասար քո։ Այս բան տպաւորեաց 'ի սիրտ նորա՝

ոչ ևս ակն դնել 'ի կին որ աղնուա-
կան էր քան զնա, այլ ունել զՀաւա-
սարն իւր։

Ժուժկալ էր Պիտտակոս 'ի գինւոյ,
և ըմպէր միայն ջուր աղբերահոս. թէ-
պէտ անոյշ գինեաք գինեւէտ է Միտի-
լինէ։ Գաղտ խորհուրդ ետ Պերիան-
դրի՝ հրաժեշտ տալ 'ի գինւոյ՝ թէ կա-
միցի տէր լինել Կորնթոսի՝ զոր 'ի մտի
երկնէր, և թէ կամիցի հաստատուն
կալ 'ի բռնաւորութեանն։ Պատուէր
եդ՝ զի որ միանգամ յանցանիցէ յար-
բեցութեան՝ կրկին պատժեսցի։ Սո-
վորութիւն էր նորա՝ ասել թէ այն-
պէս իմն հզօրագոյն է հարկն, զի և դիք
անգամ պարտական են հնազանդել
օրինաց նորա։ 'Ի հասարակաց պե-
տութեան այր իւրաքանչիւր 'ի հան-
դէս հանէ զքաջութիւն մտաց իւրոց։
Պարտ է իմաստնոց նախատես լինել
արկածից՝ որոց հնար իցէ հանդիպել,
առ 'ի բաց մերժել զնոսին։ Եւ վեհանձն
մարդկան է անդրդուութեամբ տանել
չարեաց 'ի հանդիպելն։ Դժուարին է լի-
նել այր գովելի։ Զիք ինչ լաւագոյն՝ քան
ջանալ բարիոք առնել զոր 'ի ձեռին կայ։
Առ 'ի բարւոք 'ի դլուխ հանել զգործն՝
պարտ է բովանդակութեամբ խելա-
մտել ընդ այն. և վաղընդփոյթ կա-
տարել զխորհեցեալն։ Մեծապանծ

յաղթութիւն այն է՝ որ լինիցի ա-
ռանց արեան ճապաղեաց. զի առ 'ի
քաջ զեկավարութիւն պետութեան՝
հարկ է զի թագաւորն և ամենայն ա-
ւագանին՝ իբրև զյեռին սոսկականն
հնազանդ լիցին օրինաց։

Ասէր նա ցաշակերտս իւր. կեցջիք
յիշատակաւ մահու, զի յիշեսջիք և
զկեանս։ Երբ կամիցիք առնել ինչ,
մի երբէք պանծասջիք ընդ այն. զի թէ
ըստ ձախողակ իմն արկածից ոչ մար-
թասջիք 'ի գլուխ հանել, յայնժամ
լինիք յամօթ նախատանաց։ Մի այպն
առնէք զոք վասն հիգութեան իւրոյ,
զի մի և դուք երբեմն նոյնպէս նկուն
լինիջիք։ Մի չարախօս լինիցիք զումե-
քէ, և ոչ զթշնամեաց ձերոց։ Պահե-
ցէք զբարեկամն ձեր, և կեցջիք ընդ նո-
սա աչալուրջ զգուշութեամբ, որպէս
թէ եկեսցէ օր՝ յորում ոխերիմ թըշ-
նամի լինիցին ձեզ։ Սիրեցէք զողջա-
խոհութիւն, զժուժկալութիւն, և
զճշմարտութիւն։ Երկերուք յաս-
տուածոց։ Դարձուցէք հաւատարմու-
թեամբ զաւանդն որ հաւատացաւ
ձեզ, և մի յայտնէք զթագուն խոր-
հուրդս։

Յօրինեալ էր նորա ոտանաւորս ինչ՝
յորս ասէր թէ հարկ է նմա առնուլ
զաղեղն իւր և զնետս, և զհետ պնդել

'ի սպանութիւն առնն չարի, ուր և դի-
պեսցի նմա. քանզի սիրտ նորա երկ-
խօս է, նոյնպէս և բանք բերանոյ նորա
կեղակարծ։

Յղեաց առ նա Կրեսոս 'ի դարձի ի-
րում արծաթ բաղում 'ի պարգև։ Ո՛չ
յօժարեաց Պիտտակոս ընդունել զայն,
և պատասխանի ետ անվրդով հաստա-
տութեամբ. Ճոխացեալ եմ կիսով չափ
աւելի քան զոր կամէի. վասն զի եղբայր
իմ մեռաւ անորդի, և ինձ հասանէ
ժառանգել զնա։ Առ ձեռն պատրաստ
էին Պիտտակոսի պատասխանիք. և
ո՛չ ուրեք խռովեցաւ նա ընդ անակն-
կալ խնդիր հարցեալ առ նա։ Հար-
ցաւ յաւուր միում. զի՞նչ յաւէտ նշա-
ւակ է յեղափոխութեան. ետ պատաս-
խանի. ընթացք ջուրց, և կանացի բնու-
թիւն։ Ո՞ր այն է՝ զոր առնել չէ ար-
ժան, բայց թէ անագան ուրեմն.
Դրամ փոխ առնուլ 'ի բարեկամէն։
Ո՞ր է զոր միշտ պարտ է առնել. Շահ
կրթել 'ի բարւոյն և 'ի չարէն որ ընդ
առաջ ելանիցէ։ Զի՞նչ առաւել հա-
ճոյական է. Ժամանակն։ Զի՞նչ թա-
գուն. Ապագայն։ Զի՞նչ հաւատարիմ.
Երկիր։ Զի՞նչ հաւատաղրուժ. Ծով։
Յասել ցնա Փոկայիկոսի, կամիմ խրն-
դրել զայր առաքինի վասն իրաց ինչ
զոր 'ի մտի ունիմ. պատասխանի ետ

Պիտտակոս, բաղումս խնդրեսցես, և ոչ ղոք դտցես։

Տիրրէոն որդի Պիտտակոսի մինչ-դեռ յաւուր միում՝ 'ի Կումէս քաղաքի կայր 'ի կրպակ վարսավիրայի՝ ուր խմբէին երիտասարդք զբանիւք դեղերել անդէն, ոմն 'ի գործավարաց յանդգաստութենէ ընկէց 'ի ձեռանէն զտապարն, որ անկաւ 'ի վերայ գլխոյն Տիրրէոնի, և յերկուս ճեղքեաց։ Քննեալ Պիտտակոսի խնամով զամենայն զղխարդն գործոյն՝ հասու եղև անմեղութեան առնն, և արձակեաց զնա։ Քանզի, ասէ, յանցումն յոչ կամաց գործեցեալ՝ արժանի է թողութեան. և որ 'ի նմանէ վրէժ լուծանէ՝ մեղապարտ է վասն յանիրաւի պատուհասելոյ զայր անպարտ։

Զուարճութիւն էր Պիտտակոսի 'ի քերթուածս պարապել. քանզի օրէնք նորա, և այլ ևս գրաւոր վաստակք՝ տաղաչափեալ են։ Հանապազորդեան աշխատութիւն էր նորա աղալ ալիւր յերկանս։ Դա ինքն եղև վարժապետ Փերեկիդիայ՝ զոր համարեցան բաղումք 'ի կարգ իմաստնոցն Եղլադայ. և մահ նորա նորօրինակ իմն դիպաւ։ Քանզի որպէս պատմենն՝ մինչդեռ պատերազմաւ վառեալ էին ընդդէմ միմեանց Եփեսացիք և Մագնեսա-

ցիք, Փերեկլիդէս որ հարեալ էր յոյժ յեփեսացիս, յաւուր միում դիպաւ առն միում զՃանապարհայն, և եհարց ցնա զքաղաք հայրենեացն. և իմացեալ թէ եփեսացի է, կա՛լ զիս, ասէ, զոտից իմոց, և ձգեալ տարցես մինչև յերկիրն մադնեսացւոց. և ընթացեալ պատմեա՛ յԵփեսոս՝ զոր ինչ քեզ պատուիրեաց առնել Փերեկլիդէս. յիշեցո՛ նոցա՝ թէ մի՛ զանց արասցեն թաղել զիս՝ յորժամ 'ի գլուխ հանցեն զյաղթութիւնն։ Ընդ քարշ տարաւ այրն զՓերեկլիդէս. և անտի ընթացեալ յԵփեսոս՝ պատմեաց զոր ինչ դիպաւ նմա։ Յաւուրն երկրորդի խմբեցան 'ի պատերազմ, և քաջայաղթ 'ի գլուխ հանին զմարտն. և ձեպով յարձակեալ մինչ 'ի տեղին ուր անկեալն էր Փերեկլիդէս, գտին զնա տապաստ անկեալ 'ի հրապարակին. ամփոփեցին զդիակն նորա մեծաշուք յուղարկաւորութեամբ։

Մեռաւ Պիտտակոս 'ի Լեսբոս կղզւոջ, 'ի հասակի եօթանասուն ամաց, 'ի ծ՟ոդ ողիմպիադին։

ԲԻԱՍ

Ժամանակակից Պիտտակոսի, նշանաւոր երևելաւ յաւուրս յորս թագաւորէին Ալիատէս և Կրեսոս։

ԲԻԱՍ 'ի Պրիենէ վոքր քաղաքէ Կարիոյ՝ քաջանուն դտաւ 'ի Յոյնս առ թագաւորութեամբ Ալիատեայ և Կրեսոսի թագաւորաց Լիւդիոյ, 'ի քառասներորդ ողիմպիադէն՝ մինչև 'ի մահ իւր։ Այր առ աքինաջան էր՝ ոչինչ խնդրելով զանձինն, խորազնին 'ի քաղաքավարութեան, և համեստ։ Անպաճոյճ էին կեանք նորա թէպէտ և աղնուական էր ծննդեամբ. սիրէր զստացուածս իւր 'ի պէտս կարօտելոց, հռչակեալ էր անուն նորա քան զամենայն պերճախօսաց այնր ժամանակին. ջանալով 'ի ձեռնտուութիւն աղքատաց, և ամենեցուն որոց 'ի վիշտս էին. ոչ մի ինչ օգուտ խնդրելով 'ի նոսին, բայց պաշտօն հարկանել հայրենեաց իւրոց։ Ո՛չ ձեռնարկէր 'ի դատ՝ զոր ոչ արդարացի վարկանէր. յառակս համարեալ էր այս ընդ ամենայն երկիրն ընդ այն. և յորժամ յայտ

առնել կամէր ոք թէ անստգիւտ է դատն, ասէր. ստանձնէ զայդ Բիւաս։ Իսկ 'ի ներբողելն զատենախօս ոք մեծաւ գովութեամբ, ասէր. քա՛ջ է քան զԲիւաս։

Հէնք ոմանք ծովամարտիկք յարձակեալ երբեմն մօտ 'ի Մեսենէ քաղաք Պեղոպոնեսոսի, յափշտակեցին անտի բազում աղջկունս, զորս տարեալ վաճառեցին 'ի Պրիենէ։ Գնեաց Բիւաս զնոսա, կալաւ առ իւր, և սնոյց իբրև զդստերս իւր. յետ այնորիկ տուեալ նոցա պարգևս՝ դարձոյց անդրէն առ ծնողս իւրեանց. այս առաքինի գործ նորա նիւթեաց նմա մեծարանս բազում. քանզի և բազումք ո՛չ այլ ինչ անուն կարդային նմա, բայց իշխան իմաստնոց։ Յետ ժամանակաց ինչ 'ի վերայ անցանելոյ ձկնորսք ոմանք մեսենացիք որսացեալ ձուկն վիթխարի՝ դտին յորովայն նորա անօթ ոսկեղէն, յորում դրոշմեալ էր այսպէս. Իմաստնագունին։ 'Ի խորհուրդ ժողովեցաւ ծերակոյտն Մեսենեայ՝ թէ ո՞ւմ արդեօք հանցեն զայն 'ի պարգև։ Օրիորդքն առ որս մարդասիրեալ էր Բիւաս՝ յանդիման եղեն ժողովոյն հանդերձ հարբք իւրեանց, և ձայն բարձեալ աղաղակէին՝ թէ չէ ոք իմաստուն քան զԲիւաս։ Ծերակոյտն Մեսենեայ յղեաց

նմա զայն անօթ 'ի պարգև. 'ի ձեռն առեալ զայն Բիասայ, և ընթերցեալ զոր շուրջ զնովաւ զգրութիւնն, ո՛չ յանձին կալաւ ընդունել զայն. ասաց, այդ պատիւ Ապողոնի է։

Կարծեն ոմանք թէ այդ անօթ նոյն է ընդ եռոտանւոյն, զոր պատմեցաք 'ի վարս Թաղեսի. և թէ այսր պատմութեան հիմն է առաքումն եռոտանւոյն առ Բիաս։ Են և որք ասեն թէ այս զառաջինն առ նա յղեցաւ։

Ալիատէս արքայ Լիւդացւոց յաղարտ վարեալ զբազում քաղաքս յունաց ասիացւոց, հասեալ պատնէշ պաշարման արկանէր զՊրիենէ քաղաքաւ. յայնժամ Բիաս որ իշխան էր քաղաքին, ընդ ժամանակս ձիգս զդէմ կալաւ նմա բուռն զօրութեամբ։ Այլ զի թուէր իմն թէ յամառեալ պնդեալ էր Ալիատէս մինչ 'ի վախճան յերկարել զպաշարումն, և այն զի քաղաքն տառապէր 'ի սաստիկ կարօտութենէ՝ առ պարենիցն նուազելոյ, դիրացոյց Բիաս երկուս դեղեցիկ ջորիս, զորս վարեաց դէպ 'ի բանակ թշնամեաց, որպէս այն թէ ինքնին վախիցեն։ Աքանչացաւ Ալիատէս տեսեալ զանասունսն պարարտացեալս, խիթացաւ թէ ո՛չ արդեօք ձեռնհաս գտանի սովու նուաճել զքաղաքն,

պատճառանօք առաքեաց զայր ոմն 'ի քաղաք անդր, պատուիրեալ գաղտ՝ զննել զվիճակ քաղաքացւոց։ Իսկ Բիասայ զգացեալ զնենդութիւն Ալիատեայ՝ ետ դիզել շեղջս շեղջս աւազոյ՝ վերարկեալ զնոսին սակաւ ցորենով, զորս տեսեալ հրեշտակին Ալիատեայ, ոչինչ երկմտեաց ընդ լիութիւն պարենիցն։ Պատրեցաւ Ալիատէս 'ի հնարից աստի, անդէն վաղվաղակի եթող զպաշարումն քաղաքին. և դաշնադիր եղև ընդ Պրիենեցիս։ Ցանկացեալ նորա տեսանել զԲիաս՝ յղեաց առ նա գալ յանդիման լինել ինքեան 'ի բանակին։ Պատասխանի ետ Բիաս պատգամաւորաց նորա. Ասացէք ցթագաւորն ձեր՝ թէ ես աստ բնակեմ, և հրամայեմ նմա սոխ ուտել, և արտասուս քամել զամենայն աւուրս իւր։

Հաճոյական էր Բիասայ բանաստեղծութիւն. յօրինեաց երկու հազար տողս ոտանաւորաց, յորս կանոնս աւանդէր՝ ուսուցանել ամենեցուն զհնարս երջանկութեան կենաց, և զառաջնորդութեան հասարակապետութեան՝ 'ի ժամանակի խաղաղութեան և պատերազմի։

Սովորութիւն էր նորա. ասել ջանացարուք հաճոյ լինել ամենեցուն. զոր թէ առնիցէք՝ յաջողեսցէ ձեզ յա-

մենայն 'ի կեանս ձեր. պերճութիւն, և արհամարհութիւն զայլովք՝ ոչինչ առատացոյց 'ի բարեաց։ Սիրեցէք ըղ-բարեկամս ձեր խորհրդով. յուշ ա-ծեալ՝ թէ երբեմն թշնամենան ընդ ձեզ։ Ատեցէք զթշնամիս ձեր չափով, քանզի հնար է հաշտել նոցա ընդ ձեզ։ Զգուշութեամբ ընտրեցէք ձեզ բարե-կամն. հաւասար սիրեցէք զնոսա, այլ միտ դիք յիւրաքանչիւր 'ի վաստակս նոցա։ Նմանեցարուք նոցա՝ որոց ըն-տրութիւնն ձեզ 'ի պատիւ համարի. և զայս քաջ հաստատեցէք 'ի խոր-հուրդս ձեր. թէ առաքինութիւն բա-րեկամաց ձերոց բազմօք գիտէ սատար լինել 'ի պարծանս ձեր։ Մի ճեպիք 'ի խօսս ձեր, զի մի զանմտութեան տայ-ցէք նշանակս։ Ջանացարուք ստանալ իմաստութիւն 'ի մանկութեան ձե-ռում՝ որ միսիթարեսցէ 'ի ծերու-թեանդ. այդ իսկ է ճոխութիւն մե-ծապանծ. և որ զայդ ստանայ՝ ոչ ոք 'ի նմանէ կորզել կարիցէ։ Արտմտու-թիւն և գահավէժ խորհուրդ, երկուք այսոքիկ հակառակ են խոհեմութեան։ Մարդ զգօն ուր ուրեմն է տեսանել. իսկ չարք և անմիտք յորդեալ են յա-ճախութեամբ։ Գուն գործեա՛ կատա-րել զոր լինչ խոստացարդ։ Բանք քո վասն աստուածոց համապատշաճ լի-

ցին ընդ մեծութեան նոցա. և դոհա-
ցիր զնոցանէ յամենայն բարի գործս
զոր առնիցես։ Մի անխորհուրդ ձեռն
մխեր յամենայն, բայց յորժամ եդեր
'ի մտի գործել ինչ, մտադիւր ջանիւք
'ի գլուխ հանցես զայն։ Զգոյշ լեր դո-
վել զմարդ վասն ճոխութեանց նորա՝
թէ նա չիցէ արժանի։ Կեաց հանա-
պազ այնպէս՝ որպէս թէ հասեալ ի-
ցես 'ի յետին օր կենաց քոց, և իբր
թէ ընդ երկայն ժամանակ կեցցես 'ի
կեանս։ Վայելք առողջութեան՝ բնու-
թեան պարգև է. իսկ ճոխութիւնք՝
բաղում այն է զի բաղդին արդիւնք
են. միայն իմաստութիւն է որ օգտա-
կար հայրենեացն առնէ զմարդ։ Դիւ-
րին է վաստակել անհնարին իրաց։

Հարցաւ՝ թէ զինչ է որ առաւել
քան զամենայն ինչ յորդորամիտ առ-
նէ զմարդ. ասէ, Յոյսն։ Իսկ զինչ
յաւէտ հաճոյական. ասէ, Շահն։
Զինչ դառն 'ի հանդուրժել. Հոլովել
բաղդին։ Թշուառական համարէր
զմարդ՝ որ չգիտիցէ տանել արկածիցն
հանդիպելոց։ Տեսեալ սուսեր ընկե-
ցեալ յերկիր, ասէ՝ ո՞ կորոյս զքեզ,
կամ դու զո՞։

'Ի նաւել նորա երբեմն ընդ արանց
ամբարշտաց, յարեաւ 'ի ծովուն մրրիկ
մեծ և ամեհի, մինչև 'ի վտանգի լինել

նաւուն ընկղմելոյ։ Ահաբեկեալ ամբարշտացն յերկիւղէ մահուան՝ ձայն բարձեալ աղաղակէին առ դիս։ Աստեաց նոցա Բիւաս. լռեցէք, ասէ, մի՛ խնասցին զձեզ թէ դուք աստ էք, զուցէ ամենեքին միանգամայն կորնչիցիմք։ Յայլում նուագի այր ոմն ամբարիշտ եհարց ցնա, ո՞ր պաշտօն հաճոյ է աստուածոց. ո՞չինչ ետ պատասխանի Բիւաս։ Ի ժտել առնն զպատճառ լռութեանն. քանզի, ասէ Բիւաս, հարցանես զոր քեզ չէ անկ։

Ասէր՝ ընտրեմ յաւէտ դատ առնել ընդ երկուս թշնամիս իմ՝ քան ընդ բարեկամն. քանզի ՝ի հարկէ դերեւանայ բարեկամութիւն նորա զոր պարտաւորեմ. իսկ ՝ի դատաստանի թշնամեաց՝ հաշտիմ ընդ միում ՝ի նոցանէ, որում իրաւունս արարից։ Հարկ եղեւ երբեմն Բիւասայ դատաստան առնել ՝ի վերայ մեոյ ՝ի բարեկամաց իւրոց՝ որ մահու պարտաւոր էր։ Մինչեւ կարդացեալ նորա զդատակնիքն՝ լուծաւ ՝ի դառն արտասուս յատենի անդ. և ՝ի հարցանել ուրուք թէ զի՞ լաս, զի ՝ի քեզ միայն կախեալ կայ դատել կամ արձակել զմեղապարտն։ Լամ, ասէ Բիւաս, զի բնութիւնս բռնադատէ զիս վշտակից լինել տառապելոց, և օրէնք հրամայեն մի՛ ակնարկել ՝ի գութ բը-

նութեան Ոչ դասէր ընդ հաւասարի բարիս զոր միանգամ ընդ բաղդիւ են անկեալ. համարէր զճոխութիւնս իբրև աւելորդս ինչ, զորովք հնար է զանց առնել դիւրաւ. որ և բազում այն է՝ զի մոլորեցուցանեն զմարդիկ 'ի ճանապարհէ առաքինութեան։

Գտաւ նա 'ի Պրիենէ 'ի քաղաք ծննդեան իւրոյ՝ երբ առաւ և յաւարի յափշտակեցաւ 'ի թշնամեաց քաղաքն. քաղաքացիքն ամենայն՝ բարձեալ զոր ինչ տանելն կարէին՝ փախստեայ անկանէին տագնապաւ՝ ամրացուցանել զայնս յանքոյթ վայրս։ Բիաս միայն կայր անվրդով յաղմկայոյզ խռովութեան անդ, իբրև անդգայեալ ընդ աղէտս հայրենի քաղաքին իւրոյ։ Հարցին ցնա ոմանք, զի՞ և դու ո՛չ ձեռն արկանես թափել զոր ունիսդ, որպէս այլքն։ Ասէ Բիաս. զդոյն և ես ինքն առնեմ, քանզի զամենայն զդոյս իմ ընդ իս տանիմ։

Դատաստանն որ 'ի վախճան հասոյց զկեանս Բիասայ, ո՛չինչ նուազ է փառաբ քան այլ գործս նորա։ Գնացեալ նորա յատեան ծերակուտին՝ ըզկողմն ունէր ատենախօսելով նախանձայոյզ եռանդեամբ՝ զմիոյ 'ի բարեկամաց իւրոց. պարտասեցաւ առ ծանրացեալ ծերութեանն, և խոնար-

հեցոյց զգլուխն ընդ լանջս որդւոյ դստերն իւրոյ՝ որ անդ ընդ նմա էր։ Իսկ իբրև ատենախօսեաց և փաստաբան դատախազին, վճռեցին դատաւորք ըստ բանից Բիասայ՝ որ անդէն առ նմին փչեաց զոգին 'ի գիրկս թոռին իւրոյ։

Խմբեցաւ ողջոյն քաղաքն 'ի յուղարկաւորել զնա, և զերեսս ամենեցուն թանձրամած տխրութիւն պատէր ընդ մահ նորա. կանգնեցին յանուն նորա շիրիմ մեծակառոյց, դրոշմեալ 'ի նմա զայս բան. „Պրիենէ հայրենի քաղաք է Բիասայ սքանչելւոյն՝ ընդ համօրէն Յոնիա, որոյ խորհուրդք դեր 'ի վերոյ էին քան զամենայն իմաստասիրաց"։ Յիշատակ նորա մեծապատիւ պաշտեցաւ՝ մինչև կանգնել տաճար 'ի փառս նորա, յորում աստուածակերպ մեծարէին զնա Պրիենեցիք։

ՊԵՐԻԱՆԴՐ

Բռնաւոր կորնթացւոց, ժամանակակից նախակարգեալ իմաստասիրաց։ Անծանօթ ամ ծննդեան նորա և մահուն։

ՕՏԱՐԱՑՈՒՑԻՉ ի՞նչ է՝ իմաստուն անուն կարդալ յունաց Պերիանդրի առն յիմարի։ Հրաշացան նոքա ընդ աքանչելի բանս իմաստիցն, ոչ ինչ միտ եդեալ տարօրէն ընթացից կենացն։ Բանք նորա յամենայնի՝ իմաստնոյ էին, և օրինակ կենացն՝ առն յուսահատի. անպատկառ և անամօթ ոչ երկեաւ առ ոտն կոխել զընութիւնն, խղեալ զանլոյծ կապանս անկղիտանալով ընդ մօրն իւրում Կրատէի։

Ուխտեաց յաւուր միում՝ զի թէ յաղթական ելցէ յողիմպիական խաղուց, կանգնեսցէ Արամազդայ անդրի ոսկի. յաղթեաց 'ի բաղմաժողով խաղարկութեանն որ լինէին. այլ զի չունէր ինչս 'ի կատարումն ուխտին, ետ կողոպտել զզարդս ամենայն տիկնանց՝ որոց շքեղ զարդու զարդարեալ կային 'ի տօնի ուրեք և սովին օրինակաւ կատարեաց զուխտն։

Պերիանդր որդի էր Կիպսելիայ՝ 'ի Հերակղեանց աղգատոհմէ, և բռնացեալ կալաւ զԿորնթոս քաղաք ծնընդեան իւրոյ, առ ժամանակօք Ալիատեայ թագաւորի լիւդացւոց. ա՛ռ 'ի կնութիւն զԼիսիս դուստր թագաւորին Եպիդաւրոսի. յամենայնի խնամոտ երևեցաւ 'ի սէր նորա, և զանունն Լիսիս փոխեալ՝ անուանեաց Մելիսսա։ Երկու որդիք եղեն նորա յայնմ կնոջէ. անդրանիկն Կիպսելէս յամբ էր մտօք, և իբրու ապուշ ոմն. իսկ կրտսերն Լիկուիրոն քաջուշիմ էր, և 'ի գործ առաջնորդութեան պատկանաւոր։ Իբրև յղի էր Մելիսսա, կանայք ոմանք փասքուսք ջան 'ի վերայ եդին տխեղծ առնել զանուն նորա առ Պերիանդրի. և այնչափ ինչ հեղին 'ի լսելիս նորա՝ մինչև վառեցին զնա զայրացեալ նախանձու. յաղագս որոյ իբրև հանդիպեցաւ կնոջն յելանել նորա ընդ սանդուխս ուրեք 'ի վեր, աքացի եհար ընդ որովայն նորա, և սպան զմայրն հանդերձ որդւովն յղացելով։ Ստրջացաւ փութանակի ընդ գործն, և առ յուսահատութեանն՝ տեղի տուեալ ցնորից անսանձ կրից, մոռացաւ զպարտուպատշաճ պատիւ ընութեանն դիակնացեալ մարմնոյն, և ծանր նախատանօք թշնամանեաց զկինն՝ որ

ոչ ևս էր ընդ կենդանիս։ Ապա թա-
փեաց զբարկութիւն իւր 'ի վերայ կա-
նանցն որք արկին զնա յայն կասկա-
ծանս. ետ ունել զնոսա, և հրամայեաց
այրել կենդանւոյն։

Յորժամ լուաւ Պրոկղէոս արքայ
Եպիդաւրոսի զաղէտս մահու դստեր
իւրոյ սիրելւոյ, յղեաց և ետ բերել
առ ինքն զերկոսին թոռունս իւր զորս
սիրէր գգուանօք։ Կալաւ զնոսա առ
իւր ընդ ժամանակս ինչ 'ի մխիթար
դառնացելոյ սրտին. և իբրև անդրէն
արձակէր զնոսա, գիրկս արկեալ զնո-
քօք ասաց ցնոսա. որդեակք իմ գիտէք
դուք զսպանող մօրդ ձերոյ։ Երէցն ոչ
'ի միտ առ զբանսն. իսկ կրտսերն քաջ
խելամուտ լեալ ասացելոցն՝ 'ի դառ-
նալն 'ի Կորնթոս՝ այնուհետև ոչ ևս
յօժարեաց խօսել ընդ հօր իւրում, և
ոչ տալ պատասխանի հարցուածոց
նորա։ Բազում ինչ հարցանէր թա-
գաւորն ընդ Կիպսելէս՝ գիտել զոր ինչ
ասաց ցնոսա Պրոկղէոս. այլ սորա զի
զբովանդակն մոռացեալ էր՝ պատմէր
նմա զմարդասէր հիւրընկալութիւնն
որով ժողովեաց զնոսա հաւ իւրեանց.
ոչ հանգեաւ Պերիանդր ընդ բանսն,
զի հանապազ խիթայր ընդ Պրոկղէոս.
յաւել ևս հետազօտել 'ի մանկանէն.
մինչև ուր ուրեմն 'ի միտս եկեալ Կիպ-

սելեայ, յիշատակեաց զլետին բանսն Պրոկղէոսի, և կարգաւորաբար պատմեաց զայն հօր իւրում։ Յայնժամ 'ի միտ առ Պերիանդր զազդեցեալն 'ի նմանէ առ որդիս իւր, հոգ յանձին կալաւ 'ի նեղ արկանել զորդի իւր զկրտսեր՝ ապաստանել առ ինքն, արդել առ որս օթևանեալ էր նորա՝ ունել զնա առ ինքեան։

Անպատսպար մնացեալ Լիկոփրոնի 'ի տարագրութեան իւրում, տատանէր տուն 'ի տանէ. այլ յամենեցունց 'ի բաց վտարէր առ երկիւղի սպառնալեաց հօր նորա. հուսկ ուրեմն ոմանք 'ի բարեկամաց նորա կարեկից լեալ ընդ դեգերանս նորա՝ ընկալան զնա 'ի տուն իւրեանց, 'ի վտանգ եդեալ զանձինս՝ հեստութեամբ արքունի հրամանաց։ Հրաման արար Պերիանդր՝ զի որ միանգամ ընկալցի կամ խօսեսցի ընդ Լիկոփրոնի՝ մահու դատեսցի։ Երկիւղ սպառնալեաց պատուհասին ահաբեկ արար զամենեսեան, զի և ոչ ոք համարձակէր ակնարկել ընդ նա։ Զգիշերսն 'ի գլուխ հանէր Լիկոփրոն 'ի գաւիթս տանց. ամենեքին խորշէին 'ի նմանէ իբրև յերեսաց դաղանի։ Իբրև անցին աւուրք չորք տեսանէր զնա Պերիանդր յոգիս ապաստան յերեսաց սուղոյ և նեղութեան, խանդաղատեալ՝

մերձեցաւ առ նա և ասէ. Ո՞վ Լիկո-
փրոն՝ ո՞ր լաւ է, վայրենի կեանս վա-
րել՝ որպէս դուդ առնես, թէ հրամա-
նատար լինել իշխանութեանս իմոյ, և
ոչ ամենայն գանձուց իմոց. դու իմ
որդի ես, և իշխեցող բարդաւաճ քա-
ղաքիս Կորնթոսի։ Թէ արկածք ինչ
պատահեցին՝ ես ինքնին առաւել ստըր-
ջացեալ եմ ընդ այն, գիտելով թէ ես
էի պատճառ իրացն։ Իսկ աղետից քոց
դու ինքն եղեր պատճառ, զի զայրա-
ցութեամբ գնացեր ընդ իս՝ զոր մեծա-
րել արդեօք քեզ օրէնք էին. այլ այժմ
զի հասու եղեր հայրատեցութեան
չարեաց, աւադիկ շնորհեմ քեզ դալ
մտանել 'ի տուն իմ։ Սալացեալ ան-
շարժութեամբ մնաց Լիկոփրոն առ
բանս Պերիանդրի. պատասխանի ետ
նմա տմարդութեամբ. Դու քեզէն
պարտաւոր ես պատուհասին զոր այ-
լոց սպառնացար, զի խօսեցար ընդ իս։
Իբրև ետես Պերիանդր զանդրդուելի
կամակորութիւն որդւոյ իւրոյ, խոր-
հուրդ կալաւ տարագրել զնա յերե-
սաց իւրոց. վասն այնր աքսորեաց զնա
'ի Կորկիւրա կղզի, որ ընդ իշխանու-
թեամբ իւրով էր։

Յետ այնորիկ 'ի սրտմտութիւն վա-
ռեալ Պերիանդրի ընդդէմ Պրոկղէո-
սի՝ զոր համարէր պատճառ խռովու-

թեան իւրոյ և որդւոյն, զօրաժողով եղև. և ինքն 'ի գլուխ կացեալ բանակին՝ յարձակեցաւ 'ի վերայ նորա մարտիւ պատերազմի։ Յաջողեաց նմա յամենայնի. տիրեաց քաղաքին Եպիդաւրոսի. կալաւ զՊրոկղէոս, և պահեաց զնա առ իւր կենդանի։

Իբրև ժամանակք 'ի վերայ անցանէին, և 'ի տկարութիւն ծերութեան խոնարհէր Պերիանդր, յղեաց 'ի Կորկիւրա կոչել զԼիկոփրոն, զի նմա տացէ զտէրութիւն իշխանութեան իւրոյ, զանց արարեալ զանդրանկաւն, որ անբաւական էր 'ի գործ առաջնորդութեան։ Բնաւ ինչ չետ Լիկոփրոն պատասխանի հրաւիրակին Պերիանդրի. ոչ ցասեաւ ընդ այն Պերիանդր՝ զի սիրէր զորդին իւր. պատուիրեաց դստեր իւրում գնալ 'ի Կորկիւրա, կարծեալ թէ բանք նորա աղդեսցեն ինչ 'ի սիրտ եղբօրն՝ քան զհնարադիտութիւն իւր որովք վարեցաւ ցայնժամ։ Իբրև եհաս անդր օրիորդն իշխանազուն՝ երդմնեցուցանէր զեղբայր իւր որովք ինչ 'ի դէպ վարկանէր քաղցրացուցանել զնա, և յաղթել կամակորութեան մտաց նորա։ Իսկ արդ յօժարիցեն՝ ասէ, անցանել դահու թագաւորութեան առ այր ոք օտարական, և ոչ 'ի քեզ. իշխանութիւն՝

տարփածու է յեղամիտ, և բաղում են ցանկացողք նորա. հայր մեր ծանրացեալ է կարեօք ծերութեան, և առ ափամբք գերեզմանին տատանի. թէ դու ոչ դարձցիս՝ անշուշտ սպառեսցի ազգատոհմ մեր. արդ քա՛ջ խորհեաց մի թողուր օտարաց զմեծութիւնն որ հանդերձեալ պահի քեզ օրինօք։ Պընդեաց նմա Լիկոքրոն՝ թէ ցորչափ կենդանի է հայր իւր՝ ո՛չ դարձցի 'ի Կորնթոս։ Իբրև դարձաւ օրիորդն՝ և պատմեաց հօրն զմիտս հաստատութեան Լիկոփրոնի, երրորդ անգամ յղեաց Պերիանդր 'ի Կորկիւրա՝ ծանուցանել որդւոյն՝ դալ տիրել Կորնթոսի՝ երբ և կամիցի, և զի փոխարէն՝ ինքն Պերիանդր յանձին կալեալ է պանդխտել 'ի Կորկիւրա, և անդ անցուցանել զաւուրս իւր։ Յանձն առ Լիկոփրոն զպայմանն. հանդերձեցան կաղմեցան երկաքանչիւրքն փոխել զտեղի բնակութեան իւրեանց։ Իբրև զդաստ եղեն իրացն կորկիւրացիք՝ ամենեքին ահաբեկ պակուցեալք՝ խողխողեցին զ Լիկոփրոն, զի մի Պերիանդր եկեալ բնակեսցէ 'ի մէջ նոցա։ Յուսահատ սրտմտեալ Պերիանդրի ընդ սպանութիւն որդւոյ իւրոյ՝ անդէն վաղվաղակի եռ ունել երեք հարիւր մանկունս յաղնուականաց կորկիւրացւոց՝ և յը-

ղեաց առ Ալիատէս՝ խղել զնոսա 'ի
ներքինիս։ Հարկ եղև նաւուն յորում
նոքայն էին՝ 'ի գնալն ելանել 'ի Սա-
մոս կղզի. և իբրև իմացան մարդիկ
երկրին զպատճառ վարելոց մանկանցն
անմեղաց 'ի Սարդիա, կարեկից եղեն
ընդ վիշտս նոցա. և ծածուկ խորհուրդ
ետուն՝ ապաստան լինել 'ի տաճար Ա-
նահտայ. իբրև անկան նոքա անդր՝
ոչ ևս թողին կորնթացւոց կորզել ըզ-
նոսա անտի, պատճառելով թէ ընդ
խնամովք կան աստուածուհւոյն, և
ապա հնարս ճարտարամտեցին ապրե-
ցուցանելոյ զնոսա, առանց ինչ թշնա-
մութիւն յայտնելոյ ընդ Պերիանդր.
զօր ամենայն ընդ երեկս՝ յղէին զուս-
տերս և զդստերս սամոսացւոց՝ կա-
քաւս կաքաւել շուրջ զտաճարաւն,
և տային նոցա կտապս իմն կազմեալս
մեղու՝ զոր 'ի կաքաւելն արկանէին 'ի
ներքս 'ի մեհեանն. մանկունքն կոր-
կիւրացիք ժողովէին զայնս, և նովին
կերակրէին։ Եւ զի այս պարանցիկք
հանապազորդէին, տաղտկացեալ ընդ
այն կորնթացւոց՝ դարձան յետս։

Յոգի խոցեցաւ Պերիանդր՝ զի ոչ
գտաւ ձեռնհաս լուծանել զվրէժ մա-
հու որդւոյն իւրոյ զոր փափաքէր.
վասն որոյ եդ 'ի մտի այնուհետև զրաւ
առնել կենաց իւրոց. այլ զի ոչ կա-

մէր թէ գտցէ ոք զդի իւր՝ խորհեցաւ այսու օրինակաւ թագուն պահել զերսն. կոչեաց առ ինքն երիտասարդս երկուս, որոց եցոյց ճանապարհ հեռաւոր. և պատուիրեաց զգնալ ընդ այն 'ի հետևեալ գիշերին, և սպանեալ որուսմ նախ զառաջինն հանդիպեսցին, նոյն հետայն թաղեսցեն զմարմին նորա։ 'Ի բաց արձակեալ զնոսա՝ կոչեաց այլ չորս երիտասարդս, հրամայեաց և նոցա շրջել գիշերային զայնու ճանապարհաւ, և 'ի մահ հարկանել զերիտասարդս երկուս որ ընդ առաջ լինիցին 'ի միասին. և փութանակի ամփոփել ընդ հողով։ Յետ արձակելոյ և զնոսա՝ կոչեաց ապա խումբ մի բազմութեան մարդկան. և նոցա զնոյն պատուէր եդ 'ի վերայ՝ սպանանել զչորեսին, և թաղել զնոսա առ տեղեաւն։ Յետ զամենայնն տնօրինելոյ ըստ կամաց սրտի իւրոյ, անվրէպ ըստ ժամանակեալ պահուն գտաւ 'ի սահմանեալ տեղւոջն՝ և սպանաւ յառաջնոց երկուցն որոց դիպաւ։ Դամբարան կանգնեցին կորնթացիք 'ի յիշատակ նորա հանդերձ ներբողական արձանագրով։

Առաջին եղև Պերիանդր՝ որ թիկնապահս կալաւ զիւրև, և փոխեաց զիշխանի անունն 'ի բռնաւոր. ոչ թոյլ

առնէր ամենեցուն անխտիր բնակել 'ի քաղաքին։ Թրասիբուղոս՝ զորոյ ըզ-խորհրդոյն զհետ գնայր հաւատարմութեամբ՝ զրէր առ նա թուղթ օրինակ զայս. „Ո՛չինչ թագուցի ես յառնէն զոր առ իս յղեցեր. հանի զնա յանդաստան ցորենոյ, հարի առաջի նորա զամենայն զհասկս վերամբարձս քան զայլս։ Կա՛լ զօրինակն զոր քեզ ետու՝ թէ մնալ խնդրես յիշխանութեան քում, նուա՛զ արա զաւագորեար քաղաքիդ՝ զբարեկամ, կամ զթշնամիս. քանզի առն բռնակալի ցանդ պա՛րտ է խիթալ. նա՛ և ընդ նոսա որք միամիտ կարծեսցին 'ի բարեկամութեան „։

Ասէր Պերիանդր թէ ամենայն ինչ յանկ ելանէ խորհելով և գործելով, որովհետև գտեալ էր և հնարք՝ հատանելոյ զկիրճս ծովուց։ Զի՛ արժան ցանկալ ընչից՝ 'ի հատուցումն գործոց բարեաց։ Մեծամեծք չունին այլ անելկեան ամրութիւն քան զսէր իշխեցելոց իւրեանց։ Զի՛ք ինչ պատուական քան զհանդարտութիւն։ Հա՛րկ է պատուհասել ո՛չ միայն զչարագործս, այլ և զորս առ 'ի չարիս յօժարեսցին։ Բերկրութիւնք՝ վաղանցուկ են, փառքն մշտնջենաւոր է։ Արժա՛ն է չափաւոր լինել 'ի յաջողուածս, և 'ի ձախողակս զգօն։ Մի հաներ 'ի վեր զթագուն

խորհուրդ որ քեզն հաւատացաւ։ Մի խտրեր զյաջողութիւն և զաղէտս բարեկամաց, այլ յոր և վիճակ իցեն, դու միօրինակ հայեաց ընդ նոսա։

Իմաստնոց ընկերութիւն ցանկալի էր Պերիանդրի. նամականի առնէր առ այլ իմաստասէրս Եղլադայ՝ հրաւիրել զնոսա 'ի Կորնթոս՝ զոր օրինակ կոչեցեալ լինէին 'ի Սարդիա։ Քանզի յորժամ հանդիպէին անդր՝ ժողովէր զնոսա մարդասիրութեամբ, և ջան 'ի վերայ դնէր խնդամիտ ունել զնոսա։ Թագաւորեաց ամս քառասուն. և մեռաւ 'ի խբ ողիմպիադին։

Համարին ոմանք թէ երկուք իցեն իմաստասէրք Պերիանդր անուամբ. և թէ միոյն ևեթ ընծայեն զբանս և ըզգործս երկոցուն։

ՔԻՂՈՆ

Ծերացեալ էր 'ի յիսներորդ երկրորդ ողիմպիադին, յորմէ մարթիմք ժամանակակից համարել զնա ընդ Պիտտակոսի։

ԵՐԱՂԿԷՐ Քիղոն 'ի Լակեդեմոնացւոց քաղաքին Իբրև 'ի ծբ ողիմպիադին։ Այր անյողդողդ էր և հաստատուն 'ի խորհուրդս, յամենայնի միօրինակ, և անդորր 'ի վիշտս և 'ի յաջողուածս։ Մենակեաց էր և անպաճոյճ. զայս խորհէր՝ թէ ժամանակ անօգուտ վատնեալ՝ այն է որ յերկարատև ճանապարհորդութեան անցանէ։ Կեանք նորա գաղափար էր կատարեալ առաքինութեան. պարզմտութեամբ գործէր զայն ամենայն՝ զոր այլոց ուսուցանէր. սքանչելի էր ամենեցուն լռութիւն նորա և ժուժկալութիւն։ Կանոն կենաց նորա էր առած նորա, այն թէ՝ Պարտ է յամենայնի հանդարտ ընթանալ։

Զյիսներորդ հինգերորդ ողիմպիադաւ կարգեցաւ Պարետ, կամ Դիտապետ, որ էր աւագութիւն գերաստի-

ճան 'ի Լակեդեմոն՝ հանգիտակշիռ թագաւորականին, որ զարքունի իշխանութիւնն 'ի չափուն պահէր։ Եղբայր նորա որ ակն ունէր այնմ աւագութեան՝ զչարեցաւ ընդ այն, և սկսաւ ոգորել ընդ նմա։ Պատասխանի ետ նմա Քիլոն անխռով բանիւք. ընտրեցայ ասէ, զի քան զքեզ պատկանաւոր կարծեցայ՝ հանդուրժել նախատանացն եղելոց առ իս վասն կորզելոյ զիս 'ի հանդստենէս, հոգալոյ զբազմացն, և 'ի գերութիւն գրաւելոյ։

Համարէր նա թէ չէ արժան զանց առնել խպաւ զհմայութեան արուեստիւ. և թէ մարդ զօրութեամբ ոգւոյ իւրոյ ձեռնհաս է գիտել բազում ինչ ապագայ։

Յաւուր միում մինչդեռ զոհ մատուցանէր Իպպոկրատէս ոմն 'ի ժամանակի ողիմպիական խաղուց, այն ինչ դնէր զմիս նուիրացն 'ի սանս լցեալս ցուրտ ջրով, յեղակարծում ջեռաւ ջուրն, և սկսաւ յեռանդն հարկանել. մինչև շուրջ զեղոյր թաթաղէր, առանց հուր մատուցանելոյ 'ի սանսն։ Քիլոն որ անդէն մօտ կայր՝ ուշն ուշով միտ եդ նորահրաշ իրացն, և խորհուրդ 'ի միտս արկ Իպպոկրատեայ՝ ջամուսնանալ երբէք. և թէ առ ձախողակ բաղդին ամուսնացեալ լցէ՝

անդէն անյապաղ արձակեցէ զկինն, և զառ 'ի նմանէ որդիսն զամենեսեան սպանցէ։ Ծիծաղեցաւ Իպպոկրատէս ընդ խորհուրդ նորա, ա՛ռ կին, և ծնաւ 'ի նմանէ զՊիսիստրատոս՝ որ բռնակալեաց յԱթէնս 'ի հայրենի քաղաքի։

Դարձեալ յայլում նուագի ճշգրիտագոյնս քննեալ Քիղոնի զհանդամանս գետնոյ և զդիրս Կիւթերա (չէրիկօ) կղզւոյ, գոչեաց առաջի բազմութեան մարդկան. Երանի՛ թէ չէր երբէք եղեալ այս կղզի, և իցէ՞ թէ ընկլուզանէր 'ի ծով անդէն ընդ երևելն. քանզի նշմարեմ ես թէ դա լինիցի պատճառ աւերածոյ լակեդեմոնացւոց։ Ո՛չ վրիպեցին բանք նորա. քանզի յետ ժամանակաց առին աթենացիք զայն կղզի, և այնու զօրացան յաղարտ վարել զՍպարտա։

Երեք են՝ ասէր, իրք դժուարինք. պահել զծածուկս, հանդուրժել զրկանաց, և բարեօք անցուցանել զժամանակն։ Համառօտ և հակիրճ էին զրոյցք Քիղոնի, մինչև յառակս լինել ոճոյ խօսից նորա։ Ասէր՝ Ած խոնարհեցուցանէ զբարձրամիտս և բարձրացուցանէ զնուաստս։ Ոչ արժան սպառնալ ումեք, քանզի տկարութիւն կանացի է։ Մեծ իմաստութիւն է սանձ

դնել լեզուի, մանաւանդ 'ի կոչունս։ Դժպատեհ է չարախօս լինել զմարդոյ, զի անդադար լինին թշնամութիւնք, և անգք անարժան 'ի լսել։ Պարտ է յայց ելանել առ բարեկամն՝ յաւէտ յորժամ 'ի վիշտս իցեն, քան յորժամ 'ի յաջողուածս։ Բաղդն է տգէտ բժիշկ, որում զհետ են բազումք։ Զէ օրէն սնոտի յուսով պատրել զորս յանձկութեան իցեն։ Առն քաջասրտի պարտ է յամենայնի քաղցր լինել. և պատկառելի երևեցուցանել զանձն, քան ահաւոր։ Խոհական քաղաքականութիւն 'ի պետութեան է ուսուցանել քաղաքացւոց զզգօն առաջնորդութիւն իւրաքանչիւր տան իւրոյ։ Վայելուչ է կին ածել՝ անպաճոյճ օրինակաւ, և մի անձամբ զանձն կործանել մեծածախ հանդերձանօք հարսանեաց։ Փորձաքար փորձէ զոսկի և զարծաթ. սակայն ոսկւով և արծաթով փորձի սիրտ մարդոյ։ Յամենայնի ընտրելի է չափաւորութիւն, զի մի որ անտի պակասութիւն վշտացուցէ զքեզ։ Սէր և ատելութիւն ոչ ձգին ընդ երկար. սիրեա՝ որպէս թէ հասանէ քեզ ատել զնա. և ատեա՝ այնպէս, որպէս թէ վիճակեսցի քեզ երբեմն սիրել զնա։ Մի ընտանենար ընդ մեծամեծս։ Մի ասեր չար ինչ զմեռելոց։ Մի ծաղրեր

զաղքատս։ Լէր դիմակալ բարկու-
թեան։ Հնազանդ լեր օրինաց. Սիրեա՛
զխաղաղարարն. Զամենայն մարդ
պարտ է սիրել, և ատել։ Զի՛ պարտ
տատանել զձեռս 'ի խօսիլն, զի ան-
մտութիւն է։ Պարտ է անձամբ յանձ-
նէ զգուշանալ։ Այն մանկութիւն է
ծանր, որ նման է ծերութեան. և
այն ծերութիւն է հաճելի, որ նման է
մանկութեան։ Եթէ զօրաւոր լիցես՝
հեղ լեր, զի այլք յաւէտ պատկառես-
ցին 'ի քէն՝ քան երկիցեն։ Ո՛չ կա-
միմ՝ թէ կրտսերքն երկիցեն յինէն, և
ո՛չ զի երիցագոյնքն զիս անդոսնեսցեն։
Յաղթող լիցիս ամենայն տրտմու-
թեան՝ կամ ոգւով արութեան, կամ
բարեկամաւ։ Ընտրելի է վնասն ընչից
քան զչարաչար շահ. զի այն միանգամ
եւթ ցաւեցուցանէ, իսկ սա միշտ։
Մի՛ տար լեղուիդ յառաջել քան ըղ-
միտսդ։ Պատուեա՛ զերիցագոյնս հա-
սակաւ։ Մի՛ լիցիս չարախօս ընդդէմ
մերձաւորաց. ապա թէ ո՛չ՝ և դու
լուիցես, զոր քեզ ծանունք լիցեն։ Եթէ
բարի ինչ գործեսցես, չէ արժան յի-
շատակել. իսկ եթէ բարի ընկալցիս, յի-
շեա՛ հանապազ։ Ատեսցես զընդվայրա-
քնիւնն, որ խուզարկու է իրաց՝ որք ո՛չ
պատշաճին նմա։ Բարեմասն է հասա-
բակապետութիւն, յորում առաւել

օրէնքն, քան փաստաբանք լինին լսելի։ Մի ծաղր արասցես զվշտացեալսն. մի ցանկասցիս անհնարաւորաց։

Հրաւիրեալ Քիղոնի 'ի կոչունս 'ի Պերիանդրէ իմաստնոյ՝ ընդ այլ իմաստասէրս, ոչ ետ զհաւանութիւն, մինչև տեղեկացաւ մի առ մի յանուանէ, եթէ ո՞յք էին հրաւիրեալք 'ի կոչունս. զի ասէր՝ թէ որոց միանգամ հարկի ոք լինել ուղեկից 'ի նաւու, կամ զինուորակից՝ պէտք են նմա և նոցին ծանրութեան յուղեկցութեան և յերախանս լինել կցորդ. իսկ անխտիր մխել զանձն յորպիսի՛ և է կոչունս, ո՞չ է գործ առն ողջամտի։

Ետ դրոշմել ոսկեդիր 'ի տաճարին Ապողոնի 'ի Դեղփոն՝ թէ չէ պարտ իմիք փափաքել որ վերագոյն էցէ քան զքեզ, և թէ որ երաշխաւոր լինի վասն օտարի՝ միշտ 'ի տոյժս լիցի։

Ջանահնար եղև Պերիանդր կորընթացի որչափ ինչ հնար էր՝ հրաւիրել զՔիղոն 'ի Կորնթոս, զի սատար դասցէ 'ի խորհրդոց նորա 'ի բռնակալութեան իւրում։ Պատասխանի արար նմա Քիղոն այսպէս. Կամք են քո մղել զիս 'ի յուզմունս մարտի, և տարադրել յերկրէ իմմէ, որպէս թէ դովին հաստատուն ճնասցես. զայս դիտեա՛ զի չիք ինչ աներկեան 'ի մեծու-

թեան թագաւորաց. և բարեբաղդն 'ի բռնաւորաց այն է՝ որում յաջողեաց մեռանել 'ի մահիճս իւր։

Ծանուցեալ Քիղոնի զմերձենալ մահու իւրոյ, և ակնարկեալ ընդ բարեկամն իւր՝ որ շուրջ կային զնովաւ, ասէ ցնոսա. Բա՛րեկամք՝ գիտէք դուք զի բազում ինչ ասացի ես և արարի 'ի բազմամեայ կեանս իմ. խոհական կշռով քննեցի զամենայն զգործս իմ, և ո՛չինչ գտի ընդ որ ստրջացայց երբէք, բայց թերևս այս միայն՝ զոր մատուցանեմ առաջի ձեր 'ի քննութիւն՝ զի գիտացից՝ բարի՞ արդեօք թէ չար գործեալ է իմ։ Դէպ եղև ինձ երբեմն ընդ այլոց երկուց դատաւորաց դատաստան առնել 'ի վերայ միոյ 'ի մտերիմ բարեկամաց իմոց, զոր հա՛րկ էր մահու պարտաւորել ըստ օրինաց, տագնապ էր ինձ անդէն յամենայն կողմանց. պա՛րտ էր ինձ կամ անցանել ըստ օրէնս, կամ մահու դատել զբարեկամն իմ։ Յետ քաջ խորհելոյ զիրսն՝ զայս գտի հնարս. յառաջ մատուցի ճարտարութեամբ զամենայն բանաւոր փաստս ամբաստանելոյն, որով ո՛չինչ յերկուացան պաշտօնակիցքն իմ արձակել զնա. ես մահու դատեալ էի զնա՝ առանց ինչ ասելոյ ցնոսա։ Սովին կատարեցի զպարտս դատաւորի և

զբարեկամի. սակայն տակաւին խիղճ մտաց իմոց հարկանէ զիս, թէ մի արդեօք ընդ ստգտանօք էր զոր գործեցի։

Ծանրացեալ Քիղոնի 'ի ծերութենէն՝ մեռաւ 'ի Պիսա՝ 'ի լիապատար խնդութենէն, գիրկս արկեալ զորդւոցն՝ որ այն ինչ պսակեալ էր յողիմպիական մրցանսն։ Անդրի կանգնեցին նմա լակեդեմոնացիք յետ մահու նորա։

ԿՂԷՈԲՈՒԼՈՍ

Ժամանակակից Սողոնի, իբրև զի աւուրք նորա համարին ընդ մէջ Երեսներորդ հինգերորդ, և յիսներորդ հինգերորդ ողիմպիադից։

ԱՆՈՒՆ Կղէոբուլոսի էր քաջահռչակ իբրև զայլոց ոմանց իմաստասիրաց, սակայն ընդ երջանիկ համարեալն դասակարգեալ է։ Որդի էր Եւագորայ 'ի Հերակլեան զարմէ, և ծնաւ 'ի Լինդոս ծովահայեաց քաղաքի հռոդացւոց, յորում ծանուցաւ անուն նորա յաւուրս թագաւորութեան Կրեսոսի արքայի Լիւդիայ։ Գեղեցիկ էր երեսօք և վայելչակերպ։ Յերիտասարդութեան իւրում շրջեցաւ ընդ Եգիպտոս ուսանել անդ իմաստասիրութիւն՝ ըստ սովորութեան այնց ժամանակաց։ 'Ի դառնալն իւրում անտի՝ ամուսնացաւ ընդ առաքինի օրիորդի ումեք, և եկեաց կեանս հանդարտութեան 'ի մէջ ընտանեաց իւրոց։ Ծնաւ զԿղոբուլինա՝ որ քաջանուն գոտաւ 'ի մէջ իմաստուն կանանց ուսումնասիրութեամբ իւրով,

և խոհական հրահանգութեամբ հօր իւրոյ, մինչև տագնապել զամենայն զծանուցեալ խմաստասէրս ժամանակին իւրոյ, մանաւանդ 'ի խնդիրս այլաբանականս։ Թող զառաքինութիւն նորա և զբարերարութիւն, մինչև ինքնին լուանալ զոտս բարեկամաց իւրոց և հիւրոց հրաւիրելոց 'ի խրախուանս 'ի տուն հօր իւրոյ։

Կարդեցաւ Կղէոբուլոս յառաջնորդութիւն իշխանութեան փոքու պետութեան Լինդացւոց, և 'ի գլուխ տարաւ զգործն անաշխատ, որպէս այն թէ միոյ և եթ գերդաստանի առաջնորդէր։ Անյիշատակ արար զամենայն պատճառ դրդռութեան պատերազմի, և յաւէրժ խաղաղութիւն կալաւ ընդ քաղաքացիս և ընդ օտարս։ Ճարտարմտութիւն նորա 'ի դրաւորականս էր լուծանել և առաջարկել աղդի աղդի խնդիրս այլաբանականս. նա ինքն հռչակաւոր կացոյց առ յոյնս զյաճախելն յառեղծուածս՝ զորս ուսեալ էր յԵգիպտոս։ Նորա է և յետագայդ. Հայր ոմն է երկոտասան որդւոց, յորոց իւրաքանչիւրն ունի երեսուն դստերս զանազանեալս դեղեցկութեամբ. կէսք սպիտակադէմք են, և կէսք սևադէմք։ Անմահք են ամենեքին, և զօրհանապաղ մեռանին։

Այս առեղծուած զտարին խորհրդաբանէ։ Նա ինքն յօրինեաց զտապանագիր գերեզմանին Միդասայ՝ յորում տարապայման ներբողէ զայն թագաւոր։ Ոմանք թիւր կարծեաք Հոմերոսի համարեցան զնոյն, որ բազում ժամանակաք յառաջ է քան զՄիդաս։

Սահմանէր Կղէոբուլոս զառաքինութիւնն՝ 'ի խուսել յանիրաւութենէ և յայլոց ախտից։ Ըստ այսմ է և զոր ասէ Ովրատիոս.

Ըսկիզբն իմաստից է չլինել անմիտ,
Առաքինութի՝ յախտից դոլ վրճիտ։

Սովորութիւն էր նորա ասել թէ պարտ է յամենայնի հպատակել կարգի, ժամանակի և չափու։ Առ 'ի մերժել զանմտութիւն ընդհանուր բրոնացեալ յամենայն վիճակի մարդկան, հարկ է բռնադատել զամենայն քաղաքացի՝ յիւրում պայմանին վայելուչ կալ։ Զի՛ ինչ յաճախեալ յաշխարհի քան զտգիտութիւն և զշաղփաղփանս։ Խնամ կալ վերամբարձ ունել զսիրտ քո. մի՛ ապերախտ, և մի՛ դժրող։ Բարերարեա՛ առ բարեկամս քո և թշնամիս. սովին զմին պահեացես, և թերևս յաղթեացես երկրորդին։ Մինչև ելեալ 'ի տանէ քումմէ՝ խորհեաց զոր առնելոց ես. և 'ի դառնալդ անս-

դրէն՝ զմտաւ ած, և քննեա զոր ինչ գործեցեր։ Սակաւ խօսեա, և լուր բազում։ Մի՛ չարախօս լիցիս զումեքէ։ Ներեսջի՛ր այլոց բազումն, այլ քեզ և ո՛չ մի։ Բարերարեա յամենայնի բարեկամին, զի առաւել բարեկամ լիցի. իսկ թշնամւոյ՝ զի բարեկամասցի. քանզի զգուշալի են ստգտանք բարեկամաց, և խորշելի դարանք թշնամեաց։ Այն իշխան է երանելի, որ ո՛չ վստահի յոք 'ի թշնամեաց։ Զթշնամիս հայրենեացդ՝ և քեզ համարեա լինել այնպիսի։ Մի լինիր մեծատուն բարձրամիտ, և աղքատ վհատեալ սրտիւ։ Որչափ ոք առաւել կարէ, այնչափ նուազ կամիցի։ Ո՛չ ոք անզգամութեամբ երջանկասցի ընդերկար։ Ո՛չ ումեք 'ի պարծանս են արդիւնք նախնեացն, այլ՝ վատութիւն առաջնոց յոլովակի ընծային յետնոց։ Բարիոք հաստատեալ է տուն, յորում բազումք են որք սիրենն, քան որք երկնչին 'ի տանուտեառնէն։ Գուն գործեա խորհիլ և գիտել ինչ մեծ և պանծալի։ Որ միանգամ խնայէ չարաց, կորուսանել կամի ըզբարիս։ Զծառայս արբեալս մի՛ պատուհասեսցես. զի մի՛ և դու ինքն արբեալ երևեսցիս։ Խորհուրդ հարցցես՝ յոր ինչ արդարացի վարկանիցիս։ Մի՛ կարի անձնատուր լիցիս 'ի հաճոյա-

կանս։ Հաշտեաց ընդ թշնամիս՝ թէ ունիս. մի՛ ինչ առնիցես բռնի։ Խնամ կալ ՝ի բարիոք դաստիարակութիւն որդւոց քոց։ Մի՛ ծաղր առներ զհիդացելովք։ Թէ ընդ քեզ է բաղդ՝ մի՛ ամբարտաւանիր, և մի՛ վհատիր ՝ի շրջել նորա զթիկունսն։ Ա՛ռ քեզ կին՝ որպէս ներէ վիճակ քո. զի թէ ամուսնանաս ընդ ազնուատոհմի քան զքեզ, լցեն քո այնչափ տեարք, որչափ տոհմային մերձաւորք լցեն կնոջն։ Խնամ կարևոր պահանջի վասն դստերաց, մի՛ ամուսնացուցանել զնոսա՝ եթէ տիոք մանկամարդ, այլ վարուք և զգօնութեամբ չլցեն կանայք։ Ձի՛ արժան առն գովել զկին իւր, և ո՛չ նախատել առաջի օտարաց. վասն զի առաջինն տկարութիւն է, երկրորդն անմտութիւն։

Իբրև լուաւ Կղէոբուլոս՝ թէ Սողոն լինք եթող զգաւառ իւր, բազումն ջանահնար եղև առ ինքն ձգել զնա։ Գրեաց նմա օրինակ զայս. „Կան քո բազում բարեկամք, և ամենեցուն նոցա դրունք տանց բացեալ են առաջի քո. այլ ես այնպէս համարիմ՝ թէ չինք քեզ ապահովագոյն տեղի բնակութեան քան զ Լինդոս. սա աղաստ քաղաք է ծովեզերեայ, ո՛չ հասցէ քեզ աստ երկիրդ Պիսիստրատոսի. և դիւր

է ամենայն բարեկամաց քոց աներ-
կիւղ աստէն հանդիպել քեզ ,,։

Զգօնութեամբ գիտաց Կղէոբուլոս
վայելել յամենայն օգուտ միջական
պայմանի բախտին իւրոյ՝ և անդրօս կե-
նաց 'ի զբաղմանց աշխարհի։ Բարե-
բաղդ տանուտէր էր, հայր բարեբաղդ,
և բարեբաղդ քաղաքացի. մեռաւ յեռ-
թանասուն ամաց հասակի, զբովան-
դակ կեանս իւր վայելեալ 'ի պատուի։
Կոծ եղին Լինդացիք ընդ մահ նորա,
և կանգնեցին նմա հոյակապ դամբա-
րան, և արձանագիր դրոշմեցին 'ի նմա՝
առ յիշատակէ նորա։

ԵՊԻՄԵՆԻԴԷՍ

Եկեալ ՅԱԹԷՆՍ 'ի խե ողիմպիադին. կարծի ննջել նմա անընդհատ զամս յիսուն և եօթն յայրի ուրեք. և ապրիլ ամս 154, կամ 157, և կամ 298։

ԵՊԻՄԵՆԻԴԷՍ գնոսացի հրոչակեալ էր 'ի Կրետէ կղզւոջ 'ի ժամանակին յորում մեծարեալ էր Սողոն ՅԱԹԷՆՍ. այր մենակեաց էր՝ հրաժարական ունելով կեանս, որդի կարծեցեալ յաւերժահարսին Բալտայ։ Համօրէն յոյնք էին 'ի միտս հաստատունս թէ ներշնչեալ է նա յերկնաւոր իմն հոգւոյ, և յաճախեն առ նա տեսիլք աստուածեղէնք։ Բովանդակ պարապեալ էր 'ի քերթուածս, և յամենայն որ յանկի 'ի պաշտամունս դից. նա ինքն սկիզբն կալաւ՝ նաւակատիս կատարել տաճարաց, որբել պաշտամամբք զանդաստանս, զքաղաքս, նա՛ և զտունս իւրաքանչիւր։ Զուն էր 'ի յարգի զքաղաքակիցս իւր։ Երանելի սուրբ առաքեալն Պօղոս յառաջ բերէ տողմի 'ի քերթուածոց սորա 'ի թղթին իւրում առ Տիտոս, յորում բան արկ-

եալ վասն կրետացւոց՝ ասէր զնոսա հանապազասուտս, չարաձձիս, դատարկապորտս։

Եւ եղև զի հայր նորա յղեաց զնա խնդրել դառն մի յանդի։ Ի դառնալ նորա՝ խոտորեցաւ յարահետ ճանապարհէն, և եմուտ զմիջաւուրբ ի քարանձաւ մի՝ հանդչել սակաւ ինչ անդէն, մինչև նուազեսցէ տօթն հրատապ. անդ նիրհեալ մնաց ամն յիսուն և եօթն։ Իբրև զարթեաւ՝ քանզի ոչ կարծէր այնչափ յերկարել ի հանդչելն իւրում, հայեցաւ շուրջ զիւրև՝ խնդրել զդառն. և չգտեալ զնա՝ ել արտաքս, և յափշութիւն հարաւ՝ տեսեալ զամենայն ինչ կերպարանափոխ։ Ընթացաւ զարմացմամբ ի տուն անդր ուստի զդառն առեալ էր, և ահա տէր տանն փոխեալ, և ոչ ոք իմանայր զոր ինչ սա ասէր։ Զարհուրեալ և ահաբեկ դարձաւ ի քաղաքն ի Գնոսսա՝ ուր ոչ ոք ճանաչէր ի մարդկանէ. այսպէս ժամ ի ժամէ առաւելոյր հիացումն նորա։ Ի մտանելն ի տուն հօր իւրոյ, ոչ ես հարցանէին, և զինչ խնդրես. հաղիւ ուրեմն յետ բաղումն տագնապելոյ, ծանօթս եւ զանձնէն եղբօր իւրում կրտսերոյ՝ որ մանուկն էր ի մեկնելն ի տանէն, և արդ ի դառնալն իւրում տեսանէր

զնա ծերացեալ։ Այս տարօրինակ պա-
տահումն զհամբաւի հարաւ 'ի դաւա-
ռին, և անդէն ամենայն մարդ համա-
րեցաւ ընդ միտս իւր զԵպիմենիդէս
խնամեալ 'ի դից։ Ոչք անհնարին դնեն
զննչել Եպիմենիդեայ զայդ երկարա-
ձիգ ժամանակ, համարին թէ ընդ ամ
յիսուն և եօթն յանծանօթս շրջեցաւ
նա ընդ տար աշխարհս, միտ եդեալ 'ի
խելամտութիւն պարզ էակաց։

Յորժամ Մեկագլ՝ անողորմ զայ-
րացութեամբ մահու դատէր զամե-
նայն կուսակիցս Կիլոնի, մինչև յա-
րիւն ներկել և զսեղանս բագնաց, յեր-
կիւղ մեծ պակուցեալ աթենացւոց՝
օր քան զօր տագնապէին տարակու-
սեալք. թող և զտարաժամ սրածու-
թեան ախտն որ յապականութիւն
դարձուցանէր զերկիրն համօրէն, կար-
ծէին նոքա թէ քաղաքն կալեալ ի-
յոդւոց չարաց։ 'Ի խորհուրդ ժողո-
վեալ քրմացն՝ գոդ հասու եղեն 'ի պա-
տարագս իւրեանց, թէ գոն 'ի նոսա
գարշութիւնք՝ որովք պղծեալ է ողջոյն
քաղաքն։ Առաքեցաւ փութանակի
Նիկիաս նաւու 'ի Կրետէ՝ ածել անտի
զԵպիմենիդէս, որ արդէն քաջանուն
էր ընդ համօրէն Եղլադա։ Այն ինչ
յԱթէնս հասանէր Եպիմենիդէս՝ ա-
ռեալ դառինս սեաւս և սպիտակս տա-

նէր յԱրէոսպագոսն. ուր արձակեաց զնոսա՝ գնալ յո՛ և կամիցին։ Հրաման ետ առ նմին՝ զի զհետ պնդեալ զգաւառանցն՝ զենցեն զնոսա զամենեսին՝ 'ի պատիւ իւրաքանչիւր խնամակալ դից տեղեացն յորս գտանիցեն հանգուցեալ զմի մի գառանցն։ Այսր աղաղաւ մինչև յաւուրս Լաերտիոսի էր տեսանել շուրջանակի զԱթէնք քաղաքաւ բազում սեղանս նուիրական դից՝ զորոց անգիտանային զանուանս։ Այս ամենայն զոր հրամայեացն Եպիմենիդէս՝ կատարեցաւ խնամով, և անդէն առ նմին տեղի ետ կոտորած մահուն. և ո՛չ ոք տագնապեցաւ ա՛յլ ևս յառաջոք երևութիւց։

Սերտ սիրով բարեկամացաւ Եպիմենիդէս յԱթէնս ընդ Սողոնի. և բազմօք ջանահնար եղև 'ի հաստատութիւն օրինաց նորա յայտ յանդիման կացոյց ամենեցուն զխժդժական կրօնս կանանց 'ի յուղարկաւորութիւնս. մեղմացոյց առ սակաւ սակաւ զոգիս աթենացւոց՝ աղօթիւց և պատարագաց հպատակ լինել. և սովին դիւրընտելս արար զնոսա կեալ արդարութեամբ, և մի՛ մաքառել ընդ աւադանին։

Յաւուր միում քաջ զննեալ զնաւահանգիստն Մունիքիա, ասաց առ որս մօտ կային. 'Ի խաւարի ըմբռնեալ կան

մարդիկ՝ մինչև դիտացեալ զապա-
գայս. զի թէ դիտէին աթենացիք քա-
նի աղէտից պատճառ լինիցի երկրի
նոցա այդ նաւահանգիստ, անդէն ան-
յապաղ քանդէին զայդ։ Բնակեալ
Եպիմենիդեայ ժամանակս ինչ ՅԱ-
ԹԷՆՍ, զերեսս հաստատեաց դարձ առ-
նել անտի. հանդերձեցին աթենացիք
նաւ վասն նորա, և մատուցին նմա
տաղանդ մի՝ տրիտուր վաստակոց նո-
րա։ Շնորհս կալաւ նոցա Եպիմենի-
դէս բազում բարեհաճոյ բանիւք, և
չէառ յանձն ընդունել 'ի նոցանէ
զարծաթն. շատ համարեցաւ խնդրել
զբարեկամութիւն նոցա, և զհաստա-
տութիւն բարեկամութեան ընդ ա-
թենացիս, և ընդ գնոսացիս։ Մինչև
մեկնեալ անտի՝ ետ կառուցանել տա-
ճար հոյակապ 'ի պատիւ վհուկ կա-
տաղեաց դժոխոց։

Հետամուտ եղև Եպիմենիդէս տպա-
ւորել 'ի միտս ժողովրդեան թէ ինքն
իսկ է Յակոս որդի Պրիամոսի. և զի
ցանկ յարուցեալ երևի 'ի մեռելոց։
Ոչ ոք երբէք ետես զկերակրել նորա.
որ պատճառս ետ ասել՝ թէ 'ի յաւեր-
ժահարսանց սնանի. և այն ևս՝ թէ
ընդ կճղակաւ եղին միոյ պահէ նա զա-
նուշահամ կերակուրն իւր, զոր պաշ-
տեն նմա յաւերժահարսունք. և թէ

այն հրաշալին կարծեալ կերակուր՝ բովանդակ փոխարկի 'ի սնունդ մարմնոյ նորա՝ առանց ինչ յաւելուածոյ։

Նախապատմեաց սպարտացւոց ըղդառն ծառայութիւնն զոր ծառայելոց էին արկադացւոց։ Մինչդեռ երբեմն պարապեալ էր 'ի շինուած տաճարի զոր նուիրել ունէր յաւերժահարսանց, լուաւ ձայն ի մէն յերկնից հնչեցեալ առ նա. Եպիմենիդէս, մի՛ յաւերժահարսանց, այլ Դիոսի նուիրեա՛ զտաճարդ։

'Ի լսել սորա զտարադէմ գնալ Սողոնի յԱթենայ, թղթեաց առ նա քաջալերս, և հրաւիրէր գալ 'ի Կրետէ, ունելով դրոյն օրինակ զայս։ ,, Բարեկա՛մ մտերիմ, արիացիր յանձին քում. եթէ Պիսիստրատոս ընդ բռամբ նուաճեալ էր զաղդ վարժեալ 'ի ստրկութիւն, կամ զորս չիցեն բնաւ կեցեալ ընդ խոհական օրինաց, թերևս իշխանութիւն նորա ձգէր ընդ երկար, սակայն գործ է նորա ընդ ապրանց աղատաց՝ որոց ո՛չ պակասէ եռանդն արիութեան։ Յետ ոչ բազում ժամանակաց յուշ լիցին նոցա պատուէրք Սողոնի. ամաչեսցեն ընդ շըղթայս կապանաց իւրեանց, և ո՛չ ևս ժուժեսցեն թէ այր բռնաւոր կալցէ զնոսա 'ի գերութեան ընդ երկար։ Նա

ապաքէն թէպէտ և ընդ բովանդակ կեանս իւր կացցէ Պիսիստրատոս յիշխանութեանն, թագաւորութիւն նորա ոչ անցանէ յորդիս նորա. քանզի և անհնար իսկ է, թէ մարդիկ վարժեալք 'ի կեանս ազատութեան ընդ բարեկարգ օրինաց՝ յանձին կալցեն յաւերժ մնալ 'ի գերութեան։ Այլ ես աղաչեմ զքեզ, մի՛ տատանեալ աստանդական շրջիր, փութա՛ եկ առ մեզ 'ի Կրետէ՝ ուր չիք ոք բռնակալ խռովարար. քանզի և խիթամ մեծապէս, թէ 'ի հանդիպել քեզ բարեկամաց Պիսիստրատոսի, որում հնար է լինել, տագնապ վշտաց հասուցեն քեզ »։

Անցոյց Եպիմենիդէս զբովանդակ կեանս իւր 'ի հրահանգս բարեպաշտութեան. և զի սիրելի էր նմա բանաստեղծութիւն՝ բազում ինչ գրեաց տաղաչափութեամբ. յորս նշանաւոր է ծննդաբանութիւն Կուրետեանց և Լօրիբանտեայց հին ժողովրդոց Կրետայ։ Յօրինեաց և ճառ արձակ շարադրածով յաղագս պատարագաց և հասարակաց իշխանութեան Կրետեայ. թող և զայլն 'ի վերայ Մինոսի և Հռադամանտեայ։

Մեռաւ 'ի հասակի հարիւր յիսուն և եօթն ամաց, ըստ այլոց՝ երկերիւր ինսուն և ութ։ Եւ քանզի բովան-

դակ կեանք նորա հրաշապատում են, ըստ նմին աւանդեն ոմանք թէ յայնչափ աւուրս ծանրացաւ ծերութեամբ՝ որչափ ամն 'ի քուն հանգուցեալն էր։ Նուէրս պատարագաց մատուցին նմա կրետացիք իբրև աստուծոց, և ըստ սովորականին՝ կուրետոս անուն կարդացին նմա, որ թարգմանի կրետացի։ սպարտացիք փութաջան խնամով պահեցին զնա առ իւրեանս, 'ի յիշատակ հնապատում պատգամի՝ որ զայն պատուիրէր նոցա։

ԱՆԱՔԱՐՍԻՍ

Գնաց յաթէնս 'ի քառասներորդ եօթ. ներորդ ոլիմպիադին, և սպանաւ յետ դառնալոյն 'ի Հայրենիս իւր. յորմէ մարթ է իմաստասիրել թէ ժամանակակից էր բազմաց 'ի նախակարգելոցն։

ԱՆԱՔԱՐՍԻՍ սկիւթացի յազգէ՝ դասեալ 'ի կարգս իմաստնոց՝ էր եղբայր Կադուիպասայ թագաւորին Սկիւթիոյ, և որդի Գնուրոսի, և մօր յունի. որոյ վասն հեշտին եղև ուսանել և զկրկին լեզուսն։ Քաջուշեղ էր և պերճախօս. արի և անդրդուելի յորս միանգամ ձեռն արկանէր։ Ընդ ամենայն եղանակս տարւոյն միօրինակ ձորձք էին նորա խոշոր և կրկնակ, և կերակրէր կաթամբ և պանրով։ Ատենախօսութիւնք նորա 'ի համառօտ բանս բովանդակէին. և զի ոչ ուրեք երբէք վհատութիւն յանձին բերէր, յաջողէր նմա ամենայն յոր ինչ ձեռնամուխ լինէր։ Համարձակ և պերճ ոճ բանից նորա յառակս համարեալ էր. զի թէ ոք յայդմ նմանէր նմա, ասէին թէ Սկիւթապէս խօսի։

Եթող Անաքարսիս զԱկիւթիա՝ զի գնացեալ բնակեսցէ յԱթէնս. և 'ի հասանելն անդր՝ խնդրեալ բաղխեաց զդուրսն Սողոնի, և ասաց ցայրն որ եբաց նմա, ազդ առնել Սողոնի՝ թէ եկեալ է յայցելութիւն նորա, և ըղ-ժամանակս ինչ բնակել առ նմա։ Պա-տասխանի արար նմա Սողոն այսպէս. Հիւրընկալել պարտի իւրաքանչիւր 'ի գաւառի իւրում, կամ 'ի տեղիս որ նմին անկ են։ Առ այս բան 'ի ներքս եմուտ Անաքարսիս, ասելով առ Սո-ղոն. Քա՛ջ է. զի 'ի գաւառիդ քում կաս, և 'ի տան քում, պարտ է քեզ հիւրընկալ լինել. և յայսմ հետէ կա՛լ ընդ իս բարեկամութիւն։ Աքան-չացեալ Սողոնի ընդ եռանդուն պա-տասխանի նորա, սրտի մտօք յանձին կալաւ հիւրընկալել զԱնաքարսիս, և սերտ բարեկամութեամբ միացաւ ընդ նմա, որ ձգեցաւ ընդ ամենայն աւուրս կենաց նոցա։

Մեծապէս հաճոյական էր Անա-քարսեայ բանաստեղծութիւն. գրեաց տաղաչափութեամբ զօրէնս սկիւթաց-ւոց, և ճառ յաղագս պատերազմի։ Սովորութիւն էր ասել նորա, որթ եռատեսակ խաղող պտղաբերէ. զուար-ճութիւն, արբեցութիւն, և ապա-շաւ։ Զարմացեալ էր 'ի տեսանելն՝ զի

յամենայն քաղաքախումբ երաստս որ
լինէին ՅԱԹԷՆԱ՝ շատ համարէին ի-
մաստունք 'ի մէջ մատուցանել զգլուխ
բանիցն. զոր յետոյ պատուիրանաւ
սահմանէր ռամիկն, սակայն ո՛չ բաւէր
'ի միտ առնուլ՝ թէ զի՞ պատուհասին
թշնամանողքն բանիւք. և ընդհակա-
ռակն վարձատրին ըմբիշք և նահա-
տակք որք սաստիկ ուժով հարկանեն
զիրեարս։ Ըստ նմին օրինակի զար-
մանս յանձին բերէր՝ տեսեալ թէ
յոյնք 'ի սկզբան կերակրոյ առնուին
բաժակ չափաւոր մեծութեամբ. իսկ
մեծամեծս 'ի կատարածի յորժամ
ջեռնուն գինւով։ Ո՛չ հանդուրժէր
տարապայման ազատութեանն՝ որով
լրբէր ամենայն մարդ 'ի պահու կոչ-
նոցն։ Հարցաւ յաւուր միում՝ զի՞նչ
արժան է գործել, առ 'ի կարճել զոք
յարբեցութենէ գինւոյ։ Ո՛չինչ այլ,
ասէ, բայց մատուցանել առաջի նորա
այր մի արբեալ, զոր մանր ընդ քննու-
թեամբ արկցէ։ Հարցեալ յոմանց.
Ի՞ցե՞ն 'ի Սկիւթիա նուադք երաժշտու-
թեան. ետ պատասխանի. չկան և ո՛չ
այգիք։ Զիւղն որով օծանէին ըմբիշք
մինչչև բախեալք ընդ միմեանս՝ կոչէր,
հանդերձանս զայրացեալ մոլեգնու-
թեան։

Նայեցեալ երբեմն ուշի ուշով ընդ

ստուարութիւն տախտակաց նաւու միոյ, ո՞հ, եղբա՛կ, ասէ. որք ճանապարհ հատանեն ընդ ծով՝ չորեքմատնեան եւեթ տարակայութեամբ հեռի կան 'ի մահուանէ։ Հարցին ցնա. ո՞ր նաւ ապահովագոյն է. ասէ, հասեալն 'ի նաւահանգիստ։ Ասէր ստէպ՝ թէ հա՛րկ է ամենայն մարդոյ բուռն առնել իշխել լեզուի իւրոյ և որովայնին։ 'Ի ննջելն զձեռն իւր զաջոյ ունէր միշտ 'ի վերայ բերանոյն, ուսուցանել կամեցեալ թէ չլի՛ք քան զլեզու՝ զգուշութեան կարօտ։

Այր ոմն աթենացի մինչ նախատէր զնա զի սկիւթացի էր յազգէ. ետ պատասխանի. Հայրենիք իմ անարգանք են ինձ. այլ դու՝ հայրենեաց քոց։ Հարցաւ երբեմն. զի՞նչ լաւագոյն, և զի՞նչ յոռեգոյն 'ի մարդիկ. ասէ. լեզուն է։ Ասէր. լաւագոյն է ունել մի եւեթ բարեկամ, միայն թէ անկեղծ լցէ. քան բազումս ունել՝ յօժարամտեալս զհետ ընթանալ զբաղդին։ 'Ի հարցանել ցնա ոմանց, կենդանի՞ք բազո՞ւմ լցեն, թէ մեռեալք, ասէր. զորս ճանապարհորդեն 'ի ծովու՝ յորո՞ց դասէք 'ի համարի։ Վաճառափողոցք ասէր՝ տեղի՛ք են սահմանեալք 'ի մարդկանէ՝ 'ի պատրել զմիմեանս։ Յանցանել նորա երբեմն ընդ ճանապարհ ու-

րեք՝ նախատեաց զնա տմարդութեամբ ոմն երիտասարդ. հայեցեալ ընդ նա Անաքարսեայ, ասէ ցնա անխռով, թէ դու չհանդուրժես զինուոյ 'ի մանկութեան քում, 'ի ծերութեան քում միշտ ջուր արբցես։ Համեմատ դնէր զօրէնս ոստայնից սարդի, և ծիծաղէր ընդ Սողոն՝ որ յուսայր գրովք իւրովք սանձահարել զկիրս մարդկան։ Սա ինքն եգիտ հնարս գործել անօթս կաւակերտս 'ի վերայ դրդան։

Գնացեալ նորա երբեմն պատգամ հարցանել ընդ քրմուհին Ապողոնի, գիտել թէ ի՞նչ ոք քան զինքն իմաստուն. հարցուկն եցոյց նմա զՄիսոն զոմն Քենացի. սքանչացաւ Անաքարսիս ընդ այն՝ զի չև էր լուեալ զանուն նորա։ Եկ 'ի խնդրել զնա 'ի գիւղն յորում բնակէր. և եգիտ զնա զի յարդարէր զմահճ իւր. կարդաց առ նա և ասէ. Ո՞վ Միսոն՝ չէ ժամն հերկելոյ զերկիր։ Նա՛ մանաւանդ՝ ասէ Միսոն, ժամ իսկ է կազմելոյ զմահճն թէ խորտակեալ ինչ իցէ։ Զայս Միսոն դասակարգէ Պղատոն 'ի համար իմաստնոց. մենակեաց կեայր նա յառանձնութեան իւրում, յորում անցուցանէր զաւուրս կենաց իւրոց, չունելով բան ընդ ումեք. քանզի մարդատեաց էր ըստ բուսոյ բարուցն։ Տեսաւ նա եր-

բեմն թագուցեալ յանկեան ուրեք՝ զի ծիծաղէր յամենայն զօրութենէ։ Մատուցեալ առ նա ոմն՝ հարցանէր թէ զի՞ այդչափ ծիծաղիս, զի չէք ոք ընդ քեզ. Այդ իսկ է ասէ, որ տայ ինձ ծիծաղել։

Լուեալ Կրեսոսի զհռչակ համբաւոյն Անաքարսեայ՝ յղեաց նմա արծաթ 'ի պարգև, և աղաչեաց՝ գալ առ ինքն 'ի Սարդի. ետ նմա Անաքարսիս պատասխանի այսպէս. „Արքայդ լիւդացւոց՝ եկի ես յԵլլադա՝ ուսանել աստէն զլեզուս, զսովորութիւնս և զօրէնս երկրիս։ Ճոխութեանց չեմ կարօտեալ, և շատ գրեցից անձին իմում, թէ դարձայց 'ի Սկիւթիա ժըրագոյն քան զոր յառաջն էի։ Սակայն եկից և յայցելութիւն քո, զի փափաքեմ լինել 'ի համարի բարեկամաց քոց „։

Յետ կալոյ նորա ժամանակս բազումս Յելլադա, կազմեցաւ գնալ անտի։ Յանցանելն ընդ Կիւլիկոն՝ գտանէ զբնակիչս այնր քաղաքի՝ զի մեծաժողով տօն կատարէին դիցամօրն։ Ուխտեաց Անաքարսիս աստուածուհւոյն՝ մատուցանել նմա զնոյն պատարագս, և նոյնօրինակ տօն սահմանել յանուն նորա յերկրի իւրում, թէ անվտանգ հասցէ անդր։ Իբրև եհաս

'ի Սկիւթիա՝ ձեռն արկ փոխել զօրէնս երկրին, և զյունացն հաստատել ընդ այնր։ Խոժոռեցան ընդ այս սկիւթացիք։

Եւ եղև յաւուր միում՝ զի եմուտ Անաքարսիս ծածկաբար յանտառ մի թաւուտ 'ի դաւառին Իւլէայ, կատարել անդ անտես 'ի մարդկանէ զուխտն իւր զոր արարեալ էր Կիւբէլեայ դիցամօրն. 'ի դլուխ հան անդ զպաշտամունսն զամենայն՝ ունելով 'ի ձեռին զթմբուկն՝ առաջի պատկերի հելլէն դիցն։ Ետես զնա սկիւթացի ոմն, և զգացոյց թագաւորին։ Յարուցեալ նորա՝ եհաս փութանակի յանտառ անդր, և եդիտ զեղբայր իւր զԱնաքարսիս զգործով երկրպագութեան պատաղեալ, և անդէն նետընկէց եհար զնա։ Փչեաց զոգին Անաքարսիս, աղաղակեալ այսպէս. Խաղաղութեամբ կեցի Յելլադա՝ ուր գնացեալ էի 'ի հրահանգել 'ի բարբառ և 'ի կրօնս հայրենի դաւառին իմոյ։ Յետ մահու նորա կանգնեցան նմա արձանք բազումք։

ՊԻԹԱԳՈՐԱՅ

Ծաղկեալ զվաթներորդ ողիմպիադաւ. եկն յիտալիա 'ի վաթներորդի երկրորդի. մեռաւ 'ի չորրորդ ամի եօթանասներորդի 'ի հասակի ութսուն ամաց, կամ ըստ այլոց՝ իննսուն։

ԲՈՂԱԿԵԱԼ է ընդ հանուրս բաժանումն իմաստասիրութեան 'ի յոնիական և յիտալական։ Թաղէս Միլեսացի կամ Միլետացի առաջնորդ դտաւ յոնիականին. և Պիւթագորաս իտալականին։ Պատմէ Արիստիպպոս կիւրենացի թէ այս իմաստասէր Պիւթագորաս կոչեցաւ, իբրու զի ճշմարիտ էին պատգամք նորա. իբրև զպիւթեանն Ապողոնի. քանզի Պիւթագորաս 'ի յոյնն լսի՝ իբրև զՊիւթիա խօսող։ Սա ինքն զառաջինն չափաւորութեամբ իմն հրաժեշտ եկաց յիմաստուն անուանէ, զիմաստասէրն կոչել շատ համարեալ։ Հասարակաց կարծիք են՝ սամեացի լինել Պիւթագորայ, որդի Մնեսարքոսի անդրիադործի. թէպէտ և հաւաստեն այլք թէ թուսկիացի էր, ծնեալ 'ի միում

կղզեաց առ ափամբք տիւրենեան ծո-
վուն, որոց տիրեցին աթենացիք։

Գիտէր Պիւթագորաս զարուեստ
հօր իւրոյ. և շինեալ իսկ էր ինքնին
երիս բաժակս արծաթիս, զորս ետ 'ի
պարգև երից քրմաց եգիպտացւոց։
Զառաջինն աշակերտեցաւ զգօն առն
Փերեկիդեայ, և սիրով յարեցաւ 'ի
նա. սիրէր զնա մեծապէս և Փերեկի-
դէս։ Եղև երբեմն՝ զի մինչև 'ի մօտա-
լուտ վտանգ մահու անկեալ դնէր Փե-
րեկիդէս, կամեցաւ Պիւթագորաս
մտանել 'ի սենեակ նորա՝ առ 'ի տե-
սանել զնա. այլ Փերեկիդէս որ խի-
թայր ընդ տարափոխիկ ախտակրու-
թիւն իւր՝ փութապէս փակեաց նմա
զդուրսն, և ցուցեալ նմա ընդ ձեղ-
քուած ուստեք զմատունս իւր. Տես
ասէ, և 'ի մատանց իմոց զորս տեսա-
նես վտտեալս՝ 'ի միտ առ զաղէտսն
յոր տառապիմ։

Յետ մահուն Փերեկիդեայ՝ հպատա-
կեաց ուսման Պիւթագորաս առ ժամն
'ի Սամոս առ ոտս Երմոդանտեայ.
յետ այնորիկ՝ զի վառեալ էր սիրտ
նորա 'ի տեղեկութիւնս սովորու-
թեանց օտար ազգաց՝ ելթող զհայրե-
նիս իւր և զոր ինչ ունէրն՝ պատրաս-
տեալ յուղեղնացութիւն։ Բնակեաց
ընդ երկար յԵգիպտոս՝ ելումուտ առ-

նել առ քուրմն, և 'ի խորս մտանել թագնութեան կրօնից նոցա։ Գրեաց վասն նորա թուղթ ընծայութեան Պօղիկրատէս առ Ամասիս արքայ Եգիպտացւոց՝ խնամ ունել նմա։ Գնաց անտի Պիւթագորաս յաշխարհն քաղդէացւոց՝ ուսանել զարուեստ մոգուցն։ Յետ ամենայնի ճանապարհ արարեալ քննողական խուզարկութեամբ ընդ բազում տեղիս արևելից, եկն եհաս 'ի Կրետէ, ուր մտերմացաւ բարեկամութեամբ ընդ Եպիմենիդեայ իմաստնոյ. անտի դարձ արար 'ի Սամոս։ Անդանօր 'ի խոր խոցեալ՝ զի տեսանէր զհայրենիս իւր նուաճեալ ընդ բռնակալութեամբ Պողիկրատեայ, եդ 'ի մտի՝ ինքնակամ գնալ տարագիր։ Անց յԻտալիա և բնակեցաւ 'ի Կրոտոնա 'ի տան Միլոնի, և անդ ուսուցանէր զիմաստասիրութիւն։ Յաղագս այսորիկ Իտալական անուանի առ 'ի նմանէ սկզբնաւորեալ իմաստասիրութիւնն։

'Ի սուղ ժամանակի սփռեցաւ հրաչակ անուան նորա ընդ համօրէն Իտալիա. և վաղվաղակի զհետ գնացին զնորա աշակերտք առաւել քան զերեքհարիւր. յորոց կառուցաւ միակամ ընկերութիւն բարեկարգեալ։ Գրեցին բազումք թէ մի էր 'ի սոցանէ և Նու-

մա, և թէ՝ բնակէր 'ի Կրոտոնա առ Պիւթագորասայ՝ յորժամ ընտրեցաւ թագաւոր հռովմայ. սակայն քաջքն 'ի ժամանակագիրս հաւաստեն՝ թէ այդ ամենայն անհաւաստի զրոյցք են զայն ևեթ հիմն ունելով թէ կարծիք և բանք Պիւթագորայ զուգաձայն են ընդ Նումային՝ որ բազում ժամանակաք երէց էր քան զՊիւթագորաս։

Ասէր Պիւթագորաս՝ թէ ընդ մէջ բարեկամաց ամենայն ինչ հասարակաց է. և բարեկամութիւն՝ զուգահաւասարս առնէ զմարդիկ։ Աշակերտք նորա ոչինչ ստանային առանձինն. 'ի միասին էր ամենայն ստացուած նոցա, և մի քսակ արծաթոյ էր ամենեցուն։ Զհինգ ամսն զառաջինս աշակերտութեան իւրեանց՝ ունկն դնէին վարժապետին՝ առանց երբէք բերան բանալոյ՝ ասել բան մի։ Յետ երկար և խիստ հրահանգութեանս՝ շնորհեալ էր նոցա խօսել, մատչել առ Պիւթագորաս, և կենաց կցորդ լինել ընդ նմա։

Տեսիլ կերպարանաց Պիւթագորայ քաջավայելուչ էր, աւարտահասակ, թիկնաւէտ, և դիմօք դեղեցիկ. զդենոյր միշտ հանդերձ սպիտակ ասուեղէն. ոչ թողոյր զանձն ծառայ լինել կրից, և գործք նորա յամենայնի թա-

գուն էին։ Ո՛չ ոք ետես զծիծաղել նորա, և ո՛չ ոք լուաւ զբան կատականաց 'ի նմանէ. ո՛չ զոք պատուհասէր 'ի ցասման իւրում, և ո՛չ իսկ ձեռն ամբառնայր 'ի վերայ ուրուք 'ի ստրկաց։ Աշակերտք նորա Ապողոն ոմն վարկանէին զնա. խուռնընթաց հասանէին յամենայն կողմանց ունկն դնել նմա, և տեսանել զնա 'ի մէջ աշակերտաց իւրոց։ Առաւել քան զվեց հարիւր այր, ամաց յամն հասանէին 'ի Կրոտոնա. և պատիւ մեծ համարեալ էր՝ թէ յաջողէր ումեք ընդ սուղ ժամն զբանիւք անկանել ընդ նմա։

Օրէնսդիր եղև Պիւթագորաս առ բազում ժողովուրդս՝ որք թախանձանաք ժտէին 'ի նմանէ. այսպէս սքանչելի էր առ ամենեսին, զի և ոչինչ խտիր դնէին ընդ բանս նորա և ընդ դեղփեան պատգամն։ Անհրաժեշտ արգելոյր երդնուլ, և կոչել զդիս 'ի վկայութիւն։ Ասէր. պա՛րտ է ամենեցուն այնպէս լինել յարդարութեան, զի ո՛չ ումեք հարկ լիցի հաւատարմացուցանել զբանս իւր։ Ոգևոր և իմացական համարէր զաշխարհ. և թէ հոգի այսր մեծազանգուած գործարանի է Եթերն, յորմէ մասնաւորին հոգիք իւրաքանչիւր կենդանեաց, մարդկան և անասնոց։ Խելամտեաց ընդ անմա-

հուԹիւն հոգւոց, այլ կարծեալ առ նմին՝ ԹէԹափառին նոքին ընդ օդս, և անխտրաբար մտանեն 'ի մարմին ո-րոց զառաջինն հանդիպեսցին։ Եւ այն ևս՝ ԹէԹ հոգին ելեալ, օրինակ իմն 'ի մարմնոյ մարդոյ, մտանէ 'ի մարմին երիվարի, գայլոյ, իշոյ, մկան, կաքա-ւու, ձկան, կամ այլ կենդանւոյ, և կամ այլոյ մարդոյ՝ անխտիր։ Նոյնպէս հոգին անջատեալ 'ի մարմնոյ որ զինչ և է անասնոյ՝ միօրինակ մտանէ 'ի մար-մին մարդոյ, կամ անասնոյ։

Այսր աղագաւ խստիւ հրաժարե-ցուցանէր ՊիւԹագորաս 'ի մսակեր խորտկաց։ Կարծեալ այնպէս էր նորա՝ ԹէԹ ոչ դոյզն յանցանք են 'ի ճմլել անդ զճանճ, զորդն, կամ զայլ ման-րիկ միջատ, քան սպանանել զմարդ գլխովին. քանզի նոյն հոգիք սփռեալ են ասէր ընդ ամենայն մարմինս։ Եւ առ հաւանեցուցանել ամենայն մար-դոյ զհոգեփոխ վարդապետուԹիւն իւր՝ ասէր՝ ԹէԹ ինքն իսկ զառաջին Ետալի-դէս ոմն էր, որդի կարծեցեալ Հերմե-սի. որ իբրև ասէր ցորդին՝ խնդրել որ զինչ և կամիցի՝ բաց յանմահուԹենէ, և այն ևս՝ ԹէԹ կատարեսցին խըն-դրուածք նորա, ՊիւԹագորաս խըն-դրեաց 'ի նմանէ շնորհս՝ յիշատակել 'ի կեանս իւրում, կամ 'ի մահուն զա-

մենայն որ զինչ և լինիցի յաշխարհի. ապա յետ այնորիկ քաջ դիտաց նա բովանդակ զոր ինչ եղևն։

Յետ ժամանակս ինչ մնալոյ յանձին Ետալիդեայ՝ եղև Եւփորբոս, որ դուսաւ 'ի Տրոյական պաշարման, և կարեվէր խոցեցաւ 'ի Մենեղաւեայ. յետ այնորիկ անց հոգի իւր յԵրմոտիմոս, և զայնու ժամանակաւն առ 'ի հաւատարմացուցանել ամենեցուն զպարգևսն ընկալեալ 'ի Հերմեայ՝ գնաց 'ի գաւառն Բրանքիտեայց. եմուտ 'ի տաճարն Ապողոնի, և իբրև դիտակ իրացն՝ եցոյց զասպար նորա ապականեալ, զոր Մենեղաւոս 'ի դառնալն իւրում 'ի Տրոյիոյ նուիրեալ էր այնր դից՝ 'ի շնորհակալիս յաղթութեան իւրոյ։ Յետ Երմոտիմեայ եղև Պիւրրոս ձկնորս. ապա Պիւթագորաս իմաստասէր. թո՛ղ և զոր յառաջն եղև աքաղաղ Միկիլիոսի, և սիրամարգ անծանօթի ուրուն։

Պնդէր իբրև հաստատութեամբ՝ թէ ճանապարհորդեալ 'ի դժոխս՝ ետես անդ զհոգի քերթողին Հեսիոդոսի պնդեալ շղթայուք ընդ սիւնս, ուր լակէր չարատանջ։ Իսկ զՀոմերոսին տեսանէր կախեալ զծառոյ, և շրջապատեալ յօձից՝ վասն բազմահնար ստութեանցն զորս յօդեալն էր առաս-

պելեաք 'ի վերայ դից։ Եւ հոգիք ա-
րանց ասէր՝ որոց չարեաք վարեալ էր
զկեանս ընդ կանայս իւրեանց՝ ան-
հնարին չարչարանաք տանջէին։

Պեղել ետ երբեմն Պիւթագորաս
խորխորատ մի 'ի տան իւրում. և ասեն
աղաչել նորա զմայր իւր՝ գրել հաւա-
տարմութեամբ զանցս ամենայն, ցոր-
չափ ինքն 'ի բացեայ ելցէ անտի։ Յետ
այնորիկ փակեաց զանձն 'ի խորափիտ
անդր ուր կացեալ ամ մի՝ ել անտի
աղտեղի, վտտեալ, և զաղբոտի կերպա-
րանաք. գումարեաց զժողովուրդն՝ և
ասաց նոցա թէ 'ի դժոխոց դարձ ա-
ռարեալ հասանեմ ես. և զի հաւա-
տասցեն նոքա որոց ասելոցն էր, սկսաւ
պատմել նոցա կարդաւ զամենայն
զանցս անցեալս 'ի նժդեհութեան իւ-
րում։ Զահի հարաւ ժողովուրդն,
համարեցաւ թէ աստուածեղէն ինն
զօրութիւն գոյ 'ի նմա, ամենեքին առ
հասարակ արտասուագոչ աղաղակ
բառնային։ Եւ արք աղերս արկեալ
մաղթէին 'ի նմանէ հրահանգել զկա-
նայս իւրեանց։ Սորին աղագաւ կա-
նայք կրոտոնացիք՝ Պիւթագորեանք
անուանեցան։

'Ի վնին գտաւ Պիւթագորաս յա-
ւուր միում 'ի հանդիսի խաղարկու-
թիւնս. և առաջի համբրէն ժողովրդ-

դեան կոչեաց առ ինքն ձայնիւք ոմամբք զարծուի մի, զոր ընդելացուցեալ էր նորա՝ առանց ուրուք գիտելոյ։ Հրաշացան ընդ այս ամենեքին որք անդն կային։ Սակայն առ յաւէտ ևս զարմանասքանչ գործել զերան՝ երևեցոյց Պիւթագորաս յաչս ամենեցուն նոցա աղդր մի ոսկեղէն՝ մած 'ի սրունս նորա։

Նուիրական պատարագք նորա էին կարկանդակք, կամ այլ ինչ ըստ նմին կարգի։ Ասէր թէ խորշին աստուածք յարիւնոտ պատարագաց, և այն շարժէ զցասումն նոցա 'ի վերայ մատուցանելեացն։

Հաւանական է իմաստասիրել՝ թէ զայսօրինակ վարդապետութեամբք կամէր Պիւթագորաս 'ի բաց քեցել ըզմարդիկ 'ի բաղմախորտիկ խնջոյից, և մարզել զնոսա յանպաճոյճ կեանս. քանզի այդ դիւր է բնութեան, և ոգիք աղատօրէն գործեն։ Եւ առ օրինակաւ 'ի գլուխ հանել զերան՝ ջուր ևեթ ըմպէր, իսկ կերակուր նորա էր հաց, մեղր, միրգ, և ունդք բաց 'ի բակլայէ։ թէպէտ և չէ յայտ թէ էր աղաղաւ հրաժարեաց նա 'ի բերոյ այդր տնկոյ։

Ասէր Պիւթագորաս, կեանք նման են տօնավաճառ հանդիսի. զի զորօրի-

նակ փ�թան հասանել ոմանք 'ի տо-
նավաճառս՝ առ մարզելոյ յրմբշամար-
տութիւնս, ոմանք վասն շահավաճա-
ռաց, կէսք միայն 'ի զնին տեսլեանց,
նոյնպէս և 'ի կեանս ոմանք ծնանին
ստրուկք փառաց, ոմանք ամբարտա-
ւանութեան, և կէսք հետամուտ են
ճշմարտութեան ևեթ։

Ո՛չ յօժարէր բնաւ խնդրել ինչ
վասն իւր. զի ամենայն մարդ, ասէ,
տգիտանայ զոր ինչ ինքեան պիտոյն
իցէ։ Բաժանէր զհասակ մարդոյ 'ի
չորս մասունս հաւասարս. մանկունք
են, ասէ, մինչև 'ի քսանամեան հասակ.
երիտասարդք մինչև 'ի քառասուն.
արք մինչև 'ի վաթսուն. ծերք մինչև
յութսուն. իսկ զոր աւելի քան զայն՝
ո՛չ դրէր ընդ կենդանիս։

Յօժարամիտ էր յերկրաչափութիւն
և յաստեղաբաշխութիւն. նա ինքն
հաս 'ի վերայ թէ լուսաբերն նոյն ինքն
գիշերավարն է. և եցոյց թէ յամենայն
ուղիղ եռանկիւնս՝ քառակուսի հակ-
ուղղոյն հաւասար է ընդ քառակու-
սեաց այլոց երկուց կողմանցն։ Պատ-
մել պատմեն թէ այնպէս իմն խնդա-
մտեաց Պիւթագորաս 'ի հաւաստելն
զայս հռչակաւոր տեսութիւն, զի պար-
տապան համարեալ զինքն ներշնչելոյ
զայն դից յանձն իւր, երախտագէտ

մտոք զՀարիւրեզեանն մատոյց պատա-
րագ։ Բաղում ուրեք է յակն արկա-
նել զայդ պատմութիւն, թէպէտ և
հակառակ պիւթագորեան վարդապե-
տութեան. սակայն և կարծել մարթ
է՝ թէ այն անուանեալ եղինք յօրի-
նուածք էին մեղու և ալեր, զոր օրինակ
սովորութիւն էր առ պիւթագորեանս։
Գրեն և ոմանք թէ մեռաւ նա առ մե-
ծի խնդութեանն վասն այնր. բայց
ըստ կարգի բանից Լայերտիոսի մար-
թիմք անհիմն համարել զդոյն։

Այս խնամ մեծապէս էր Պիւթա-
գորայ՝ բարեկարգութիւն և միաբա-
նութիւն 'ի մէջ աշակերտաց իւրոց.
և բաղում այն էր զի 'ի վարդապետու-
թեան իւրում առակախօս լինէր առ
նոսա։ Օրինակ իմն, ասէր, չէ արժան
երբէք ընդոստնուլ 'ի կշիռս։ Ծանու-
ցանելով նոցա՝ չՀեռանալ երբէք յար-
դարութենէ։ Զէ օրէն նստել առ թո-
շակօք աւուրն։ Հրահանգէր սովին թէ
չէ 'ի դէպ անաղանել զառաջիկայիւն,
այլ միտ դնել և հանդերձելումն։
Խրատէր զնոսա՝ զոր ամենայն ընդ
սուղ ինչ ժամն զանձամբ դալ, և ա-
սել ցանձն. յինչ անցուցի զօրս ցե-
րեկ. ո՞ր կացի, զի՞ գործեցի վայելուչ,
և զի՞ տարադէպ։ Պատուիրէր նոցա
ունել միշտ յանձին զարտաքին զՀա-

մեստութիւն և զծանրութիւն՝ ոչ բնաւ անձնատուր լինելով յաղդեցութիւնս խնդութեան կամ ցաւոց. գութ ունել առ ծնողս, պատիւ առ ծերս. կալ 'ի մարդս աշխատութեան՝ զի մի տարապայման դիրասցին, և մի 'ի ճանապարհորդութեան վատնել զբովանդակ ժամանակն: 'Ի մեծարանս դից՝ խնամք ժրաջան, և ջանալ 'ի պարտուպատշաճ պաշտօն նոցա:

Քաջ շահեցաւ 'ի խրատուց Պիւթագորայ՝ ստրուկ նորա Զամոքսիս սկիւթացի. քանզի 'ի դարձին իւրում 'ի հայրենի երկիր իւր՝ պատարագք պատուեցին զնա սկիւթացիք, և ընդ դիս համարեցան զնա:

Կարծիք էին և Պիւթագորայ թէ առաջին սկիզբն ամենայն իրաց Միութիւն է. 'ի միութենէ անտի բաշխին թիւք, 'ի թուոց կէտք, 'ի կիտից գիծք, 'ի գծից մակերևոյթք, 'ի մակերևութից հաստատունք, և 'ի հաստատնոց չորեքին տարերքն հուր, օդ, ջուր և հող, որովք կառուցեալ են տիեզերք ողջոյն. և թէ այդոքիկ տարերք ցանկ փոփոխին ընդ իրեարս, այլ ոչ մի ինչ վատնի 'ի տիեզերս. և ամենայն որ ինչ լինի՝ բովանդակ փոփոխութիւն է: Գնտաձև ասէր զերկիրս, զետեղեալ 'ի միջավայրի տիեզերաց, և բնակեալ

շուրջանակի. համարէր լինել և հակ-
ոտնէից, որք գնան՝ ներհական ունե-
լով զոտս ընդդէմ մեզ։ Օդ՝ զերկրաւս
շրջափակ՝ ծանր է, և գոդչիր անշարժ.
և յաղագս այսր ամենայն կենդանիք
բնակեալք յերկրի՝ մահկանացուք են,
և ընդ մահու դրաւեալք։ Ընդ հակա-
ռակն՝ նրբին են եթերք և մշտաշարժ.
յաղագս որոյ ամենայն կենդանիք
բնակեալք 'ի նմա անմահք են, և աս-
տուածեղէնք։ Արև, լուսին, և այլ
ամենայն աստեղք՝ աստուածեղէն բնու-
թեան բաժանորդք են, զի զմիջակէտն
ունին զնրբին եթերացն, և զազդողա-
կան ջերմութեանն՝ որ սկիզբն է կեն-
դանութեան։

Բազմադիմի են կարծիք յաղագս
կատարածի կենաց այսր իմաստասիրի։
Են որք ասեն թէ ոմանք յաշակեր-
տացն զորս ոչ կամեցաւ ընդունել՝
զայրացեալք ընդ արհամարհել զնոսա,
հուր հարին զտանէն Միլոնի ուր բնա-
կէրն Պիւթագորաս։ Այլք հաստա-
տեն թէ նոքին իսկ կրոտոնացիք մտա-
բերեցին յայդ եղեռն. զի խիթային
թէ մի գուցէ տիրացեալ բռնակալես-
ցէ Պիւթագորաս դաւառի նոցա։ Որ
զիարդ և իցէ, տեսեալ Պիւթագորայ
զտունն ողջոյն ճարակ հրդեհին, փու-
թանակի 'ի բաց մեկնեցաւ անտի, ու-

նելով ընդ իւր քառասուն յաշակերտացն։ Աւանդեն ոմանք թէ անկաւ 'ի նուիրական անտառն Մուսայից 'ի Մետապոնտոս (յայժմուս Պալիլիգադա գաւառ Նէապոլսոյ) ուր ինքնակամ սովամահ կորեաւ։ Այլք հաստատեն թէ հանդիպեալ նորա յարտ մի բակլայի՝ ընդ որ անցանել կայր նմա, ոչ յօժարեաց առ այն, և ասաց. լաւ էցէ մեռանել աստէն, քան առաքինութիւր կոխել զվիճակ հիգացելոյ տնկոյդ։ Եկաց անդէն անխառով մինչև 'ի հասանել կրոտոնացւոց՝ որք սպանին զնա և զբազումս յաշակերտաց նորա։ Դարձեալ՝ են որք պնդեն, թէ ոչ Կրոտոնացիք սպանին զնա, այլ 'ի բորբոքել մարտի պատերազմի ընդ ագրիգենտացիս և ընդ սիրակուսացիս, դիմեաց Պիւթագորաս տալ ձեռն օգնութեան ագրիգենտացւոց դաշնաւորաց իւրոց. իսկ իբրև ցրուեցան նոքա, և Պիւթագորաս զգուշացեալ 'ի բաց մեկնէր, անդ դիպաւ անդրոյն բակլայի՝ ընդ որ ոչ կամեցաւ անցանել, և յանձն առ խողխողել անդէն 'ի սիրակուսացւոց։ Ընդ նմա սպանան և բազումք յաշակերտաց նորա, յորոց սակաւք ոմանք ապրեցան, ընդ որս էր և Ալքիտաս տարենտացի՝ հռչակաւորն յերկրաչափս իւրում ժամանակին։

ՀԵՐԱԿԼԻՏՈՍ

Հռչակեալ զվաթներորդ ինն երորդ ոլիմպիադաւ։

ՀԵՐԱԿԼԻՏՈՍ Եփեսացի՝ որդի Բլիսոնի, քաջանուն հռչակէր յամենն վաթներորդ ինն երորդ ոլիմպիադին։ Սովորական անուն էր նորա՝ Խաւարին իմաստասէր, քանզի յամենայնի բանք նորա առակախօսութեամբ էին։ Պատմէ Լայերտիոս՝ թէ այր ինքնապարծ էր, և արհամարհէր զոգեաց զամենայն մարդիկ։

Ասէր, զՀոմերոս և զԱրքիլոքոս բռնցի պարտ է վանել 'ի բաց յամենայն տեղեաց։ Ուսութեան քինուցեալ էր ընդ Եփեսացիս՝ այնու զի տարբագրեալ էր նոցա զբարեկամ իւր զԵրմոդրոս. համարձակէր ասել յատենի բաղմութեան՝ թէ մահու պարտապան են ամենայն մարդիկ քաղաքին այնորիկ, և մանկունքն տարագրութեան, առ 'ի քաւել զյանցանս ամօթալից արտասահմանութեան առաքինւոյն 'ի քաղաքակիցս իւրեանց, և ականաւորին 'ի պետութեանն ողջոյն։

Զեղեն Հերակղիտոսի վարժապետք. այլ հանդէս արար նա քաջութեան իւրոյ խորախորհուրդ մտածութեամբ. անտես առնէր զամենայն գործովք մարդկան, և ախտակցաբար տխրէր ընդ կուրութիւն նոցա. այս 'ի տխուր թախծութիւն համակեաց զնա, մինչ զի լայր հանապազօր, Յովենալիս կամ Յոբնաղ լատին քերթող՝ 'ի կշիռ արկանէ զայդ իմաստասէր ընդ Դեմոկրիտեայ՝ որ անդադար ծիծաղէր. ասէ. Ան իւրաքանչիւր իշխանութիւն 'ի ձեռս է՝ դառն ծաղու կծանել զախտս և զանմտութիւնս աշխարհի. այլ ոչ իմանամ թէ որ այն աղբիւր հոսիցէ այնչափ ջուր՝ բաւական լինել արտասուացն հոսելոց անդուլ յաչացն Հերակղիտեայ։

Ո՛չ միշտ զնովին խորհրդովք դեգերէր Հերակղիտոս. յերիտասարդութեանն ասէր թէ գիտեմ և ոչինչ. իսկ յաւագոյթ հասակին մեծամտէր գիտել զամենայն ինչ. և թէ չի՛ք ինչ անծանօթ առ 'ի նմանէ։ Դժպհի էին նմա ամենայն մարդիկ. խորշէր յընկերութենէ նոցա. գնայր ընդ մանկունս մանուն քաղաքին մէջ խաղալ, կամ այլ ինչ խաղ անստգիւտ առ Արտեմեայ՝ տաճարաւն։ Եւ 'ի հորդան տալ զնովաւ եփեսացւոց տեսանել զնա. Ա՛ռք ան-

միտք, ասէր ցնոսա Հերակղիտոս, զի՞
զշուցեալ էք տեսեալ զիս զի խաղամ
ընդ մանկունսս ընդ այսոսիկ. ո՞չ ա-
պաքէն լաւագոյն է զայս առնել, քան
գործակից լինել ընդ ձեզ յանկարդ
խնամակալութիւն գործոց քաղա-
քիդ։

Աղերս արկին նմա եփեսացիք կար-
դել իւրեանց օրէնս, այլ ո՛չ առ յանձն
զայն Հերակղիտոս. զի գնացք ժողովը-
դեանն յաւէտ իմն 'ի վատթարն կոյս
զակատեալ էր, և չունէր հնարս ճար-
տարել 'ի փոփոխել զտարրազ կենաց
նոցա։ Ասէր. պարտ է ժողովրդեանն
նովին եռանդեամբ մարտնչել 'ի պահ-
պանութիւն օրինաց, որով մարտնչին
'ի պատսպարութիւն պարսպաց։ Պարտ
է յօժարագոյն լինել 'ի հանդարտել
զցասումն, քան 'ի շիջուցանել զՀըր-
դեհ. քանզի աղէտք առաջնոյն դժնդա-
կագոյն են քան զերկրորդին։ Շիջանի
հրդեհ այրեցմամբ իրաց սակաւուց.
այլ ցասումն՝ բաղում այն է զի դուռն
բանայ չարաչար պատերազմաց, յորոց
կործանումն և խապառ քակտումն աղ-
գաց։

'Ի յուղել երբեմն աղմկի Եփեսոս
քաղաք՝ աղաչեցին ոմանք զՀերակղի-
տոս՝ հրապարակախօս լինել առ ժողո-
վուրդն զոր կարևորն է՝ 'ի լռեցուցա-

նել զաղմուկն։ Ամբարձաւ 'ի բեմբ
անդր Հերակղիտոս, էառ բաժակ մի,
և ելից 'ի նա ջուր ցուրտ, արկ 'ի նմին
և հատս վայրի ընդոց. և արբեալ զայն
խառնուրդ, 'ի բաց մեկնեցաւ անտի,
ասելով և ոչինչ։ Ասել կամէր սովին,
թէ վասն զառաջս ունելոյ զխռովու-
թեանց՝ հարկ է 'ի բաց անջատել 'ի
ժողովրդենէ զզեղխութիւն և զանձն-
դիւրութիւն, և 'ի ժուժկալութիւն
հրահանգել զքաղաքացիս։

Յորինեաց Հերակղիտոս գիրս իմն
յաղագս բնութեան՝ զոր ետ դնել 'ի
տաճարին Արտեմեայ։ Աղօտագոյն
էին բանքն, զի միայն գիտնոց իցէ ըն-
թեռնուլ. խիթացաւ՝ զի թէ ռամիկն
առցէ զայնր զճաշակ՝ դիւրաբար 'ի
ձեռս յածի ամենեցուն, և արհա-
մարհեալ լինի։ Պատիւ գրոցս և և
առաւելաւ. քանզի ըստ Լուկրետիոսի՝
ոչ ոք խելամտէր այնմ։ Լուեալ զերսդ
Դարեհի արքայի Պարսից՝ գրեաց առ
Հերակղիտոս՝ զի յօժարեցուսցէ զնա
գալ բնակել 'ի Պարսս, և մեկնել նմա
զգիրսն, խոստանալով նմա հատու-
ցումն մեծապարգև, և բնակարան
յարքունիս իւր. այլ ոչ յանձն առ
Հերակղիտոս։

Սովորոյթ էր այսր իմաստասիրի
կալ անբարբառ. և 'ի հարցանել ու-

մեք զպատճառ լռութեան նորա, յոչ կամաց իմն տայր պատասխանի, Զի տաց խօսել քեզ։ Արհամարհէր զաթենացիս որք մեծապէս պատիւ դնէին նմա. և հաճեալ էր ընդ բնակելն յԵփեսոս՝ ուր անդոսնեալ էր յամենեցունց։

Անհնար էր նմա՝ տեսանել զոք, և ոչ արտասուել 'ի վերայ մարդկեղէն տկարութեան, և վասն զայրացկոտ բնութեանն, զի ոչ ինչ բնաւ հաճոյ լինէր նմա։ Այս անհամբոյր մարդատեցութիւն նորա բռնադատեաց զնա՝ կատուցեալ մեկին կալ. առանձնացաւ 'ի լերինս անմարդիս, ուր երբէք ոչ տեսանէր զոք. անդ 'ի հեծութեան մաշէր զաւուրսն, և բանջարով և ընդով շատանայր։

Կարծիք էին Հերակղիտոսի թէ հուրն՝ առաջին սկիզբն է ամենայն իրաց. այդ առաջին տարր, ասէ, խտացեալ յօդ փոխարկի. իսկ օդ խտացեալ՝ 'ի ջուր փոխի. նոյնպէս և ջուր հող լինի. և դարձեալ նովին օրինակաւ հողն անօսրեալ 'ի ջուր դառնայ. ջուրն յօդ. և օդն 'ի հուր. որ է առաջին սկիզբն ամենայն իրաց։

Տիեզերս 'ի վախճան հասեալ է. մի միայն է աշխարհ. և այդ կազմեալ 'ի հրոյ. և 'ի կատարածի հրով քակտեսցի

ցի։ Տիեղերք բնակարան են հոգւոց և քաջաց։ Ո՛չ նախախնամեն դիք. այլ որ ինչ անցք անցանեն՝ բովանդակ գործք են բաղդի։ Արևն չէ՛ ինչ մեծագոյն քան զերևեալն։ Են յօդս աղդ ինչ մակուկաց 'ի մեր կողմն գոգեալք. 'ի նոսին գումարին գոլորշիք ցնդեալք յերկրէ. և այն ամենայն զորս մեք աստեղս անուանեմք՝ են այդոքիկ մանր մակոյկք լցեալք գոլորշեօք վառելովք, որք լոյս շողացուցանեն ըստ օրինակին զոր մեքս տեսանեմք։ Խաւարին արև և լուսին՝ երբ այդոքիկ մանր մակոյկք դարձուցցեն զգոդս իւրեանց առ մասնն հանդիպակաց երկրի. իսկ պատճառ այլօրինակ երևութից լուսնի՝ այն է՝ զի մակոյկ նորա մեղմով կատարէ զդարձուածս իւր։ Ասէր և յաղագս բնութեան հոգւոյ՝ թէ զուր ժամանակ վաճառ լինիմք 'ի խնդրելն հետազօտել զայն. զի և գտանել իսկ անհնարին է. այդպէս թագուն իմն է։

Խեղաթիւր ընթացք կենաց Հերակղիտոսի հասոյց նմա հիւանդութիւն չարատանջ. զի կալաւ զնա ախտ ջրգողութեան։ Դարձաւ յԵփեսոս՝ գտանել բժշկութիւն անձին, անկաւառ բժիշկս. և օրինակօք խօսելով ընդ նոսա՝ ասաց նոցա այսպէս, ակնարկելով յախտակրութիւն իւր. Կարիցէք

դուք դարձուցանել զանձրև 'ի ցամաքուտ և 'ի պարզ եղանակ։ Եւ քանզի ոչ իմանային բժիշկք զոր ինչ նա ասել խնդրէր՝ գնացեալ եմուտ 'ի դոմն եզանց, և թաղեաց զանձն յաղբևս՝ քամել նովին զլճացեալ ջուրս որ պարպատէին զնա. սակայն խորագոյն խրեալ 'ի նմին՝ ոչ կարաց յառնել անտի։ Ե'ն որք ասեն թէ շունք յօշոտեցին զնա յաղբևս անդ. կամ թէ՝ անդ մեռաւ չկարելով թափել զանձն։ Էր յայնժամ 'ի հասակի վաթսուն և հինգ ամաց։

ԱՆԱՔՍԱԳՈՐԱՍ

Ծնեալ 'ի վաթսներորդ ողիմպիադին, մեռեալ յութսուն և ութ. 'ի հասակի ամաց եօթանասուն և երկուց։

ԱՆԱՔՍԱԳՈՐԱՍ որդի Եգիսի-բուլոսի 'ի խորս խաղաց բնաբանու-թեան՝ առաւել քան զայլս որք քան զնա երիցագոյն էին ժամանակաւ։ Էր 'ի Կլազոմենա քաղաքէ Յոնիոյ, յազ-նուական տոհմէ հնութեամբ և ճո-խութեամբ. ծանուցաւ անուն նորա առ ժամանակօք եօթանասներորդ վե-ցերորդ ողիմպիադին։ Աշակերտեցաւ Անաքսիմենեայ՝ որ էր ուսեալ առ ոտս Անաքսիմանդրի, և նա Թաղեսի՝ զոր համարին Յոյնք՝ նախասկիզբն դպրութեանց իւրեանց։ Բերկրութիւն էր Անաքսագորայ զիմաստասիրու-թեամբ գալ. մինչև վասն այնր հրաժա-րել յամենայն գործոց՝ որ հասարա-կաց, և որ առանձնական, զի բովան-դակ նմին պարապեսցէ։ Լիք եթող զստացուածս իւր, զի մի դուցէ հոգ շահասիրութեան 'ի բաց տարցէ զնա

յուսումնասիրութենէ. ակն յանդի-
ման ցուցին նմա ծնողք նորա՝ թէ առ
անհոգութեանն վատնին ինչք նորա.
սակայն ոչինչ ազդեցին 'ի սիրտ նորա։
Ելեալ մեկնեցաւ 'ի Հայրենի երկրէն
իւրմէ, և բովանդակ հպատակեաց 'ի
հետաքննութիւն ճշմարտութեան։ 'Ի
կշտամբել զնա առն ուրուք վասն ոչ
ակն ածելոյ բնաւ Հայրենի քաղաքին
իւրոյ, ցուցեալ նորա մատամբ զեր-
կինս, նա մանաւանդ, ասէ, կարի ինն
առաւելութեամբ ջանացեալ եմ նմին։
Տեղի բնակութեան ընտրեաց զԱ-
թէնս, ընդ իւր տարեալ անդր և զյո-
նական դպրութիւն, որ 'ի Թաղեսէ
և այսր՝ յառաջնորդէ այսր ուսման՝
հիմնացեալ էր 'ի Միլետոս։ 'Ի քսան
ամաց տիս ձեռն արկ ուսուցանել զի-
մաստասիրութիւն, և յերկարեաց 'ի
նմին զամս երեսուն։

Ածաւ երբեմն 'ի տուն Պերիկղեսի
խոյ մի՝ որոյ մի եղջիւր էր 'ի ճակա-
տուն։ Լամպոն գուշակ մարգարէա-
ցաւ անդէն թէ նախապատուամ է
այդ՝ 'ի մի մարմին պատկանելոյ կրկին
կողմանցն՝ որք յայնժամ երկփեղկէին
զԱթէնս։ Սակայն Անաքսագորաս
մեկնեաց զերան օրինակ զայս. քանզի
ուղեղ կենդանւոյդ ոչ քաջ ընու զխե-
լապատակն երկայնաձիգ, այլ 'ի սրա-

ծայր յանգի 'ի տեղի անդր զլինոյն ուր սկզբնաւորին արմատք եղջերն։ 'Ի ստուգել զերան, կորեաց մանր զգլուխ խոյին առաջի ամենեցուն. յորմէ յայտնի եղև՝ թէ զուգաձայն է բանիցն Անաքսագորայ։ Յանկեցաւ այս գործ 'ի փառս Նորա. այլ ոչ նուազ փառաւորեաց և զԼամպոն հարցուկ-քանզի յետ ժամանակաց ինչ 'ի վերայ անցանելոյ խորտակեցաւ կողմն Թուկիդիդեայ, և ամենայն գործակալութիւնք պետութեան անցին 'ի ձեռս Պերիկղեայ։

Առաջին համարի Անաքսագորաս 'ի մէջ համարէն Յունաց որ եհան 'ի լոյս ճառ իմաստասիրական։ Նախկին սկիզբն եղ զանհունն, և զիմացութիւն իմն տնօրէն նիւթոյ, և յօրինող ամենայն էակաց եղելոց 'ի տիեզերս։ Արին սակս իմաստասէրք ժամանակակիցք Նորա՝ Ոգի անուանեցին զնա։ Ո՛չ հաւատաց նա թէ այդ իմացութիւն յոչնչէ արար զնիւթն. այլ կարգաւորեաց միայն։ 'Ի սկզբանէ, ասէ, խառնափնդոր էր ամենայնն, և մնացին այնպէս՝ մինչև իմացութիւնն բաժանեալ անջրպետեաց զնոսա 'ի միմեանց, և սահմանեաց 'ի կարգին յորում տեսանեմք այժմ զնոսա։ Գեղեցիկս բացատանոյց զայս իմաստ Նորա

Ովկիդիոս 'ի սկզբան գրոցն այլակերպութեանց։

Ոչ այլ ինչ աստուածութիւն ընդունէր՝ բաց յիմացութենէ անտի որ արար զաշխարհս. և քաջ իսկ 'ի վերայ հասեալ էր ստութեան դից՝ երկրպագութեամբ պաշտելոց 'ի կռամոլ հնութենէ, մինչև կեղծել Լուկիանոսի՝ թէ շանթահար սատակեցաւ յԱրամազդայ, վասն արհամարհելոյն զնա, և զայլ ամենայն աստուածս։

Համարէր թէ չկայ դատարկութիւն 'ի բնութեան. լի է ամենայնն. և ամենայն մարմին թէև դուզնաքեայ՝ մինչև ցանհունս բաժանի։ Զամենայն մարմին բաղադրեալ համարէր 'ի մանունց մասնկաց համասեռից. և թէ՝ օրինակ ինքն՝ արիւնն կազմի 'ի մանունց մասանց արեան. ջուրն 'ի մանրամանր ջրեղէն մասանց. նոյնպէս իմա՛ և վասն այլոցն ամենայնի. զայդ նմանութիւն մասանց յոյն բառիւ կոչէր ὁμοιομερῆ։ Ըստ այսմ օրինակի բացատրեաց Լայերտիոս զնմաստասիրութիւն նորա։ Իսկ որոց ընդդէմ բանս դնէին Անաքսագորայ, թէ հարկ է ամենայն մարմնոց բաղադրել 'ի տարասեռ մարմնոց, իբր զի աճեն մեծանան ոսկերք կենդանեաց՝ առանց ոսկր ուտելոյ նոցա. ստուարանան ջիղք նոցա, սակայն

նոքա ոչ ուտեն ջիղ. յորդեալ առաւելու արիւն նոցա, թէպէտ և ոչ արիւնածուծ լինին. պատասխանի առնէր նա այսոցիկ՝ թէ յիրաւի չէք մարմին որ բովանդակ յօրինեալ էցէ 'ի մասանց նմանեաց։ Եւ թէ՝ օրինակ 'ի մէջ առեալ բանին, 'ի խոտն գոն և մարմին, և արիւն, և ոսկր, և ջիղ. քանզի տեսանեմք մեզէն զի նոքօք սնանին կենդանիք. այլ իւրաքանչիւր մարմին յարանուանի 'ի նիւթոյն յորդելոյ յաճախութեամբ 'ի կազմութեան նորա։ Զորօրինակ՝ այս ինչ մարմին՝ որպէս զի անուանեսցի փայտ կամ խոտ, շատ է նմա ընդունել առաւելագոյն մասնկունս փայտեղէնս կամ խոտեղէնս քան զայլսն ամենայն, և այնց մասանց փայտեղինաց կամ խոտեղինաց սփռել յորդագոյնս ընդ մակերևոյթ այնր մարմնոյ։

Ո՛չ այլ ինչ համարէր զարեգակն բայց երկաթ հրաշէկ, մեծ քան զհամօրէն Պեղոպոնեսոս։ Ըստ նորա լուսինն է մարմին անթափանց և բնակեալ. յորում են լերինք և ձորք իբրև 'ի մերում գնտի։ Գիսաւորք՝ հոյլք են մոլորական աստեղաց՝ համահաւաքելոց ըստ դիպուածոյ, և բաժանեալ ցրուին 'ի միմեանց յետ սուղ ժամանակի։ Հողմ շնչէ յանօսրել զոդս ներ-

մութեան արևու։ Որոտումն՝ բախումն է ամպոց, և շանթք հատանին 'ի շփման նէ նոցա։ Երկրաշարժութիւնք լինին յօդոյ փակելոյ 'ի ստորերկրեայ անձաւս։ Յորդեն ջուրք Նեղոսի՝ սակս յաճախութեան ձեանց Եթովպիոյ, որոց լուծեալ ըստ սահմանաւոր ժամանակին՝ յարուցանեն ուղխս ջուրց, և զեղուն զաղբերակամբք այդր դեառոյ։

Վարկաւ Անաքսագորաս զօդս պատճառ շարժութեան աստեղաց. և առ բանն 'ի դէմս բերեալ նմա յաղագս երթալոյ և դարձի մոլորական աստեղաց ընդ մէջ երկուց արևադարձից, պատասխանէր թէ լինի այդ 'ի ճնշելոյ օդոյ, որ իբրու աղեղն կծկեալ՝ մերթ մղէ, և մերթ ձգէ զաստեղս ըստ հասանելոյ նոցա 'ի սահմանեալ տեղիսն։

Համարէր զերկիր տափարակ, և ծանրագոյն քան զամենայն տարերս, և վասն այնր զկռնարհագոյն տեղին ունի ասէր 'ի տիեզերս։ Ջուրք կաթեալք 'ի վերայ նորա՝ անօսրեալ են 'ի ջերմութենէ արևու՝ որ 'ի շոգիս վերամբառնայ զնոսին, և ձգէ մինչև 'ի միջնագաւառ օդոյ. ուր 'ի ջուր լուծեալ անձրևեն 'ի շիթս։

Զոր տեսանեմք յերկինս գիշերայն

'ի պարզն ընդարձոյն իմն կամարանման, ծիր յարդդողն անուանեալ, զայն կարծեցին ոմանք 'ի նախնեաց թէ ճանապարհ իմն է զոր ունին աստուածքն փոքունք՝ առ 'ի գնալ 'ի ժողով մեծին Աբրամաղդայ։ Այլք՝ թէ տեղի է յորում հոգիք դիւցազանց սլացեալ հանդչին 'ի լուծանել մարմնոց նոցա։ Խաբեցաւ 'ի նմին և Անաքսագորաս ըստ օրինակի հին իմաստասէրաց. վարկաւ զայն ցոլացումն լուսոյ արեգական երևեալ այնու կերպարանաւ. քանզի, ասէր, ընդ ծիրն յարդդողն և ընդ երկիր չիք այլ աստղ լուսափայլ՝ որ խտրոց ընդ մէջ անկցի ցոլացման լուսոյդ։ Զկենդանիս առաջնաստեղծս արտադրեալս համարէր 'ի ջերմութենէ և 'ի խոնաւութենէ, որք յետ այնորիկ ծննդագործութեամբ պահեցին զազգ իւրեանց։

Դէպ եղև յաւուրս նորա քարի մեծ անկանել յերկնէ. անդէն 'ի վերայ ած Անաքսագորաս՝ թէ քարեղէն են երկինք. և հաստատուն կան վասն հապշտապ շրջանակելոյն. այլ եթէ այդ ուժգին շարժումն վայր մի նուազեսցէ՝ համօրէն կազմած աշխարհիս 'ի քթթել ական քակտեալ ապականի։ Կանխաւ գուշակեաց երբեմն՝ քար անկանել յարևէ. ար-

դեամբք կատարեցան բանք նորա. և քարն անկաւ մօտ յԵդոս գետ։ Իմաստասէրեաց թէ որ այժմ հաստատուն երկիր է՝ յանցանել ժամանակաց 'ի ծով փոխեսցի. և ծովն յերկիր հաստատուն։ 'Ի հարցանել ցնա ուրումն. էցէ՞ թէ վերացեալ ամբարձցի ծով ծածկել զերինս Լամպսակոնի. այո՛, ասէ, միայն թէ մի՛ պակասեսցէ ժամանակն։

Զծայրագոյն բարին հաստատէր լինել 'ի խոկալ զգաղտնիս բնութեան. և վասն այնր երբ հարցանէին ցնա թէ զի՞ եկեալ էցէ յաշխարհ, ասէր. քննել մտօք զերկինս, զարև, զլուսին, և զայլ սքանչելիս։ Եհարց ցնա ոմն. ո՞վ է յաշխարհի երջանկագոյն 'ի մարդիկ. ետ պատասխանի. ո՛չ ոք յորոց կարծես. այլ 'ի նոսա գտցես զնա՝ զորս դուն հիգացեալս համարիս։ Լուաւ նա յաւուր միում՝ զի կոծէր այր ոք վասն 'ի տար աշխարհ մեռանելոյ. և զի՞նչ խտիր կայցէ, ասէ ցնա Անաքսագորաս. չէք երկիր յաշխարհի՝ ուր չէցէ ճանապարհ իջանելոյ 'ի դժոխս։ Իբրև գուժէին նմա զբօթ մահու որդւոյ իւրոյ, անխռով ընկալաւ զլուր աղետիցն. և ասէ. քաջ գիտէի՝ թէ ծնայ զմահկանացու։ Յետ այնորիկ գնաց ինքնին գլխովին 'ի թաղել զնա։

Անուն պատուոյ նորա յԱթէնս՝ ոչ ձգեցաւ ընդ երկար։ Զգեցին զնա աթենացիք 'ի դատաստան և ամբաստան եղեն հրապարակաւ. զլուխք ամբաստանութեանն բազմօրինակ աւանդին. հասարակաց ընկալեալ կարծէք են թէ փնասապարտ դտաւ 'ի յանցանս ամբարշտութեան, իշխեալ 'ի պնդել թէ արեգակն պաշտեցեալ իբրև աստուած՝ երկաթի ձոյլ է հրաշեկ։ Այլք ասեն թէ բաց յամբարշտութենէն ամբաստանեցաւ և 'ի յանցանս դաւաճանութեան։ Իբրև ծանուցաւ նմա՝ թէ մահու դատապարտ կացուցին զնա աթենացիք, ոչինչ դրդուեցաւ. կանուխ ուրեմն՝ ասէ, ինքնին ընութիւն վճռեաց 'ի վերայ նոցա զնոյն դատակնիք։ Զեռն օգնութեան ետ նմա ժրագոյնս Պերիկղէս որ աշակերտեալն էր նմա, և նուաղեաց զխրոստութիւն հրամանին։ Պարտաւորեցաւ 'ի տուգանս հնգից տաղանդաց, և ապա 'ի բաց աքսորեցաւ։ Արութեամբ քաջութեամբ տարաւ Անաքսագորաս վշտացն իւրոց։ Դեգերեցաւ զժամանակ տարագրութեանն յԵգիպտոս և յայլ տեղիս՝ խորհուրդ հարցանել ընդ արս իմաստունս, և հասու լինել սովորութեանց օտար աղգաց։ Լի և պատարուն հետազօտեալ.

ղբովանդակն՝ դարձ արար 'ի Կլաղոմենա՝ տեղի ծննդեան իւրոյ. և դտեալ զստացուածս անխնայն և լքեալս, ասէ. եթէ այս ամենայն ոչ կորնչէր՝ ես ինքնին կորնչէի։

Յաւէտ իմն փութոյ պնդութեամբ ջան եդեալ էր Անաքսադորայ 'ի հրահանգս Պերիկղեսի, և յօժանդակել հասարակաց գործակալութեանց նորա. սակայն ոչ զուգաչափ դտաւ և երախտագիտութիւն Պերիկղեսի. նա և ստդիւտ է զնմանէ թէ 'ի վախճանի զանց արար զվարժապետաւն։

Տեսեալ զանձն իւր Անաքսադորաս ծանրացեալ կարեօք ծերութեան, աղքատ, և լքեալ, ամփոփեցաւ յաղաբողոնն իւր, և եդ 'ի մտի՝ սովամահ կորնչել։ Լուաւ զայն Պերիկղէս, 'ի խոր խոցեցաւ ընդ այն. ընթացաւ փութանակի առ Անաքսադորաս, թախանձ արկ նմա՝ հրաժեշտ տալ 'ի մտացն հաստատութենէ։ Ողբաց զաղէտս պետութեանն ընդ կորուստ այնքանոյ առն. յաւէտ ևս զիւրն. քանզի անօգնական մնայր 'ի հաւատարիմ խորհրդականէն։ Եբաց նմա Անաքսադորաս զերեսս իւր որ այն ինչ զվերջին տուրևառն շնչէր. և կարդաց առ նա. Ո՛վ Պերիկղէս որք կարօտ լցեն լապտերի՝ իւղ արկանեն 'ի նա։

Պատմէ Լայերտիոս, թէ Անաքսագորաս մեռաւ 'ի Լամպսակոն, և այն ինչ զյետինն շնչէր տուրևառ՝ դլխաւորք քաղաքին հարցին ցնա, թէ ուր նիցի ինչ աւանդել պատուիրանաւ. նա հրամայեաց նոցա՝ ամ ըստ ամէ յօր յիշատակի մահուան իւրոյ պարապ տալ մանկանց 'ի դպրոցաց, և թոյլտուութիւն 'ի խաղս պարապելոյ։ Զգեցաւ այդ սովորութիւն ընդ բազում ժամանակս։ Անցեալ էր Անաքսագորայ զեօթանասուն և երկու ամաք 'ի մեռանելն իւրում, եթէ ստոյգ է մեռանել նորա յութներորդ ութերորդ ոլիմպիադին։

ԴԵՄՈԿՐԻՏՈՍ

Ծնեալ յերրորդ ամի Եօթանասներորդ երրորդ ողիմպիադին. մեռեալ 'ի չորրորդումն հարիւրորդ հինգերորդին. կեցեալ ամս հարիւր ինն։

ԱՍԱՐԱԿԱՑ կարծիք են թէ Դեմոկրիտոս իմաստասէր՝ աբդերացի էր. զոր այլք միլետացի ասեն լինել. իսկ աբդերացի անուանեցաւ՝ վասն բնակելոյ նորա յԱբդերա քաղաք։ Ուսաւ զառաջին ուսմունսն 'ի մոգուց և 'ի քաղդէից՝ զորս Քսէրքսէս արքայ թողեալ էր առ հօր նորա, առ որում օթևանս կալեալ էր 'ի խաղալն իւրում մարտիւ 'ի վերայ Յունաց։ 'Ի քաղդէից անտի ուսաւ Դեմոկրիտոս զդիցաբանութիւն և զաստեղագիտութիւն։ Յետ այնորիկ ուսաւ զբնաբանութիւն ընդ ձեռամբ Լիւկիպպոսի իմաստասիրի։ Ջանք նորա յուսումնասիրութիւն՝ բորբոքեալ էր յոյժ յոյժ. զի և բաղում անգամ զօրն ցերեկ փակեալ մնայր 'ի տաղաւարի ուրեք 'ի մէջ դրախտի միոյ։ Ածնմա յաւուր միում հայր նորա եղն մի 'ի զե-

նուլ. և կապեաց զնա առ անկեամբ միով 'ի տաղաւարի նորա. այլ Դեմոկրիտոս խորագոյնս յառեալ յընթերցասիրութիւն իւր՝ ոչ լուաւ ըզբանս հօրն. և ոչ իսկ իմացաւ թէ եղնն կապեալ կայ առ անկեամբն. մինչև յետոյ ուրեմն երկրորդ անգամ եկեալ հօր նորա զարթոյց զնա 'ի խորաղնին ափշութենէն յորում էր, և եցոյց մօտ կացեալ նմա զեղն զոր հարկ էր զենուլ 'ի զոհել։

Յերկարեալ Դեմոկրիտեայ յաշակերտութիւն Լեւկիպպոսի՝ զերեսս հաստատեաց գնալ 'ի տար աշխարհ՝ ելումուտ առնել առ իմաստունս, և ճոխացուցանել զմիտս իւր ընտիր ընտիր գիտելեաք։ Բաշխեաց զժառանգութիւն հօրն ընդ եղբարց իւրոց. և կալաւ մասն անձինն դրամ և ետ թէպէտ և նուազ բաժին էր քան զայլոցն. սակայն այդ հեշտին էր նմա 'ի պէտս ծախուցն զոր ծախել ունէր յիմաստասիրական զննութիւնս և յուզէգնացութիւնս։

Գնաց յԵգիպտոս՝ ուր ուսաւ զերկրաչափութիւն. անտի փոխեցաւ յԵթիոպիա, 'ի Պարսս, յերկիրն քաղդէացւոց. նա՝ հետաքրքրութիւն նորա վարեաց զնա մինչև 'ի Հնդիկս՝ ուսանել անդէն զգիտութիւն մերկիմաս-

տակաց։ Սիրէր ճանաչել զգիտունս, այլ ոչ յօժարէր ճանաչիլ յումեքէ։ Ասի ևս՝ թէ զաւուրս ինչ կեցեալ նո-
ցա յԱթէնս՝ անդ ետես զՍոկրատ, առանց յայտնելոյ նմա զանձն։ Ախոր-
ժական էր նմա՝ ծածկաբար կեալ. քանզի և երբեմն երթեալ զօղէր բնա-
կութեամբ 'ի ծերպս և 'ի գերեզմանս զի մի ոք գիտասցէ զտեղին յորում
էրն։ Այլ 'ի վերայ այսր ամենայնի յայտնեցաւ և յապարանս Դարեհի
արքայի. և այն ինչ 'ի տրտմութիւն թախծութեան պաշարեալ կայր թա-
գաւորն ընդ մահ միոյ 'ի կանանց իւ-
րոց՝ զոր առաւել սիրէր քան զայլսն
ամենայն, խոստացաւ նմա Դեմոկրի-
տոս առ 'ի միսիթարութիւն՝ յարու-
ցանել զնա 'ի մեռելութենէ՝ եթէ
կարասցէ գտանել արքայ 'ի թագաւո-
րութեան իւրում արս երիս՝ որոց ոչ-
ինչ արկած լցէ հանդիպեալ. զորոց
զանուանս դրոշմեսցէ 'ի վերայ շիրմի
կնոջն մեռելոյ։ Անհնարին եղև գտա-
նել զոք ընդ համօրէն Ասիա՝ որպիսի
խնդրէրն Դեմոկրիտոս։ 'Ի բանից աս-
տի՝ պատճառս 'ի ներքս արկեալ իմաս-
տասիրին՝ խելամտեցոյց զԴարեհ՝ թէ
անպատեհ է համակել 'ի տխրութիւն՝
զի և չէք ոք յաշխարհի անկարեկիր
վշտաց։

Դարձ արարեալ Դեմոկրիտոսի Աբդերա՝ եկեաց մենաւոր և կարօտեալ. զի սպառեալ էր զամենայն ստացուածս իւր 'ի հետազօտութիւնս և 'ի ճանապարհորդութիւնս. վասն որոյ եղբայր նորա Դամասկոս, յանձին կալաւ խնամ ունել կենաց նորա։ Օրէնք էին յաշխարհին յայնմիկ զի ոչ թաղէին 'ի շիրիմս հարց իւրեանց զորս վատնէին զինչս նոցա. արդ զի ընդ սովին դատակնքով անկեալ էր Դեմոկրիտոս, և զի ոչ կամէր թէ թշնամիք իւր խաղ առնիցեն զնովաւ, ընթերցաւ առաջի համօրէն ժողովրդեան՝ զմին 'ի գրաւոր վաստակոցն իւրոց՝ անուանեալ յաղագս աշխարհի։ Հրաշացեալ ամբոխին ընդ քաջի մատենագրութեանն՝ աղաւտ կացուցին զնա 'ի խստութենէ օրինացն. ետուն նմա 'ի պարգև տաղանդս հինգ. և անդրիս կանգնեցին յանուն նորա 'ի հրապարակս։

Հանապազաժիծաղ ոմն էր Դեմոկրիտոս. յառաջ դայր այս սովորութիւն նորա 'ի խորարմատ քննութենէ մարդկային տկարութեան և ունայնութեան, որ բազմադէմ ծաղու արժանի խորհուրդս արկանէ 'ի մեղ. և այն զի հաստատեալ էր նորա 'ի միտս՝ թէ ամենայն ինչ գործ է դիպուածոյ, և

ըստ բաղդի զուգընթացութեան հիւ-
լէից։ Ակնարկեալ Յոբնաղի քերթողի
յերգս իւր 'ի քաղաքն Աբդերա՝ որոյ
թանձրամած է օդն, և մարդիկն թան-
ձրամիտք, ասէ՝ թէ հանճար այսր իմաս-
տասիրի յայտ յանդիման ծանուցանէ
թէ ծնանին արք հոյակապք և 'ի տե-
զին յորս անուսումն է ժողովուրդն։
Դոյն այդ բանաստեղծ յաւել ասել՝
թէ Դեմոկրիտոս անխտիր ծիծաղէր
ընդ տխրութիւն և ընդ ուրախութիւն
մարդկան. և առնու նկարագրել զի-
մաստասէրդ իբրև այր հաստատուն որ
չ դրդուեսցի յիրաց ինչ, և որ շղթայ-
եալ սանձեսցէ զբաղդ ընդ ոտիւք իւ-
րովք։

Աբդերացիք որք յար 'ի ծաղր տե-
սանէին զնա՝ համարեցան զնա թա-
փեալ 'ի մոաց. և յղեալ կոչեցին
զՀիպոկրատէս՝ գալ և ապաքինել
զայրն։ Առեալ Հիպոկրատեայ զՀան-
դերձանս դեղոցն գնաց յԱբդերա. և
զառաջինն՝ կաթն մատոյց Դեմոկրի-
տեայ. նայեցեալ Դեմոկրիտոսի ընդ
կաթն քննողական աչօք, ահա՛, ասէ,
կաթն սեաւ այծի՝ որ մի անգամ ևեթ
ծնեալ է։ Եւ ճշմարիտ էր զոր ինչ ա-
սացն Դեմոկրիտոս։ Յապուշ հարաւ
Հիպոկրատէս ընդ խելամտել նորա ի-
րացն այնոցիկ, ընդ ժամն ձիգս խօսա-

կից եղեալ նմա, զքանչացաւ ընդ խո-
րին խմաստութիւն և ընդ անօրինակ
գիտութիւն նորա. վասն որոյ ասաց՝
աբդերացիք կարօտ են եղբորոսի, և ոչ
խմաստասէրն՝ որում զայն մատուցա-
նել կամէին նոքա։ Այսպէս դարձ ա-
բար անտի մեծապէս զարմացեալ ընդ
խորհուրդս նորա։

Զհետ ընթացեալ Դեմոկրիտեայ
զվարժապետին իւրոյ զԼեւկիպպոսի՝
դնէր նախասկիզբն ամենայն իրաց
զհիւլէս և զդատարկութիւն։ Յոչընչէ
ոչինչ լինի. և ոչինչ դառնայ յոչէու-
թիւն։ Ո՛չ ապականին հիւլէք, և ոչ
այլասփոխին. վասն զի ամրապինդ սեր-
տութիւն նոցա պահէ զնոսին յամե-
նայն արկածից։ Ի հիւլէից աստի, ա-
սէր, կազմեալ են աշխարհք բազումք.
յորոց իւրաքանչիւր մաշեալ ծախի
յետ անցնիւր սահմանեալ ժամանա-
կի. այլ յեղծելոց անտի դարձեալ
այլք յօրինին։

Զհոգի մարդոյ՝ զոր նա ինքն նոյն
համարէր ընդ շնչոյ կամ ոգւոց կեն-
դանութեան, շարադրեալ ասէր 'ի
հիւլէից. նոյնպէս և արեգակն և լու-
սին, և այլ ամենայն աստեղք։ Եւ թէ
այս հիւլէք յուզեալ տատանին շար-
ժող ինն շարժնութեամբ՝ որ է պատ-
ճառ ծննդեան ամենայն էակաց. և զի

այս շարժողութիւն ցանդ միօրինակ է, յայն սակս և Դեմոկրիտոս հաւատս ընծայէր ճակատագրին, և զամենայն ինչ 'ի հարկէ եղեալս համարէր։ Իսկ Եպիկուրոս որ 'ի վերայ հիմանց Դեմոկրատեայ ամբարձ զվարդապետութիւն իւր, այլ զի ոչ ընդունէր զհարկ Դեմոկրատեայ, հանձարեաց զշարժումն խոտորնական, ըստ որում աւանդել ունիմք 'ի վարս նորա։ Համարէր Դեմոկրիտոս թէ հոգին սփռեալ է ընդ ամենայն մասունս մարմնոյ, և պատճառ զգայունութեան մերոյ յամենայն մասունս նորա՝ այն է, զի մէն մի հիւլէ հոգւոյ առնչակից է առ իւրաքանչիւր հիւլէ մարմնոյ։

Վասն շարժման լուսաւորաց վարկաւ ասել Դեմոկրիտոս՝ թէ ընթանան ընդ միջոց ամենևին ազատ. ուստի չկան անդէն շրջանակք հաստատունք յորս մած կռուեալ իցեն։ Մի միայն պարզ շարժումն է նոցա ընդ արևմուտս կոյս։ Հապշտապ երագութեամբ պարաբերին նոքա 'ի հոսանուտ յորձանսն՝ որոյ կենդրոն է երկիրս. և ամենայն աստղ ըստ չափու մերձենալոյն յերկիր՝ յամրագոյն շարժի. վասն զի բռնութիւն շարժման պարաբերութեանն նուազէ ըստ չափու հպելոյն 'ի կենդրոն։ Արդ ըստ

այսմ երևին շարժիլ ընդ արևելս՝ որք դանդաղագոյնս շարժին ընդ արևմուտս. և որպէս հաստատուն աստեղք երագ հոլովելով քան զամենայն աստեղս՝ 'ի քսան և չորից ժամուց պահու կատարեն զ շրջան իւրեանց, նոյնպէս և արևն ծանրաշարժ թաւալմամբն պարաբերի 'ի քսան և չորս ժամս և 'ի յաւելուածս սակաւ վայրկենից. և լուսինն որ յապաղէ յընթացսն քան զամենայն լուսաւորս, 'ի գլուխս հանէ իբրև 'ի միջոց քսան և հինգ ժամուց. որպէս զի ոչ թէ շարժել նմա իւրով շարժութեամբն դէպ յաստեղս արևելեայս, այլ զի յընթացսն յետս կոյս թողուն զնա աստեղքն որ յարևմուտս են առ նովաւ, և եկեալ դարձեալ զուգընթաց լինին նմա յետ աւուրց երեսնից։

Աւանդեն պատմագիրք թէ եռանդն փափաքանաց որով բորբոքեալ էր Դեմոկրիտոս առ ուսմունս՝ յայն հասոյց զնա, զի ոչ ևս բաւական գոլով առ այնս՝ իւրովի կուրացոյց զաչս իւր, դնելով յանդիման արևու տախտակ պղնձի՝ յորմէ հատեալ ճառագայթք բախէին ընդ աչս իւր. և 'ի տապոյ անտի նշուղեցն խաւարեցան տեսանելիքն։ Իբրև տեսանէր Դեմոկրիտոս զանձն 'ի ծերութիւն խոնարհեալ, և

մօտ 'ի դրունս մահու, խորհուրդ անկաւ 'ի միտսն՝ թէ գուցէ ծանուտխրութեամբ վարակեսցի քոյր նորա ընդ մահ իւր, զի խիթայր թէ մեռանիցի յառաջ քան զտօն Դեմետրի դից, և կոծ նորա խափան լինիցի նմա մասնելոյ 'ի պաշտօն աստուածուհւոյն. վասն որոյ եռ բերել հաց ջերմ՝ դեռ ևս եփեալ, որոյ հոտն կենդանի պահէր զնա, և տաժէր զկենսական ջերմութիւնն։ Յանցանել երից աւուրց զկնի տօնին՝ 'ի բաց մերժեաց Դեմոկրիտոս զհացսն, և անդէն եհան զոգին։ Էր յայնժամ ըստ հասարակաց կարծեաց ամաց հարիւր և ինուն։

ԵՄԲԵՏՈԿՂ

Քաջանուն երևեալ առ ութներորդ
չորրորդ ողիմպիադաւ։

ԵՄԲԵՏՈԿՂ աշակերտ էր Պիւ-
թագորայ, ըստ որում համարեցան
բազումք։ Ծնաւ յԱկրականդ քաղա-
քի Սիկիլիոյ, որ այժմ անուանի Ճիր-
ճէնդի. յականաւոր աղգէ գաւա-
ռին. և տեղեկագոյն 'ի բժշկական
հրահանգս։ Բաց 'ի ճարտարասաց
պերճութենէն, յօժարամիտ հպատա-
կէր և բանաստեղծութեան, և առ
ամենայն ինչ որ հայի 'ի դիցն պաշտօն։
Պատուասիրէին զնա ակրականդացիք
մեծապէս պատկառանօք, համարեալ
զայրն՝ իբրու դերազանցիկ ոմն քան
զամենայն մահկանացուս։ Լուկրետիոս
քերթող 'ի համար արկեալ զոքանչե-
լիս երևեալս 'ի Սիկիլիա, յաւել 'ի
վերայ զպանծալ բնակչաց տեղւոյն
թէ չիք ինչ յաւէտ գերապանծ 'ի
փառս կղզւոյ իւրեանց, քան զայն՝ զի
գտաւ հայրենի երկիր այսպիսի առն.
զի և զքերթուածս նորա՝ իբրև զպատ-
գամս մեծարէին։

Ապաքէն այս չէր ինչ անտեղի. քանզի և բազում անգք 'ի կեանս նորա՝ սքանչելի ցուցին զնա յաչս ամենեցուն. կարծեցին և ոմանք՝ անսալ նմա մոգութեան։ Պատմէ Սատիրոս թէ Գորգիաս լէոնդացի՝ մին 'ի գլխաւոր աշակերտաց այսր իմաստասիրի յիշատակէր յոլով անգամ, թէ ինքնին գըլխովին սատար մատուցեալ է նմա յայն գործ. և թուի իմն թէ և Եմբեդոկղ 'ի միումն 'ի տաղերգութեանց իւրոց յիշեցուցանէ քաջածանօթ լինել Գորգիայ 'ի գաղտնի խորհուրդս իրացդ. վասն որոյ 'ի քէն միայն՝ ասէ, ուսանել յօժարեցի զթագուն հնարս բուժելոյ զախտս ամենայն, ժրացուցանել զծերս մանկութեամբ, հողմն զարթուցանել, հանդարտել զմրրիկս, տալ անձրևել և ջեռուցանել. նա և մեռեալս իսկ կենդանացուցանել։ Եւ այն ինչ յաւուր միում շնչէին գոռալով հողմք սաստիկք, մինչև ամենայն արմտեաց առ հասարակ ապականել, մորթեալ Եմբեդոկղի էշս, զմորթս նոցա ետ տիկ հանել, և եդ 'ի գագաթունս լերանց, և բլրոց բարձանց։ Ասեն՝ թէ առ նմին լռեցին հողմք, և անդորրութիւն եղև 'ի վայրսն։

Անձնակամակ նուիրեալ էր Եմբեդոկղի 'ի վարդապետութիւն Պիւթա-

գորայ վարդապետին իւրոյ. և զի պիտ-
թագորեանք բացէ 'ի բաց խորշէին
յարիւնոտ պատարագաց, յօժարեալ
Եմբեդոկղի երբեմն 'ի նուէրս ողջակի-
զաց մատոյց պատկեր եզին յօրինեալ
մեղու և ալերբ, և եղեն 'ի զոհ դիցն։

Առ ժամանակօք Եմբեդոկղի լիա-
ցեալ մեծացեալ էր Ակրականդ քա-
ղաք, ուր հարիւր հազար բնակիչք
էին անդէն, վասն որոյ իբր 'ի նշանակ
մեծութեանն՝ մեծ քաղաք անուանէր.
զեղխութիւն և անձնդիւր հաճութիւն
բարձր 'ի գլուխս թագաւորէին 'ի քա-
ղաքի անդ. մինչև յառակս առնուլ
զնոսա Եմբեդոկղի և ասել, կեան
խնդամիտ՝ իբրու թէ վաղիւ մեռանե-
լոց իցեն, և կանգնեն ապարանս մե-
ծակառոյցս՝ իբր այն թէ յաւիտեան
ապրելոց իցեն։ Անձնապահ լինէր յա-
մենայն հասարակաց բազմակնճիռն
գործոց. բաղում անգամ մատուցաւ
նմա թագաւորութիւն Ակրականդայ,
նա միշտ բացէ 'ի բաց հրաժարէր.
քանզի սիրելի էին նմա կեանք առանձ-
նական՝ հրաժարեալ 'ի մեծութեանց
և 'ի զբաղմանց աշխարհի. թէպէտ և
նախանձայոյզ էր ազատութեանն և
իշխանութեան ժողովրդեան։

Հրաւիրեալ երբեմն 'ի կոչունս ու-
րեք, իբրև յակումբ բոլորեցան կոչնա-

կանքն, տեսեալ Եմբետոկղի զի ոչ ոք
սպաս արկանէ բերել կերակուր, և ոչ
ոք ընդ այն քրթմնջէ, տխրեցաւ ընդ
այն. և յարեաւ՝ պաշտել ինքնին հրա-
ւիրելոցն. յայնժամ ազդեաց նմա կոչ-
նատէրն՝ մնալ առ վայր մի 'ի դալուստ
նախագահի ծերակուտին. զի և նա 'ի
հրաւիրելոց անտի էր։ Եւ անդէն 'ի
մտանել այնր կոչեցելոյ նախարարին՝
տանուտէրն և ամենայն կոչնականք
տեղի եռուն նմա՝ յառաջ անցանել
'ի բարձն պատուականադոյն. և զնա
ինքն կացուցին թադաւոր և հրամա-
նատար ընթրեացն։ Այս այր անդէն
անյապաղ 'ի վեր երևեցոյց զներգոյա-
ցեալ յոխորտ բարս իւր, և զոգին
բռնակալ. պատուիրեաց բաղմելոցն
ամենեցուն՝ ըմպել այր իւրաքանչիւր
զդինի իւր անապակ. իսկ որ ոչն կա-
միցի ըմպել այդպէս՝ բաժակ մի լի
գինւով ընդ երեսս հարցեն նորա։ Ոչ-
ինչ յայնժամ խօսեցաւ Եմբետոկղէս.
և յաւուրն երկրորդի ետ գումարել
զժողովուրդն. և ամբաստան եղև հրա-
պարակաւ զկոչնատեառնէն, և զառ-
նէն որ անսահման բռնութեամբ վա-
րեցաւ յընթրիսն. յայտ արարեալ
ամենեցուն՝ թէ այդ՝ նախասկիզբն է
բռնակալութեան, և տարադէպ բրո-
նադատութիւն այդպիսի՝ ընդդէմ է

օրինաց և հասարակաց աղատութեան։ Պարտաւոր ցուցեալ յաւուրն անդ զերկոսին զնոսա, փութանակի եւ սպանանել։ Զեռնարկութեամբ նորա լռեալ դադարեաց ատեան Հազար աւադաց, և զի կուսակից էր ժողովրդեան՝ եւ օրէնս հաստատել՝ զի հրամանատարք փոփոխեսցին յերեսաւ՝ որպէս զի ակնկալելի լցէ ամենեցուն՝ ամբառնալ յաւադութիւն։

Յաւուրս սորա Ակրոն բժիշկ խընդրեաց տեղի 'ի ծերակուտէ՝ կոթող յիշատակի կանգնել անդէն յանուն հօր իւրոյ՝ որ ներհուն էր յարուեստին իւրում, և մեծահամբաւ քան զամենայն բժիշկս ծաղկեալս յիւրում դարու։ Յարուցեալ Եմբետոկղեայ 'ի բազմահոյլ ժողովի անդ՝ ջանացաւ շրջել զժողովուրդն 'ի մտաց՝ զի մի շընորհեսցեն նմա զխնդիրն. քանզի զայն դիմամարտ համարէր նա հաւասարութեանն՝ զոր առ ամենեսին միօրինակ կամէր լինել, որպէս զի մի ոք բարձրասցի առ այլոքք. վասն զի այդ իսկ է, ասէր, հիմն հասարակաց աղատութեան։

Զայնու ժամանակաւ խանձեցաւ տխտ սրածութեան 'ի Սելինոս քաղաք Սիկիլիոյ, և անապատ կացոյց 'ի բնակչաց. ընդ որ ամենեքին յոգիս ապաս-

տան տաղնապէին, և կանայք ծննդա-
կանք տարաժամ վիժէին։ Քննեալ
հասու եղև Եմբեդոկղէս թէ այդ չա-
րատանջ հիւանդութիւն՝ ազդեցու-
թիւն է ապականեալ ջուրց գետոյն որ
ընդ քաղաքն հոսէ։ Դարձոյց իւրովք
ծախիւք զընթացս երկուց վտակաց և
հոսեցոյց 'ի գետն քաղաքին. յայնժամ
'ի յորդութեամբն խաղալ ջուրց, դա-
դարեցին 'ի գետոյ անտի մահ և ապա-
կանութիւն։ Ընդ այս առողջարար
փոփոխութիւն ջուրցն, և ընդ ազա-
տութիւնն 'ի կոտորածէն՝ տօն և խըն-
ջոյս կարգեցին բնակիչք քաղաքին. անդ
'ի Սելինոս էր յայնժամ և Եմբեդոկղ-
վասն որոյ պար առեալ զնովաւ՝ պա-
տարագս մատուցանէին նմա, և դիւ-
ցական պատուով մեծարէին, որոց յօ-
ժարամիտ էր Եմբեդոկղէս։

Նախկին սկիզբն դնէր Եմբեդոկղէս
զչորս տարերս զհող, զջուր, զօդ և
զհուր։ Միաբանութիւն իմն համա-
րէր լինել ընդ տարերսդ ընդ այդոսիկ՝
որ միաւորէ զնոսա, և հակառակու-
թիւն՝ որ անջրպետէ 'ի միմեանց։ Դար-
ձեալ թէ յար 'ի փոփոխութեան են,
այլ ոչինչ վատնի 'ի նոցանէ. ընդ ամե-
նայն յաւիտեանս այս կարգ անյեղլի
էր, և նոյնպէս յաւերժասցի։ Արե-
գակն՝ հրեղէն մարմին է։ Լուսին տա-

փարակ է, և սկաւառակաձև։ Նիւթ կաղմութեան երկնից է իբրև ական. վանի։ Յաղագս հոգւոց կարծէր՝ անցանել նոցա անխտրաբար ընդ ամենայն աղգս մարմնոց. և պնդէր առ այս յիշատակելով իմն թէ յառաջն մանուկ էր, ապա 'ի ձուկն փոխեցաւ, յետ այնորիկ 'ի հաւ թռչուն. ևս և 'ի տունկ։

Բազմօրինակ պատմի անցք մահու այսր իմաստասիրի։ Բազմաց կարծիք են՝ թէ իղձք փափաքանաց էին նորա աստուած ոմն կարծեցուցանել զանձն, և զի զբաղումն ևս առ այն յօժարամիտս տեսանէր, հաստատեաց 'ի միտս իւր լրումն տալ խորհրդոցն։ Վասն որոյ յորժամ ծանրացան 'ի վերայ նորա կարիք ծերութեան՝ կամեցաւ դերահրաշ իմն օրինակաւ կնքել զկեանս իւր։ Ապաքինեալ նորա զկին զոմն ակրականդացի՝ Պանթէս անուն՝ որ լքեալ էր 'ի բժշկաց, և յոգւոց պարզել ապաստան էր, հանդերձեաց պատարագ նուիրական՝ յոր հրաւիրեաց կոչնականս ութսուն. և առ 'ի խելամտեցուցանել զնոսա թէ ինքն փոխեցաւ 'ի կենդանեացս, իբրև ելին նոքա 'ի կոչնոցն, և ցրուեցան այր իւրաքանչիւր հանդչել ուրեք՝ ոմանք ընդ ծառովք, և այլք այլուր, Եմբեստոկղ

առանց ինչ ասելոյ ընդ ումեք, ել 'ի գլուխ լերինն Եսնայ, և գահավէժ ընկէց զանձն 'ի վիհ հնոցի լերինն։ Յի շատակեալ Ովբատիոսի զկատարած առնս՝ ասէ.

Այն ինչ ցանկայ գոլ Եմբեսոկղ անմահ աստուած,
Ցրտացեալ ծերն յԵսնա վառեալ զանձն մղեաց։

Այր ծանրաբարոյ էր Եմբեսոկղէս, երկայնահեր, և պսակ սարդենի հանապազ ունէր 'ի գլուխ։ Ո՛չ գնայր միայն զճանապարհայն, այլ ուղեկցութեամբ բազմաց 'ի միասին. այսպէս պատկառելի ցուցանէր զանձն առ ամենեսին։ Ագանէր միշտ յոտսն սանդալ պղնձի. և իբրև հոսեցաւ 'ի խորափիսն հրածորան՝ բռնութիւն կրակին 'ի դուրս զդայռեաց զմի սանդալ նորա, որ իբրև գտաւ՝ յայտնի եղև խորամանկութիւն նորա։ Ահա ըստ այսմ օրինակի եղկելին այն Եմբեսոկղէս, զի ոչ քաջ զամենայն խորհեցաւ յառաջագոյն, փոխանակ աստուած համարելոյ, անձնամատն ցուցաւ այր խաբեբայ։

'Ի բնաւորութիւնս նորա սքանչելի այն էր՝ զի բարիոք քաղաքացի էր, և 'ի բաց վճարեալ 'ի շահուց անձին։

Յետ մեռանելոյ Մելթոնի հօր նորա՝ հնարեցաւ ոմն յինքն գրաւել զբռնակալութիւն Ակրականդայ. փութանակի դումարեաց Եմբետոկղ զժողովուրդն. ցածոյց զամբոխն, և արգել զյառաջադիմութիւն վատխորհրդոցն. և զի յայտ յանդիման երևեցուսցէ զսէր իւր 'ի հաւասարութիւն, մասն եհան միաչափ յընչից իւրոց որոց նուաղ էր քան զիւրն։

Երևեցաւ այս իմաստասէր առ ութսներորդ չորրորդ ողիմպիադաւ։ Անդրի կանգնեցին նմա ակրականդացիք, և ընդ երկար մեծարեցին զյիշատակ նորա։ Մեռաւ յալիս ծերութեան. այլ չէ յայտ թիւ ամաց աւուրց կենաց նորա։

ՍՈԿՐԱՏ

Ծնեալ 'ի չորրորդ ամի եօթանասներորդ եօթներորդ ողիմպիադին. մեռեալ յառաջին ամի իններորդ հինգերորդ ողիմպիադին, 'ի հասակի ամաց եօթանասնից։

ՍՈԿՐԱՏԷՍ իմաստասէր, որ ըստ զուգաձայն աւանդութեան վաղեմի դարուց՝ գերապանծ հանդիսացաւ յառաքինութիւնս, և յստակագոյն 'ի տեսութեան մտաց քան զամենայն իմաստասէրս կռամոլ ժամանակին, քաղաքացի էր Աթենայ, յԱլոպէկ գեղջէ։ Ծնաւ 'ի չորրորդ ամի հէ ողիմպիադին, որդի հօր Սոփրոսինոսի անդրիադործի, և մօր Փարանետիայ մանկաբարձի։ Ուսաւ զիմաստասիրութիւն նախ առ ոտս Անաքսագորայ. և ապա յԱրքեղայոսէ զբնաբանութիւն։ Սակայն միտ եդեալ խորագոյնս՝ թէ այն ամենայն սնոտի զննութիւնք իրաց բնութեան՝ ոչինչ օգուտ մատակարարեն, և ոչ յառաքինութիւն անդր առաջնորդեն իմաստասիրի, հպատակեաց յուսումն կարևո-

բացն 'ի հրահանգս բարուց. և՝ թէ ասել օրէն էցէ՝ եղև նախասկիզբն բարոյական իմաստասիրութեան 'ի մէջ յունաց, որպէս աւանդէ Կիկերոն՝ յերրորդ գիրս Տուսկուլեան խնդրոց։ Այլ յայտնագոյն և ճոխագոյն բանիւք աւանդէ զայս յայլ գիրս իւր, ունելով բանին այսպէս. ,, Թուի ինձ, և ամենեքին 'ի սոյն ձայնակից, են թէ առաջին ինքն Սոկրատ է՝ որ 'ի բաց պարուրեալ զիմաստասիրութիւն 'ի հետազօտութենէ գաղտնեաց բնութեան, առ որ միայն հետամուտ էին ամենայն իմաստասէրք յառաջ քան զնա, շրջեաց զայն առ որս հայէին 'ի պարտս հասարակաց կենացս. որպէս զի բովանդակ պարապել նմա 'ի քննութիւն առաքինութեանց և ախտից. իսկ երկնաւորքդ, ասէր, կամ հեռի են 'ի մերմէ գիտութենէս. կամ՝ թէ և յայտնի իցեն, ոչինչ սատար լինին նոքին 'ի բարիոք ղեկավարութիւն մեր։

Արդ՝ յամենայն զօրութենէ իւրմէ զհետ պնդեցաւ զայնր մասին իմաստասիրութեան՝ որ ակնարկէ 'ի բարեկարգութիւն վարուց կենաց. և ձգի առ ամենայն հասակ և վիճակ կենաց։ Այս նորօրինակ իմաստասիրութիւն այնու առաւել ընդունելի դա-

տեալ եղև՝ զի նա ինքն որ հեղինակ էր ուսմանն, օրինակաւ դործոց իւրոց քարոզէր զվարդապետութիւնն, միտ եդեալ՝ կատարել որչափ մարթ էր զամենայն զպարտս առաքինի քաղաքացւոց 'ի ժամանակի խաղաղութեան և պատերազմի։

Յամենայն 'ի քաջանուն իմաստասիրաց Սոկրատէս միայն առաքինացաւ և 'ի պատերազմի. որպէս յուշ առնէ Լուկիանոս 'ի տրամախօսութեան Պորտաբուծին։ Հանդիսացաւ յերկուս կռիւս. և յերկոսին իսկ թէպէտ պարտեցաւ կողմն իւր, այլ նա միջամուխ խաղաց 'ի վտանգս ծանուցեալս, և ծանուցաւ այր քաջազօր։ 'Ի միումն թափեաց զՔսենոփոն 'ի մահուն վտանգէ, որ 'ի փախչելն անկեալ յերիվարէն՝ փոքր մի ևս՝ սպանեալ էր 'ի թշնամեաց, թէ ոչ 'ի բաց կորզէր զնա Սոկրատ 'ի խառանէ անտի, շալակեալ զանձամբ, զոր՝ մինչ յերկարէր մարտն՝ տարաւ հեռի ընդ բազում ասպարէզս, և դտեալ զերիվարն փախուցեալ՝ հեծոյց 'ի վերայ նորա. երաշխաւորէ պատմութեանս Ստրաբոն։ Յերկրորդումն 'ի խորտակիլ աթենացւոց և 'ի փախչել, յետինն եղև նա 'ի յետադարձս, և ցայն վայր զդէմ կալաւ՝ զի որք հետամուտքն էին փա-

խրատէից՝ տեսեալ զնա զի կամակար պատրաստէր լինել նոցա դիմադրաւ. ոչ ևս իշխեցին բախել ընդ նմա. և վկայէ այսմ Ա Թ Ե Ն Է Ո Ս։ Յետ երկուց արշաւանացս՝ ոչ յաւել Սոկրատ ելանել արտաքս ըստ Ա Թ Է Ն Ս. եկաց 'ի քաղաքի անդ՝ վարեալ տարաղ կենաց ամենևին աննման այլոց իմաստասի-ոաց, որք վատնէին 'ի ճանապարհորդութիւնս զառաւելագոյն ժամանակ կենաց իւրեանց՝ վասն նորանոր իրաց խելամուտ լինելոյ, մտանելով 'ի կենաց կցորդութիւն ընդ իմաստունս իւրաքանչիւր աշխարհաց։ Սակայն զի օրինակ իմաստութեանն առ որ սահմանեալ էր Սոկրատայ զուսումնասիրութիւն իւր՝ առաջնորդէր մարդոյ ջանահնար լինել յաւէտ 'ի ծանօթութիւն անձին, քան ծանրաբեռնել զմիտս գիտելեաք որք ոչինչ օգտեն 'ի բարեկարգութիւն կենաց, վասն այնր ոչինչ պարտ վարկաւ անձին մաշել զաւուրս իւր 'ի տարաղէմ ուղևորութիւնս. յորոց ոչ մի ինչ արդեաք առաւել ուսանէր՝ քան զորս ուսաւն Ա Ն Թ Է Ն Ս 'ի մէջ քաղաքակցաց իւրոց, յորոց 'ի հրահանգս արդարացի դատէր աշխատութիւն յանձին ունել, քան 'ի վերայ օտարաց։ Եւ քանզի զիմաստասիրութիւն բարոյական օրի-

նակոք քան թէ բանիւք է ուսուցանել, օրէնս հաստատեաց անձին իւրում՝ կատարել գործով զոր ինչ պահանջեսցեն 'ի նմանէ ողջամիտ խորհուրդ, և առաքինութիւն անդրդուելի։ Մինչ նա յայս մտաց խորհրդի էր՝ ամբարձաւ 'ի պատիւ ատենակալաց քաղաքին, և երդումն տուեալ՝ անաչառութեամբ յայտնաբանել զկարծիս իւր յամենայնի, հրաժարեաց քաջութեամբ 'ի ձեռնադրելոյ դատակնքոյն՝ որով ժողովուրդն մահու պարտաւոր առնէր զինն զօրավարս ընդդէմ օրինաց. և թէպէտ ամբոխն զչարեցաւ ընդ այն, և բաղումք յաւադաց սպառնալեօք ջանային պակուցանել զնա, ոչինչ թուլացաւ 'ի հաստատութենէն, կէտ եղեալ անձին իւրում՝ թէ չէ արժան զգօն մարդոյ, սուտ երդնուլ 'ի հաճել զժողովուրդն։

Զունիմք մեք հաւաստել ուստեք՝ արդեօք ընտրեցաւ նա յայլ աւադութիւն բաց յայսմանէ. սակայն թէպէտ անբաժ էր նա իշխանութեանց, այլ իմաստութեամբ իւրով և առաքինութեամբ՝ 'ի պատկառանս իւր ձգեաց զԱթէնս ողջոյն, զի և քան զաւադանին առաւելեալ էր 'ի մեծարանս պատուոյ։ Որ ինչ վասն անձին իւրոյ էր հոգ ինամոց՝ փութաջան էր

ըստ բաւականութեանն. և մեղադիր
լինէր որոց ոչ խնամ տանէին ան-
ձանց, կամ որք պանծային ընդ գծուծ
անհոգութիւնն. սիրող էր մաքրու-
թեան, քաջավայելուչ և պատշաճա-
կան 'ի հանդերձս, զմիջինն ունելով ընդ
փցուն և շինական, և ընդ պերճ կամ
մեղկասէր։ Թէպէտ և չէր ինչ յղփա-
ցեալ ճոխութեամբ, այլ յամենայնի
հրաժարեալ էր 'ի խնդրելոյ զօդուտ
անձին. զի ոչինչ առնոյր յորոց աշա-
կերտէին նմա. և նովին արհամարհ
ցուցանէր զդնացս այլոց իմաստասի-
բաց, որք 'ի շահավաճառ արկանէին
զվարդապետութիւն իւրեանց, և հար-
կէին զաշակերտս իւրեանց բաղում
կամ նուազ վարձու։ Նա մանաւանդ
սովոր իսկ էր ասել՝ ըստ յառաջ բե-
րելոյ Քսենոփոնի. Ո՛չ իմանամ թէ
զի՞արդ այր որ յանձին կալեալ ի՞նչ
վարդապետել զառաքինութիւն՝ խոր-
հուրդ կալցէ յանձին՝ շահ կրթել ան-
տի. քանզի ստանալ անձին զայր առա-
քինի, և զաշակերտն առնել իւր բա-
րեկամ՝ օգտակարագոյն է և անկա-
պուտ մեծութիւն՝ քան զշահ անձին։
'Ի սակս այսր անօգտախնդիր բարուց
Սոկրատայ՝ Անտիփոն ոմն սոփեստէս՝
որ պարծէր ունել զգիտութիւն բա-
րուց, այլ՝ 'ի հրահանգացն վերջացեալ

էր, ասաց ցնա յաւուր միում. Իրա-
ւացի է քեզ ոչ առնուլ վարձս յա-
շակերտաց քոց, և դովին այր առաքինի
ցուցանես զքեզ։ Քանզի՝ թէ բանք լի-
նէին 'ի վաճառ հանել զտուն քո,
կամ զհանդերձս, կամ զկարասի, ոչ
միայն առանց գնոյ կամ նուաղ գնով
ոչ տայիր, այլ դուն 'ի վերայ դնէիր
արդար գնով վաճառել զնոսին, և
դանդի միոյ պակաս ոչ տայիր։ Արդ զի
դու ինքնին քաջ խելամուտ ես թէ
ոչինչ գիտես, և յաղագս այնորիկ ոչ
կարես վարդապետել այլոց, խիղճ հա-
մարիս քեզ պահանջել յայլոց փոխա-
նակ որոց ուսուցանել ոչ գիտես։ Այս
զգօնութեան քո ներբող է, քան թէ
անշահասիրութեան։ Դիւրաւ ամա-
չեցոյց զնա Սոկրատէս՝ յուշ արա-
րեալ նմա թէ կան իրք բաղումք զորս
մարթ է 'ի բարիոք պէտս 'ի վար ար-
կանել, և 'ի թիւր. և ևս ընծայել
բարեկամին զպտուղս քաղեալս 'ի
պարտիզէ իւրմէ, և վաճառել, այլ
և այլ են 'ի միմեանց։ Արդ դու մի՛
ասէ՝ կարծեր յանձին քում, թէ ես
վարդապետեմ աշակերտաց իմոց ըստ
օրինակի այլոց իմաստասիրաց՝ որոց
դոյ տեղի հաստատուն 'ի ժողովել անդ
զաշակերտս իւրեանց, և վարդապե-
տել ըստ ժամադրեալ պահուն. իսկ

Սոկրատ իմաստասիրէ ընդ որս առընթեր գտցին նմա, երբ և իցէ, և ուր և իցէ։

Ընդ գլուխս ամբաստանութեանց զՍոկրատայ՝ զորս դատախազէր Մելիտոս, յաւելաւ և այս՝ թէ փոխանակ երկրպագելոյ դից պաշտելոց ՅԱԹԷՆՍ, այլ իմն անծանօթ աստուածութիւն 'ի մէջ մատուցանէ. սակայն բովանդակն զըպարտութիւն էր, և պատ 'ի պատ զրոյցք. քանզի կանոնն զոր 'ի դմին յայդմ հաստատուն օրինօք կարգեալ էր Սոկրատ անձին իւրում, և զայն տայր խրատ որոց խորհուրդ հարցանէին ընդ նա, այս էր՝ հպատակ կալ պատգամաց դեղփեանն Ապողոնի, որ իբրև հարցաւ թէ զի՞արդ օրէն իցէ պաշտել զդիս, ետ պատասխանի՝ թէ ամենայն այր կատարեսցէ զդոյն ըստ կրօնից երկրի իւրոյ։ Այս իսկ էր զոր առնէր Սոկրատէս նուիրելով և պատարագելով դից 'ի սակաւուն զոր ունէր, և թէպէտ դոյզն ինչ էր զոր ընծայէրն, սակայն այնպէս հաւանեալ էր յանձին իւրում թէ զուգաչափ հաւասարութեամբ հաճոյ գտցին պատարագք իւր ընդ մեծատանցն, զի մատուցանէր ըստ դոյին իւրում. և չառնոյր յանձն ասել թէ հաճոյական գտանիցին յաչս աստուածոց բաղ-

մածախ դահամունք, քան զսակաւս. նա՛ ընդ հակառակն ասէր՝ թէ ոչինչ առաւել ընտրելի է նոցա՝ քան զոր յառաքինեաց մեծարանս։

Զէր ինչ յաւէտ անպաճոյճ, և միանգամայն ասել՝ կրօնից պաշտամանցն զուդաճայն, քան զաղօթսն զոր նա մատուցանէր դից, ոչ մի ինչ անձին առանձին աղերսելով, այլ զայն ևեթ խնդրելով զոր նոքայն բարիոք և օգտակար համարեսցեն նմա. քանզի՝ ասէ, ճոխութիւն և աւադութիւն հայցել 'ի նոցանէ՝ այնպէս է, որպէս թէ խնդրիցես շնորհս 'ի մարտ մխելոյ, կամ նարտ խաղալոյ, առանց գիտելոյ զելս պատերազմին, կամ խաղուն։

Ո՛չ միայն ոչ հրաժարեցուցանէր 'ի պաշտամանց զորս յաճախէին առ 'ի նոյն, այլ և խնամովք ջան 'ի վերայ դնէր առաջնորդել 'ի նոյն որոց հեստեալ էին 'ի ճանապարհէ կրօնասիրութեան։ Պատմէ Քսենոփոն առ այս զհնարս նորա որով ազդեաց եռանդն պաշտօնասիրութեան առ դիս՝ յերիտասարդ ոմն Արիստոդեմոս անուն՝ որ բացէ 'ի բաց հրաժարեալ էր 'ի պաշտմանէ կրօնից, և ծաղու նշաւակէր զորս փութային 'ի նուէրս պատարագաց։ Ընթերցեալ միանգամ առ Քսենոփոնի զոր ինչ յայդ դէպս ա-

սաց Սոկրատէս յաղագս նախախնամութեան դից 'ի վերայ մարդկան, զքանչասցի զոք՝ տեսանելով զիմաստասէրդ որ 'ի հեթանոսութեան տատանեալ՝ սակայն դերազանցեալ յոյժ յոյժ յողջմտութեան խորհրդոց՝ 'ի խնդիրն որ յաղագս աստուածութեան։

Աղքատ էր յընչից, այլ ամենևին շատացեալ. զի թէպէտ առ ձեռն պատրաստ էր նմա լիանալ ճոխութեամբք՝ ընդունելով զպարգևսն զոր բարեկամք նորա և աշակերտք մատուցանէին նմա, զայն ամենայն 'ի բաց յղէր առ մատուցանելիսն, թէպէտ և զայրանայր ընդ այն կին նորա՝ որ անճաշակ էր ամենևին վայելից իմաստասիրութեան։

Օրինակ կենաց նորա 'ի կերակուրս և 'ի հանդերձս անպաճոյճ էր յոյժ. մինչ զի Անտիփոն սոփեստէս զոր 'ի վերոյ յիշեցաք՝ նախատէր զնա՝ թէ չիք զոք ստրուկ այնչափ աղքատ և հէգ՝ որ անձին շատ գրեսցէ զայդ տարազ, և առ 'ի դոյն զանձն պատկանեսցէ. քանզի կերակուր քո, ասէ, անարգագոյն է քան զամենայն երկրի։ Դարձեալ՝ ո՛չ միայն հնոտի է պարեգօտ քո, այլ և մի միայն, զամառն և զձմեռն. և բոկոտն ընթանաս։ Այլ Սոկրատ յայտ յանդիման երևեցոյց զվրիպակ նորա՝ որ համարէր թէ երջանկու-

թիւն մարդոյ 'ի լիութեան և 'ի հեշ-
տութեան հաստատեալ կայցէ. և թէ
և, ասէ, աղքատ և չքաւոր կարծիմ,
այլ երջանիկ եմ քան զքեզ։ Նա՛ ապա-
քէն՝ զոր օրինակ չկարօտելն իմիք՝ աս-
տուածոց միայն սեփական է, նոյնպէս
որոց նիւզ իցէ կարօտութիւն՝ մեր-
ձաւորագոյն դատեալ լինին աստուա-
ծեղէն բնութեան։

Այս անարատ առաքինութիւն Սո-
կրատայ սքանչացոյց զամենայն մարդ,
մանաւանդ զԱթէնք քաղաք, ուր ան-
օրինակ էր գործդ. քանզի և որոց
անբաւական իցէ զօրութիւն՝ զառա-
քինութեանց զհետ ընթանալ, հրա-
շանան ընդ որս ընթանան զայն ճա-
նապարհանստերիւր։ Առաքինութիւն
Սոկրատայ զհամբաւի հարաւ 'ի սուղ
ժամանակի առ ամենայն բնակիչս քա-
ղաքին, ձգեաց առ նա յոլով աշա-
կերտս յամենայն հասակէ, որք գեր 'ի
վեր դնէին զվարդապետութիւն նորա
և զկենաց կցորդութիւնն՝ քան զամե-
նայն հաճոյակատար սփոփանս։ Այլ
որ յաւէտ ձգէր զնոսա առ Սոկրատ՝
այն էր, զի որչափ ժուժկալ և խստա-
կեաց էր յանձին իւրում, նոյնչափ
քաղցր էր և մարդասէր առ այլս։ Ա-
ռաջին զոր հնարէր տպաւորել 'ի սիրտս
երիտասարդաց աշակերտելոց նմա՝ էր

պաշտօն և երկիւղ առ դիս. յետ այնո-
ւրիկ՝ ըստ մարթելոյ առաջնորդէր նո-
ցա 'ի ժուժկալութիւն, և 'ի հեշտու-
թեանց հրաժարել, ցուցեալ նոցա՝
թէ ո՛րպէս այնոքիկ կապտեն զմարդ
յանգին դանձուցն զոր ստացեալ ու-
նի. իմա՛՝ յաղատութենէ։ Համոզա-
կեր էր յոյժ եղանակ վարդապետելոյ
նորա զբարոյական իմաստասիրու-
թիւն, քանզի զբովանդակն 'ի խօսս և
'ի բազմականս կատարէր՝ առանց ինչ
պատուասէր հանդերձանաց, և ա-
ռանց բանս 'ի մէջ արկանելոյ 'ի քննել
հետազօտութեամբ, բուռն հարկանէր
'ի բանսն որ անկանէր 'ի կարդ խօ-
սիցն, կամ զոր դէպքն ինքնին առար-
կանէին։ Զառաջինն անդ հարցանէր
ինչ՝ որպէս այր՝ որ ուսանել կամիցի.
և ապա յարդեալ զբանսն որ զոյդ լի-
նէին խորհրդոց նորա 'ի խնդիրն այն,
առաջնորդէր աշակերտելոցն 'ի հակա-
ռակս առաջնոց բանից հաստատելոց։
Զմասն ինչ աւուրն անցուցանէր
յայդ հրահանգս բարոյականին, առ
որ ամենեքին յօժարամիտ ընթանային,
և ո՛չ ոք մեկնէր անտի՝ չև իմաստա-
ցեալ լիագոյն, որպէս հաստատէ Քսե-
նոփոն։

Թէպէտ և ոչինչ աւանդեաց Սո-
կրատ՝ դրոշմեալ 'ի գիր, սակայն դիւ-

ին է դատաստան առնել վասն հան-
գամանաց բարոյական իմաստասի-
ութեան նորա, և օրինակին որով
վարդապետէր՝ յորոց ինչ գտանի վասն
այնր 'ի գիրս Պղատոնի և Քսենոփո-
նի։ Այլ 'ի վեր քան զամենայն՝ նմա-
նութիւնն զոր նշմարեմք 'ի քննու-
թիւնս նորա՝ որպէս պատմեն համա-
ձայնութեամբ երկոքին այդ աշակերտք
Սոկրատայ, քաջայայտ նշանակ է ո-
ճոյ վարդապետութեան նորա։ Այլ
ոչ զնոյն է ասել հաստատութեամբ և
վասն իսկութեան բանից ուսմանն.
մանաւանդ հայեցեալ 'ի բանս Պղա-
տոնի՝ որպէս ինչ ասէ ունել նմա վար-
դապետութիւն, որպէս ասացն իսկ
Սոկրատ՝ յետ ընթեռնլոյ զնորայն
Լիւսիսեան տրամախօսութիւնն. այլ
յաւէտ իմն արդարացի դատեալ է
արժանահաւատ համարել զՔսենո-
փոն. քանզի զոր ինչ յառաջ բերէ հա-
տուածս բանից խօսեցեալս ընդ Սոկ-
րատ և ընդ այլ ոք դերասան, յայտ
յանդիման կացուցանէ՝ թէ զգործ
պատմաբանի կատարէ անդէն, զոր
ինչ լուեալն էր՝ զայն ևեթ առաջի
առնելով։

Դժուարաւ արդեօք հաւատս ըն-
ծայեսցուք՝ թէ որպէս այր որ զամե-
նայն մարդ յօժարէր 'ի պաշտօն դէց,

և զի այսպէս ասացից՝ քարոզէր երի-
տասարդաց զդուշանալ յամենայն
ախտից, ինքն մահու պարտաւոր դտա-
նիցի այնու՝ թէ հրաժեշտ տայր 'ի
պաշտամանց դից որ ՅԱԹԷՆս, և ա-
պականէր զկեանս երիտասարդաց։
Սակայն այդ անօրէն անդթութեան
գործ կատարեցաւ յանգլուխ ժամա-
նակին, առ իշխանութեամբն երեսուն
բռնակալաց։ Եւ ահա այս ինչ է
սկզբնապատճառ իրացդ։

Կրիտիաս հզօրագոյնն 'ի բռնակա-
լաց այտի՝ յառաջ ժամանակաւ աշա-
կերտեալ էր Սոկրատայ, որպէս և
Աղկիբիատէս. սակայն տաղտկացեալ
երկոցուն սոցա 'ի սոկրատեան ի-
մաստասիրութենէ, որոյ վարդապե-
տութիւնն ոչ զուգաձայնէր ամբար-
տաւանութեան և անժուժկալու-
թեան նոցա, զանց արարին զնովաւ։
Կրիտիաս յաշակերտութենէ անտի
Սոկրատայ՝ փոխեցաւ նմա յոխերիմ
թշնամի, վասն անդրդուելի հաս-
տատութեանն՝ որով կշտամբէր սա
զամբթալի զակատիլ նորա զհետ ախ-
տից. և խոչընդոտն լինէր յաջողուա-
ծոյ թիւր կամաց նորա. մինչև զի
'ի դասակարգել Կրիտիայ 'ի թիւ
բռնակալացն երեսնից, յոչինչ առա-
ւել զաչս հաստատեաց, քան յարևէ

արկանել զՍոկրատ. մանաւանդ զի և
սորա ոչ ժուժելով անօրէն գործոց
նոցա, ազատաբերան ընդդիմաբանէր։
Քանզի տեսեալ նորա զի զօր ամե-
նայն 'ի մահ մատնեն զբազում 'ի քա-
ղաքացեաց և յաւագանւոյն, ասաց
յայտնաբանութեամբ յակմբի ուրեք
օրինակաւ, եթէ նա որում հաւատա-
ցան անդեայք 'ի պահպանութիւն՝ օր
զաւուրբ նիհարացուսցէ և սակաւա-
ցուսցէ զնոսա, հարկաւորաբար խոս-
տովան լիցի զանձնէ գոլ վատ ան-
դէորդ։ Կրիտիաս և Քարիկլէս երկուք
'ի գլխաւորաց երեսնիցն հասու եղեալ
թէ 'ի նոսա հայի այլաբանութիւնն,
զառաջինն անդ օրինադիր եղեն՝ որով
արգելին ուսուցանել յԱթէնս զա-
ղուեստ խօսելոյ։ Եւ թէպէտ Սոկրատ
ոչ առնէր զայդ, սակայն քաջ իսկ հա-
ւաստեցաւ՝ ընդդէմ նորա լինել հրա-
մանիդ, որով ջանային նոքա կրճիմն
արկանել ազատօրէն վարդապետելոյ
նորա 'ի բարոյական խնդիրս՝ ընդ որս
խմբէին զնովաւ. որպէս նորայն սովո-
րութիւն էր։ Ինքնին գլխովին Սոկրատ
մատեաւ առ երկոսին պատուիրողս
օրինացդ, 'ի նոցանէ խնդրեալ զիմաստ
հրամանին. սակայն զի 'ի նեղ արկա-
նէր զնոսա նրբութեամբ հարցուածոց
իւրոց, իշխանաբար պատուիրեցին

նմա՝ մի՛ և ես շուրջ զիւրև կուտել ըզ-
մանկտին. եհարց ցնոսա, թէ ցո՞ր վայր
տարածեն զչափ հասակի երիտասար-
դութեան. ասեն, զամենայն հասակ
որ 'ի վայր քան զերեսնամեան տիս։
Ասէ Սոկրատ. իսկ ո՞չ տաց պատաս-
խանի որոց հարցանիցեն ցիս՝ թէ ո՞ւր
է Քարիկլէս, կամ Կրիտիաս։ Այո՛,
ասէ Քարիկլէս. այլ յաւել 'ի վերայ
Կրիտիաս, թէ արդեալեալ է քեզ ամե-
նևին ժողովս կուտել զքև զձեռադի-
տաց արուեստից. որոց ծանրացեալ
են լսելիք 'ի բանից քոց։ Սոկրատ ա-
սէ. Ապա թէ որք զհետ իմ եկեսցեն՝
հարցցեն ցիս վասն զթութեան և ար-
դարութեան։ Այո՛, ասէ Քարիկլէս.
նոքին իսկ անդէորդք անդուլ հսկեն 'ի
վերայ քո չառնել պակաս զթիւ կո-
վուց։ Շատ եղև այս Սոկրատայ խե-
լամտել թէ խէթ է նմա յերեսաց նոր
բռնակալացն. և զի օրինակ առակին
իւրոյ 'ի խոր խոցեալ է զնոսա։

Վասն առաքինի կենաց առն այս-
պիսւոյ մահ երդուան ոմանք 'ի խռո-
վայոյզ աթենացւոց. և վասն այնր ա-
ռակ նշաւակի լինէր մոլեգնելոցն այ-
նոցիկ. որք և յորդորեցին զԱրիստո-
փանէս քերթող՝ այպն կատականաց
կացուցանել զՍոկրատ 'ի թատրոնա-
կան տեսարանի. և նա միտեալ 'ի

բանս նոցա՝ երևեցոյց յԱմպք անուա-
նեալ կատակերգութեանն դերասան
զոմն Սոկրատ անուն՝ բաղմեալ 'ի սա-
կառի 'ի մէջ ամպոց. և կուտեաց զնո-
վաւ բաղում բանս նախատականս, 'ի
ծաղր շարժել զբաղմութիւն ժողովե-
լոցն 'ի զնին։ Այլ սքանչելին Սոկրատ
որ գտաւ 'ի ժողովն անդ, եկաց մնաց
անխռով 'ի դէմն և 'ի խորհուրդս ընդ
այն ամենայն կծանող արհամարհու-
թիւն։ Եւ քանզի 'ի հանդիսականս
անդ էին բազում օտարականք՝ որոց
անձկալի էր տեսանել զայրն զայն զա-
ռակեալն նախատանաց, կանգուն
արձանացաւ Սոկրատ 'ի կայի իւրում,
ցուցանել ամենեցուն զանձն, և զնա-
խատինսն որ յիւր վերայ կուտէին։
Այս առաջին յարձակումն էր ատե-
լեաց Սոկրատայ ընդդէմ նորա։ Ան-
ցին 'ի վերայ ամք քսան, և ահա ամ-
բառնայր Մելիտոս ոխերիմ թշնամի
նորա, գուն 'ի վերայ եղեալ՝ օրինաք
դատաստան մահու ածել 'ի վերայ նո-
րա։ Կրկին վնասս ծանուցանս գրէին
զնմանէ. առաջին այն՝ թէ ոչ պաշտօն
հարկանէ դիցն պաշտելոց 'ի ժողովը-
դենէ, այլ փոխանակ նոցա նորանոր
աստուածոց պաշտամունս ուսուցա-
նէ։ Երկրորդ՝ ապականէ զվարս երի-
տասարդաց աթենացւոց։ Երկրորդ

զլուխ ամբաստանութեանս սուտ էր ամենևին. առաջինն քննութեան պէտս ունի. 'ի դէպ է ասել, թէ 'ի խուժել անբաւութեամբ սնոտի պաշտամանցն ՅԱԹԷՆՍ, զտարադէպ առաւելեալն յապաւել ջանացաւ Սոկրատ 'ի վարդապետութիւնս իւր, 'ի բաց թողեալ զկարկատուն առասպելսն, զպատշաճ և զողջամիտ կարծիսն ունել վասն աբարչին աշխարհի։

Իբրև 'ի վեր եղ դաշնակից դաւաճանութիւնն ընդդէմ Սոկրատայ, 'ի հանդէս արձանացան և բարեկամքնորա՝ պատսպարան լինել նմա։ Լիւսիաս որ զայնու ժամանակաւ նախապատիւ էր յատենաբանս, քաջարուեստ պատասխանատուութիւն յօրինեալ 'ի դիմաց Սոկրատայ՝ մատոյց նմա։ Առ ընկալաւ Սոկրատ. ընթերցաւ մտադիւրագոյնս, այլ զի արհեստ ճարտարասաց լեզուին ճոխապանծ էր յայնմ, ոչ 'ի դէպ դատեցաւ զայն առն իմաստասիրի. շնորհ ունելով դարձոյց առ յօրինողն։ Եւ իբրև ըզվասն էրն հարցաւ 'ի Լիւսիայ, պատասխանի ետ Սոկրատ օրինակաւ. Որպէս թէ քաջ արուեստաւոր մատուսցէ ինձ հանդերձս կամ կօշիկս շքեղս և ոսկեթելս, որոց ոչինչ պակասեսցէ, այլ զի ոչ պատկանաւոր են ինձ։

Եկաց մնաց աներկիւղ հաստատու-
թեամբ, ոչ առ 'ի ձեռին զարհեստ պեր-
ճախօսութեան, ոչ զհետ եղև մուրո-
ղաբար քուէ որսալ 'ի դատաւորաց,
ոչ աղերս արկ, ոչ մատոյց առաջի դա-
տաւորաց զկինն և զորդիս. ակն յան-
դիման եցոյց 'ի գործս իւր զարիու-
թիւնն և զանմեղութիւն: Ատենախօ-
սութիւն նորա 'ի դատաստանի՝ վեհ-
անձն էր, աներկիւղ, և ոչ զայրաց-
կոտ, արժանի իմաստասիրական ազա-
տութեան. զարդ՝ զճշմարտութիւնն
միայն ունելով և զանմեղութիւն: 'Ի
գիր դրոշմեաց զայն Պղատոն՝ որ անդ
ունկնդիր էր առանց ինչ յիւրմէ յա-
ւելուածոյ. անուն մակագրեաց նմին՝
պատասխանատուութիւն Սոկրատայ.
որ 'ի յաջորդել դարուց՝ համարեցաւ
մին 'ի չնաշխարհիկ գրոց հնութեանն:

'Ի սահմանեալ աւուր դատաստա-
նին՝ ընթերցաւ ըստ օրինի փուրշիշ
ամբաստանութեանն. կողմանքն եր-
կոքին եկին յանդիման եղեն դատաւո-
րաց, և Մելիտոս սկիզբն արար խօսե-
լոյ. և քանզի բանք նորա թափուր
էին յապացուցից՝ միտեցաւ 'ի բազ-
մադէմ հնարս հայթայթանաց ճոռոմ
բանիւք, արձանացուցանել իբրև ան-
շարժութեամբ զկրկին գլուխս ամբաս-
տանութեանցն: Յետ պաճոյճ բանից

Մելիտոսի յաւել Սոկրատ զիւրն ան-
պաճոյճ և զհաստատուն. ասէ՝ Ամ-
բաստանեալ եմ այնու թէ ապակա-
նեալ լցեմ զընթացս կենաց երիտա-
սարդաց, և ազդեցեալ 'ի նոսա վար-
դապետութիւն կեղակարծ յաղագս
դիցն պաշտամանց, և օրինաց պետու-
թեանս։ Դիտէք դո՛ք աթենացիք, զի
ես չառի յանձին պատիւ վարդապե-
տութեան. և յաչաղկոտք որչափ և
վառեալ լցեն ընդդէմ ինձ՝ չունին
յանդիման կացուցանել ինձ՝ թէ ու-
րեք վարդապետեցի ես։ Անխաբ վկայ
այսմ՝ աղքատութիւն իմ։ Հասեալ
կամ յամենայնի անձնամատոյց լինել
մեծատան և աղքատի. և ժամ պարա-
պոյ տալ՝ նոցա հարցանել, և ինձ պա-
տասխանել. և սպաս հարկանեմ որոց
կամիցին առաքինի լինել. և թէ է ոք
յաշակերտաց իմոց այր զգօն կամ խե-
ղաթիւր, ո՛չ առաքինութիւն նոցա
ինձ գրեսցի, որում ես չեմ պատճառ,
և ո՛չ վատութիւն այլոց՝ որոց ոչինչ
սաղրեցի։ Այս գործ է իմ բովան-
դակ, խելամուտ առնել զծերս և զե-
րիտասարդս՝ մի կապիլ ընդ սէր մարմ-
նական, և մի ընդ այլ ինչ յաստեացս,
այլ ընդ հոգիս իւրեանց։ Քանզի ես
ոչ կլացայ ասել ձեզ՝ թէ առաքինու-
թիւն չէ ծնունդ ճոխութեան, այլ

ընդ հակառակն՝ մեծութիւնք յառաջինութենէ անտի յառաջ դան, և 'ի դմանէ ծնանին այլ ամենայն բարիք յորդեալք 'ի մարդիկ առ հասարակ, կամ առանձինն։

Թէ բանք իմ այսպիսի՝ ապականութիւն է ոգւոց երիտասարդաց, խոստովան լինիմ, ասթենացիք, թէ մեղապարտ եմ ես և պատուհասի դատապարտ. թէ բանք իմ չեն ճշմարիտ, չիցէ և դժուարին՝ իբրև ստախօս յաղթահարել զիս։ Ահաւասիկ բազմութիւն աշակերտաց իմոց, թո՛ղ յառաջ մատիցեն և վկայութիւն դիցեն. սակայն թերևս մեծարանք և ակնածութիւն նահանջէ զնոսա աղաղակ բառնալ ընդդէմ վարժապետիս՝ որ հրահանգեացն զդոսա. այլ ազատ են 'ի պարտուց այտի պատկառանաց առ իս եղբարք նոցա և ծնողք, որք իբրու բարիոք հարք և առաքինի քաղաքացիք կարող իսկ են յատեան ելանել և վրէժ պահանջել ընդդէմ ապականչի որդւոց իւրեանց, և թոռանց, և եղբարց. համայն դոքին իսկ են որք ձեռն օգնութեան շնորհեն ինձ, և ակն ունին բարիոք ելից դատաստանի իմոյ։

Դատաստան արարէք՝ որպէս ձեզ հաճոյ լիցէ. ես ոչ ստրջանամ, և ո՛չ փոխեմ զճանապարհս իմ. չէ՛ յիմ ձեռն

թողուլ կամ զանց առնել զսպասաւորութեամբս՝ յոր կարդեաց զիս Աստուած. նա ինքն արկ հոգ խնամոց 'ի սիրտ իմ՝ հրահանգել զիմ քաղաքակիցս։ Յետ հաւատարմութեամբ 'ի գլուխս հանելոյ իմ զամենայն զգործակալութիւնսն յորս կարգեցայ 'ի զօրավարաց մերոց 'ի Պոտիդէա, ՅԱմփիպոլիս, 'ի Դելիոս, այժմ եթէ պակուսցէ զիս երկիւղ մահուն լքանել զայն յոր կարգեաց զիս վերնախնամ տեսչութիւնն, պատուիրեալ ինձ դեգերիլ յուսումն իմաստասիրութեան 'ի մարզել և զայլս, ապաքէն վատութիւն էր գործս, և արժանի յատեանս կոչելոյ իբրև ամպարիշտ, և տարագիր յաստուածեղէն հաւատոց. թէ հաստատեալ է ձեր 'ի միտս՝ արձակել զիս, պատուիրեալ՝ լռիկ կալ յայսմ հետէ, անշուշտ այս իմ ձեզ պատասխանի։ Ալթենացիք՝ մեծարեմ զձեզ և սիրեմ, այլ լաւագոյն է՝ աստուծոյ հնազանդել՝ քան ձեզ. և ցորչափ շունչ իմ յիս է՝ մի՛ լռեցից իմաստասիրել և յորդորել զձեզ, խրատելով զձեզ ըստ սովորութեանս իմոյ, և ասել առ մի մի իւրաքանչիւր 'ի ձէնջ. Ո՛վ սիրելիդ իմ և քաղաքացիդ հրաշալեաց 'ի քաղաքս համօրէն աշխարհի իմաստութեամբ և քաջութեամբ՝ ոչ ամօթ հա-

մարիս հաւաքել մեծութիւն, ստանալ փառս և պատիւ, և զանց առնել զդանձուք զգօնութեան, ճշմարտութեան, իմաստութեան, և ոչ ջանաս բարեզարդել զհոգիդ ըստ արժանի վայելչութեանն։

Նախատինս համարիք ինձ, և արհամարհէք զինև՝ այնու զի ջանացեալ խրատել զամենայն մարդ առանձինն, խորշեցայ գալ երևել յերաստս ձեր, և խորհուրդ տալ վասն հայրենեաց։ Համարեալ ինձ այնպէս էր թէ շատ իսկ ցուցի զքաջութիւն իմ և զփորձ ժրութեան և 'ի պատերազմի՝ յոր ընդ ձեզ 'ի զէն վառեցայ, և 'ի ծերակուտի՝ երբ ես մենաւոր զդէմ կալայ զանիրաւ դատաստանին որով դատեցարուք զտասն զօրագլուխսն՝ որոց ոչ էր թափեալ և հողոյ տուեալ զդիակունս անկելոցն յարկինոտեան նաւամարտութեան. և 'ի նուագս նուագս կըրճիմն ընդդէմ արկի տարադէպ և անողորմ հրամանաց երեսնից բռնակալացն։ Այլ որ արդեն զիս յանդիման լինել 'ի ժողովս ձեր, ո՛ աթենացիք, քաջն այն էր ձայնն աստուածեղէն զորմէ խօսեալ եմ ձեզ բազում անգամ, զոր և յաւակնեցաւ Մելիտոս ծաղու նշաւակել։ Այդ հոգի որ 'ի մանկութենէ ընդ իս է, ձայն իմն է աղդողական՝

նահանջել զիս 'ի խորհրդոց իմոց, զի մի՛ ձեռն մխեցից յիրս ինչ. այս ձայն միշտ արգել զիս՝ երբ անձնամատոյց լինէի միջամուխ լինել 'ի գործ հասարակաց. սակայն յոյժ ճահողակի. քանզի կանուխ ուրեմն կաքճէի ես 'ի կենաց՝ թէ 'ի գործս անդ պետութեան ինձ բաժին խնդրէի. և ո՛չինչ գործէի յօգուտակարացն՝ ո՛չ ձեզ, և ո՛չ ինձ։ Աղաչեմ զձեզ՝ մի՛ դժկամակ լինիցիք, թէ ոչինչ քօղարկեմ 'ի ձէնջ, և բարբառիմ աղաւտօրէն և ճշմարտութեամբ։ Ամենայն որ արութեամբ քաջութեամբ զդէմ ունիցի համօրէն ժողովրդեանդ ձերում կամ օտարի, և գուն 'ի վերայ դնիցէ ընդդէմ կալ խափանածոյ օրինաց, և չթողուցու լինել 'ի քաղաքիդ եղեռն գործոց, այր այնպիսի ոչ կայ ընդ երկար զերծ յաղետից. հարկ է զի որոց զպատերազմ արդարութեան մղել յանձն առեալ է, թէ և սակաւօրեայ կենաց իցէ խնդիր, մեկին վարեսցէ կեանս, և մի՛ ձեռներէց լիցի 'ի գործ հասարակաց։

Արդ ո՛ աթենացիք՝ թէ 'ի մօտաւուտ վտանգիս որ զիս պաշարեալն է՝ ո՛չ յանձին կալայց զօրինակ քաղաքացեաց բազմաց, որք 'ի դոյզն կասկած վտանգի երդմնեցուցանեն և արտասուօք թախանձեն զդատաւորս իւ-

րեանց, և 'ի մէջ մատուցանեն զորդիս իւրեանց, զծնողս, զբարեկամս. զայդ թէ չառնեմ ես, ո՛չ առ ամբարտաւանութեան է, կամ արհամարհութեան զձեօք, այլ 'ի պատիւ ձեր և քաղաքիդ բովանդակ։ Գիտելով զիտասջիք՝ զի ե՛ն ձեր քաղաքակիցք, որք ո՛չ իբրև ընդ չար ակնարկեն ընդ մահ, և զչարութեանդ անուն տան անիրաւութեան և վատութեան։ Ես ինքնին յաւագոյթ հասակիս՝ և 'ի ճշմարիտ կամ 'ի կարծեցեալ փառս իմ՝ մի թէ գործ արժանի՞ գործէի՝ եթէ յետ վարդապետութեանս իմոյ՝ արհամարհել զմահ, ես գլխովին երկնչէի 'ի մահուանէ, և 'ի կատարած կենացս զողջախոհ իմաստ աւուրց իմոց անցելոց եղծանէի։

Զանց արարեալ զպատուովս, որ ընդ աղօտ ճնասցէ 'ի գործոյ աստի իմմէ, տարադէպ վարկանիմ ես աղերսել զդատաւորս, և կամ թախանձանօք արձակուրդ գտանել. այլ համոզել և յաղթահարել փաստից տեղի գտցեն 'ի դմին։ Ո՛չ ամբարձաւ դատաւորն 'ի դահ եղծանել զօրէնս, այլ արդարութիւն գործել՝ որում արժան էր։ չէ արժան թէ մեք զձեզ 'ի ստերդծութիւնս յորդորեսցուք, և մի՛ դուք զմեզ. քանզի երկոքին իսկ ընդդէմ

կան արդարութեան և կրօնից. և միան-
գամայն մեղապարտ գտանիմք։

Մի ակնկալջիք յինէն, աթենացիք,
թէ ապաստան լինիցիմ առ ձեզ հնա-
ւրիւք՝ զորս ոչ արժանի համարիմ, և
ոչ շնորհեալ յօրինաց. մանաւանդ 'ի
դատաստանի աստ, յորում իբրև այր
ամբարիշտ ամբաստանիմ 'ի Մելիտո-
սէ։ Զի թէ մաղթանս արկիցէ ձեզ, և
բռնադատիցեմ անցանել զերդմամբ
ձերով, 'ի յայտ դայցէ՝ թէ ուսուցա-
նեմ չհաւատալ դից, և 'ի խնդրելս
պաշտպանել և արդարացուցանել զիս՝
զէն 'ի ձեռս տաց հակառակորդաց ի-
մոց, և ցուցիցէ հակառակ անձին թէ
ոչ հաւատամ աստուածոց։ Այլ քաւ
յինէն խորհուրդ այդպիսի. հաստա-
տուն խորհրդով ճշդրտեալ եմ զգոյու-
թիւն Աստուծոյ առաւել քան զոսոխս
իմ, և վասն այնր աներկիւղ ապաս-
տան առնեմ զանձն իմ ձեզ և Աստու-
ծոյ. զի դատեսջիք դատաստան՝ որպէս
արժանի վարկանիցիք վասն ձեր, և
վասն իմ։

Հրապարակախօս եղև Սոկրատ հաս-
տատուն անդրդուութեամբ. չէին իբ-
րև առն ամբաստանելոյ երևոյթք նո-
րա և շարժութիւնք 'ի դէմս։ Վեհ-
անձն և համարձակաձայն ատենա-
բանել նորա՝ կարծեցուցանէր զնա՝

տէր դատաւորաց իւրոց։ Այլ յերկրորդում ատենին մինչդեռ կամէին դատաւորք քաղել բանս 'ի բերանոյ Նորա, նա արիադոյնս ետ պատասխանի՝ թէ արժան դատիմ կերակրել ինձ զմնացեալ աւուրս կենաց իմոց՝ հաստակաց ծախիւք, յապարանս քաղաքին։ Այս ամենայն և ևս դառնացոյց զսիրտ երեսնից բռնակալացն՝ որք մահու պարտաւորեցին զնա՝ ըմպել զմոլեխինդն, որ զայնու ժամանակաւ յաճախեալ պատուհաս էր առ աթենացիս։

Անխռով սրտիւ ընկալաւ Սոկրատ զհրաման դատակնքոյն. իսկ Ապողոդորոս մին յաշակերտաց Նորա աղաղակեաց յատենի անդ, անպարտ մեռանի Սոկրատ. նա ասէ. իսկ խնդրէիր թէ ես մեղապարտ մեռանիմ. Անիտոն և Մելիտոս սպանանեն զիս. այլ վնասեն ինչ ոչ։ Այս աներկիւղ արիութիւն Նորա ցանգ ընդ նմա էր՝ մինչև 'ի շունչն յետին։

Արկաւ 'ի բանտ՝ և անադանեաց 'ի նմին զաւուրս երեսուն, առ որ յաճախէին երթևեկք բարեկամաց Նորա և աշակերտաց. զի այնուհետև դառնութիւն բանտին փոխեցաւ 'ի լսարան առաքինութեան։ Պատճառ յերկարելոյն Նորա յարգելանս՝ այս էր։

Օրէնք էին աթենացւոց՝ ամ յամէ յղել նաւ մի 'ի Դելոս կղզի՝ զոհ մատուցանել դիցն Ապողոնի. և 'ի պսակել քրմաց զղեկ նաւուն 'ի նշանակ ուղւոյ լինելոյ, ուր և ամարթ էր սպանանել պարտաւոր զոք, մինչև 'ի դարձ նաւուն։ Արդ՝ զի յերկրորդում աւուր ճանապարհորդութեանն հատաւ վճիռ 'ի վերայ Սոկրատայ, վասն որոյ հարկ եղև մնալ դարձի նաւուն զաւուրս երեսուն։ Ընդ աւուրսն ընդ այնոսիկ յայտ յանդիման արձանացեալ էր Սոկրատայ աղէտք մահուն, որ և անսասան արիութեամբ ցուցանէր զհաստատութիւն իւր 'ի շղթայս անդ, և յանխուսափ ստուերս մօտալուտ կատարածի իւրոյ։ 'Ի տխրամած յայն արկածս՝ անվրդով հանդարտութեամբ իւրով սքանչացոյց զամենեսին, զուարթ դիմաք խօսէր ընդ բարեկամսն։ Առ ձեռն պատրաստ էր նմա խուսել 'ի բանտէն, և թափել զանձն 'ի մահուանէ. այլ չէաւ յանձն՝ փոխանակել ընդ վատութեան զկեանս իւր. քանզի ընդ հասանել նաւուն դարձելոյ 'ի Դելոսէ՝ Կրիդոն ոմն 'ի սերոտ բարեկամաց նորա ընթացաւ առ նա՝ մատուցանել դոյժ և աւետիք զուդախառն. ասէ, 'ի քո ձեռս է ապրեցուցանել զկեանս քո, զի կաշառաբեկ

բանդապանն զանց առնէ զպահպա-
նութեամբն, և բաց են դրունք բանտիս
առ 'ի փախչել քեզ. զի թէ ոչ այն-
պէս՝ աստէն առ դուրս հասանէ ար-
բուցումն լեղի բաժակին։ Ժպտեցաւ
Սոկրատ ընդ բանսն. եհարց ց Կրիտոն.
դուցէ՞ տեղի յԱտտիկէ ուր մահ ոչ հաս-
ցէ մարդոյ։ Տառապեցաւ պարտասե-
ցաւ Կրիտոն յօժարել զՍոկրատ 'ի բանս
իւր, այլ նա դովեաց զնախանձ նորա,
շնորհ կալաւ զբարեսէր խնամոցն. այլ
և առ նմին քննել կամեցաւ իմաստա-
սիրաբար. արդեօք, ասէ, արժա՞ն իցէ
ելանել 'ի բանտէ առանց կամաց ա-
թենացւոց. կամ թէ յանիրաւի վա-
րեալն 'ի մահ՝ կարիցէ՞ անպատուհաս
'ի դերև հանել զդատակնիքն. զան-
հնարութիւն իրացն ած 'ի վերայ, և
հրաժարեաց ելանել 'ի բանտէն. յան-
ձին կալաւ մտադիւր՝ մեծարել զօրէնս
հայրենեաց, թէ և տարապարտ մահ-
ուամբ։

Ժամանեաց նաւն նուիրական՝ որ
առեալ բերէր զկատարած կենաց
Սոկրատայ. յաւուրն երկրորդի կա-
նուխ ընդ առաւօտն զեղան հոսեցան
բարեկամք նորա առ դուրս բանտին.
աղաչեաց զնոսա բանտապետն մնալ
վայր մի՝ զի մետասան հրամանատարք
'ի ներքս էին ընդ Սոկրատայ՝ որոց գործ

էր հոգ պատժաւորաց։ Ապա մտին 'ի բանտն և գտին զՍոկրատ արձակեալ 'ի շղթայից, ըստ սովորութեանն աթենացւոց, և յայնմ հետէ համարեալ լինէր անհրաժեշտ պատարագ մահու։ Առ նմա էր և կին նորա Քսանտիպպա. զմի 'ի մանկանց ունելով 'ի գիրկսն. որոյ տեսեալ զբարեկամն Սոկրատայ որք 'ի ներքս մտանէին, ձայն եբարձ արտասուագին՝ զհերսն փետէր, և կոծ դնէր դառնագէտ. մինչև հնչել որմոց բանտին 'ի ձայն ողբոց նորա. Ո՛վ, ասէ, Սոկրատ, ահա դան բարեկամք զյետինն տալ քեզ ողջոյն։ Աղաչեաց Սոկրատ զկինն, և յղեաց զնա 'ի տուն, զի մի խռովեսցի յողբոց նորա. զմնացուած աւուրն զբանիւք անկաւ ընդ բարեկամացն՝ իմաստասիրելով վասն անմահութեան հոգւոյ, յաւելան 'ի բանսն անդ և խօսք՝ թէ արժանն էցէ ճշմարիտ իմաստասիրի ցանկալ մահու. և յասել ոմանց թէ իշխան է մարդ զիւրովին գնալ, զդէմ կալաւ նոցա Սոկրատ, 'ի վերայ բերեալ, զի մարդ արարած է Աստուծոյ, չմարթի զանց առնել զվիճակաւ իւրով յոր եդաւ՝ ընդդէմ կամաց արարչին, և ոչ կարէ 'ի կենաց իւրոց հրաժարել առանց նորայն հրամանաց. վասն որոյ անպատասխանի մնայ անձնասպանն.

մինչև 'ի տեառնէ փոխադրեսցի յանտի
կեանս յակնկալեալ երջանկութիւնն
որ պատարուն է անմահութեամբ։
Այս զոյցք էին Սոկրատայ 'ի յետին
աւուր կենաց իւրոց. զոր արձանա-
ցոյց Պղատոն 'ի Փեդոն անուանեալ
հրաշալուր տրամախօսութեանն. ուր
ճառ արկեալ վարդապետէ Սոկրատ
առ բարեկամն զամենայն փաստս ան-
մահութեան հոգւոյ, հերքելով զհակա-
ռակորդացն պատճառաբանութիւն։
'Ի կատարել բանիցն՝ Կրիտոն և
այլք որ անդ կային՝ հարցին զկամն նո-
րա վասն կնոջն և որդւոցն և ստա-
ցուածոց, զի խնամ կալեալ այնոցիկ՝
պատուեսցեն զյիշատակ նորա։ Նա
ասէ. կանխաւ ուրեմն խրատեալ է
իմ զձեզ զգոյշ կալ 'ի վերայ անձանց
ձերոց, ոչ այլ իւիք զսոյն կարէք շը-
նորհս առնել բարեկամիդ ձերում։
Յաւել հարցանել Կրիտոն վասն յու-
ղարկաւորութեան թաղմանն. որպէս՝
ասէ, ձեզ հաճոյ ի՞ցէ. զի թէ խնամ
կալ ջիք վասն իմ, ես ոչ մեկնեցայց 'ի
ձէնջ։ Ապա ժպտեալ նայեցաւ ընդ
բարեկամն և ասէ. Ոչ կարացի խե-
լամտել զԿրիտոն թէ ընդ Սոկրատայ
խօսի. զի համարի դա թէ ես այլ եմ
յայնմանէ որ լինիցիմ յետ սուղ ժա-
մուց. զի կարծէ զիս ընդ մարմնոյս, և

զթաղումն հարցանէ։ Յետ այսորիկ
եմուտ յայլ սենեակ և լուացաւ, յե-
լանելն անտի մատուցին առ նա զոր-
դիսն, ետես և խօսեցաւ ընդ նոսա, և
յանձն արարեալ զնոսա արձակեաց 'ի
տուն։ Իբրև արևն ընդ մուտս լինէր
մատեաւ առ նա նուիրակն մետա-
սանից հրամանատարացն, ծանուցա-
նել նմա զսահմանեալ ժամանակն
ըմպելոյ զլեղին. և առ դիթոյն գալա-
րել չժուժեալ արտասուացն 'ի բաց
մեկնեցաւ։ Տեսէք զմարդասիրութիւն
առնդ, ասէ Սոկրատ. ցորչափ կայի 'ի
բանտիս ցանդ սփոփէր զիս, և այժմ
դառնապէս արտասուէ։ Մատուցին
նմա զմահու բաժակն. Եհարց Սոկ-
րատ. զի՞նչ օրէն է առնել. ետուն պա-
տասխանի, զդնայցես յետ ըմպելոյդ
մինչև 'ի կթոտել ծնդացդ, և ապա
պարզեսցիս 'ի մահիճս։ Առ 'ի ձեռին
զբաժակն անխռով և անալէկոծ, ան-
քթիթ աչօք նայելով ընդ այրն որ տայր
ցնա. և ասէ. Զի՞նչ ասես վասն բա-
ժակիս. արժա՞ն իցէ նուէր մատուցա-
նել աստի։ Ետուն պատասխանի,
փոքր ինչ ևեթ։ Ապա ուրեմն արժան
է, ասէ, աղերսել զերեսս աստուածոց
յաջողել ղելս իմ յերկրէ և զյետին
իմ զայս ուղևորութիւն. զոր յամե-
նայն սրտէ մաղթեմ առ 'ի նոցանէ։

Ասաց, և լռեաց առ վայր մի. և ապա արբ քամեաց զբաժակն սքանչելի ա-
րիութեամբ և վեհանձն քաջութեամբ,
զոր գրիչ պատմագրի՝ ոչ բովանդակէ։
Մինչև ցայն վայր բարեկամք նորա
բուռն առնէին անձանց՝ խափանել
զարտասուս, այլ իբրև տեսին զնա
արբեալ զթոյնն մահաբեր՝ այնու-
հետև ոչ ևս ժուժալ կարացին, այլ
բովանդակ 'ի կոծ համակեցան. զՍո-
կրատ միայն էր տեսանել 'ի նոսա
անխռով և զուարթ. յանդիմանեաց
զնոսա քաղցր բանիւք։ Զի՞ գործէք ա-
սէ, ո՞ւր է առաքինութիւն ձեր. ես 'ի
բաց հանի զկանայս՝ զի մի՛ տեսից զկա-
կան նոցա. դուք քան զնոսա՞ մեղկա-
ղէտ եղերուք. ապաքէն բաղում ան-
գամ ասացեալ էր իմ ընդ ձեզ, թէ
արժան է մարդոյ անդորը ոգւով մե-
ռանել, և յելս իւր 'ի կենացս օրհ-
նել զաստուած. հանդարտ լերուք, և
լռեսցեն արտասուք ձեր։ Ճեմ առեալ
զգնայր 'ի բանտին Սոկրատ, և իբրև
յոգւոց պարզել ապաստան եղև, ան-
կաւ 'ի վերայ անկողնոյն. և այն ինչ
թոյնն մաշէր զոգիս նորա՝ ծածկեաց
զերեսսն, զի մի՛ տատանեսցին միտք
իւր. յանձն արար Կրիտոնի մատու-
ցանել յիւրն կողմանէ Ասկղեպիայ դից
զուխտեալ նմա զաքաղաղն. և անդէն

փչեաց զոգին։ Այսպէս մեռաւ Սոկ-
րատ հրաշալին 'ի հեթանոսս. յառա-
ջին ամն ձէ ողիմպիադին. 'ի հասակի
եօթանասուն ամաց։

Ո՛չ յետ բազում ժամանակաց 'ի
վերայ անցանելոյ ստրջացան աթե-
նացիք ընդ անիրաւել իւրեանց. և ա-
պաշաւ կալան յանձինս. ընդ քաղաքն
ողջոյն անձկանօք կարդային զանուն
Սոկրատայ. հռչակ հարկանէր անուն
նորա յԱկադէմիա, 'ի Լիկէոն, 'ի
վաճառավաճառոցս, և 'ի տունս։ Աստ,
ասէին, հրահանգէր Սոկրատ զերի-
տասարդս մեր, ուսուցեալ նոցա սէր
առ հայրենիս և առ ծնողս։ Անդ հրա-
շապատում վարդապետէր. իրաւամբք
կշտամբէր զմեզ. և յառաքինութիւնս
թեւակոխել ուսուցանէր. մեք զի՞նչ
հատուցուք ընդ այսչափ երախտիս
նորա։ Ըստ այսմ օրինակի 'ի դառն
տխրութիւն համակեցաւ քաղաքն ա-
թենացւոց. փակեցան դպրոցք, և լռե-
ցին գործառնութիւնք հասարակաց։
'Ի դատ կոչեցին զդատախազս նորա
համար տալ զանմեղ սպանութեան
առն արդարոյ. 'ի մահ դատեցաւ Մե-
լիտոս, և այլքն տարագրեցան. նա՛ և
ըստ Պլուտարքոսի՝ ամենեքեան որք
հաղորդ էին 'ի սպանութիւն Սոկ-
րատայ՝ նշաւակ եղեն ատելութեան

քաղաքակցաց իւրեանց, իբրև զըղ-
ծեալս և անարժանս և արեան արդա-
րոյ պարտապանս նախատէին զնոսա։
Ո՛չ շատ համարեցան պատուհասել
զոսոխս Սոկրատայ, այլ անդրի պղնձի
ձուլեցին նմա, և կանգնեցին յերևելի
տեղւոջ քաղաքին. կառուցին և տա-
ճար յանուն նորա իբրև անմահի և
դիւցազին. անուանեալ տաճար Սոկ-
րատայ։

ՊՂԱՏՈՆ

*Ծնեալ յառաջին ամի ութներորդ ու-
թերորդ ողիմպիադին. մեռեալ յառաջ-
նումն հարիւրորդին, 'ի հասակի ութ-
սուն և մի ամաց։*

ՊՂԱՏՈՆ, աստուածախօս կոչե-
ցեալ առ վսեմ վարդապետութեանն.
էր յականաւոր տոհմէ աթենացւոց,
ծնեալ յութսուն և ութ ողիմպիա-
դին։ Հայր նորա Արիստոն էր յաղ-
դէն Կոդրոսի թագաւորին Աթենայ.
և մայրն Պերիկտիոնէ 'ի ծննդոցն Սո-
ղոնի։ Նախկին անուն Պղատոնի Ա-
րիստոկղ էր, այլ զի աւարտահասակ
էր, թիկնաւէտ, և ճակատ նորա լայն՝
Պղատոն անուանեցաւ. զի Բլատօս
լայնութիւն լսի առ Յոյնս. այս ա-
նուն մնաց նմա։

Առասպելեն զնմանէ թէ մինչդեռ
ստնդիաց յօրոցի էր՝ մեղր սիրեցին մե-
ղուք 'ի շրթունս նորա, որ նախադու-
շակ աղդեցութիւն համարեցաւ հրա-
շալի ճարտարախօսութեանն նորա, որով
նշանաւոր դտաւ 'ի մէջ Յունաց։ Յե-
րիտասարդութեանն հետամուտ եղև

բանաստեղծութեան, յօրինեաց եղեբ-
երգութիւնս, և ողբերգութիւնս եր-
կու. այլ իբրև հաստատեաց ընդ միտս
անձնատուր լինել իմաստասիրու-
թեան, զայն յօրինուածսն 'ի հուր կի-
զեաց։ Քսան ամաց էր՝ երբ հայր նո-
րա մատոյց զնա յաշակերտութիւն
Սոկրատայ։ Եւ յառաջնումն գիշերի
երազ տեսանէր Սոկրատ, զի թուէր
նմա ունել 'ի գիրկսն կարապ մի մա-
տաղ. յորոյ աճել փետրոցն հոլաթե-
ւեալ թռեաւ սլացաւ, և ամբարձաւ
յօդս, քաղցրանուագ երգելով։ Ոչինչ
երկմտեաց իմաստասէրս թէ երազն
զՊղատոն նշանակէ, և այդ՝ կանուխ
գուշակութիւն է մեծահռչակ համբա-
ւոյն, յոր ամբարձցի աշակերտն իւր։
Ցորչափ կենդանի էր Սոկրատ՝ ցանդ
առ նմա կայր հաւատարմութեամբ.
իսկ յետ մահու նորա աշակերտեցաւ
Կրատիլոսի՝ որ ընդ հետս ընթանայր
զԵրակլիտեայ. մատեաւ և առ Երմո-
գենէս՝ որ Պարմենիդեայ հետևողն էր։
'Ի հասակի քսան և ութ ամաց գնաց
'ի Մեգարա՝ ուսանել առ ոտս Եւկ-
ղիդէսի ընդ այլոց աշակերտաց Սոկ-
րատայ. անտի գնացեալ 'ի Կիւրէնէ՝
անդէն ուսաւ զչափաբերութիւն։ Յետ
այնորիկ անց յԻտալիա՝ աշակերտիլ
երից քաջանուն պիւթագորեանց այնր

ժամանակի, որք էին Փիլոլայոս, Աբ-
քիտաս տարենտացի, և Եւրիտոս։ Ո՛չ
շատ համարեալ զսոցա ուսումն, գնաց
և յԵգիպտոս, աշակերտել առ գի-
տունս և առ քուրմն երկրին. կամէր
գնալ մինչև 'ի Հնդիկս, և ուսանել 'ի
մոգուց նոցա, թէ ոչ խափան լինէր
նմա հրդեհ պատերազմին որ յայն-
ժամ բորբոքեալ վառեալ էր յԱսիա։

Յետ այսչափ ուղեգնացութեանցն
դարձ արարեալ յԱթէնս բնակու-
թիւն կալաւ 'ի թաղ մի քաղաքին՝ ա-
նուանեալ Ակադեմիա 'ի գիՃին վայ-
րի՝ զոր ընտրեաց կամակար յօժարու-
թեամբ իբրև 'ի կարևոր դարման տա-
բապայման գիրութեան իւրոյ և ա-
ռողջութեան։ Ցուցան 'ի նմա ար-
դիւնք իրացն, քանզի անդէն 'ի սկզբ-
բանն հարաւ 'ի նա տենդ քառօրեայ,
որ ձգեցաւ ընդ ամ մի և կէս, այլ ջա-
նացեալ նորա 'ի ժուժկալութիւն և
'ի զգուշութիւն՝ յաղթեաց ջերմանն,
և յայնմ հետէ սերտագոյն հաստատե-
ցաւ յառողջութեանն։

Երիցս գնաց 'ի պատերազմ. առա-
ջին 'ի Տանագրա. երկրորդ 'ի Կորն-
թոս, և երրորդ 'ի Դելոս՝ յորում 'ի
յաղթականաց կողմն էր։ Գնաց և 'ի
Սիկիլիա երիցս անգամ, յառաջնում
նուադին յորդորեցաւ 'ի դոյն յզղձա-

նաց հետազօտութեան, ինքնին ակա-
նատես լինել հրաբուղխ լերինն Եւ-
նայ։ Էր յայնժամ 'ի հասակի ամաց
քառասնից. գնաց յարքունիս Դիո-
նեսիոսի երիցու բռնակալի, որոյ ցան-
կացեալ էր տեսանել զնա. այլ աներ-
կիւղ համարձակութիւնն՝ որով ար-
համարհ եցոյց զբռնակալութիւնն՝
անշուշտ կարձէր 'ի նմանէ զկեանսն,
թէ ոչ բարեխօս լինէին վասն նորա
Դիոն և Արիստոմենէս. սակայն 'ի
վերայ այնր ամենայնի ետ զնա բռնա-
ւորն ցՊոլիդէս՝ որ 'ի հրեշտակութիւն
եկեալ էր առ նա 'ի Լակեդեմոնէ,
վաճառել իբրև զգերի։ Տարաւ Պոլի-
դէս զՊղատոն յԵգինա կղզի, և անդ
վաճառեաց։ Օրէնք էին առ եգինա-
ցիս՝ որ մահու պարտապան առնէր
զամենայն այր աթենացի՝ որ հասցէ 'ի
կղզի նոցա. արդ ընդ պատրուակաւ
օրինացս Կարմանդր ոմն ամբաստան
եղև զնմանէ իբրև զմահապարտ առ-
նէ. այլ ոմանց 'ի վերայ բերեալ ճար-
տարութեամբ, թէ 'ի վերայ մարդկան
է հրամանդ, և ոչ 'ի վերայ իմաստա-
սիրաց, շատ դատեալ եղև զանազա-
նութիւնն, և 'ի վաճառ արկին զնա։
Անդ յաջողեաց բաղդ նորա. զի գնեաց
զնա քսան մնասու Անիկերիս կիւրե-
նացի՝ որ յայնժամ անդ էր, և դար-

ձոյց զնա ՅԱԼԹԷՆՍ առ բարեկամն իւր։ Իսկ Պոլիդէս լակեդեմոնացի որ վաճառեացն զնա՝ վանեցաւ 'ի Քաբրիասայ, և ծովայեղց կորեաւ 'ի պատուհաս ամենայնի զոր հասոյցն Պղատոնի իմաստասիրի, որպէս կարծի՝ յայտնեալ զայն նմա այսոյն։ Լուեալ Դիոնեսիոսի երիցու զդարձ նորա ՅԱԼԹԷՆՍ, խիթացեալ զի մի՛ վրէժ խնդրեսցէ 'ի նմանէ՝ համբաւ վատ հռչակելով 'ի վերայ նորա, նամակ արար նմա՝ թողութիւն խնդրել 'ի նմանէ. պատասխանի ետ նմա Պղատոն թէ չի՛ք նը-մա տեղի երկիւղի. քանզի իմաստասիրութիւն, ասէ, դրաւեալ ունի զիս և ո՛չ պարապեմ հոգալ վասն իրացդ։ Իսկ իբրև ոմանք 'ի թշնամեաց բանս 'ի մէջ արկանէին նմա թէ լքաւ թողաւ 'ի Դիոնեսիոսէ բռնակալէ. ասէ, ո՛չ թէ Դիոնեսիոս անտես արար զՊղատոն, այլ ինքնին Պղատոն արհամարհեաց զԴիոնեսիոս։

Դարձեալ երկրորդ անգամ գնաց 'ի Սիկիլիա յաւուրս Դիոնեսիոսի փոքու՝ ակն ունելով համոզել զբռնակալն՝ ազատութիւն շնորհել քաղաքակցաց իւրոց, կամ դէթ զթով քաղցրութեան խնամ ունել նոցա. այլ յետ դեղերելոյ անդէն զամիսս էր-

րու չորս, տեսեալ զի ոչ միայն խնուն
լսելիք Դիոնիսեայ լսել բանից իւրոց,
այլ և յաւել տարագրել զԴիոն, և
յառաջ վարէր զգործ բռնաւորու-
թեանն օրինաք հօր իւրոյ, դարձ արար
ՅԱԹԷՆՍ. Թէպէտ և բաղումն թա-
խանձէր զնա Դիոնեսիոս մնալ առ
իւր։ Իսկ երրորդ անգամ գնաց 'ի Սի-
կիլիա՝ մաղթել 'ի բռնակալէն՝ զյե-
տադարձ Դիոնի, և յօժարել զնա՝
հրաժարել 'ի բռնակալ իշխանու-
թենէն. այլ զի Դիոնեսիոս խոստումն
տուեալ նմա, կասէր յարդեանցն,
կշտամբեաց զնա Պղատոն վասն հա-
ւատադրժութեանն. և այնչափ յու-
զեաց զցասումն նորա, զի փոքր մի ևս
մահուն իւրով վճարէր զգործն, թէ
ոչ Արքիտաս տարենտացի աղաչաւորս
առաքեալ նաւու հանդերձ՝ խնդրէր
զնա 'ի բռնաւորէն։ Ո՛չ միայն զիջաւ
Դիոնեսիոս յաղաչանս Արքիտասայ,
և շնորհեաց գնալ Պղատոնի, այլ և
ետ պատրաստել 'ի նաւուն զպաշար
ճանապարհին։ Յայնժամ դարձ արար
Պղատոն ՅԱԹԷՆՍ եդեալ 'ի մտի՝ չե-
լանել անտի բնաւ։ Ընկալան զնա ա-
թենացիք մեծապատիւ շքով, և թա-
խանձանաք աղաչէին զնա 'ի գործակա-
ցութիւնս հասարակաց. այլ նա բացէ
'ի բաց հրաժարեցաւ, անդարման հա-

մարելով զերսն վասն տարադէպ զօրա-
ցելոց անկարգութեանց։ Այլ ոչինչ
է հաւաստի նշանակ մեծի պատուոյ
նորա առ Յոյնս քան զոր դիպաւ յո-
ղիմպիական խաղս։ Ընկալեալ եղև
անդ իբրև աստուած ոմն ի՛ջեալ յերկ-
նից. և իւրաքանչիւր ժողովուրդ
Եւլադայ ցանկասէրք տեսարանաց
ձգեալք անդր 'ի զնին ողիմպիական
խաղուցն, զանց արարին զկառամարտ-
կօքն՝ և ըմբշամարտկօքն՝ զի միայն դէտ-
ակն ունիցին յայրն յայն հոյակապ,
զորոյ զբաղում սքանչելիսն լուեալ էր
նոցա։

Ոչ ամուսնացաւ Պղատոն, յամե-
նայնի զգուշացեալ խնամով ժուժկա-
լութեան և պարկեշտութեան։ Նա
և այնչափ զգաստ էր յերիտասարդու-
թեանն անգամ, զի ոչ ոք տեսանէր
զնա 'ի ծաղր լուծեալ անչափութեամբ.
և գիտաց բռնանալ 'ի վերայ կրիցն՝
որպէս զի ոչ 'ի բարկութեան տեսա-
նել ումեք զնա։ Աւանդեն առ այս և
զայն, թէ երիտասարդ ոմն աշակեր-
տեալ նմա, իբրև դառնայր 'ի հայրե-
նի տուն իւր, տեսեալ յաւուր միում
զհայրն բրդեալ 'ի ցասումն, յապուշ
հարաւ մեծապէս, և 'ի վերայ եբեր, թէ
իմ չէք տեսեալ զայդ առ Պղատոնի։
Առ մի նուազ և եթ դիպաւ նմա զայ-

բանալ 'ի վերայ միոյն 'ի ստրկաց իւ-
րոց, որոյ յանցուցեալ էր ծանրա-
գոյն. ետ պատուհասել զնա այլոյ ու-
րու

ասէ, թէ յետ լսելոյ 'ի Քսենոկրատայ և 'ի Պղատոնէ յաղագս անմահութեան հոգւոյ, դեր 'ի վեր դասեցեալ զամօթալից կեանս քան զմահ արութեամբ քաջութեան։ Յիշատակին և երկու կանայք 'ի թուոյ աշակերտաց Պղատոնի. առաջինն Լասթենիա մանտինէացի. երկրորդն Աքսիոթէա փիլասիացի, որոց սուրբութիւն էր առնացի զգենուլ, իբրու պատշաճագոյնս իմաստասիրութեան յոր պարապէին։ Սիրէր յոյժ զերկրաչափութիւն. և այնչափ կարևոր դատէր զայն իմաստասիրի, մինչև արձանագրել 'ի դաւիթ իւրումն Ակադեմիայ. Աներկրաչափ ոք մի ներսամտեսցէ։

Ամենայն մատենագրութիւնք Պղատոնի՝ բաց 'ի թղթոյն յորոց երկոտասան ևեթ կան, տրամախօսութեամբ յօրինեալ են։ Յերիս աղդս մարթիմք բաժանել զայսոսիկ տրամախօսութիւնս։ Յառաջինն հերքէ զսոփեստէսն կամ զիմաստակս. յերկրորդն ջանայ 'ի հրահանդս պատանեաց. և յերրորդն՝ որոց անկ են հասունացելոց։ Ունիմք դարձեալ զանազանել զդոսին այսպէս. քանզի զոր ինչ բան վարդապետութեան աւանդէ Պղատոն 'ի թուղթսն, 'ի դերս օրինաց, և յե-

պին ումի տրամախօսութեանն՝ ինքնօ-
բէն վարդապետութիւնք են նորա. իսկ
զոր ինչ ասէ յայլ տրամախօսութիւնսն
ընդ այլ և այլ անուամբ՝ Սոկրատայ,
Տիմէի, Պարմենիդեայ կամ Զենոնի,
իբրև հաւանականեր աւանդէ, առանց
ճշմարտութեանն երաշխաւորելոյ։ Սա-
կայն զոր ինչ բան 'ի բերան դնէ Սոկ-
րատայ 'ի տրամախօսութիւնսն, թէ-
պէտ յարմարեաց ըստ ոճոյն և ըստ
կարգի զրուցաց այնր իմաստասիրի,
ոչ է հարկ հաւատալ թէ այն ամե-
նայն յատուկ ըստ սոկրատեան մտաց
գրեալք էին, քանզի ընթերցեալ
Սոկրատայ զտրամախօսութիւնն ա-
նուանեալ՝ Լիւսիս կամ յաղագս բա-
րեկամութեան, զոր Պղատոնի էր յօ-
րինեալ մինչդեռ կենդանին էր Սոկ-
րատ, վկայեաց ընդ ստութիւնն, և
ասէ. Անմահ աստուածք, զի՞նչ ինչ
տայ ինձ խօսել այդ երիտասարդ, զոր
իմ չիք խորհեալ բնաւ։

Ոչ բանից Պղատոնի՝ ըստ վկայելոյ
աշակերտի նորա Արիստոտելի՝ զմի-
ջոցն ունէր զվսեմութեան քերթողա-
կանին, և զպարզութեան արձակ շա-
բադրածոյ։ Կիկերոնի սքանչացեալ
ընդ աղնութիւնն՝ ոչինչ երկմտեաց
ասել՝ զի թէ յօժարէր Արամազդ խո-
սել 'ի լեզու մարդկան՝ ոչ այլազգ ինչ

բարբառէր քան զՊղատոն։ Պանետիոս
փիլիսոփայ կոչէր զնա Հոմերոս իմաս-
տասիրաց. 'ի դոյն միտս եղև յետոյ և
և Կուինտիլիանոս. որ 'ի գրելն վասն
պերճախօսութեան նորա՝ անուանէ
դիւցական և հոմերական։

Հանգամանք վարդապետութեան
նորա զուգախառն են 'ի կարծեաց երից
իմաստասիրաց. զակատեալ տեսանի
'ի Հերակղիտոս 'ի բնաբանութեան
կարգի, և յիրս ոչք անկանին ընդ ըն-
դայութեամբք. միտեցաւ 'ի Պիւ-
թագորաս 'ի բնաղանցութեան, և
յորս ոչ անկանին ընդ զդայութեամբք.
իսկ 'ի քաղաքականս և 'ի բարոյականն՝
գեր 'ի վեր դասեաց քան զամենեսին
զՍոկրատ, և ամենայնիւ յարեցաւ 'ի
նորայն վարդապետութիւն։

Ըստ աւանդելոյ Պլուտարքոսի յա-
ռաջին գիրս որ յաղագս կարծեաց ի-
մաստասիրաց երիս սկզբունս դնէր
Պղատոն. զԱ՛ծ, զնիւթ և զդաղա-
փար։ Ա՛ծ՝ իբրու ընդհանուր գոյա-
ցութիւն։ Նիւթ՝ իբրու առաջին սա-
տար ծննդեան և ապականութեան։
Դաղափար՝ իբրու աննիւթական
գոյացութիւն հանդուցեալ յիմացու-
թեանն Ա՛ծ։ Սրտի մտաք ընդունէր
թէ աշխարհս արարած է Ա՛ծ ստեղ-
ծողի. այլ ստեղծմամբ ոչ իմանայր

ստեղծումն յատկապէս. վասն զի հա-
մարէր նա՝ թէ կազմեալ և կերտեալ
է Աստուծոյ զաշխարհս, զի այսպէս ասաս-
ցուք, 'ի նախեղակ նիւթոյ որ կայր 'ի
յաւիտենից. որպէս զի ըստ նորա ա-
ռարկին Աստուծոյ ոչ արար զաշխարհս լու-
ծանելով զանդունդս և կազմելով յան-
կերպարան նիւթոյ, այլ իբրու ճար-
տարապետ և որմադիր, որք կտրելով
և դասաւորելով զքարինս յառաջն ան-
կոփս, շարադրեալ կանգնեն զշի-
նուածն։

Հաստատութեամբ հաւատացեալ
է՝ թէ Պղատոն խելամուտ էր ճշմար-
տին Աստուծոյ եթէ լուսաւոր քննութեամբ
մտաց իւրոց, և եթէ յորոց քաղեացն
յեբրայական դրոց. սակայն 'ի նոցուն
սակի համարեալ է որք ըստ բանից
Պօղոսի առաքելոյ՝ ծանեան զնա, և
ոչ իբր զնա փառաւորեցին, այլ նան-
ռացան 'ի խորհուրդս իւրեանց։

Եւ արդարև յԵպիկուրոսի տրամախօ-
սութեանն՝ երրեակ աղգս աստուածոց
գոլ համարեցաւ. վերնագոյնս, ստոր-
նագոյնս և միջականս։ Վերնագոյնքն
ըստ նորա՝ բնակին յերկինս, և այն-
չափ առաւել վերնագոյն են քան զմ-
մարդիկ գերազանցութեամբ բնու-
թեան, և տեղեացն բնակութեամբ,
մինչև զի չկարեն մարդիկ՝ ինքնին հա-

ղորդել ընդ նոսա, այլ 'ի ձեռն միջա-
կան աստուածոց՝ որք յօդս բնակեն,
զոր այսս կոչէր։ Սոքա իբրև պաշտօ-
նեայք են դիցն երկնայնոց, զի սոցա է
ծանուցանել մարդկան զպատուէրս
դից. և տանին յերկինս զնուէրս և զա-
ղօթս մարդկան։ Սոքին դարձեալ
խնամ ունին աշխարհի յիւրաքանչիւր
հասեալ բաժնի նոցա. վերակացուք
են պատգամախօսութեանց և գուշա-
կութեանց, և նոցա է գործել զսքան-
չելիսն և զհրաշս որ լինին։ Օրէն է
կարծել թէ յորոց 'ի ներ գիրս զհրեշ-
տակաց ճառին՝ անտի ընդ միտս ան-
կաւ հնարել Պղատոնի զայս երկրորդ
կարգ աստուածոց։ Դնէ և երրորդ
դաս աստուածոց ստորին քան զեր-
կրորդսն, զորս 'ի գետս բնակեցուցա-
նէ, շատ համարելով կիսաստուածս
դնել զնոսա. և իշխանութիւն 'ի ձեռս
տայ նոցա 'ի վերայ երազոց և այլոց
սքանչելեաց, ըստ օրինակի միջակայ-
նոցն։ Համարի առ այսոքիւք թէ ա-
մենայն տարերք և ամենայն մասունք
տիեզերաց լցեալ են բազմութեամբ
կիսաստուածոց, որք՝ ըստ նորա՝ երևին
երբեմն, և ապա անհետանան յաչաց
մերոց։ Աւասիկ 'ի սոցուն վերայ հի-
մնեալ են մոգացածին վէպք այսոց
օդոյ, և ջրայոյզ, և գետնաբնակ

ոգւոց խորհրդաբան ծածկագիտու-
թեան ։

Դարձեալ ուսուցանէր Պղատոն
զհոգեփոխութիւն, զոր ուսեալն էր 'ի
Պիւթագորայ, և յարմարեալ ըստ իւ-
րոց կարգի բանիցն, որպէս է տեսա-
նել 'ի տրամախօսութիւնս նորա մա-
կանուանեալս Փետրոս, Փեդոն, Տի-
մէոս, և յայլսն։ Թէպէտ և յօրի-
նեաց Պղատոն սքանչելարուեստ իմն
տրամախօսութիւն յաղագս անմահու-
թեան հոգւոյ, սակայն սխալեաց 'ի
դմին ծանուցս, և 'ի բանսն յաղագս
հոգեղէն գոյացութեանն զոր համա-
րէր ևս շարադրեալ յերկուց մասանց
'ի հոգւոյ և 'ի մարմնոյ. ևս և 'ի բան
սկզբնաւորութեան հոգւոց, համարե-
լով թէ հոգիք կային յառաջ քան
զմարմինս. և թէ՝ իջեալք յերկնէ վասն
հոգևորելոյ հետզհետէ զանազան մար-
մինս, կրկին անգամ դառնան յերկինս՝
յետ սրբելոյ։ Կացեալ նոցա անդ ամ-
ինչ՝ հրաման լինի նոցա՝ իջանել և
հոգևորել դարձեալ զայլ մարմինս.
որպէս զի անընդհատ գոլ շրջանակի
շաղաշարութեանցն և մաքրութեանց,
դարձուածոյ յերկինս, և իջանելոյ
յերկիր 'ի մարմինս զորս հոգևորեն։
Եւ քանզի համարէր նա թէ այդ հո-
գիք բնաւ ոչ մոռանան զորս ուսեալն

էին 'ի մտանել նոցա յայլ և այլ մար-
մինս, ըստ նմին 'ի վերայ բերէր՝ թէ
զոր ինչ ուսանին դոքին՝ չեն նորք, այլ
յիշատակութիւնք որոց յառաջն գի-
տէին. և 'ի վերայ այսր յիշատակու-
թեան հիմնէր և զվարդապետութիւնն
որ յաղագս նախագոյակ ստեղծման
հոգւոց։

Այլ զի մի ընդարձակեսցին բանք
մեր յաղագս կարծեաց այսր իմաստա-
սիրի, որ ընդ աղօտ ևեթ աւանդեաց,
շատ լիցի ասել թէ վարդապետու-
թիւն նորա 'ի բազում գլուխս նոր և
աքանչելի իմն երևեցաւ, մինչև անդէն
յաւուրս նորա դիւցական անուն կար-
դալ նմա, և յետ մահուն աստուած
ոմն համարել զնա։

Մեռաւ յառաջնում ամի ՃԸ ողիմ-
պիադին, 'ի հասակի ութսուն և մի
ամաց, յոր ծննդեան իւրոյ։

ԱՆՏԻՍԹԵՆԷՍ

Աշակերտ Սոկրատայ, ժամանակակից Պղատոնի, և այլոց աշակերտաց Սոկրատայ։

ՅԵՏ մահուն Սոկրատայ կացուցին աշակերտք նորա ուսմունս պէս-պէս որք անուանեցան Կիւնիկեան, Ակադեմեան և Կիւրենական։ Անտիսթենէս՝ առաջնորդ եղև կիւնիկեանց։ Բազում ինչ աւանդի վասն կոչելոյ զոցա յայդ կիւնիկեան անուն որ Շնական թարգմանի. ոմանք թարգմանեն զի շնաբար կենաց կէին նոքա. և այլք՝ թէ ուր ուսուցանէրն Անտիսթենէս՝ զոյզն ինչ 'ի բացեայ էր 'ի դրանէն Աթենայ՝ անուանեալ Գենոսարգէս որ թարգմանի Շուն սպիտակ։

Որդի էր իմաստասէրս հօր աթենացւոյ, որ յիւր անուն կոչեաց և զորդին Անտիսթենէս, և մօր ստրկի։ Յորժամ ոք ընդ երեսս նախատէր զնա թէ մայր նորա փռիւգացի է, և զինչ այտի, ասէր, ոչ ապաքէն 'ի գաւառէ անտի էր և Կիւբելէ դիցամայր։ Աշակերտե-

ցաւ զառաջինն Գորգիայ ատենախօսի, յետ այնորիկ ինքնին առանձին ուսոյց առ ժամանակ մի, և զի պերճախօս էր՝ խուռն ընթանային բազումք 'ի տեղեաց տեղեաց՝ լսել նմա։ Այլ հռչակ անուանն Սոկրատայ փափաքումն արկ 'ի սիրտ նորա, և գնացեալ ունկն դնել վարդապետութեանն հրաշալւոյն յիմաստասէրս, այնպէս իմն յափշտակեցաւ 'ի սէր նորա, զի դարձ արարեալ անտի՝ էառ զամենայն աշակերտս իւր գնալ առ Սոկրատ, և աղաչեաց զնոսա գնալ ընդ իւր 'ի լսարան Սոկրատայ. եղեալ 'ի մտի ոչ ևս այլ յայնմհետէ ունել աշակերտս։ Բնակէր նա 'ի Պիրէոն նաւահանգստի քաղաքին, և աւուր աւուր ընթանայր զճանապարհ ասպարիզաց քառասնից՝ զուարճանալ 'ի տեսութիւն և յունկնդրութիւն Սոկրատայ։

Բնաւորութիւն Անտիսթենեայ խիստ էր, և հանգամանք կենացն ժուժկալ։ Աղաչէր զդիս՝ արկանել 'ի վերայ իւր՝ յաւէտ յիմարութիւն, քան հեշտութիւն 'ի զդալիս։ Խստութեամբ վարէր առ աշակերտս իւր, և թէ հարցանէր զնա ոք զպատճառն, տայր պատասխանի, ոչ զնոյն առնեն և բժիշկք առ հիւանդս։

Նա ինքն սկիզբն կալաւ ագանել

կրկին վերարկու լայն, և ունել մա-
խաղ և դաւազան, որք յետոյ սահմա-
նեցան իբրև յատուկ կարասիք կիւ-
նիկեանց, և այն միայն էր հարստու-
թիւնն ում ցանկային, և նովին իբր
թէ մրցէին նա և ընդդէմ Դիոսի։
Թողոյր զմօրուսն աճել՝ անյարդար ա-
մենևին, որպէս և 'ի զգեստսն ան-
խնամ էր և անհոգ։

'Ի գիտութեանց մասին՝ յարեալ էր
'ի բարոյականն ևեթ, իսկ այլ ամենայն
գիտութիւնք ասէր՝ չունին ինչ օգուտ
բնաւին. որպէս և զծայրագոյն բարին
եղեալ ունէր յառաքինութիւնս, և
յարհամարհանս պերճութեան։

Ամենայն կիւնիկեանք առ հասա-
րակ հրաժարեալ կային 'ի պաճուճա-
նաց. սովորական կերակուր էր նոցա
միրգք և ունդք, և ջուր միայն էր ըմպե-
լի նոցա, և ոչինչ դժուարէին գետ-
նախշտի լինել։ Ասէին՝ աստուածոց
միայն է չունել ինչ պէտս. և որոց 'ի
մարդկանէ նուաղ իցեն պիտոյք՝ նոքին
առաւել քան զայլ մարդիկ մերձաւորք
են աստուածութեան։ Ամենեքին նո-
քա պանծային յանձինս՝ յարհամար-
հանս ունել զմեծութիւն. զաղնուա-
կանութիւն, և զամենայն օգուտ ըղ-
բնութեան և զբաղդի։ Սակայն անա-
ռակ էին նոքա, և յոչինչ իրաց ոչ ա-

մաչէին և ոչ իսկ յիրաց գարշութեան. ոչինչ խորէին զպատշաճն, և ոչ յու-մեքէ ակնածէին։

Քաջուշիմ էր Անտիսթենէս, և քաղցր յընկերութեան. զի զակումբ բազմականին ողջոյն կապէր 'ի բանս բերանոյ իւրոյ։ Վեհագոյն ցուցաւ 'ի զինուորական նահատակութեան 'ի տսնագրեան պատերազմին. ընդ որ յաւէտ ինն խնդամտեալ Սոկրատայ, յորժամ դէպ եղև երբեմն ասել ումեք արհամարհելով թէ մայրն Անտիսթենի փռիւգացի է, ետ պատասխանի. և զիարդ հաւատայցես ծնանել այդպիսում հոյակապ առն յամուսնութենէ աթենացի առն ընդ կնոջ աթենացւոյ։ Թէպէտ և յետոյ ձեռն արկ կշտամբել զԱնտիսթենէս վասն մեծամիտ ամբարտաւանութեան նորա։ Ետես զնա երբեմն պարզել զվերարկուն՝ առ 'ի ցուցանել զպատառուած նորա. ոմ Անտիսթենէս՝ ձայնեաց Սոկրատ, տեսանեմ ես զամբարհաւաճութիւնդ ընդ ծակս վերարկուիդ քոյ։

'Ի լսել Անտիսթենեայ զմեծաբանել աթենացւոց թէ անդստին ընիկք են 'ի գաւառէ իւրեանց, ասէր ցնոսա ընդ ծաղր. նա և կրիայք և խխունջք ցանգ բնակեն 'ի տեղւոջն յորում ծնանին։ Ասէր Անտիսթենէս. ուսումն

կարևոր քան զամենայն՝ այս է, մերկանալ զուսմունս չարեաց։ Այր ոմն մատուցեալ ցնա զորդի իւր յաշակերտութիւն, ասէ, որոյ իրաց այժմ կարօտի որդի իմ. ետ պատասխանի Անտիսթենէս. Նոր գրոց, նոր դրչի, և նոր պնակտի. ցուցանել կամեցեալ սովին՝ թէ ոգւոյ որդւոյ նորա պարտ է լինել կակուղ իբրև զմոմ որ չիցէ տակաւին ընկալեալ դրոշմ։ Հարցաւ երբեմն. զի՞նչ առաւել ցանկալի յաշխարհի. ասէ, երջանիկ մահ։ Թշնամի էր ընդ յաչաղկոտս՝ որք հանապազօր անձամբ զանձինս կրծեն և մաշեն՝ որպէս երկաթ մաշի 'ի ժանգոյ՝ զոր ինքն ծնանի։ Համարէր զի թէ բռնադատեսցի ոք յընտրութիւն, լաւ իցէ ագռաւ լինել՝ քան մախացող. վասն զի ագռաւք միայն զդիակունս ուտեն զմեռելոց. իսկ նախանձոտք զկենդանիս դէշագէշ պատառեն։ Յասել ուրուք ցնա թէ պատերազմն բառնայ յաշխարհէ զբազում տառապեալս. այո՛, ասէ. սակայն և զբազումս տառապեցուցանէ։

Աղաչէր ոմն զնա՝ տալ դաղափար իմն զաստուածութեան, ետ պատասխանի, չէք ինչ յէակաց նման նմա. վասն որոյ անմտութիւն է խնդրելն իմանալ զնա զդալի օրինակօք։ Խրատէր՝ պատիւ

դնել թշնամեաց, զի նոքա զառաջինն քննեն զմեր թերութիւնս, և նշաւակեն բազմաց. որք և յաւէտ օգտակարագոյնք են մեզ քան զբարեկամս մեր, զի պատճառս տան ուղղութեան անձանց մերոց։ Ասէր. պարտ է մեծ համարել զբարեկամ զգօն, քան զաղգական մերձաւոր. քանզի ըծորդութիւն առաքինութեան աղդողագոյն է քան զարեանն։ Լաւ է անսալ փոքու թուոյ իմաստնոց՝ ընդդէմ անմտաց բազմութեան, քան միանալ ընդ բազմութիւն յիմարաց ընդդէմ սակաւուց իմաստնոց։ Իմացեալ նորա երբեմն թէ արք ունանք վատք 'ի դնացս վարուց՝ ներբողեն զնա, Ո՛վ աստուածք մարդասէրք, ասէ, զի՞նչ դործեցի ես չարիս։ Իմաստունն, ասէ, չէ պարտական կեալ ըստ պատուիրանի օրինաց, այլ ըստ կանոնացն առաքինութեան։ Յաղագս այնորիկ՝ իմաստնոյ է դլխովին՝ ոչ նոր ինչ հանդիպել նմա, և ոչ դժուարահաճ, քանզի պարտ իսկ է նմա կանուխ տեսանել զամենայն որոց մարթ է պատահել, և կազմ կալ առ ամենայն դիպուածս։ Ազնուականութիւն և իմաստութիւն ասէր՝ մի և նոյն են. յաղագս այնորիկ ոչ այլ ոք ազնուական՝ բայց որ իմաստուն իցէ։ Զգօնութիւն՝ պարիսպ է ամրակուռ՝

որ ոչ կործանի և ոչ անկանի։ Հնարա-
գիտութիւն անմահութեան՝ անարա-
տութիւն կենաց. և վասն դոհու-
թեամբ կալոյ յաշխարհի՝ սոկրատեանն
պահանջի արիութիւն։ Եհարց զնա
ոմն վասն հանգամանաց կնոջ, զի խըն-
դրէր կին առնուլ. ետ պատասխանի.
եթէ զոգեղն առնուցուս ոչ անագան
ատելի լիցի. թէ զգեղեցիկն՝ հասա-
րակաց լիցի։ Տեսեալ շնացեալ զոմն
որ փախչէր, եղուկ քեզ՝ ասէ, 'ի քանի՞
վտանգից ազատ մնայիր միով խերևէ-
շիւ։ Խրատ տայր աշակերտաց իւրոց՝
հանդերձել մթերս՝ ոչք նաւաբեկու-
թեամբ ոչ կորնչիցին։ Թշնամւոյ իւ-
րում մաղթէր զամենայն բարօրու-
թիւն՝ բաց յիմաստութենէ։ Թէ ոք
բանս 'ի մէջ բերէր նմա յաղագս հեշ-
տալոց կենաց, աղաղակէր. դի՛ք ար-
դարք՝ այդ մեզ մի՛ լիցի, այլ որդւոց
թշնամեաց մերոց։ Տեսեալ կին՝ զքեզ
հանդերձիւք զարդարեալ՝ գնայր վաղ-
վաղակի 'ի տուն նորա, և աղաչէր
զայր կնոջն՝ ցուցանել նմա զոսկեն իւր
և զերիվար. թէ զբովանդակն բարե-
կարգեալս տեսանէր՝ թոյլ տայր կնոջն
առնել զոր ինչ և կամեսցի, քանզի
այր նորա ձեռնհաս է պաշտպանել
նմա. իսկ եթէ անյարդար դտանէր
զկաղմութիւնն, խորհուրդ տայր կնոջն՝

'ի բաց մերկանալ 'ի զարդուց անտի, զի մի յաւար մատնեսցի առն որ զաւաջինն յարձակեսցի 'ի վերայ նորա։

Խրատ ետ աթենացւոց՝ լծել յաբոտ անխտիր զէշս և զերիվարս. և յասել ուրուք ցնա թէ ո՞չ բարիոք են իրքդ. զի էշք չեն բաւական 'ի գործել զերկիր, ետ պատասխանի Անտիսթենէս. իսկ զի՞նչ ապա՝ միթէ նայիցիք դուք ընդ բաւականութիւն առնն յընտրելն զիշխանս. այլ շատ է ձեզ ընտրել ևեթ զնոսա։

Յասել ուրումն ցնա թէ Պղատոն չարիս խօսի զքէն, ետ պատասխանի. այս ինձ հաւասար է ընդ թադաւորաց, անիրաւել 'ի նոցանէ որոց բարիս արարեալ իցեմ։ Ծաղու արժանի է՝ ասէր, սրբել զցորեանն յորոմանց, և 'ի բաց հանել 'ի զորուէն զլինուորս վեհերոտս, առ որովք ոչ բուռն հարկանեն 'ի քաջ խորհուրդ՝ վտարել 'ի բաց 'ի հասարակապետութենէ զյաջաղկոտս։ Իբրև յանդիմանէին զնա վասն կենաց կցորդ լինելոյ ընդ արս խեռս և ընդ հանդանակողս, և զի՞նչ այտի, ասէ, ապաքէն և բժիշկք զոր ամենայն յաճախեն առ հիւանդս, և ոչ հարկանին 'ի տենդ նոցա։ Ստդտանէր յոյժ զՊղատոն, և մեղադիր լինէր նմա ստէպ վասն զակատելոյ նորա 'ի

պերճութիւն և 'ի շքեղութիւն։ 'Ի հարցանել ոմանց զնա, զոր քաղեցեր օգուտ յիմաստասիրութենէ, տայր պատասխանի, զայն՝ զի կարացից կեալ առանձինն հանդարտիկ, և առնել յօժարութեամբ, զոր այլք դժուարաւ գործեն։

Մեծարէր Անտիսթենէս յամենայնի զյիշատակ Սոկրատայ վարժապետի իւրոյ։ Նա ինքն գլխովին համարի վրէժխնդիր մահուն Սոկրատայ. քանզի յորժամ բաղումք խուռն բազմութեամբ եկեալք 'ի սահմանաց եւքսինեան ծովու հասանէին յԱթէնս, լսել զիմաստութիւն Սոկրատայ, Անտիսթենէս առեալ զնոսա տանէր առ Անիտոն. ահա՛ ձեզ, ասէր, այրն որ իմաստնագոյն է քան զՍոկրատ, զի սա ինքնին ամբաստան եղև զնմանէ։ Յիշատակ Սոկրատայ այնպէս իմն աղդողագոյնս դրոշմեցաւ 'ի սիրտ մարդկանն, զի անդէն վաղվաղակի 'ի բաց վտարեցին զԱնիտոն 'ի քաղաքէն, և զՄելիտոս զերկրորդ դատախազ Սոկրատայ արկեալ 'ի բանտ՝ անդէն սպանին։

Ախտացաւ Անտիսթենէս զախտ թոքացաւութեան։ Թուի իմն թէ յոյս ազատութեան 'ի ցաւոց անտի յորդորամիտ արար զնա 'ի վշտագին ցաւսն, քան 'ի մահ յօժարակամ.

Վասն զի աշակերտ նորա Դիոգինէս իբրև մտանէր 'ի սենեակ նորա, ունելով ընդ վերարկուաւն դաշոյն 'ի ձեռին, ասէ ցնա Անտիսթենէս, ի՞ցէ՞ ոք որ ազատեսցէ զիս յաղետից իմոց. և Դիոգինէս ձգեալ զդաշոյնն ասէ. աւասիկ սա։ Ասէ Անտիսթենէս. փափաքեմ զերծանել 'ի ցաւոցս, այլ ոչ և 'ի կենաց։ Կարծեալ այնպէս է թէ պանծայր Անտիսթենէս 'ի յաղանդն կիւնիկեանց, իբրև Հերակլեայ սահմանեալ. քանզի Աւսոնիոս լատին քերթող 'ի վերտառութիւնս իւր բան 'ի բերան դնէ նորա օրինակ զայս.

Սկզբնահայր կիւնիկեանց կարծեցայ ես. բայց լսեմ,
Կանուխ ուրեմն Հերակլեայ յառաջեալ յայդ դահ վսեմ.
Վարժապետին Հերակլեայ էի երբեմն ես երկրորդ,
Արդ կիւնիկեանց ես նախկին, նա աստուածոց է զուգորդ։

ԱՐԻՍՏԻՊՊՈՍ

Ժամանակակից Պղատոնի. եկաց զիննս. ներորդ վեցերորդ ոլիմպիադաւ։

ԱՐԻՍՏԻՊՊՈՍ կիւրենացի էր ազգաւ 'ի Լիբիոյ։ Հռչակ համբաւոյն Սոկրատայ ազդեաց նմա լքանել զՀայրենի երկիր բնակութեան իւրոյ, և գնալ բնակել յԱթէնս, զի ունկնդիր լեցի բանից վարդապետութեան նորա. յաղագս այնորիկ համարեցաւ ընդ երիցագոյնս յաշակերտաց Սոկրատայ. այլ կեանք նորա ներհական էին վարդապետութեանն աւանդելոյ յայնմ աքանչելի լսարանի։ Ինքն Արիստիպպոս հեղինակ համարեցաւ ազանդոյն կիւրենական. վասն զի կիւրենացի էր։

Բնաւորութիւն Արիստիպպոսի աշխոյժ էր, և պատասխանիքն եռանդուն. բանք նորա քաղցունք, և ընդ ամենայն իրս դուշնաքեայս գտանէր հնարս իմն կատականաց. Ջանայր բովանդակ շնթել թագաւորաց և մեծամեծաց, և կաղմ էր առ ամենայն զոր նոքայն կամէին. զուարթացու-

ցեալ զնոսա 'ի ծաղը և 'ի խնդութիւն, կորզէր 'ի նոցանէ զոր ինչ և կամէր. 'ի կատականս շրջէր զնախատինս և զթշնամանս որ լինէին առ նա, որպէս զի անհնարին գոլ նոցա թշնամանալ ընդ նմա՝ թէ և կամէին։ Այնպէս ճարտարամիտ էր և հնարագէտ, զի զամենայն յոր ձեռն արկանէր՝ ժամանեցուցանէր յամբոկ գործոյն։ Ըստ զանազանութեան վիճակացն որք հասանէին նմա՝ յամենայնի յերիւրէր զանձն, և ոչինչ խտիր դնէր ընդ պատշաճականն. մինչև ասել նմա Պղատոնի երբեմն, Ո՛վ Արիստիպպոս՝ չլիք ոք 'ի տիեզերս համօրէն այր նման քեզ, որ դիտասցէ հաճ և հաւան կալ ընդ հնոտի ձորձովք, և ընդ ծիրանի հանդերձիւ։

Ովրատիոս քերթող բան 'ի մէջ արկեալ յաղագս այսր իմաստասիրի ասէ՝ թէ գիտէր յանձին կերպարանել զնկարագիր ամենայն մարդոյ. և շատացեալ էր ընդ սակաւն զոր ունէր՝ մինչդեռ բազմին 'ի խնդիր ելանէր։ Այս ամենայն հանգամանք առնն՝ սիրելի արարին զնա Դիոնեսիոսի բռնակալին՝ առաւել քան զամենայն պալատականս իւր. այնր աղագաւ յաճախ երթևեկէր Արիստիպպոս 'ի Սիրակուսա՝ վայելել 'ի բազմածախ խնջոյս նորա.

և իբրև տաղտկանայր 'ի թագաւորէն՝ գնայր առ այլս յաւագանւոյն. և զի ամենայն կեանք նորա յածէին 'ի դրունս թագաւորաց, պատճառս առ Դիոգինէս կիւնիկեան՝ որ ժամանակակիցն էր նորա՝ անուանել զնա Շուն աբքունի։ Եղև երբեմն Դիոնիսեայ թքանել ընդ երեսս Արիստիպպոսի, ընդ որ դժկամակ եղեն որ անդն կային. Արիստիպպոս ժպտեալ ընդ այն՝ ասէ, իսկ ընդէ՞ր զայրացայց. եթէ ձկնորսք առ որսալ ձուկն մի փոքրիկ՝ ո՛չ ծանր գրեն 'ի ջուր թաթաւիլ բովանդակ, ես ո՞չ հանդուրժեցից փոքու լորձանցն՝ յըմբռնել կէտ մի մեծ։ Դարձեալ այլ օր, զի ցասուցեալ էր Դիոնեսիոս ընդ նա, իբրև բազմէր 'ի ճաշ՝ հրամայեաց նմա զյետին տեղին ունել 'ի բազմականին։ Ո՛չինչ դժուարեցաւ ընդ այն Արիստիպպոս, և ասէ. կարծեմ պատուել կամիս զտեղիս զայս։

Սա ինքն Արիստիպպոս յաշակերտութենէ Սոկրատայ՝ առաջին գտաւ 'ի պահանջել վարձս յաշակերտացն. և զի հաստատուն արասցէ զայդ սովորութիւն, ինքն իսկ յղեաց քսան մնաս առ Սոկրատ։ Այլ նա ոչ ընկալաւ զարծաթն, և 'ի բովանդակ կեանս իւր տխուր էր ընդ խեղաթիւր գնացս աշակերտին իւրոյ. այլ թուի թէ ոչ

ինչ համարեցաւ զայն Արիստիպպոս։ Իբրև ստգիւտ ածին զնովաւ, և առաջի դնէին նմա զվեհանձնութիւն վարդապետին իւրոյ՝ որոյ ոչինչ ընկալեալ էր յումեքէ 'ի վարձ. տայր պատասխանի, բնաւ հանդէտ չէ բանդ. ամենայն մեծատունք աթենացւոց փառս անձանց համարին՝ հայթայթել զպիտոյսն Սոկրատայ, մինչև հարկ լինել նմա յետս յղել զաւելին. իսկ ինձ հաղիւ ուրեմն խնամ տանի ստրուկ ոք։ Այր ոմն մատոյց նմա զորդին իւր հրահանգել, աղաչեալ՝ մտադիւր ջանիւք հսկել 'ի վերայ նորա. Արիստիպպոս վարձ խնդրեաց 'ի նմանէ յիսուն դրաքմայ. զարմացաւ այրն և ասէ, յիսուն դրաքմայիւք ստրուկ մի գնեմ ես։ Լաւ է՝ ասէ Արիստիպպոս. երթ գնեա՛. և իցեն քեզ երկուք։ Ո՛չ թէ առ ագահութեան զայս գործէր Արիստիպպոս. այլ ընդ հակառակն, արծաթոյ 'ի խնդիր էր՝ ծախելոյ սակս, և ցուցանել զզիարդն վարելոյ նովաւ։ Յանցանել նորա երբեմն ընդ ծով հասու եղև յումեմնէ թէ նաւն յորում կայ՝ հինից է. յայնժամ հանեալ Արիստիպպոսի 'ի ծոցոյն զքսակ դրամոցն զոր ունէր, կեղծեաց համարել զայն, և մեղմով իմն թողացոյց անկանիլ 'ի ծով. և անդէն

առ նմին յոգւոց եհան հեծելով իբրու ընդ անկանիլ քսակին 'ի ձեռաց իւրոց. և դաշն ձայնիւ ասաց. Լաւ է՝ Արիստիպպոսի կորուսանել զինչս իւր, քան ընչիցն զԱրիստիպպոս։ Դարձեալ յայլում նուագի տեսեալ թէ ստրուկ նորա որ զհետ նորա ընթանայր, չկարէ երագել յընթացս իբրև զինքն, զի դրամ բազում բարձեալ ունէր, ասէ. 'ի բաց արկ զոր աւելին է, և տար զայն միայն զոր կարես։ Ովրատիոս 'ի դրելն վասն նոցա որք զամենայն շահ իւրեանց 'ի ճոխութիւնս դնեն՝ 'ի համեմատութիւն առնու ընդ նոսա զայս իմաստասէր։

Սիրելի էր Արիստիպպոսի հեշտին կեանք, և 'ի ծախս կերակրոց յոչինչ խնայէր։ 'Ի գնել նորա երբեմն կաքաւ մի ընդ յիսուն դրաքմայից, այր ոմն չհանդուրժեալ ընդ այն՝ կշտամբեաց զնա։ Ասէ Արիստիպպոս. թէ այդ կաքաւ դանկ մի ևեթ արժէր՝ ո՞չ արդեօք գնէիր։ Այո՛ գնէի, ասէ այրն. յաւել և Արիստիպպոս, և ես խուն ինչ դրեմ զյիսուն դրաքմայսն, քան եթէ դու զմի դանգ։ Յայլում նուագի՝ գնեաց խորտիկ համադամ ծանր գնով. այր ոմն որ անդ էր՝ մեղադրեաց նմա. և Արիստիպպոս ասէ. ո՞չ տայիր դրամն երիս ընդ այսր ամենայնի։ Այո՛,

ասէ այրն. Արիստիպպոս ասէ. ապա
չեմ ես այնչափ պորտաբոյծ՝ որչափ
դու ադահ ես։ Դարձեալ յորժամ
նախատէին զնա իբրև որկորեայ և շա-
տակեր, տայր պատասխանի եթէ հա-
մադամ կերակուրք խոտելի ինչ էին,
ոչ արդեօք լինէին մեծածախ կոչունք
յամենայն տօնս դից։ Նա և Պղատոն
ակդամ՝ որոյ ամենայն ինչ շքեղ էր՝
խրատեաց զնա երբեմն վասն զեղխու-
թեան. Արիստիպպոս ետ պատասխա-
նի. համարիցիս դու զԴիոնեսիոս այր
զգօն։ Այո՛, ասէ Պղատոն. իսկ արդ,
ասէ Արիստիպպոս, նա փափկակեաց
է քան զիս. ապա կենաց դիւրութիւն
ոչինչ արատէ զընթացս վարուց կե-
նաց։ Յաւուր միում Դիոգինէս մինչ-
դեռ բանջարս լուանայր ըստ սովորու-
թեան իւրում, ետես զԱրիստիպպոս
որ անցանէր ընդ այն, և ասէ ցնա, ե-
թէ շատացեալ էր քո բանջարովք որ-
պէս ես, ոչ դեգերէիր առ դրամբք
թագաւորաց։ Պատասխանի ետ Ա-
րիստիպպոս, եթէ և դու քաջ գիտէիր
զհնարսն կենցաղակից լինելոյ թագա-
ւորաց, լքանէիր արդեօք զբանջարդ
քո։ Մատոյց երբեմն Դիոնեսիոս ա-
ռաջի նորա երիս օրիորդս գեղեցիկս
յարքունեաց անտի, հրաման տուեալ՝
ընտրել զմին 'ի նոցանէ ընդ որս հա-

ձեսցի։ Արիստիպպոս ընկալաւ զերեսին համանդամայն. և ասէ. ընտրութիւնն չէ հաւաստի, ոչ անգիտանաս դու զաղէտսն որ խուժեցին առ ձախողակ ընտրութեամբն Պարիսի. երկուք կարեն այնչափ չար գործել, որչափ բարի ոչ առնէ մին ևեթ։ Տարաւ զնոսա մինչև 'ի գաւիթ տան իւրոյ, և անտի արձակեաց 'ի բաց։ Յայլում նուագի եհարց ցնա Դիոնեսիոս. զի՞ է զի յաճախ երթևեկեն իմաստասէրք 'ի տունս մեծամեծաց, և ոչ մեծամեծք առ իմաստասէրս. ասէ Արիստիպպոս. քանզի իմաստասէրք գիտեն որոց պէտս ունին. այլ ոչ նոյնպէս և մեծամեծքն։ Այսպիսի ինչ եհարց ցնա այլ ոմն. նա ետ պատասխանի. ապաքէն ճահաւոր են բժիշկք առ հիւանդս. սակայն ամենայն ոք կամի դարման տանել հիւանդի մանաւանդ, քան ինքնին զհիւանդութիւնն ախտանալ։

Աքանչելի իմն է՝ ասէր Արիստիպպոս գիտելն զեկավարել զկիրս բնութեան, այլ ոչ յարմատոց քանցել։ Ոչ են յանցանք վայելել 'ի բերկրանս՝ ցորչափ ոչ վարեսցի ոք 'ի գերութիւն նոցա. և յաղագս այսորիկ յորժամ այպն առնէին զնովաւ վասն յաճախելոյ նորա առ Լաիս պոռնիկ, ասէր. այո՛. ունիմ ես զնա. այլ ոչ

թէ և նա զիս ունիցի։ Մինչդեռ մտա-
նէր նա յաւուր միում 'ի տուն անդր
պոռնկին, ոմն յաշակերտաց նորա որ
ընդ նմայն էր՝ զամօթի հարաւ ընդ
այն. զգաց Արիստիպպոս զկրսն. և ա-
սէ. Բարեկամ, չէ ամօթ մտանել 'ի
տեղիդ յայդ, այլ ամօթ է թէ ոչ կա-
րասցես ելանել այտի։ Պողիքսենէս ի-
մաստասէր եկեալ երբեմն յայցելու-
թիւն նորա, և 'ի մտանելն անդ տե-
սեալ բազմականս ընթրեաց, և երա-
խանս պճնելոց, անդէն այլ յայլմէ
եղեալ սկսաւ բողոք ունել վասն այնր
տարապայման զեղխութեան։ Արիս-
տիպպոս եհարց քաղցրութեամբ եթէ
կամի՞ բազմել 'ի սեղան ընդ նոսա։
Պատասխանի ետ Պողիքսենէս. այո։
Եւ ո՞րպէս ասէ, Արիստիպպոս, ոչ դու
ա՞ր դ ևս զաղմուկդ յարուցեր. ոչ ար-
համարհէիր դու զբազմախորտիկ կո-
չունս, և զակումբս աղարտէիր. բայց
եթէ թերևս վասն աւելի ծախուցն ա-
սէիր։ Դէպ եղև երբեմն Արիստիպպո-
սի մաքառել ընդ Եսքինեայ. և այն-
պէս ցրտացեալ էր նոցա 'ի միմեանց,
մինչ յայնմ հետէ ոչ ևս տեսանել զի-
րեարս։ Յարուցեալ Արիստիպպոսի
գնաց առ Եսքինէս. և մինչև ցերբ,
ասէ, ո՞չ հաշտիցիմք ընդ իրեարս. կա-
միս զի ամենեքին ծաղր արասցեն զմեզ,

և պորտաբոյծք ծաղրելով զմեզ՝ խնդու-
թիւն շնորհեսցեն 'ի սեղանս նոցա առ-
որովք բաղմեսցին։ Եւ պատասխանի
Եսքինէս. այս մեծ է ինձ, և 'ի բովան-
դակ սրտէ յօժարամտեմ 'ի հաշտու-
թիւն։

Դիոնեսիոս բռնակալ ընթրիս տու-
եալ երբեմն մեծամեծաց իւրոց, 'ի
կատարել ընթրեացն հրաման եւ ա-
մենեցուն նոցա՝ երկայն հանդերձ ծի-
բանի զգենուլ, և կաքաւել 'ի մեծի
դահլճին։ Պղատոն ոչ կալաւ յանձին
զերսն, զի այր եմ, ասէ, զդեստ կանա-
ցի ոչ պատշաճէ ինձ։ Իսկ Արիստիպ-
պոս առանց ինչ ընդ բանս ածելոյ
զկաքաւն կաքաւեաց, և ասէ, զսոյն
առնեմք և 'ի տօնին Բաքոսի, և սա-
կայն չիք ինչ անդէն խէթ ապականու-
թեան վարուց, թէ այլուստ չդուցէ
պատճառ ապականարար։ Դարձեալ
յայլում նուագի աղերսէր Արիստիպ-
պոս զԴիոնեսիոս վասն միոյ 'ի կարևոր
բարեկամաց իւրոց. Դիոնեսիոս մեր-
ժեաց զնա, և ոչ լսէր խնդրուածոցն.
մինչև յոտս նորա անկանել Արիս-
տիպպոսի և թախանձել։ Եւ 'ի ստգը-
տանել ուրուսն զայն գործ նորա, ա-
սէ Արիստիպպոս. յանցուսեդ չէ իմ,
այլ Դիոնիսեայ, որոյ ականջք յոտսն
են։ Մինչդեռ էր նա 'ի Սիրակուսա,

Սիմոն փոխուգացի դանձապետ Դիոնիսեայ եցոյց նմա զհոյակապ ապարանս իւր, և ձեմ առեալ 'ի նմին՝ տայր նմա նայել ընդ սալայատակացն պատուականութիւն։ Արիստիպպոս հաղաց, և անդէն եթուք ընդ երեսս Սիմոնի. 'ի զայրանալ նորա, ետ պատասխանի Արիստիպպոս. բարեկամ ես ոչ տեսի ուրեք վայր աղտեղի ուր կարէի թքանել առաւել քան զերեսս քո։ Եւ՝ ոչք զսոյն, կամ զնմանն սորին Դիոդիանոսի տան. սակայն երկոքին իսկ բաւական էին 'ի դորձդ։

Յարհամարհել ուրուք զնա երբեմն և 'ի նախատել, մեկնեալ 'ի բաց գնաց անտի Արիստիպպոս. իսկ այրն պնդեցաւ զկնի նորա և աղաղակէր, գնա՛ աստի այր չարագործ։ Ետ պատասխանի Արիստիպպոս. այո՛ գնամ. զի կարողութի է քեզ թշնամանել զիս, այլ ինձ օրէն է ոչ լսել այնմ։ Էր երբեմն նմա անցանել ընդ ծով 'ի Կորնթոս քաղաք, յորում պահու եղև մրրիկ ուժգին. և Արիստիպպոս յահի մեծի կայր վասն մօտալուտ վտանգի նաւաբեկութեան. ոմն 'ի նաւորդացն խաղ արար զնովաւ և ասէ, մեք որ տգէտքս եմք՝ ոչինչ երկնչիմք. իսկ դուք իմաստասէրք զի՞ պակուցեալ էք։ Արիստիպպոս ասէ. ոչ թէ վասն կոր-

ստեան հոգւոյ երկնչիմք մեք, այլ զի մեծ խտիր է ընդ այն՝ զոր հասանէ մեզ կորուսանել։

Իբրև հարցանէին ցնա՝ զի՞նչ անջը-պետութիւն է ընդ այր իմաստուն և ընդ տգէտ. ասէր՝ պարտ է մերկել զերկաքանչիւրն 'ի հանդերձիցն, և այն-պէս մերկս յղել առ օտարս. որք ան-դէն փութանակի իմանան զայն։ Լա-ւագոյն դատէր լինել աղքատ քան տգէտ. վասն զի աղքատի ոչ պակասէ արծաթ. և ընդ հակառակն՝ տգիտի չէք բարեմարդութիւն, որով այնպէս լիճն է առ կիրթ մարդով, որպէս ամե-հի երիվար առ մարդելով։ Եւ եղև յա-ւուր միում ետ Դիոնեսիոս Արիս-տիպպոսի դրամ, և Պղատոնի գիրս. 'ի ստդտանել ուրուք զզանազանութիւն պարգևացն, սա ետ պատասխանի, ինձ պիտի արծաթ, և Պղատոնի գիրք։ Դարձեալ այլ օր խնդրեաց սա տա-ղանդ մի 'ի Դիոնեսիոսէ. և նա ասաց, հաւաստէիր դու ինձ թէ իմաստնոց չպակասէ դրամ. ետ պատասխանի Արիստիպպոս. դու այժմ տո՛ւր ինձ, և ապա քննեսցուք զիրսդ. և 'ի տալ նմա Դիոնեսիոսի, սա յաւել 'ի բանս իւր. իսկ արդ ո՞չ տեսանես՝ զի բնաւ չեմ կարօտեալ։ Եւ քանզի ստէպ էր երթ սորա 'ի Սիրակուսա, եհարց ցնա

Դիոնեսիոս, զի՞ գործել գաս աստ. ետ պատասխանի Արիստիպպոս. տալ քեզ զոր ունիմ, և փոխարէն ընդունել զոր դուդ ունիս։ Այլ 'ի մեղադիր լինել ումեք ցնա թէ լքեալ զՍոկրատ՝ ընթանաս առ Դիոնեսիոս, ասէ, ցորվայր կարօտէի իմաստութեան՝ առ Սոկրատէս գնայի, այժմ զի ընչից պէտք են ինձ, առ Դիոնեսիոս ընթանամ։ Ետես երբեմն զերիտասարդ զոմն մեծաբանեալ ընդ քաջավարժութիւն իւր 'ի լեզ. ո՞չ ամաչես, ասէ, պանծալ ընդ այդ գործ սնոտի. ո՞չ ապաքէն դլբինք լաւ ևս լուղին քան զքեզ։ Հարցաւ, զի՞նչ շահ կլիցեր յիմաստասիրութենէ. զայն՝ զի համարձակագոյն խօսիցիմ ընդ ամենայն մարդկան։ Եհարց այլ ոմն. զի՞նչ առաւելութիւն է ձեզ իմաստասիրաց քան զայլ մարդիկ։ Արիստիպպոս ասէ. այն՝ զի թէև ոչ գուցեն օրէնք, մեք հանապազ նոյն օրինակ կեցցուք։

Աղանդ կիւրենեան իմաստասիրութեանն 'ի բարոյականն ևեթ սերտ յօժարեալ էր, զոյզն ինչ միայն տրամաբանութեան հպատակէին. զանց առնէին զբնաբանութեամբ, քանզի անհնարին դատէին զայն 'ի խելամտել բովանդակ։ Համարէին թէ նպատակ ամենայն գործոց մարդկան՝ է բեր-

կրութիւն հաճոյականաց. ոչ պակաս-
սութիւն իմն 'ի ցաւոց, այլ բերկրու-
թիւն իսկապէս՝ շարժմամբ սահմա-
նեալ։ Երկու զանազան շարժմունս
դնէին 'ի հոգւոջ, զմին քաղցր՝ բեր-
կրեցուցիչ, զերկրորդն բուռն՝ ցաւե-
ցուցիչ. և զի ասէին ամենայն մարդիկ
ընդաբոյս ազդեցութեամբն յօժարեն
'ի մին, և խորշին 'ի միւսմէն, այս յայտ
իսկ ապացուցանէ թէ բերկրութիւն
հեշտացուցիչ՝ նպատակ է մարդոյ։
Զանցաւութիւնն սահմանէին քուն
իմն՝ ոչ հեշտացուցիչ, և ոչ ցաւեցու-
ցիչ։ Ոչ մեծ ինչ գրէին զառաքինու-
թիւն, այլ այնչափ միայն՝ զի սատար
լինի 'ի հեշտականս՝ որպէս դեղ օգ-
տակար առողջութեան։ Նպատակ
գործոց ոչ ասէին զերջանկութիւնն
լինել. զի նպատակ գործոց է 'ի մաս-
նական հեշտալիս. իսկ երանութիւն
լրումն է ամենայն հեշտալեաց. և ևս
մարմնոյ հեշտութիւնք դիւրազգացք
են քան զհոգւոյն. յաղագս այնորիկ
կիւրենեանք մեծապէս խնամ տանէին
մարմնոյ իւրեանց քան հոգւոյ։ Հաս-
տատութեամբ պնդէին թէ պարտ է
պահել զբարեկամութիւն միայն վասն
առ 'ի նոցանէ օգտին, իբրու զօգտա-
կար անդամս մարմնոյ։ Ասէին. չէք
ինչ 'ի մեզ արդար կամ անիրաւ,

վայելուչ կամ տարադէպ, այլ բո-
վանդակն այդպէս համարի ըստ օրի-
նաց և ըստ սովորութեան տեղեաց
տեղեաց։ Այր իմաստուն չպարտի
առնել ինչ անպատեհ վասն դիպուա-
ծոցն որ մարթին հանդիպել նմա։
Պարտ է նմա յամենայնի յերիւրել
զանձն ըստ օրինաց երկրին յորում
կայ, և խորշել 'ի վատութենէ անուան։
Դարձեալ՝ այս բանք էին նոցա. չէք
ինչ 'ի մեզ հաճոյական և անհաճոյ.
և ամենայն ինչ անուանի այդպէս՝
վասն նորութեանն և յաճախութեան,
կամ վասն այլոց պարագայից՝ որով
այն ամենայն քաղցրանայ մեզ կամ
տաղտկալի լինի։ Անհնարին է երջան-
կանալ մեզ բովանդակ յաստի կեանս,
քանզի 'ի ներքոյ եմք բազմադէմ տկա-
րութեանց և կրից, որք խափանեն
զմեզ 'ի վայելչից հեշտութենէ, նա և 'ի
վայելսն անդ աղմկեն։ Ո՛չինչ սատարեն
'ի հեշտութիւն ոչ ազատութիւն և ոչ
ստրկութիւն, ոչ ճոխութիւն և ոչ աղ-
քատութիւն, ոչ ազնուականութիւն
և ոչ անտոհմութիւն. քանզի յամենայն
վիճակի հնար է մարդոյ երջանկու-
թեամբ կեալ։ Իմաստնոյ չէ՛ օրէն ա-
տելութեամբ դնալ ընդ ումեք, այլ
ջանալ յօգուտ ամենեցուն. զամենայն
զգործս իւր՝ միայն յանձն իւր շրջես-

ցէ. քանզի չէ ոք արժանաւոր քան զնա
'ի ստացումն շահեկանաց, և ո՛չ ոք
քան զնա դերապատուեալ։ Ահա յայս
բովանդակի վարդապետութիւն Ա-
րիստիպպոսի և կիւրենականաց։

Էր Արիստիպպոսի դուստր մի Ա-
րետա անուն, որում առաջնորդեաց
յիմաստս վարդապետութեան իւրոյ.
և յաջողեաց նմա յառաջադէմ լինել
'ի նմին։ Նա ինքն Արետա հրահան-
գեաց զորդի իւր զԱրիստիպպոս զմա-
կանուանեալ Մետրոդիդատոս որ
վարժապետ եղև ամպարշտին Թէոդո-
րոսի։ Այս Թէոդորոս բաց 'ի կիւրե-
նական վարդապետութեանց՝ ձեռն
արկ ուսուցանել հրապարակաւ թէ
չկան աստուածք. բարեկամութիւնն
մոռացածին իմն է. քանզի բարեկամու-
թիւն չմարթի կալ 'ի մէջ անմտաց,
իսկ իմաստունն բաւական է անձին
իւրում, վասն որոյ չունի պէտս բարե-
կամաց։ Զէ արժան իմաստնոյ մատ-
նել զանձն 'ի վտանգս վասն իւրոց
հայրենեաց. հայրենիք նորա աշխարհս
է, և տարադէպ է մահու մատնել
զանձն վասն անմտաց բազմաց։ Օրէն
է գողանալ. զսեղանս կողոպտել, և
ընալ՝ երբ գործն յաջողեսցէ նմա.
քանզի յանցանք սահմանեալ են միայն
'ի կարծիս ռամկին, այլ իսկութեամբ

ոչ մի ինչ չար գոյ 'ի նմա։ Եւ հնար իսկ է գործել 'ի հրապարակի զոր ինչ միանգամ ժողովուրդն ամօթ համարի։

Յաւուր միում անկաւ 'ի վտանդ մահու ՅԱԹԷՆՈՍ յարիսպագոսն վասն յանդգնութեան իւրոյ. մինչև գետնաքարշ ձգել տանել զնա. այլ Դեմետրիոս Փաղերէոս թափեաց զնա։ Բնակեաց ժամանակս ինչ 'ի Կիւրենէ 'ի մեծի պատուի առ Մարիոսի։ Տարագրեցին զնա կիւրենացիք. որ 'ի վտարանդի ելանելն անտի, ասէ. ո՛չ գիտէք դուք զի՞նչ առնէք մերժելով զիս 'ի Լիբիոյ յաքսորս յԵլլադա։ ՊտղոմէոսԼագոս՝ առ որում բնակէր՝ յղեաց զնա հրեշտակութեամբ առ Լիւսիմաքոս. ընդ որում այնպէս յանդուգն խօսեցաւ, զի գործակալն Լիւսիմաքեայ որ յայնժամ անդ դտաւ՝ ասաց ցնա. կարծեմ ես թէոդորէ՝ զի զոր օրինակ ասես թէ չկան աստուածք, նոյնպէս խորհիս թէ չկան և թագաւորք։

Պատմէ Ամիլիկրատոս թէ այդ իմաստասէր 'ի մահ դատապարտեցաւ, և պատուհասն էր ըմպել զթոյն։

ԱՐԻՍՏՈՏԷԼ

Ծնեալ յառաջին ամի իններորդ ին-
ներորդ ոլիմպիադին. մեռեալ յերրորդ
ամի հարիւրորդի չորեքտասաներորդին.
'ի հասակի վաթսուն և երից ամաց ։

ՓԱՐՈԶԵՑԱՒ Արիստոտէլ
մին 'ի մեծանուն իմաստասիրաց հա-
մօրէն դարուց հնութեան. և անուն
նորա մինչև ցայսօր ժամանակի հոչա-
կեալ է յամենայն դպրոցս ։ Որդի էր
Նիկոմաքոսի բժշկի և բարեկամի Ա-
մինտասայ արքայի Մակեդոնացւոց,
և 'ի սերնդոց Մակաոնի թոռին
Ասկղեպիադեայ ։ Ծնաւ 'ի Ստագիրա
քաղաք Մակեդոնիոյ յառաջնում ա-
մի ղԹ ոլիմպիադին ։ Մեռան ծնողք
նորա 'ի մանկութեան նորա, և ինքն
անխնամ մնաց յորոց յանձն էր հոգ
դաստիարակութեան նորա ։ 'Ի պա-
տանեկութեանն անձնատուր եղև
յանձնդիւր կեանս և 'ի շուայտու-
թիւն, յորում վատնեաց զամենայն
ինչս իւր ։ Հպատակեաց զառաջինն
գործոյ զինուորութեան. այլ զի ոչ
զուգաւորէր այն բնաւորութեան իւ-

րում, գնաց 'ի Դեղփոս՝ խորհուրդ հարցանել ընդ պատգամախօսն։ Պատուէր եղև առ նա 'ի դաբիրայէն՝ գնալ ՅԱԹԷՆՍ, և աշակերտիլ իմաստասիրութեան։ Էր յայնժամ 'ի հասակի եօթնեւտասն ամաց։ Ուսաւ զամս քսան ՅԱկադեմիայն առ ոտս Պղատոնի, և զի ծախեալ էր յառաջնմէ զստացուածս իւր՝ միտ դնէր և 'ի տուր և առ վաճառուց դեղոց ոմանց ՅԱԹԷՆՍ՝ հայթայթել նովին զպարէնս կենաց պիտոյից։

Սակաւ ուտէր, և սակաւ ննջէր. եռանդն նորա յուսմունս այնպէս բորբոքեալ էր՝ մինչև զի վասն յաղթելոյ բռնութեան քնոյն՝ դնէր կոնք պղնձի առ մահճաքն, և յընկողմնելն՝ 'ի դուրս ձգէր յանկողնոյն զմի ձեռն իւր յորում ունէր գունտ երկաթի. որպէս զի 'ի շառաչմանէ անտի անկանելոյ գնտոյն 'ի կոնք անդր 'ի պահուն նիրհելոյ իւրոյ, զարթիցէ վաղվաղակի։ Պատմէ Լաերտիոս թէ ձայն նորա սուր էր, աչքն մանուանք, սրունքն նըրբին, և զի միշտ շքեղս զգենոյր։

Յաջողութիւն մտաց նորա գեր 'ի վեր էր յոյժ, և դիւրին էին նմա ամենայն խնդիրք դժուարինք։ Յառաջադէմ զարգացաւ 'ի դպրոցին Պղատոնի, և անուանի գտաւ քան զամենայն ա-

կադեմականս. որպէս զի ոչ մի ինչ խնդիր առնոյր հաստատութիւն յԱ-
կադեմիա՝ առանց հարցանելոյ զԱ-
րիստոտէլի կարծիսն, թէպէտ բազում
ուրեք տարաձայն գտանէր 'ի Պղատո-
նէ։ Ամենայն աշակերտակիցք նորա
իբրև ընդ այր ոք դերահամբաւ նայ-
էին ընդ նա. և ոմանք յօժարամիտ
ընդունէին զբանս նորա, զանց արա-
րեալ զվարդապետաւ իւրեանց։ Յայն-
ժամ տեղի տուեալ մեկնեցաւ անտի
Արիստոտէլ. ծանրացասուցեալ ընդ
այն Պղատոն, դատեալ զնա իբրև
ապստամբ և դասալիք, և բողոք ունէր
թէ աշակերտ իւր անկուշեաց զնա՝ իբ-
րև մտրուկ զմայր իւր։

Յղեցին աթենացիք զԱրիստոտէլ
հրեշտակութեամբ առ Փիլիպպոս ար-
քայ հայր Աղեքսանդրի. վասն այնր
հրեշտակութեան և գործոյ աթենաց-
ւոց եկաց ժամանակս ինչ 'ի Մակե-
դոնիա. և 'ի դառնալն յԱթէնս՝
գտանէ զՔսենոկրատէս գլուխ կա-
ցեալ յԱկադեմիա. յայնժամ 'ի միտ
առեալ զի այն աւագութիւն ընդ
բռամբ կայ այլոց, ասէ. ամօթ է 'ի
լռութեան կալ՝ մինչ խօսեսցի Քսենո-
կրատէս։ Հաստատեաց և ինքն նոր ու-
սուցն, ձեռն արկեալ 'ի նոր վարդապե-
տութիւն այլազգ 'ի պղատոնականէն։

Մեծահռչակ համբաւ Արիստոտելի վասն հմտութեանն յամենայն գիտութիւնս, և մանաւանդ յիմաստասիրութեան և 'ի քաղաքականութեան՝ խորհուրդ 'ի միտս արկ Փիլիպպոսի արքայի Մակեդոնացւոց՝ ընտրել զնա վարժապետ որդւոյ իւրում։ Էր յայնժամ Աղեքսանդր չորեքտասան ամաց։ Ընկալաւ Արիստոտել զհրաւէրն, և եկաց առ Աղեքսանդրի ամս ութ. որում ըստ պատմելոյն Պլուտարքոսի՝ ուսոյց իրս իրս թագուն զորս ոչ ուսուցանէր այլոց։ Պարապելն Արիստոտելի յիմաստասիրութիւն ոչինչ խափան արկանէր նմա յայլոց գործոց. քանզի բաժանորդ լինէր 'ի մատակարարութեան իրաց կարևորաց, և կցորդ էր ամենայնի որոց զայնու ժամանակաւ լինէին 'ի Մակեդոնիա։ 'Ի պատիւ նորա կրկին կանգնեաց Փիլիպպոս արքայ զՍտագիրա զհայրենիս իմաստասիրիդ որ ոտնակոխն էր յերեսաց պատերազմաց, և դարձոյց 'ի նոյն զամենայն բնակիչս, յորոց բազումք վարեալ էին 'ի գերութիւն, և այլքն ապրեալք փախստեամբ։

Հրաժարեալ Արիստոտելի յԱղեքսանդրէ դարձ արար յԱթէնս՝ ուր եգիտ ընդունելութիւն մեծ. վասն զի 'ի շնորհս նորա Փիլիպպոս արքայ բա-

զում երախտիս եցոյց աթենացւոց։ Ընտրեաց տեղի իմաստասիրութեան զ Լիկէոն անուանեալ տեղի յարուարձանս Աթենայ, յորում էին կարգաւ ծառատունկք 'ի զբօսանս։ Անդ հաստատեաց զնոր լսարան իւր, և զի սովորութիւն էր նորա յոլով անգամ ճեմելով դաս ասել աշակերտաց իւրոց, պատճառս ետ՝ ճեմական անուն կարդալ ամենայն հետևողաց նորա։ Ո՛չ յետ բազում ժամանակաց 'ի վերայ անցանելոյ՝ զհամբաւի հարաւ անուն Լիկէոնի առ խուռն ընթանալոյ մարդկան անդր 'ի տեղեաց տեղեաց ունկնդիր լինել բանից իմաստութեան նորա. որոյ անուն տարածեալ էր ընդ ամենայն Եղլադա։

Աղեքսանդր գործ 'ի ձեռս տուեալ էր Արիստոտելի հետամուտ լինել քննութեան բնաբանութեան. վասն որոյ հրամայեաց 'ի սպասաւորութիւն նորա որսորդս բազումս դաղանաց և ձկանց՝ զի որսացեալ յամենայն կողմանց տարցեն առ նա՝ յորոց 'ի զննութիւն աշխատասիրեսցէ. առաքեաց առ նա և հարիւր տաղանդ վասն առ 'ի նոյն կարևոր ծախուցն։ Յայնժամ 'ի վեր երևեցոյց Արիստոտէլ զբնաբանութեան և զբնաղանցութեան դիրսն իւր. իմացաւ զայն Աղեքսանդր՝

որ յայնժամ անցեալ էր յԱսիա. և զի ցանկայր նա ամբարհաւաճու-թեամբ յամենայնի առաջին լինել, տխրեցաւ յանձն իւր՝ ընդ այն, զի գի-տութիւն Արիստոտելի սփիւռ ծա-ւալի ընդ ամենեսին։ Ծանոյց նմա զխորհուրդ իւր, գրեալ նմա թուղթ ըստ այսմ օրինակի. „Աղեքսանդր առ Արիստոտէլ։ Ո՛չ բարւոք արարեր զի սփռեցեր 'ի ձեռս ամենեցուն զքո գիրս տեսական գիտութեանց. զի ոչինչ ճնաց մեզ գեր 'ի վերոյ զանցանել առ այլոսք, եթէ զոր առանձինն ուսուցեր մեզ, յածեսցի 'ի ձեռս ամենայն մարդ-կան։ Ցանկայի գիտել քեզ՝ զի յաւէտ խնդրելի էր ինձ դերապանծ գոլ քան զայլս 'ի գիտութիւնս իրաց բարձրա-գունից, քան 'ի մեծութեան իշխանու-թեան„։ Արիստոտէլ 'ի հաճել զմիտս թագաւորին՝ պատասխանի արար նմա՝ թէ այնպէս 'ի դուրս հանի զկրսդ՝ որ-պէս թէ չկցեմ հանեալ։ Մ'իսք բա-նիցս այն էր, թէ կարդ նրբախօս վար-դապետութեան իւրոյ՝ ամենեցուն չէ դիւրիմաց։

Ոչ ճնաց Արիստոտէլ ընդերկար 'ի շնորհս Աղեքսանդրի. անցին հակա-ռակութիւնք ընդ մէջ նոցա, զի պըն-դեալ 'ի բանս իւր զկողմն կալաւ ըզ-Կալիսթենեայ։ Այս Կալիսթենէս

թոռնորդի էր Արիստոտելի. զի մայր նորա՝ իւր թոռն էր։ Սնուցեալ էր զնա Արիստոտելի առ իւր, և խնամ կալեալ դաստիարակութեան նորա. և եղև 'ի թողուլ նորա զԱղեքսանդր յղեաց զսա ընդ նմա գնալ 'ի պատերազմ, և ջանասէր փութով ապսպարեաց զնա 'ի խնամս արքայի։ Բնաւորութիւն Կալիսթենեայ համարձակ էր 'ի խօսելն ընդ թագաւորին, և չէր ինչ մարդահաճոյ։ 'Նա ինքն արդել մակեդոնացւոց երկրպագել նմա իբրև աստուծոյ, որպէս սովորութիւն էր առնել Պարսից։ Աղեքսանդր որ ատելութեամբ էր ընդ նմա սակս կամակորութեանն 'ի բանս իւր, ըստ յաջողել ժամուն՝ վրէժ խնդրեաց 'ի նմանէ՝ սպանեալ զնա։ Արկ զնա յուխտ դաւաճանութեանն Երմողայոսի աշակերտին Կալիսթենեայ, և ոչ թոյլ ետ նմա 'ի հանդէս հանել զփաստ անմեղութեան իւրոյ. արկ զնա կերակուր առիւծուց. ըստ այլոց՝ 'ի կախաղանի անշնչացոյց, կամ 'ի տանջանս։

Ընդ մահ Կալիսթենեայ 'ի խոր խոցեցաւ Արիստոտել, և Աղեքսանդր յամենայնի ջանահնար եղև ընկճել զնա. մեծացոյց զՔսենոկրատէս, և յղեաց նմա պարգևս բազումս, ընդ

որ մախացաւ Արիստոտէլ։ Նա և ո-
մանք ստգտանեն զնա թէ կցորդ էր 'ի
նենգութիւն դաւոյն Անտիպատրոսի,
և թէ ինքն հնարեաց զթոյնն, որով
ասեն սպանաւ Աղեքսանդր։

Թէպէտ և յամենայնի անդրդուելի
էր Արիստոտէլ, սակայն և ուրեք թե-
րի գտաւ 'ի հաստատութենէն իւրմէ։
Յետ ժամանակաց 'ի վերայ անցանե-
լոյ՝ լիք եթող զուսումնարանն, և
գնաց առ Երմիանդ բռնաւոր ատար-
նացւոց. ոչ ոք հաւաստէ զպատճառ
այսր ճանապարհորդութեան նորա,
ումանց հաճոյ թուեցաւ պատճառս
իմն 'ի մէջ բերել արձակերասան կե-
նաց։ Ամուսնացաւ ընդ քեռ կամ
ընդ հարճի այնր թագաւորի. այնպէս
իմն 'ի գերութիւն գրաւեցաւ չարա-
չար ախտիւ 'ի սէր այդր կնոջ՝ մինչև
զոհս մատուցանել նմա, զոր օրինակ
առնէին աթենացիք դիցն Դեմետրի
Եղիւսինեայ. և յօրինեաց նուագս գո-
վեստից 'ի պատիւ Եւմիանդեայ 'ի շը-
նորհս երախտեաց նորա, որ զամուս-
նութիւնն զայն թողացոյց նմա։

Տրոհեաց Արիստոտէլ զիմաստասի-
րութիւն 'ի գործնական և 'ի տեսա-
կան։ Գործնական է որ ուսուցանէ
մեզ զճշմարտութիւնս պատկանաւորս
'ի կարգաւորել զներգործութիւնս

հոգւոյս մերոյ, իմա՛ զտրամաբանու-
թիւն. և որ աղդէ մեզ կարևոր սկզբ-
բունս 'ի պէտս քաղաքական կենաց,
այն իսկ է բարոյական և քաղաքակա-
նութիւն: Իսկ տեսական իմաստասի-
րութիւն է, որ յայտ բերէ տեսական
ճշմարտութիւնս, զորօրինակ բնա-
զանցութիւնն է և բնաբանութիւն:
'Ի բնաբանութեան անդ երիս դնէր
սկզբունս իրաց բնականաց. պակա-
սութիւն, նիւթ և տեսակ: Առ 'ի ցու-
ցանել թէ պարտ է զպակասութիւնն
դասել ընդ սկզբունս՝ ասէ, թէ նիւթն
յորմէ բաղադրի ինչ՝ հարկ է զի չունի-
ցի տակաւին զտեսակ այնր իրի. զոր օ-
րինակ՝ նիւթն յորմէ կազմի սեղան,
հարկ է զի չունիցի զտեսակ սեղանոյ.
իմա՛ մինչև եղեալ սեղանոյ՝ նիւթն
այն յորմէ կազմի՝ ոչ իցէ սեղան:
Զպակասութիւնն ոչ դնէ սկիզբն բաղ-
կացութեան մարմնոց, այլ իբրև ար-
տաքին սկիզբն արտադրութեան նո-
ցուն. իբր զի արտադրութիւն է փո-
փոխութիւն իմն՝ որով նիւթն անցա-
նէ 'ի վիճակէն զոր ոչն ունէր՝ յայն
զոր ստանայ. օրինակ իմն՝ տախտակք
որք վի յառաջն չէին սեղան, արդ
սկսանին լինել սեղան:

Զնիւթն կրկին օրինակաւ սահմա-
նէ Արիստոտէլ. յորոց մին որ պակա-

սական կամ հրաժարական է, այս է. Նիւթն առաջինն, ասէ, ոչ գոյացութիւն է, ոչ քանակութիւն, ոչ որակութիւն, և ոչ այլ ինչ։ Այսպէս ըստ նորա՝ որպէս թէ նիւթն փայտի ոչ քանակութիւնն է, ոչ ձևն, ոչ գոյնն, ոչ հաստատութիւնն, ոչ ծանրութիւնն, ոչ պնդութիւնն, ոչ ջորութիւնն, ոչ խոնաւութիւնն, ոչ հոտն, և ոչ այլ ինչ պատահումն որ 'ի փայտի անդ։ Երկրորդ սահմանն հաստատական է կամ թէ ասել՝ իսկական, բայց ոչ աւելի ինչ իմացուցանէ քան զառաջինն. ասէ. Նիւթն է ենթակայ յորմէ բաղկանայ իմն. և յոր լուծանի յետոյ։ Խնդրելին այն է, որ իցէ այդ նախկին ենթակայ յորմէ բաղկանայցեն իրք բնութեանն։

Դարձեալ նա ինքն Արիստոտէլ վարդապետէ թէ առ 'ի կազմութիւն բնական մարմնոյ՝ բաց 'ի նիւթոյ խնդրի և այլ սկիզբն. իմա՛ տեսակ։ Կարծեն ոմանք թէ դովին իմանայ Արիստոտէլ զդասաւորութիւն մասանց. այլք պնդեն, թէ յայդմ դնէ նա էակութիւն իմն 'ի գոյ ելեալ՝ ամենայնիւ զատուցեալ 'ի նիւթոյ. զոր օրինակ յաղալ ցորենոյն. 'ի վերայ գայ նմա նոր տեսակ գոյացուցիչ՝ որով ցորեանն փոխարկի յալիւր. և յորժամ խառ-

նեսցես ջուր ընդ ալեր, ամենայնն 'ի մի զանգուած բոլորի, յայնժամ հասանէ 'ի վերայ նորա այլ տեսակ գոյացուցիչ, որ զալիւրն և զջուր 'ի խմոր փոխէ. և յեփելն հրով զայն խմոր՝ այլ տեսակ դարձեալ գայ 'ի վերայ, որ զեփեալ խմորն առնէ հաց։

Այսպիսի գոյացուցիչ տեսակս դնէ յայլ ամենայն բնական մարմինս. զոր օրինակ յերիվարն բաց յոսկերաց, 'ի մսոյ, 'ի ջղաց, յուղղոյ, յարենէ որ շուրջ եկեալ ընդ երակս և ընդ նեարդս սնուցանէ զամենայն մասունսն, և բաց յոդւոց կենդանութեան՝ որք են սկզբունք շարժման, ընդունի այլ տեսակ գոյացուցիչ՝ զոր ասէ լինել հոգի երիվարին։ Պնդէ հաստատութեամբ 'ի բանս իւր թէ այս կարծեցեալ տեսակ ոչ 'ի նիւթոյ եղանէ այլ 'ի կարողութենէ նիւթոյն. էակ է զատուցեալ 'ի նիւթոյ, որոյ ոչ մասն է և ոչ հանգամանք։

Կարծիք են Արիստոտելի թէ ամենայն մարմինք երկրայինք կառուցեալ են 'ի չորից տարերաց. իմա 'ի հողոյ, 'ի ջրոյ, յօդոյ և 'ի հրոյ։ Հող և ջուր ծանունք են. զի ձգտին միաւորիլ 'ի կենդրոն աշխարհիս. և ընդ հակառակն՝ օդ և հուր զի հեռագոյն ձգին 'ի սմանէ, վասն որոյ թեթևք են։ 'Ի վե-

բայ ջրից այսոցիկ տարերաց յաւել և զհինգերորդն. յորմէ յօրինեալ ասէր զերկնայինս ամենայն, և զշարժումն նորա շրջաբերական առդնէր։ Կարծեաց թէ 'ի վերք քան զօդս ընդ պարունակաւ լուսնի գուցէ կամար հրեղէն՝ յոր ելանէ և գումարի հուրն, ըստ օրինակին որով վտակք և գետք հոսեն 'ի ծով։

Վասն նիւթոյ կարծիք են Արիստոտելի թէ յանհունս բաժանիցի. տիեզերք լի է բովանդակ, և չիք բնաւ տեղի դատարկ։ Աշխարհս յաւիտենական է. չեղև երբէք առաջին սկիզբն մարդկեղէն ծննդոց. զի թէ եղև ոք նախաստեղծ մարդ՝ 'ի հարկէ, ասէ, պարտ էր ծնանել նմա առանց հօր և մօր, որ է անհնարին։ Զնոյն նոյնպէս իմաստասիրէ և վասն թռչնոց, անմարթ է, ասէ, թէ եղեալ իցէ ձու առաջին սկիզբն թռչնոց, և կամ թռչուն առաջին սկզբնաւորիչ ձուոց. քանզի թռչուն 'ի ձուոյ ելանէ, և ձու 'ի թռչնոյ. և այսպէս կարդ ըստ կարգէ վերոտնէ, առանց դնելոյ առաջին սկիզբն։ Նոյնօրինակ է մտածութիւն նորա և յաղագս այլում ամենայնի եղելոյ 'ի տիեզերս։ Անապական դնէ զերկին, և թէպէտ որ ինչ գուցէ ընդ լուսնիւ 'ի ներքոյ է ապականութեան,

այլ մասունք նոցա բնաւ ոչ սպառին, փոփոխեն զտեղին ևեթ. 'ի մնացուա-
ծոյ միոյն այլ իմն յօրինի. և այսպէս յօրինուած տիեզերաց միշտ մնայ նոյն։
Երկիրս 'ի կենդրոն կայ տիեզերաց, և Լաւն առաջին շարժէ զերկինս զա-
ռանցիւք իւրովք 'ի ձեռն դերաբուն ոգւոց առ 'ի նոյն սպասաւորութիւն
հրամայելոց։ Յաւելու դարձեալ Ա-
րիստոտէլ, թէ որ ինչ այժմ ծած-
կեալ է ընդ ջրով ծովու՝ կանխաւ եր-
կիր հաստատուն էր, և այժմու հաս-
տատուն երկիրս ողողեսցի երբեմն յե-
ռեսաց ջուրց։

Զպատճառ այսր ամենայնի առնու
'ի փորձոյ՝ նայեցեալ ընդ այն՝ զի գետք
և հեղեղատք ձգեն տանին հանապազ
աւազ և հող, որով աճեն ծովափունք,
և ծով նուազէ անզգալի օրինակաւ.
այս յեղափոխութիւն ցամաքի 'ի ծով
և ծովու 'ի ցամաք՝ սկսեալ և լինին 'ի
բազում դարուց հետէ։ Յաւել և զայն,
թէ ընդ բազում վայրս մէջերկրեայս և
'ի բարձունս՝ եթող ծով խեցեմորթս
'ի մեկնել իւրում անտի. և 'ի պեղել
զերկիր գտանին խարիսխք և բեկորք
նաւաց։ Ովիդիոս 'ի Պիւթագորաս
հանէ զդոյն կարծիս։

Արդ յայտնի երևի 'ի բանից աստի՝
դիտաւորութիւն մտաց Արիստոտելի՝

թէ այս ամենայն փոփոխութիւնք ծո-
վու 'ի ցամաք, և ցամաքի 'ի ծովք որք
լինին անդադար օրինակաւ և ընդ ժա-
մանակս դարուց բազմաց՝ եղծանեն
զիշատակ անցից անցելոց։ Եւ ևս,
ըստ հասանել ունել աղգի աղգի պատ-
ճառաց՝ 'ի մոռացօնս լինին և արհ-
եստք։ Պատահարք այդպիսի՝ է՛ զի
ժանտախտ է, կամ պատերազմ, ան-
պտղութիւն, սասանութիւն երկրի,
և աղէտք անհնարինք՝ որք ծախեն և
սպառեն զամենայն մարդ գաւառին,
թէ ոչ մաղապուր անկցին ոմանք յա-
նապատս. յոր կեան վշտօք չարչարա-
նաց, և անդ ծնանին որդիս, որք ըստ
հոլովել ժամանակաց մշակեն զերկիր,
և արհեստս ճարտարամտեն։ Եւ սո-
վին օրինակաւ նոյն կարծիք խորհրդոց,
և նոյն արհեստ կրկին անդամ դառ-
նան և նորոգին։ Այսպէս 'ի վե-
րայ բերէր իմաստասէրս, թէ առ
այս ամենայն յեղափոխ այլայլու-
թեամբք՝ կազմած տիեզերացս անա-
պական մնայ։

Զեռն արկ Արիստոտէլ 'ի խորա-
զնին քննութիւն այնր ամենայնի որ
ինչ միանդամ երջանկութիւն շնորհէ
մարդկան յաստի կեանս։ Նախ հերքէ
զկարծիս հեշտասիրաց, որք 'ի մարմնա-
պարար փափկութիւնս սահմանեն զեր-

ջանկութիւն կենաց։ Ասէ, առ այնու զի հեշտութիւնք արագավախճան են, տհաճութիւն 'ի վերայ բերեն, տկարացուցանեն զմարմին, և ողջոյն իսկ զմարդ վարակեն ապշութեամբ։

Յետ այնորիկ մերժէ և զփառասիրացն հետապնդութիւն՝ որք 'ի պատիւս բովանդակէին զերջանկութիւն, և առ 'ի ժամանել 'ի նոյն ձեռն 'ի գործառնէին յամենայն տարադէպ հնարս։ Ասէ, պատիւն 'ի պատուողն է. և թէ՝ փափաքեն ամբարտաւանք ընդունել մեծարանս 'ի փոխարէն առաքինութեանց՝ զոր որպէս թէ ունիցին, ապա ուրեմն յաւէտ յառաքինութիւնս ամրացեալ է երջանկութիւն, և ոչ թէ 'ի պատուի, որ և չէ իսկ 'ի մեզ։

Դարձեալ ընդոտնէ զարծաթասէրս՝ որք զերջանկութիւնն 'ի ճոխութեան համարէին։ Ճոխութիւնք, ասէ, ինքնին չեն փափաքելի, և հէգ թշուառական գործեն զայրն որ ունի զնոսին, և խիթայ 'ի կիրառութենէն. փոխանակ զի պարտ էր 'ի վար արկանել և բաշխել զնոսին՝ զի օգուտ մատակարարեսցեն. վասն զի զերջանկութիւնն 'ի հաստատուն իրս արժան է խարսխել, որով պահպանեսցի։

Յետ այսր ամենայնի յայն ապաս-

տան առնէ Արիստոտէլ զվարդապետութիւն իւր, թէ երջանկութիւնն սահմանի 'ի կատարելութիւն մտաց մերոց և 'ի կատարումն առաքինութեանց։ Դարձեալ պատուականագոյն գործողութիւն մտաց մերոց՝ է հետազօտութիւն իրաց բնականաց, երկնի, աստեղաց, համօրէն բնութեան. և ևս առաւել՝ առաջին Էակին։ Սակայն հանդերձ այսու ամենայնիւ խմաստասիրէ թէ անհնարին է բովանդակութեամբ երջանկանալ մինչև ստացեալ զոր ինչ կարևորն իցէ առ իւրաքանչիւր վիճակ կենաց. քանզի առանց այնր՝ դժուարին ուրեմն է միտ դնել 'ի զննութիւն իրաց պատուականաց. և ոչ իսկ հնարաւոր է գործել զառաքինութիւն։ Օրինակ իմն. չկարեմք բարերարել բարեկամաց. քանզի ընդ մեծագոյն հեշտութիւն աստի կենացս համարեալ է՝ բարի առնել որոց սիրենն զմեզ։ Այսպէս բովանդակէ խմաստասիրաբար, թէ երջանկութիւն յերիս իրս սահմանի, 'ի հոգեղէն բարիս, իմա՛ խմաստութիւն, զգօնութիւն. 'ի մարմնեղէնս, որք են գեղեցկութիւն, զօրութիւն, քաջողջութիւն. և 'ի շնորհս բաղդի. այն է՝ ճոխութիւն և ազնուականութիւն։ Ասէ՝ առաքինութիւն ևեթ

ոչ է ձեռնհաս երջանիկ առնել զայնոսիկ որք կարօտ իցեն կարևոր բարեաց մարմնոյ և բաղդի. և հիգացեալ է այր իմաստուն թէ կարօտ մնասցէ յիրաց աստի։ Հաւաստէ առ այսոքիւք թէ ախտք իւրաքանչիւր ձեռնհաս են 'ի թշուառութիւն խոնարհել զմարդ, և այր յօրացեալ փափկացեալ, որում յաջողեալ իցէ յամենայնի, ոչ երջանկանայ ցորչափ զհետ ախտից զակատեալ իցէ։ Իմաստունն չէ՛ աղատ ամենայնիւ 'ի խռովութեանց հոգւոյ, թէպէտ և փոքու վարակեալ։ Առաքինութիւնք և ախտք ոչ յամենայնի ներհականք են ընդ իրեարս, քանզի 'ի մի և 'ի նոյն մարդ պերճացեալ արդարութեամբ և զգօնութեամբ, երբեմն բուսնեալ դադարէ հեշտախտութիւն։

Յերիս տեսակս զատուցանէ զբարեկամութիւն. աղգականութեան, յօժարամտութեան և հիւրընկալութեան։ Զգեղեցիկ անուանեալ ուսմունսն պատկանաւորս կարծէր առաքինութեանց, և զայն մեծապէս մխիթարութիւն դնէր աւուրց ծերութեան։ Դաւանէր ընդ Պղատոնի զառաջին Էակն՝ ամենայնի նախախնամ։ Ամենայն գաղափարք իրաց զորս ընդունին միտք՝ 'ի զգայութեանց մատակարարին. յաղագս այնորիկ կոյրն

չմարթի իմանալ զերանգս. և ոչ խուլն զձայն։

'Ի քաղաքականութեան գիրս իւր՝ զմիահեծան տէրութիւն գեր 'ի վերոյ դնէ քան զայլ ամենայն վիճակ պետութեանց, զի յայլս բազումք են բաժանորդք 'ի գործ իշխանութեան. զոր օրինակ թէ գունդ զօրու առաջնորդեալ 'ի միոյ միայնոյ քաջընտիր հրամանատարէ՝ լաւ է քան զառ 'ի բազմայ հրամայեալն, զնոյն է իմանալ և վասն տէրութեանց։ Այն ինչ հրեշտակք և հրամանատարք բազմիշխան պետութեան ժամավաճառ լինիցին 'ի ժողովել և 'ի խորհիլ, թագաւոր ինքնիշխան՝ ամբարձաւ յաթոռն, և զխորհեալն տարաւ 'ի գլուխ։ Գործակալք բազմիշխանութեան ակնարկեն իսկ ոչ 'ի վզեան տէրութեանն, շատ է ճոխանալ նոցա. նախանձու մաշին ընդ իրեարս. և անտի հերձիք, մինչև կործանումն 'ի վերայ բերել տէրութեան. և այն զի 'ի միապետութեան՝ ամենայն յոյս շահու թագաւորին ակնարկէ յօգուտ պետութեան իւրոյ, և աշխարհն ողջոյն բարգաւաճ ծաղկազարդէ։

Հարցաւ երբեմն Արիստոտէլ, զի՞նչ շահին ստախօսք. ետ պատասխանի. զայն՝ զի ոչ ոք հաւատայ նոցա, թէև զճշմարիտն խօսիցին։ Իբրև այր ոմն

մեղադիր լինէր նմա՝ փոխանակ զի ետ
ողորմութիւն առն ուրումն վատթա-
րի. ասէ, ոչ զի չար է՝ եղէ նմա կարե-
կից, այլ զի մարդ է։ Այս էր խրատ
նորա առ բարեկամն և աշակերտն.
թէ գիտութիւն այնպէս է առ հոգի՝
որպէս լոյս առ աչս. որոյ թէ դառինք
են արմատք, քաղցրահամ են պտուղք։
Առ անդամ մի յուզեալ 'ի ցասումն
ընդդէմ աթենացւոց, նախատէր ըզ-
նոսա, զի գտեալ զօրէնս, առ նմին և
զցորեան, բովանդակ յոյս նոցա 'ի ցո-
ռեանն էր, զանց արարեալ զօրինօք։
Իբրև հարցաւ թէ ո՞ր այն է որ փու-
թով եղծանիցի. ետ պատասխանի.
Երախտագիտութիւն։ Իսկ զի՞նչ յոյսն.
ասէ. Երազ առն զարթուցելոյ։ Եղև
երբեմն Դիոգինեսի մատուցանել նմա
թուղ մի. քաջ խելամուտ լեալ Ա-
րիստոտելի զի 'ի չառնուլ իւր զպտուղն՝
պատճառս տայ ծաղու բանից Դիո-
գինեսի, ընկալաւ զայն, և ասէ ժպտե-
լով. կորոյս Դիոգինէս և զթուղն և
զոր կամէր առնել նովաւ։ Երեք իրք
են, ասէ, կարևորք մանկանց, աշխոյժ
մարդութիւն և խրատ։ 'Ի հարցանել
ոմանց, զի՞նչ խտիր է ընդ իմաստունս
և ընդ տգէտս. որ ինչ, ասէ, ընդ կեն-
դանիս և ընդ մեռեալս։ Գիտութիւնն,
ասէր, զարդ է 'ի յաջողուածս, և ա-

պաւէն 'ի ձախողակս։ Որք միանգամ բարիոք դաստիարակեն զմանկունս՝ առաւելագոյն իրաւամբք հայր անուանին նոցա, քան որք ծնանին զնոսա. քանզի ծնողք կեանս միայն ետուն նոցա. իսկ վարժապետք զբարիոքն կեալ։ Գեղեցկութիւն՝ յանձնարարութիւն է ազդողագոյն քան զամենայն նամակ։ Եհարց ոմն ցնա՝ թէ զի՞նչ արժան է դործել աշակերտաց նորա առ 'ի բարիոք յառաջադիմութիւն. ետ պատասխանի. նկրտել պարտ է՝ ժամանել յառաջացելոց, և ոչ մնալ որոց զկնի դայցեն։ 'Ի պանծալ ուրուք թէ ծնունդ է մեծի քաղաքի. ասէ Արիստոտէլ, ոչինչ է բանդ. զայն մտածեա՝ թէ արժանի՞ ի՛ցես քաղաքացի լինել մեծի քաղաքի։

Ակնարկեալ Արիստոտելի երբեմն ընդ կեանս մարդկան՝ ասէր, են մարդիկ որք ամբարեն ճոխութիւն անյագ ցանկութեամբ՝ որպէս թէ անմահք լցեն. և այլք վատնեն զոր ունին, իբրև թէ առ վաղիւ մեռանիցին։ Հարցեալ. զի՞նչ է բարեկամ. ասէ. Մի հոդի յերկուս մարմինս։ 'Ի հարցանել ուրուք ցնա, ո՞րպէս վարեսցուք ընդ բարեկամս մեր. ետ պատասխանի Արիստոտէլ, որպէս կամիմք վարել այլոց ընդ մեզ։ Հոգւոց հանէր բաղում

անդամ: Ո՛վ բարեկամք իմ. չէք ոք բա-
րեկամ յաշխարհի: Ի՝ հարցանել ու-
րուք ցնա. զի՞ է զի դեղեցիկ մարդիկ
հաճոյ թուին մեզ, և ո՛չ տգեղք. ասէ,
զառն կուրացելոյ հարցումն հարցա-
նես ընդ իս: Իբրև հարցեալ լինէր,
զի՞նչ օգուտ կիթեցեր յիմաստութենէ.
տայր պատասխանի. առնել յօժարու-
թեամբ զայն ամենայն, զոր այլք ՝ի
հարկէ առնեն առ ահի օրինաց: Ա-
ւանդեն թէ մինչ բնակէր Արիստոտէլ
յԱթէնս՝ ընտանի էր օրինաք բարեկա-
մութեան առն ուրումն հրէի իմաստ-
նոյ, յորմէ ուսաւ բովանդակ զգիտու-
թիւն և զկրօնս եգիպտացւոց, զոր
այլք զայնու ժամանակաւ երթային
ուսանել յԵգիպտոս:

Յետ զամն երեքտասան ուսուցանե-
լոյ Արիստոտելի ՝ի Լիկէոն մեծապա-
տիւ շքով, Եւրիմիդոն քուրմ Դեմե-
տրեայ դից ամբաստան եղև զնմանէ
իբրև գործօն ամբարշտութեան լինել.
ահ արկ ՝ի սիրտ Արիստոտելի յիշա-
տակ աղետից Սոկրատայ, վասն որոյ
եդ ՝ի մտի տարադնաց մեկնիլ յԱ-
թենայ: Գնաց ՝ի Քակիս Եւբէոյ, (որ
այժմ Էյրիպօզ): Ըստ բանից ոմանց՝
մեռաւ առ վշտաց սրտին վասն ոչ բո-
վանդակ ՝ի վերայ հասանելոյ պատճա-
ռաց տեղատութեան և մակընթացու-

թեան որ առաւելու 'ի նեղուցն եւ-
բէական։ Եւ՛ն որք 'ի վերայ յաւելուն՝
թէ գահավէժ կորեաւ 'ի ծով անդր, և
ասաց յանկանելն. թո՛ղ ընկլցէ զնս
ծով, փոխանակ զի ես նմա չեղէ հա-
սու։ Այլք դարձեալ հաւաստեն թէ
մեռաւ 'ի խիթս ցաւոց սաստկու-
թեան՝ 'ի հասակի վաթսուն և երից
ամաց, երկու ամաք զկնի մահու Աղեք-
սանդրի։ Ստագիրացիք կանգնեցին
նմա սեղան իբրև աստուածոյ։

Եթող Արիստոտէլ 'ի մահուն իւ-
րում զամենայն զգիրս յօրինեալս իւր
'ի Թէոփրաստոս. 'ի նմանէ անցին առ
Նելէոս ոմն և առ ժառանգս նորա.
որք խիթացեալ թէ մի արդեօք բռնի
առնուցուն զայնս 'ի նոցանէ Թագաւ-
որք Պերգամոնի՝ և դիցեն 'ի մեծի
դրատան իւրեանց՝ զոր կառուցեալ էր
նոցա, թաղեցին ընդ հողով, ուր ա-
պականեցան ըստ բազում տեղեաց։
Յետ ամաց հարիւր և երեսնից գտան
և վաճառեցան Ապելլիկոնի ումեմն
տէացւոյ, որ զպակասորդսն և զապա-
կանեալսն լրացոյց ըստ իւրոց քմաց։
Նոյնպէս արար յետոյ և Տիւրաննիոն
քերական՝ որում յանձն արար զայնս
Սիլլա դիկտատոր հռովմայեցի, որ
յԱթենայ տարաւ զգիրսն զայնոսիկ
'ի Հռովմ։ Զայս ամենայն Անդրոնի-

կոս հռոդացի կարդաւորեալ 'ի լոյս
եհան. որ յետ դասաւորելոյ զտրամա-
բանութիւնն, զբարոյականն և զբնա-
բանութիւն, որ ինչ ճառք յաւելան
անտի յաղագս էակաց, և չգիտելով
թէ յինչ կարգ դասաւորեսցէ, յա-
րեաց 'ի բնաբանութիւնն, մակագիր
եդեալ՝ Յետ բնաբանականաց. կամ
ըստ յոյն ձայնի Մէդադաֆիզիգա.
յորմէ ձայնդ Մէդաֆիզիգա, որ այժմ
նշանակէ զայն մասնն իմաստասիրու-
թեան որ աւանդէ յաղագս հոգեղէն
գոյացութեանց։

Արիստոտէլ արար կտակ 'ի մահուն
իւրում, որոյ կատարիչ եղև Անտի-
պատրոս։ Եղև նորա ուստր մի Նիկո-
մաքոս անուն, և դուստր մի՝ զոր առ
իւր 'ի կնութիւն թոռն Դեմարատոսի
արքայի Լակեդեմոնացւոց։

ՔՍԵՆՈԿՐԱՏԷՍ

Յաջորդեաց զՍպեւսիպպոս յառաջ-
նորդութիւն պղատոնեան դպրոցին յեր-
կրորդ ամի հարիւրորդ տասներորդ
ողիմպիադին. կալաւ զայն ընդ ամս
քսան և հինգ. մեռաւ յերրորդ ամի
հարիւրորդի վեշտասաներորդի ողիմ-
պիադին։

Ընդ քաջանուն իմաստասէրս
նախնոյն Ակադեմիայ համարեալ է
Քսենոկրատէս՝ առ զդօնութեան, ի-
մաստութեանն և անարատ զգաստու-
թեան։ Քաղկեդոնացի էր, որդի Ա-
գաթենորի. անդստին 'ի պատանեկու-
թենէն աշակերտեցաւ Պղատոնի, յոր
յարեալ էր 'ի սերտ սրտէ. զի դնաց
ընդ նմա 'ի Սիկիլիա՝ մինչև յարքու-
նիս Դիոնեսիոսի բռնակալի։ Յաջո-
ղակ էր 'ի ժրութեան մտացն, խորա-
զնին, այլ յուշիկ։ 'Ի զուգակշռել զնա
Պղատոնի ընդ Արիստոտելի՝ ասէր
թէ միոյն սանձ պիտի, և երկրորդին
խթան։ Ասէր երբեմն և ընդ կատակս.
լծեմ ես զայս էշ ընդ այնմ ձիոյ։ Սա-
կայն բնաւորութիւն վարուց Քսենո-

կրատայ ծանր էր և խիստ. մինչև ընդ խաղ ասել ցնա Պղատոնի. Երթ Քսենոկրատէս՝ աղաչեմ զքեզ՝ երթ զոհեա աստուածուհեացն Շնորհաց, Հանապազորդէր յԱկադեմիայն, և անդ մնայր ցանգ։

Յանցանել իւրում երբեմն ընդ փողոցս Աթենայ՝ երիտասարդք խենէշք սպասեալք մնային նմա՝ վշտագնել և տառապեցուցանել զնա։ Հանդուրժեաց նա դժնդակ անցից, լարեալ խաբէութեանց, և հրապուրիչ հնարագիտութեանց։ Արութեամբ քաջութեամբ սանձ արկ նա եռանդեան կրից իւրոց. և գիտաց 'ի դերև հանել զբռնամարտիկ փորձանսն ղլարեալսն 'ի կախարդասար պոռնկէն Փրինեայ՝ որոյ գուն 'ի վերայ եդեալ էր յաղթել անպարտելւոյն Քսենոկրատեայ։ Յաւուր միում մինչ առաւել քան զսովորականն արբեալ էր նորա. եմուտ առ նա վատշուէրն. և թէպէտ բաղում ժամս մնաց առ նմա՝ այլ ոչինչ յաջողեաց յանօրէն խորհուրդս իւր։ Այնուհետև ամօթ համարեալ անձին կնոջն՝ զի վստահութիւն իւր հողմոյ ցնդեցաւ, խորհուրդ կալաւ ջնջել զնախատինսն դրուագօք ամօթալի բանից՝ որք սովորեալ զէնք են ապիկարի և հիգացելոյ։

Վճարեալ վերջացեալ էր Քսենոկրատայ յամենայն անձնդիւր շահու։ Ի յղել երբեմն առ նա Աղեքսանդրի արծաթ բազում, ընկալաւ միայն երիս մնասս ատտիկեան, և զաւելին ետ տանել անդրէն, ասելով ցպատարագաբերսն. Բազում մարդիկ են Աղեքսանդրի կարօտք խնամոց նորա, վասն որոյ բազում արծաթոյ պէտս ունի նա առաւել քան զիս։ Յայլում նուագի Անտիպատրոս արքայ կամեցաւ նոյնօրինակ նուիրօք պատուել զնա. Շնորհս կալաւ նմա Քսենոկրատէս, և ոչինչ էառ 'ի պարգևաց նորա։

Մինչդեռ 'ի Սիկիլիա էր՝ ընկալաւ պսակ ոսկի իբրու տրիտուր և վարձ քաջութեան նորա յրմպել առաւել քան զայլս։ Ոչ յօժարեաց Քսենոկրատէս շահել 'ի մրցանակէ անտի. այլ 'ի դառնալ իւրում յԱթէնս՝ տարաւ եդ զպսակն առ ոտիւք Հերմեսի դից՝ նուիրեալ զայն նմա, որում յառաջն մատուցանէր յաճախ պսակ բոլորեալ 'ի ծաղկանց։

Առաքեցաւ Քսենոկրատէս առ Փիլիպպոս արքայ ընդ այլ բազում հրեշտակս. ընկալաւ զնոսա թագաւորն մարդասիրութեամբ, արար նոցա խընջոյս, և բազում պարգևօք մեծարեաց զնոսա. 'ի բազում նուագս լուաւ բա-

նից պատդամաւորութեան նոցա, և յարդարեաց զյօժարութիւն նոցա՝ կամակատար լինել հաճոյից իւրոց։ Քսենոկրատէս միայն բացէ 'ի բաց հրաժարեաց 'ի պարգևաց Փիլիպպոսի, և ոչ երևեցաւ 'ի կոչունսն և յա-կումբս նորա ընդ նոսա։ 'Ի դառնալ իւրեանց ՅԱԹԷՆԱ՝ ցուցին պատդա-մաւորքն առ ժողովուրդն՝ թէ վայրապար էր յղել նոցա զՔսենոկրատէս ընդ ինքեանս, զի յոչինչ իրս սատար եղև նոցա։ Ժողովուրդն համարէն ստրջացաւ ընդ այն, և փոքր մի ևս՝ պատժապարտ տուգանաց դատէր զնա. յայնժամ Քսենոկրատէս 'ի վեր առ զպատրուակն, խելամտեցոյց նոցա ըղ-բովանդակն, և զգացոյց աթենացւոց՝ քան զայլ ամենայն ինչ կամակար միտ դնել այնմ գործոյ հասարակաց. և զի Փիլիպպոս ճոխապանծ պարգևօք ի-ւրովք կաշառաբեկս վատթարեաց ըղ-հրեշտակսն ամենայն՝ որք միայն ջա-նան առնել զոր ինչ հաճոյ է յաչս նո-րա. իսկ ինձ՝ ասէ, ոչ մարթացաւ Փիլիպպոս պարգևել ինչ։ Յայնժամ մթերեալ արհամարհութիւնն 'ի վե-րայ Քսենոկրատայ՝ փոխեցաւ 'ի մե-ծարանս նորա, և հուչակաւ զհամբա-ւի հարան իրքն. խոստովան եղև Փի-լիպպոս՝ թէ 'ի մէջ ամենայն հրեշտա-

կացն յղելոց՝ միայն Քսենոկրատէս
չհայեցաւ 'ի պարգևս իւր, և ոչ ընկա-
լաւ ինչ անտի։

Առ լամեան պատերազմաւ՝ Անտի-
պատրոս գերեաց զյոգունս յաթե-
նացւոց. յայնժամ առաքեցին աթե-
նացիք զՔսենոկրատէս՝ փրկանաւորել
զԱնտիպատրոսէ զկալանաւորսն։ 'Ի
հասանել նորա՝ Անտիպատրոս չև խո-
սեցեալ ինչ վասն որոց իրաց եկեալն
էր՝ արկ նմա սեղան։ Քսենոկրատէս
ետ պատասխանի, Կացցէ՛ առ վայր մի
սեղանդ. զի ճաշակեցից և ո՛չինչ՝ մինչ-
չև 'ի գլուխ հանեալ իցեմ զպատգա-
մաւորութիւն իմ, և զքաղաքակիցս
զերծուցեալ։ Աքանչացեալ Անտի-
պատրոսի ընդ յօժարութիւն Քսենո-
կրատայ առ հայրենիս իւր, ձեռն 'ի
գործ արկ, և զարմացաւ ընդ կորով
մտաց նորա։ Սահմանեցաւ գործն և
գերեալքն ելին յազատութիւն։

Եւ եղև մինչ տակաւին 'ի Սիկիլիա
էր Քսենոկրատէս, ասաց Դիոնեսիոս
ցՊղատոն. հատցէ ոք զգլուխ քո.
Քսենոկրատէս որ անդ մօտ կայր, ա-
սաց. անհնար է լինել իրացդ՝ մինչև
հատեալ գլխոյս իմոյ։ Յայլում նուա-
գի երբ յԱթէնս էր Անտիպատրոս՝
գնաց յողջոյն Քսենոկրատայ. և զի
նա ընթեռնոյր յայնժամ ճառս իմն՝

ոչ խրամատեաց զընթերցումն, և չետ նմա պատասխանի, մինչև աւարտեաց զկարդացումն։

Յորժամ Սպեւսիպպոս իմաստասէր եղբօրորդի և յաջորդ Պղատոնի Ակադեմիայն՝ ծերացաւ խօթացաւ և մերձեցաւ 'ի յետին աւուրս կենաց իւրոց, յղեաց կոչեաց զՔսենոկրատէս, և աղաչեաց զնա նստել դահա-դլուխ լսարանին 'ի տեղի իւր։ Յանձն առ Քսենոկրատէս, և ձեռն արկ 'ի հրա-պարակաւ վարդապետութիւն։ Եթէ երթայր ոք 'ի դպրոց նորա՝ անճաշակ ամենևին երաժշտութեան, կամ երկ-րաչափութեան, կամ աստեղաբաշ-խութեան, բարեկամ, ասէր, 'ի բաց կաց աստի, զի ոչ գիտես զհիմունս և զգեղեցկութիւն իմաստասիրութեան։

Արհամարհէր Քսենոկրատէս ըղ-փառս և զպերճութիւն, սիրելի էր նմա առանձնութիւն, և աւուր աւուր ժամս ինչ կայր միայնացեալ։

Մեծապատիւ մեծարէին զնա աթե-նացիք, և ակնածէին յանարատու-թենէ կենաց նորա. այնչափ՝ զի երբ յաւուր միում մատուցեալ առաջի դատաւորաց տալ վկայութիւն իրաց ինչ, այն ինչ մատչէր 'ի սեղան դից երդնուլ՝ ըստ օրինաց աշխարհին թէ ճշմարիտ է զոր ինչ ասացն, յոսն կա-

ցին դատաւորք և արդելին զնա յերդ-
մանէն. ասեն, վայրապար է երդումն
քո, զի հաւատամք մեք որոց ասա-
ցերդ։

Զայնու ժամանակաւ երիտասարդ
ոմն աթենացի Պողեմոն անուն՝ որդի
Փիլոստրատոսի՝ կայր 'ի քաղաքի անդ
կեանս իմն ունելով ցոփ և խենէշ։ Ե-
մուտ սա յաւուր միում 'ի լսարան
Քսենոկրատայ արբեալ և ծաղկա-
պսակ՝ խաղ առնել զիմաստասէրն, մինչ-
դեռ նա ճառ արկեալ վարդապետէր
յաղագս անժուժկալ շուայտութեան։
Քսենոկրատէս ոչինչ ընդհատեալ ըզ-
բանսն՝ յառաջ խաղաց ազդողագոյնս
և հզօրագոյնս իբրև զառաջինն։ 'Ի
սիրտ և հոգի հարաւ Պողեմոն, զի
յայնմ հետէ հրաժարեաց 'ի տարօրէն
կենացն՝ և ուշ եդ 'ի հրահանգս խրա-
տուց բարեկրթութեան. որպէս՝ զի 'ի
սուղ ժամանակի 'ի դլուխ առաքինու-
թեանցն ժամանեալ, յաջորդեաց ըզ-
վարժապետ իւր զՔսենոկրատէս։

Են Քսենոկրատայ և վաստակք
մատենագրութեան 'ի քերթուած և
յարձակ խօսս. 'ի բազմաց անտի նուի-
րեաց զմին Աղեքսանդրի, և միւս ևս
Եփեստիոնի։ Սակայն զի անաչառ էր,
եղեն նորա թշնամիք բազումք։ Աթե-
նացիք վաճառեցին զնա որպէս զի ան-

օգնական կորիցէ. գնեաց զնա Դեմետրիոս Փաղերէոս՝ որ յայնմ ժամանակի մեծապէս պատուեալ էր յաթենացւոց, և արձակեաց յաղատութիւն. մինչև ուր ուրեմն շատ գրեցին աթենացիք 'ի բաց տարագրել զնա։

Հասեալ Քսենոկրատայ 'ի հաճակամաց ութսուն և երկուց, անկաւ գիշերայն 'ի վերայ կոնքի ընդ որ հարաւ 'ի մթութեան ժամուն, և անդէն մեռաւ։ Վարդապետեաց 'ի լսարանին զամս քսան և երկու։ Ծաղկեաց յաւուրս Լիւսիմաքեայ մակեդոնացւոց արքայի 'ի հարիւրորդ երկրորդ ոլիմպիադին։

ԴԻՈԳԻՆԷՍ

Մեռաւ յառաջնում ամի հարիւր չո-
րեքտասան ոլիմպիադին, 'ի հասակի
ինանուն ամաց. զորոյ զհետ գայ դնել
զնա ծնեալ յերրորդ ամի ինանեերորդ
առաջներորդ ոլիմպիադին։

ԴԻՈԳԻՆԷՍ կիւնիկեան որդի
Իսեկիոսի սեղանաւորի՝ ծնաւ 'ի Սի-
նոպ քաղաք Պափղագոնիոյ՝ զինանեերորդ
առաջներորդ ոլիմպիադաւ։ Ամբաս-
տանութիւն եղև զնմանէ վասն խար-
դախելոյ ընդ հօրն սուտ դրամն։ 'Ի
բանտ արկաւ Իսեկիոս և անդ մեռաւ.
զարհուրեալ ընդ այն Դիոգինէսի՝
փախեաւ յԱթէնս և անյապաղ մա-
տեաւ առ Անտիսթենէս՝ որ 'ի բաց
մղեաց և վանեաց զնա գաւազանաւ,
զի հաստատեալ էր նորա 'ի մտի՝ ոչ
աշակերտել զոք բնաւ։ Ոչ պակեաւ
ընդ այն Դիոգինէս, խոնարհեցոյց
զգլուխն և ասէ, հա՛ր հա՛ր և մի՛ երկն-
չիր, ո՛չ գտանես գաւազան ամրակուռ
'ի բաց մերժել զիս 'ի քէն ցորչափ կայ
քո լեզու։ Յաղթահարեալ Անտիս-

թենէսի 'ի կամակարութենէ նորա՝ յօժարամտեաց աշակերտել զնա։

Աղքատութեամբ անցուցանէր Դիոգինէս զաւուրս իւր՝ իբրև այր տարագիր 'ի հայրենի երկրէն, և ոչ ընդունէր ուստեք օգնութիւն։ Տեսեալ նորա յաւուր միում զի մուկն մի կայտառալով վազվազէր, և ոչ զարհուրէր 'ի վերահաս գիշերոյ, և ոչ ուրեք ապաստան խնդրէր, և ոչ կերակուր հանդերձէր, այս զօրավիգն եղև նմա 'ի կարօտութեան իւրում. այնուհետև հաստատեաց 'ի խորհուրդս՝ կեալ հանդարտութեամբ առանց տագնապելոյ և ոչ մթերել զայն ամենայն առանց որոց հնարաւոր էցէ կեալ։ Կրկնապատկեաց զաղաբողոն իւր՝ զի պատատեալ 'ի նմին՝ շատ լիցի ինքեան իբրև անկողին և օթոց. ստացաւ գաւազան մախաղ և սկուտեղ մի. այսոքիկ էին ամենայն կարասիք նորա։ Ոչ երթայր ուրեք՝ առանց ընդ իւր տանելոյ զայն ամենայն հանդերձանս. իսկ զգաւազանն վարէր՝ երբ յանդաստանս գնայր, կամ յորժամ հիւանդ էր։ Սովորութիւն էր նորա ասել. իսկապէս տառապեալք ոչ կոյրք են, և ոչ խուլք, այլ որոց պակասիցի մանաղ։ Միշտ բոկոտն ընթանայր, և ոչ երբէք ադանէր սանդալս նա և 'ի ձիւնելն յոր-

դութեամբ։ Զեռն 'ի գործ արկ վարժել զանձն ուտել հում միս, այլ ոչ մարթացաւ։

Աղերս արկ Դիոգինէս առ այր ոք՝ տալ ինքեան 'ի տան իւրում խորշ մի, զի անդ բնակեսցէ երբեմն. և տեսեալ զայրն դանդաղկոտ 'ի պատասխանի հայցուածոցն, եդիտ տակառ մի, զոր յամենայն տեղիս ընդ իւր յածեցուցանէր, և ոչ ևս կարօտացաւ տան։ 'Ի հրատապ ջերմութեան ամարայնի թաւալէր 'ի վերայ կիզանող աւազոյ, և 'ի ձմեռնային խստաշունչ ցրտութեան գիրկս արկանէր ձիւնապատ արձանաց, զի սովորեսցի դիւրաւ հանդուրժել վշտաց տօթոյ և ցրտոյ։

Արհամարհէր զամենեքումբք. զեղիս և շուայտոտս համարէր զՊղատոն և զաշակերտս նորա, և զատենաբանս կոչէր ստրուկս ժողովրդեան։ Ասէր, մրցանակք պսակաց են զաղփաղփուն նշանակք փառաց, իբրև զպղպջակ ջուրց որք ընդ երևելն և ցնդին. և տեսարանք 'ի զարմանս են միայն անմտաց։ Այսպէս ոչինչ զերծ էր յանսանձ երգիծանաց նորա։ Ուտէր, խօսէր, և ննջէր անխտիր յամենայն տեղիս ուր և գտանէր։ Երբեմն ցուցեալ զարահն Դիոսի՝ աղաղակէր. Աթենացիք շինել ետուն վասն իմ հոյակապ

տեղի, զի անդ դնացեալ կերից։ Սովորութիւն էր նորա ասել. Ակնարկեալ իմ ընդ աւագանին, ընդ բժիշկս և ընդ իմաստասէրս որք են յաշխարհի, համարեցայ ընդ միտս իմ հաւատալ թէ մարդ իմաստութեամբ իւրով գեր 'ի վեր է քան զանասունս. սակայն առ նմին յորժամ տեսանեմ զմոգս, զերազահանս, և զփքացեալսն ճոխութեամբք և պատուով խորհուրդ ինձ ընդ միտս հարկանի՝ դնել զմարդ անմիտ քան զպաճարս։

Տեսեալ նորա 'ի զգնալն զմանուկ մի որ ջուր ըմպէր ափով ձեռինն, զամօթի հարաւ և ասէ. որպէս քաջ գիտեն մանկունք առաւել քան զիս՝ զոր ինչ աւելորդ իցէ. և հանեալ զսկուտեղն 'ի մախաղէն խորտակեալ փշրեաց, իբրև անօգուտ և աւելորդ կարասի։

Դրուատէր գովութեամբ զորս յօժարեսցին յամուսնութիւն, այլ ոչ ամուսնասցին. ըստ օրինակի ուղևորաց, որոց հանդերձեալ զպէտս ճանապարհին ուղուոյ լինել նաւուք, կառուցեալ մնասցեն 'ի ցամաքի։ Ոչ նուազ 'ի նմանութենէս զուգակշռէր զորս ընտրին 'ի գործ հասարակաց մատակարարութեան, և ոչ կամիցին յանձին ունել զայն. որպէս որոց այն

ինչ հասանիցէ բաղմել 'ի սեղան ընդ թագաւորս և ընդ մեծամեծս, դարձ-ցին 'ի տունս իւրեանց։

'Ի բարոյականն միայն հպատակէր Դիոգինէս, և զանց առնէր բովանդակ զայլ ամենայն գիտութեամբք. աշխոյժ էր ոգւով, և կանուխ զառաջս առնոյր զբանիցն զոր ինչ հնար էր ընդդէմ առարկանել նմա։ Զամուսնութիւնն ոչ գրէր նա յօրինաւորաց սակի, ամենայն կանայք, ասէր, հասարակաց լիցին, և ամենայն այր զայն կալցի՝ որ սէր յորդորեսցէ 'ի նա։ Բնաւ ոչ դնէր անպատշաճ առնուլ զիրս որոց պէտս ունէր, մանաւանդ թէ չէ արժան ասէր, տագնապիլ 'ի պակասութիւն կարևորացն։ Լաւագոյն է մխիթարել, քան անձամբ զանձն կախել։

Զեռն արկ երբեմն բանս 'ի մէջ առնուլ վասն հարկաւոր և օգտակար ինչ խնդրոյ, և ամենայն մարդիկ որ անցանէին առ նովաւ, զանց առնէին ունկն դնել բանից նորա. յայնժամ ձայն բարձեալ սկսաւ երգել Դիոգինէս. և ահա կուտեալ խռնեցան մարդիկն մի զմիով 'ի վերայ նորա, յորմէ պատճառ կալաւ Դիոգինէս կշտամբել զնոսա վասն յօժարութեան իւրեանց առ անպիտանս, և անհոգու-

թեան յուկնդրութիւն շահեկան խոր-
հրդոց։

Զարմացեալ էր նորա ընդ քերա-
կանս՝ որք ծանու վշտոք տագնապէին
հասու լինել բովանդակ՝ ամենայն ա-
ղետիցն Ոդիսեայ յուղեղնացութեան
իւրում, և այն զի բնաւ ոչ ակնարկէին
յաղէտս նեղութեանն զոր ինքեանք
կրեն։ Երդիծանէր զերաժիշտս որք
ջան 'ի գործ արկեալ վաստակեն 'ի զու-
գայարդար յարմարութիւն նուագաց.
փոխանակ զի պարտ էր, ասէ, սկիզբն
առնել հանդերձանաց ոգւոց իւ-
րեանց։ Կշտամբէր զչափաբերս՝ որոց
զհետ պնդեալ զարեգական, զլուսնի և
զայլոց աստեղաց՝ ոչ ակնարկեն խե-
լամտել որոց գուցեն յայսմ աշխար-
հիս։ Նոյնպէս զայրացեալ էր ընդ-
դէմ ատենախօսաց՝ որք 'ի բարուք խօ-
սել ժամավաճառ լինին, և ոչ 'ի բա-
րիոք գործել։ Կծանէր ծանր նախա-
տանօք զագահս ոմանս՝ որք վճարեալ
ցուցանեն զանձինս յամենայն շահու
անձին, և 'ի գովութիւն առնուն զորս
արհամարհեն զինչս. սակայն ամենայն
խորհուրդք նոցա ջանան հնարին շեղ-
ջակուտել արծաթ։

Զի՞ք ինչ, ասէր, ծաղու արժանի քան
զգործս ոմանց 'ի մարդկանէ, որք պա-
տարագեն դից՝ առողջութեան շնորհ

մաղթեալ 'ի նոցանէ, և ելեալ 'ի պաշտամանց անտի զեղխին 'ի խնջոյս մահարարս։ Դարձեալ բաղումք են, ասէ, որք ջանան ճգնին յաղթել իրեարաց 'ի կատականս, այլ ոչ ոք զբարիոք նախանձն նախանձի՝ յառաջ նահատակել 'ի ճանապարհս առաքինութեանց։

Տեսեալ Դիոգինեայ յաւուր միում զՊղատոն որ 'ի բազմախորտիկ կոչունս ուրեք՝ ուտէր ձիթապտուղ և եղթ, ասէ ցնա, զի՞ է զի դու որ իմաստնաբար կեաս, ոչ ուտես ազատօրէն 'ի կերակրոցն՝ որք քեզ անցանել ետուն 'ի Սիկիլիա։ Եւ պատասխանի Պղատոն. սովորական կերակուր էր իմ 'ի Սիկիլիա՝ կապպար, ձիթապտուղ, և որ ինչ նոցին նման է, որպէս և աստ նոքօք կերակրիմ։ Դիոգինէս, ասէ, իսկ ընդէր գնայիր 'ի Սիրակուսա. թերևս չկայի՞ն քեզ յայնժամ ՅԱԹԷՆս կապպար և ձիթապտուղ։

Էր երբեմն Պղատոնի հիւրընկալել և ընթրիս տալ ոմանց 'ի բարեկամաց Դիոնիսեայ բռնաւորի. եմուտ Դիոգինէս 'ի տուն նորա. և կոխոտեալ ոտիւքն զգորգ մի պատուական, կոխոտեմ՝ ասէ, զամբարտաւանութիւն Պղատոնի։ Այո, ասէ Պղատոն, սակայն այլով իմն ամբարտաւանութեամբ։

Սոփեստէս ոմն ցուցանել կամեցեալ Դիոգինեայ զհանճար մտաց իւրոց, ասէ ցնա. չես դու՝ որ ինչ եսս եմ. իսկ զի ես մարդ եմ, ապա դու չես մարդ։ Ճշմարիտ լինէր բանդ, ասէ Դիոգինէս, եթէ այսպէս սկսանէիր, չեմ ես այն որ ինչ դուդ ես. քանզի զհետ բերէիր յայնժամ թէ դու ինքն չես մարդ։

Հարցաւ երբեմն, յո՞ր սահմանս Ելլադայ տեսեր արս իմաստունս. ետ պատասխանի. տեսի մանկունս 'ի Լակեդեմոն, իսկ արս կատարեալս՝ ոչ ուրեք։ Յաւուր միում լուցեալ լապտեր շրջէր 'ի հրապարակս 'ի միջօրէի. և 'ի հարցանել թէ զի՞ գործես. ետ պատասխանի. մարդ խնդրեմ։ Դարձեալ յայլում նուագի ձայն բարձեալ աղաղակէր 'ի փողոցի. ո՛վ մարդիկ. ո՛վ մարդիկ. և 'ի խռնել բազմաց զնովաւ, 'ի բաց մերժէր զնոսա Դիոգինէս՝ ասելով. զմարդիկ կոչեմ ես։ Դիմոսթենէս մինչ ուտէր յաւուր միում 'ի պանդոկի, ետես զԴիոգինէս զի անցանէր ընդ այն, և թագեաւ վաղվաղակի. այլ Դիոգինէսի տեսեալ զնա, ասէ. մի թագչիր. զի որչափ հնարիս ծածկել զքեզ 'ի պանդոկիդ, այնչափ 'ի խորս մտանես։ Ետես յայլում նուագի զօտարականս ոմանս եկեալս 'ի տե-

սանել զԴիմոսթենէս. մատեաւ առ նոսա Դիոգինէս. եցոյց զնա մատամբ իւրով և ասէ ծիծաղելով. ահա սա՛ է, տեսէ՛ք զմեծ ատենախօսն աթենացւոց։

'Ի մեծակառոյց ապարանս ուրեք՝ ուր յաճախութեամբ էր ոսկի և մարմարիոն, մանր զննեալ զգեղեցկակերտութիւնսն, հաղաց, ելից զբերանն խխով, և եթուք յերեսս փռիւգացւոյ ուրումն որ ցուցանէր նմա զապարանսն. ասէ. բարեկա՛մ, չգտի այլ տեղի յոռեգոյն յոր թքանէի։ Յաւուր միում դերծեալ նորա զմօրուսն կիսով մասամբ՝ եմուտ 'ի տեղի ուրեք ուր ժողովեալ էին երիտասարդք ոմանք և զբօսնուին, յորոց բազմադէմ նախատանօք ծաղրեալ և արհամարհեալ էլ արտաքս, և վասն վրէժ լուծանելոյ 'ի նոցանէ՝ գրեաց 'ի քարտի զանուանս ամենեցուն նոցա, և կարեալ զայն զթիկամբք իւրով զգնայր ընդ փողոցս՝ իմացուցանել զայն ամենայն տեսողաց, և համբաւ չար հանել զերիտասարդացն։ Այր ոմն չարագործ նախատէր զնա երբեմն վասն աղքատութեանն. ետ պատասխանի Դիոգինէս՝ իմ չէ՛ք տեսեալ պատուհասել զոք վասն այդր բանի, թէպէտ և յոլովս տեսեալ եմ անզգամս վարեալ 'ի կախաղան։ Բազում անգամ սովորու-

թիւն էր նմա ասել, բաղում ուրեք գործոց շահաւորաց նիւաղ է պատիւ. արձան վաճառի ընդ երեք հազար դահեկանի, և գրիւ մի ալեր ընդ քսան փողոց։ Ի մտանել նորա երբեմն ի բաղանիս, տեսեալ զՋուրն աղտեղեալ, ասաց, յաղտեղիլ ուրուք աստէն՝ յո՞ երթիցէ լուանալ։ Արք ոմանք մակեդոնացիք ի վերայ հասեալ Դիոգինեայ առ Քերոնէա քաղաքաւ՝ կալան զնա, և ածին կացուցին առաջի Փիլիպպոսի արքայի. Եհարց Փիլիպպոս՝ ո՞վ ես դու. Ետ պատասխանի Դիոգինէս, լրտես եմ անյաղ ցանկութեան քում։ Հաճեցաւ թագաւորն ընդ պատասխանին, և արձակեաց զնա յաղատութիւն։ Այս բանք էին Դիոգինեայ, թէ խմաստունք յիրս ինչ ոչ թերացեալ գտանին, և նոցա հասանէ հրաման տալ վասն ամենայն իրաց աշխարհի։ Այս ամենայն ասէր՝ գործ է դից, և զի խմաստունք բարեկամ են նոցա, ամենայն ինչ հասարակաց է ընդ մէջ բարեկամաց. վասն որոյ ամենայնն ընդ ձեռամբ կայ խմաստնոց։ Այսր աղագաւ յորժամ պէտք ինչ լինէին նմա, ասէր՝ խնդրել ի բարեկամաց իւրոց։

Էր երբեմն Աղեքսանդրի անցանել ընդ Կորնթոս, և խորհուրդ ի միտս

անկաւ նորա տեսանել զԴիոգինէս, որ ընդ աւուրսն ընդ այնոսիկ անդ դեգերէր. եգիտ զնա նստեալ յարևու մերձ 'ի Կրանէոն 'ի վարժարանն Կորնթոսի, ուր յարմարէր զտակառն 'ի հայեցուած արևուն. ասէ. Ես մեծ թագաւորն եմ Աղեքսանդր։ Իմաստասէրն ասէ. Ես եմ շունն Դիոգինէս. յաւել Աղեքսանդր. ո՞չ երկնչիս յինէն։ Եւ պատասխանի Դիոգինէս. բարի՛ ես, թէ չար. Աղեքսանդր ասէ. բարի եմ։ Դիոգինէս ասէ. և ո՞վ երկիցէ 'ի բարւոյ։ Զարմացաւ Աղեքսանդր ընդ լրջմտութիւն և ընդ ազատ պատասխանիս Դիոգինեայ. եկաց առ նմա ժամս ինչ. և յաւել ասել ցնա. տեսանեմ քաջ, Դիոգինէս, զի պէտք են քեզ իրաց բազմաց, ես յօժարակամ մատուցից քեզ զկարևորսն. խընդրեա՛ յինէն զի՛նչ և կամիս։ Դիոգինէս ետ պատասխանի. զի 'ի բաց կացցես չխափանել զարևդ։ Յապուշ հարաւ Աղեքսանդր՝ տեսեալ զայրն գեր 'ի վեր քան զամենայն մարդկեղէն մտածութիւնս։ Յաւել դարձեալ ասել Դիոգինէս. ո՞վ իցէ մեծատուն, այն որ շատացեալ իցէ վերարկուաւն և մախաղով, եթէ այն՝ որ ոչ շատ ասէ ընդ դահ թագաւորութեանն, և հանապազօր նշաւակ դնէ զանձն բազ-

մադէմ արկածից՝ ընդարձակել զսահ-
մանսն։ Որք առընթեր կային Աղեք-
սանդրի ծանրացասու�եղեն՝ տեսեալ
զթագաւորն խոնարհեալ 'ի մեծարանս
շանն Դիոգինեայ, որ և ոչ յոտն յառ-
նէր առաջի արքայի։ Ծանեաւ Աղեք-
սանդր զխորհուրդս նոցա. դարձաւ
առ նոսա և ասէ. Թէ ես չէի Աղեք-
սանդր՝ խնդրէի լինել Դիոգինէս։

Յանցանել երբեմն Դիոգինէսի ընդ
Եգինա՝ անկաւ 'ի ձեռս հինից, որք
վարեցին զնա 'ի Կրետէ և արկին 'ի
վաճառ։ Ոչինչ տխրութիւն կալաւ
զԴիոգինէս վասն իրացն. գոդ թէ և
իմացաւ ոչ զաղէտսն։ Տեսեալ նորա
զՔսենիադէս ոմն այր գէր, և շքեղ
զգեցեալ, ասէ. պարտ է վաճառել
զիս առնդ այդմիկ. քանզի տեսանեմ
քաջ՝ զի տեառն պէտս ունի։ Իբրև
մերձեցաւ Քսենիադէս սակ արկանել
վասն նորա, ասէ ցնա Դիոգինէս. Եկ
որդեակ, և գնեա՛ մարդ։ Յորժամ
հարցաւ թէ զինչ գիտես գործել, ետ
պատասխանի. գիտեմ հրամայել մարդ-
կան. և ցմունետիկն ասէ. կարդա՛ թէ
ոք պէտս ունիցի տեառն՝ եկեսցէ 'ի
գնել. և որ վաճառէրն զնա՝ ցասնոյր
նմա և արգելոյր 'ի նստելոյ. Դիոգի-
նէս ասէ, ո՞վ խտրէ 'ի գնել զձուկն՝
զդիրս մարմնոյն ըստ որոց կացցէ. այլ

և այդ ևս զարմանք են ինձ՝ զի 'ի գնելն զմարդ՝ շատ համարին նայել ևեթ 'ի նա, իսկ 'ի գնելն զխուփ սանի՝ ոչ սակ արկանեն՝ մինչև զնեալ զհնչիւնն, և ծանուցեալ զորպէսն պղնձոյն։ Իբրև արկին զդիննն, ասէ ցՔսենիադէս. թէ պէտև այժմ ես ստրուկ եմ քո, սակայն զոր ինչ եան կամիմ զայն պարտէ առնել քեզ. զի թէպէտ իբրև ըզբժիշկ վարեցայց ընդ քեզ, թէպէտ իբրև վերակացու կամ ստրուկ, կամ աղատ, յամենայնի հպատակութիւն պահանջեմ 'ի քէն։ Յանձն արար նմա Քսենիադէս զորդիս իւր 'ի հրահանգել. յորոց 'ի խնամս սրտի մտաք ջանեդ Դիոդիննէս. ուսոյց նոցա զընտիր ընտիր հատուածս 'ի գրոց քերթողաց, հանդերձ փոքու գրուկք իմաստասիրուքեան առ 'ի յիւրմէ յօրինելով 'ի պէտս նոցա։ Մարդէր զնոսա 'ի գօտեմարտութիւն, յորսորդութիւն, 'ի հեծելութիւն, յաղեղնաւորութիւն և 'ի պարսաքարել։ Վարժեաց զնոսա յանպաճոյճ տարաղ կենաց, և ընդ կերակրոյ ջուր ևեթ ըմպել. հրամայէր նոցա ամենևին գերծուլ զվարսս։ Շրջեցուցանէր զնոսա ընդ իւր ընդ հրապարակս՝ ղգեցեալ անյարդար, և բազում անգամ առանց հողաթափի և պատմուճանի։ Ըստ այսմ օրինակի և

մանկունքն սիրով յարեալ էին 'ի վար-
ժապետ իւրեանց 'ի Դիոգինէս, և
խնամոտ գթով աղերս արկանէին վասն
պիտոյից նորա առ հայր իւրեանց։ Եւ
եղև մինչդեռ 'ի ստրկութեան էր Դիո-
գինէս՝ ոմանք 'ի բարեկամաց նորա
հետամուտ եղեն 'ի զերծուցանել զնա.
ասէ ցնոսա Դիոգինէս. անմիտք էք և
պատրանք ունի զձեզ վասն իմ. ոչ զի-
տիցէք արդեօք զի առիւծն չէ ստրուկ
սնուցողին իւրում. նա մանաւանդ
կերակրողք նորա գերի են նմա։

Տեսանէ Դիոգինէս յաւուր միում
զի աղաղակէր մունետիկն՝ թէ Դիոք-
սիպոս յաղթեաց մարդկան յողիմ-
պիական մրցանս. ասէ ցնա. բարե-
կամ, ասա՛ թէ յաղթեաց գերեաց և
ապիկարաց. զի յաղթող մարդկան՝ ես
ինքն եմ։

Յորժամ ասէին ցնա, թէ ծերա-
ցեալ է քո, պարտ է հանգչել քեզ 'ի
վաստակոց. նա տայր պատասխանի.
և զի՞նչ, եթէ յընթանալ էի՝ արժա՞ն
ինչ էր ինձ յապաղել 'ի կատարած
ընթացից իմոց. ոչ լաւագոյն է մինչև
ցվախճան ճգնել։ Յանցանելն երբեմն
ընդ փողոցս տեսանէ զայր ոմն յորոյ 'ի
ձեռացն անկեալ հացքն զոր ունէր,
ամաչէր կորանալ յերկիր, և առնուլ
զայնս։ Յայնժամ առեալ Դիոգինեայ

սրուակ մի խորտակեալ՝ ընթացաւ ընդ քաղաքն ողջոյն. ցուցանել կամեցեալ՝ թէ չէ արժան ամօթ համարիլ՝ ուր բանք ի ցեն չկորուսանել և ոչինչ։ Ասէր նա ինքն. իբրև զքաջ երաժիշտ եմ ես, որ թողում զճշգրիտ հնչումն ձայնին, զի առեալ կցեսցեն այլք։ Մատեաւ առ նա այր ոմն՝ կամեցեալ աշակերտիլ նմա. ետ Դիոգինէս 'ի ձեռս նորա ապուխտ խոզենի՝ բերել զկնի իւր. ամօթ համարեցաւ այրն տանել զապուխտն ընդ փողոցս, վասն որոյ ընկէց զայն ընդ գետին, և 'ի բաց մեկնեցաւ։ Յետ քանի ինչ աւուրց դիպաւ նմա Դիոգինէս և ասէ, ապուխտն խզեաց զբարեկամութիւն մեր։ Տեսանէ զկին ոմն անկեալ 'ի վերայ երեսաց առաջի դից իբր 'ի խնդրուածս՝ տարադէպ օրինակաւ, զի յետուստ անծածկոյթ երևէր. մատեաւ առ նա Դիոգինէս և ասէ. ո՞չ երկնչիս դու ո՛վ կին հիգացեալ՝ զի դիք յետուստ և 'ի դիմաց մօտ կան քո, և տեսանեն զքեզ անկեալ յորսայս անվայելուչ։

Ակնարկեալ Դիոգինեայ ընդ հանդամանս կենաց իւրոց՝ ասէր ծիծաղելով. ամենայն երդիծանք որք նկարագրին 'ի թատրոնս՝ յիմ վերայ անկանին. չիք իմ ոչ տուն, ո՛չ քաղաք, ո՛չ հայրենիք, աւուրն պարենի ակնկա-

լեալ, այլ հաստատութեամբս ընդդէմ մնքառիմ բաղդին. բնութեամբս կռուիմ ընդ սովորութեան, և մտօք վանեմ զամբոխմունս։ Խորհուրդ ե՞հարց ցնա այր ոմն թէ յորո՞ւմ ժամու ուտել արժան իցէ, ետ պատասխանի. թէ մեծատուն ես՝ կեր երբ և կամիս. թէ աղքատ՝ երբ կարես։

Աղերս արկին նմա աթենացիք հաղորդել՝ի խորհրդական տօնս իւրեանց. վկայութիւն եղեալ նմա՝ թէ խորհրդազգածքն յիրս այնպիսիս՝ զառաջին բարձն ունին յանտիս. ետ պատասխանի Դիոգինէս. ծաղրական ուրեմն է թէ Ադեսիղայոս և Եպամինոնդ՝ի տղմի զեռայցեն. և ձեր թշուառական խորհրդածուք բնակեսցեն՝ի կղզիս երանելեաց։

Սովորութիւն էր նորա ծուխ խնկոց մատուցանել առ ոտիւքն. և հարցեալ զպատճառն, ասէր. հոտ խնկոց մատուցեալ՝ի գլուխն՝ շոյտ ցնդի ընդ օդ. իսկ առ ոտամբք մատուցեալ՝ ելանէ հասանէ հոտն մինչ՝ի ունգունս։ Ներքինի ոմն վատանուն դրեաց առ դրամբք տան իւրոյ. մի՞ ոք՝ի չարաց մտանիցէ ընդ այս դուռն։ Ընթերցեալ զայն Դիոգինէս՝ ասէ. իսկ ուստի՞ մտանէ տէր տանն։ Իմաստասէրքն ոմանք հաւաստէին նմա թէ

ելք շարժումն. յարեաւ Դիոգինէս և ձեմել սկսաւ. ասէ ոմն. զի՞ գոր-
ծես. Դիոգինէս ասէ՝ Հերքեմ ըզ-
փաստս քո։ Ի խօսել ուրուք ընդ նա
վասն աստեղաբաշխութեան, ասէր
ցայնպիսին. բազո՛ւմ ժամանակք են
յորմէ հետէ դարձար դու յերկնից։
Պղատոնի սահմանեալ էր զմարդ՝ կեն-
դանի երկոտանի անփետուր. փետեալ
Դիոգինեայ աքաղաղ մի՝ թագոյց ընդ
վերարկուաւն և եկ գնաց յԱկադե-
միայն. հասեալ անդր ընկէց 'ի ներքս
զաքաղաղն և ասէ. ահա՛ մարդ Պղա-
տոնեան։ Ի բանից աստի հարկաւո-
րէր Պղատոն յաւելուլ յառաջին
սահման իւր՝ թէ այդ կենդանի լայնե-
ղունգն է։ Յանցանել Դիոգինեայ ընդ
Մեգարա քաղաք, ետես անդէն ման-
կունս մերկս ամենևին, և ոչխարս գեղ-
ճեաւորս. և ասէ. լաւագոյն է լինել
ոչխար 'ի քաղաքի աստ, քան մանուկ։
Յուտել իւրում երբեմն տեսանէ
մկունս ընդ սեղանով իւրով որք զան-
կեալ փշրանսն հացի հաւաքէին. յո-
գւոց եհան և ասէ. Ո՛հ, և Դիոգի-
նէս անկոչ բազմականս պարարէ։ Յե-
լանելն 'ի բաղանեաց, հարցին ցնա.
բազո՛ւմք են որք լուանան 'ի բաղանիս
անդր. ասէ, ո՛չ. յաւելին դարձեալ.
իսկ ո՞չ է անդ աղաղակ բազմութեան

մարդկան. ասէ, այո՛ մեծ յոյժ։ Հրա-
ւիրեցաւ ուրեք 'ի կոչունս. նա ո՛չ առ
յանձն. քանզի և երէկ, ասէ, կոչե-
ցայ անդր, և ոչ ոք շնորհս կալաւ զի-
նէն։ Այր ոմն որ շալակեալ տանէր
գերան մի, ընդ հարաւ յոչ կամաց
ընդ Դիոգինէս, և ապա ասէ ցնա. 'ի
բա՛ց կաց. Դիոգինէս ասէ. միթէ երկ-
րորդ անգամ հարկանել զիս կամիցիս։
Յայլում նուագի նոյնօրինակ անցք դի-
պան նմա. յայնժամ եհար գաւազա-
նաւ զհարկանողն և ասէ. 'ի բա՛ց
կաց և դու։ Դիպեալ ուրեք Դիոգի-
նեայ տեղ տարափոյ մինչև ողողել
բովանդակ վերարկուի նորա, վշտա-
կից լինէին նմա որք տեսին զնա։
Պղատոն որ անդ էր՝ ասէ ցնոսա.
թէ ոչ կամիք զաղէտս առնդ, 'ի բա՛ց
մեկնեցարուք, և մի նայիք ընդ դա։
Այր ոմն ած ապտակ նմա. ետ պա-
տասխանի Դիոգինէս. ո՛չ գիտէի թէ
պարտ է գնալ 'ի ճանապարհ զրահա-
ւորեալ գլխով։ Դարձեալ հարցաւ
յայլում նուագի, զի՞նչ խնդրես զի
թողցես ածել քեզ ապտակ. ասէ, սա-
ղաւարտ։ Մի դիաս ոմն կռփեաց զնա
բազումս և ասէ. երթ բողոք կալ, և
առցես 'ի տոյժ երեք հաղար դահեկան։
Յաւուրն երկրորդի ադուցեալ Դիոգի-
նեսի 'ի բաղկին վերտս զրահից, կռուփ

ուժգին եհան 'ի գլուխ Միդիասայ, և
ասէ. երթ բողոք կալ. և նոյնչափ
տուժեսցես զիս։ Լիւսիաս դեղագործ
եհարց ցնա. հաւատամ թէ գուցեն
դիք. Դիոգինէս ասէ, և որպէս ոչ հա-
ւատացիս, զի գիտեմ թէ չիք նոցա
թշնամի ոխերիմ քան զքեզ։ Տեսանէ
զայր ոմն որ լուանայր 'ի ջուր՝ յուսա-
ցեալ սրբել զանձն, եղուկ քեզ, ասէ.
ոչ գիտես՝ զի թէ մինչ 'ի վաղիւն լուա-
նայցես՝ ոչինչ օգնէ քեզ չսխալել 'ի
կանոնս քերականութեան. իսկ արդ
'ի յանցանացդ սրբեսցէ այդ զքեզ։
Տեսեալ մանուկ զոմն անվայելուչ
բազմեալ, ընթացաւ եհար զմանկա-
ծուն. ասէ. զի՞ այդպէս պղերգու-
թեամբ ուսուցանես զաշակերտդ։ Մե-
ղադիր լինէր որոց գանգատ ունէին
զբաղդէն. ասէր, մարդիկ խնդրեն
միշտ զայն որ նոցա բարիոք թուի,
այլ ոչ զոր իսկապէս բարին է։ Քաջ
գիտէր Դիոգինէս թէ բազմաց հաճելի
են վարք կենաց իւրոց. այլ զի սակաւք
ոմանք յանձն առնուին նմանել նմա,
ասէր. Շուն եմ ես հաւատարիմ.
բայց ոչ ոք յորոց գովեն զիս խրախու-
սէ յո՛րս ելանել ընդ իս։ Կշտամբէր
զորս երկնչէին յերազոց. խրատ տայր՝
ոչ յառել յիրս որ ընդ միտս անկա-
նիցի նոցա յարթնութեան. և մի՛ սնա-

պաշտ հոդւովք 'ի քնին առնուլ զոր ինչ երաղեսցեն 'ի քուն հանդստեան։ 'Ի զգնալն իւր ընդ վայրս ուրեք՝ տեսանէ զկին ոմն 'ի պատգարակի. և ասէ, չէ՞ 'ի դէպ վանդակդ այդպիսում չար դաղանի։

Աթենացիք որ սիրէին յոյժ զԴիոգինէս, և պատուով մեծարէին զնա, ետուն դան հարկանել հրապարակաւ զերիտասարդ զոմն որ խորտակեալ էր զտակառ նորա, և այլ տակառ ետուն նմա։ Զայնու ժամանակաւ յածէր 'ի բերանս ամենեցուն անուն Կալիսթենեայ՝ իբրու յօրացելոյ երջանկութեամբ, այն զի զոր ամենայն հացակից էր Աղեքսանդրի. իսկ Դիոգինէս ընդ հակառակն ասէր, ամենայնիւ թշուառացեալ համարիմ ես զԿալիսթենէս՝ վասն զի հանապազորդ ճաշէ և ընթրէ առ Աղեքսանդրի։ Կրատեր՝ մին 'ի գործակցաց Աղեքսանդրի բռնադատէր յոյժ զԴիոգինէս երթալ առ նա, այլ նա՝ յաւէտ ախորժեմ ասէ՝ ուտել աշտուճ հաց յԱթէնս, քան մեծաշուք կեանս վարել յարքունիս անդր։ Պերդիկաս հազարապետ Աղեքսանդրի սպառնացաւ սպանութիւն Դիոգինեայ՝ թէ ոչ երթիցէ 'ի տուն նորա։ Ետ պատասխանի Դիոգինէս, դու ոչ մեծ ինչ գործես այդուիկ.

քանզի կարեն զդոյն և փոքունքն 'ի թունաւոր կենդանեաց. և ես հաւաստեմ քեզ թէ Դիոգինէս ոչ կարօտ է բնաւ Պերդիկասայ, և ոչ մեծութեան նորա առ 'ի պատահումն երջանկութեան. եղուկ զիս. առատաբաշխ են դիք 'ի շնորհել կեանս մարդկան, այլ ամենայն որ նմին կից են հեշտութիւնք անծանօթ են նոցա որք զզեղխելն և զշուայտելն միայն գիտեն։ Ետես զայր ոմն՝ որում ստրուկ նորա ագուցանէր կօշիկս, և ասէ. ոչ շատ համարեսցիս դու զայդ, այլ յաւուր միում և զուրն գունս քո դմա տացես սրբել. և զի՞նչ գործեն ձեռք քո։ Դարձեալ 'ի գնալն իւրում հանդիպի դատաւորաց որք 'ի պատուհաս վարէին զայր ոմն որոյ գողացեալ էր սրուակ մի փոքրիկ 'ի հասարակաց դանձուէ. և ասէ. Աւասիկ մեծ գողք զփոքրն դատին։ Սովոր էր ասել Դիոգինէս. մեծատուն տգէտ՝ դառն է ծածկեալ ոսկի գեղմամբ։ Դէպ եղև 'ի վաճառատեղիս ուրեք զի քերէր զմարմին իւր, և առ նմին ձայն բարձեալ աղաղակէր. Լսցէ՛ թէ քերելով զփոր իմ անցուցանէի զինև զքաղց երբ և կամէի։ Մտեալ նորա երբեմն 'ի բաղանիս՝ տեսանէ զոմն երիտասարդ զի առնէր երագ և սթափ շարժմունս, այլ 'ի համեստութենէն թերացեալս.

ասէ ցնա. որչափ բարուոք առնես՝ նոյն-
չափ և դարովելի ես։ Յայլում նուադի
ընդ երթալն 'ի ճանապարհս ուրեք՝ ե-
տես քարտէս 'ի վերայ տան առն ու-
ռուամն շռայլի, որ նշանակ էր վաճա-
ռելոյ զտունն, ասէ իբրև առ տունն.
քաջ գիտէի թէ սաստիկ արբեցութիւն
փսխել տայ ստացողին քում։ Էր երբ-
եմն առն ումեմն նախատել զնա՝ իբ-
րև այր տարագիր. Դիոգինէս ասէ.
Աւաղ քեզ այր անմիտ. ես ընդ այդ
խնդամիտ եմ, և դոյն էր որ արար զիս
իմաստասէր։ Յետ սակաւ ժամանակի
այլ ոմն ասաց ցնա. Սինոպեցիք պար-
տաւոր արարին զքեզ յանդարձ օտա-
րութիւն. սա ասէ. և ես պարտաւոր
կացուցի զնոսա կալ մնալ յանշուք
երկրի իւրեանց առ ափամբք Եւքսի-
նեան ծովուն։

Աղերս արկանէր երբեմն առաջի
արձանաց՝ ընձեռել ինքեան շնորհս. և
որոց հարցանէին զպատճառ սնոտի
խնդրուածոյն՝ ասէր. զի ուսայց հան-
դուրժել տարամերժութեան։ Յոբ-
ժամ աղքատութիւն նորա բուռն առ-
նէր նմա խնդրել յումեքէ ողորմու-
թիւն՝ ասէր ընդ առաջինն որում
հանդիպէր. թէ տուեալ է քո ինչ ու-
մեք, զնոյն շնորհ արա և ինձ. և թէ
չև ետուր՝ յինէն սկսիր։ Իբրև հարցին

ցնա յաւուր միում, որպէս վարէր ընդ բարեկամն իւր Դիոնեսիոս բռնաւոր, ասէ. որպէս ընդ շիշս. զորս 'ի ձեռին առնու մարդ թէ լի իցեն, և 'ի բաց ընկենու թէ դատարկ են։ Ցանկութիւնք պարականոնք՝ աղբերք են ամենայն աղետից որ հարեալ ունին զազգ մարդկան։ Զգօն մարդիկ՝ նկարագիր են դից։ Որովայն՝ անդունդք կենաց։ Բան համեստ՝ թել մեղրածորան. և սէր՝ զբաղումն դատարկապորտից։ Հարցաւ Դիոգինէս. ո՞ր է դժնդակ վիճակ. ետ պատասխանի. լինել ծեր և աղքատ։ Դարձեալ՝ ո՞ր լաւագոյն է յաշխարհի. ետ պատասխանի. աղատութիւն։ Ո՞ր է դազան չարաչար խածատող. ասէ. 'ի վայրենիս չարախօսն, և յընտանիս մարդելոյն։ Դէպ եղև նմա տեսանել ուրեք կին մի կախեալ զոստոց ձիթենեաց, հառաչեաց և ասէ. իցէ՞ թէ ամենայն ծառք պտուղ բերիցեն այսպէս։ Այր ոմն մատուցեալ եհարց զնա, յորո՞մ հասակի արժան է ամուսնանալ. ետ պատասխանի. ցորչափ դեռահաս է ոք՝ տարաժամ է. իսկ 'ի ծերանալն անագան է։ Հարցին ցնա. ընդէ՞ր դեղին է ոսկի. ասէ. զի բաղումք են նախանձոտք նորա։ 'Ի յորդորել ոմանց զնա՝ զհետ պնդել Մանեսի ստրկի իւրոյ որ

փախուցեալն էր. ասէ. ծաղու արժանի գրեսցի, թէ Մանէս կարասցէ գործել առանց Դիոգինեայ, և ոչ Դիոգինէս առանց Մանեսի։ Բռնակալ ոմն եհարց ցնա ո՞ր պղինձ յանկաւոր է 'ի ձուլել արձան. արար պատասխանի. այն՝ յորմէ ձուլեցան արձանք Արմոդիոսի և Արիստոգիտոնի թշնամեաց բռնակալութեան։

Այն ինչ յաւուր միում վարդապետէր Պղատոն վասն դաղափարաց՝ որպէս իւր կարծիքն էին, և խօսէր զտեսակէ սեղանոյ և բաժակի, ասէ ցնա Դիոգինէս. քաջ տեսանեմ ես զսեղանն և զբաժակ. այլ չգիտեմ զի՞նչ տեսակն իցէ սեղանոյն և բաժակին։ Ճշմարիտ է, ասէ Պղատոն. քանզի առ 'ի տեսանել զսեղանն և զբաժակ՝ շատ է թէ իցեն քեզ աչք. իսկ մտաց կարօտիս առ իմանալ զտեսակ նոցուն։ Հարցեալ՝ զի՞նչ ասես վասն Սոկրատայ. ասէ. յիմար ոմն է նա։ Տեսեալ նորա զպատանի ոմն շառագունեալ առ ամօթոյ, ասէ. քաջալերեա՛ց որդեա՛կ իմ. այդ՝ առաքինութեան երանգ է։ Երկու արք օրէնսդէտք կացուցին զնա դատաւոր իրաց իւրեանց. իսկ նա՝ զերկոսին ևս դատապարտ կացոյց. զմին՝ զի դող էր, և վասն այնր ամբաստանութիւն էր զնմանէ. և

զերկրորդն՝ զի զոր կորուսեալն էր՝ գո-
ղն էր յայլմէ և ինքն յանիրաւի բո-
ղոքէր։ Հարցին ցնա. ընդէր տան ո-
ղորմութիւն կուրաց և կաղաց, և ոչ
խնաստասիրաց. ետ պատասխանի. զի
յաւէտ դիւրին է մարդկան լինել կոյր
կամ կաղ, քան թէ խնաստասէր։ Ե-
հարց ոմն ցնա. չունիս ընտանի զոմն,
և ոչ սպասաւոր. ասէ, ո՛չ. միւսն ա-
սէ. և ո՞վ թաղեսցէ զքեզ. Դիոգինէս
ասէ. որ ոք պէտս ունիցի տան իմոյ։
'Ի նախատել ուրուն զնա վասն սուտ
դրամն խարդախելոյ երբեմն. յիրաւի
է, ասէ Դիոգինէս. ես այն էի եր-
բեմն՝ որ ինչ դու այժմ ես. այլ
դու ո՛չ երբէք լինիցիս այն՝ որ ինչ ես
այժմս եմ։ Հարցին ցնա յորմէ՞ քաղա-
քէ ես. ասէ աշխարհաքաղաքացի եմ։
Ցուցանել կամեցաւ բանիւքս թէ չէ
արժան խնաստնոց կառչել մնալ յաշ-
խարհ ուրեք։ Ետես զի անցանէր այր
ոք շռայլ, և խնդրեաց 'ի նմանէ մնաս
մի. ասէ այրն. ընդէ՞ր յայլոց դրամ
մի խնդրես, և յինէն զմնաս. քանզի՝
ասէ, այլք կարեն տալ ինձ և յայլ
նուազս. իսկ վասն քո խիթամ թէ
գուցէ ո՛չ ևս կարասցես տալ։ Ա-
հարցուցին թէ չա՞ր իցէ մահ, ետ պա-
տասխանի. զիա՞րդ չար իցէ՝ զոր ոչն
իմանամք թէևս մօտ կայցէ։ Տեսեալ

երբեմն զանհմուտ ոք 'ի նետաձգու-
թիւն որ լարէր զաղեղն 'ի ձգել. գնա-
ցեալ եկաց առ նպատակին. 'ի հար-
ցանել ոմանց թէ զի՞ գործես. ասէ,
զի մի արդեօք նետահար սպանայց։
Յասել ոմանց ցԴիոգինէս՝ թէ բա-
զումք խաղ առնեն զքեզ. ասէ, և զի՞նչ
այտի թէ ընդ կատակս եղէց, թերևս
և էշք ծիծաղիցին զնոքօք յորժամ
կրճտեն զատամունս իւրեանց։ Ասեն
ցնա. այլ նոքա ո՛չ համարին ինչ զէշս։
Դիոգինէս ասէ, ես անպիտան ևս հա-
մարեցայց զնոսա։

Այլ ոք եհարց ցնա. ընդէ՞ր ամենեքին
շուն կոչեն զքեզ։ Քանզի ասէ, ողո-
քեմ որոց տան ինձ, հաչեմ որոց ոչն
տան, և խածատեմ զչարս։ Դարձեալ
այլ ոք եհարց ցնա. յորո՞ց շանց ես
դու. ասէ՝ թէ նքթեցայց՝ բարակ եմ
որսական, և քծնիմ զամենեքումբք.
իսկ թէ յաղեալ իցեմ՝ գամիւ եմ,
խածատեմ զամենեսին որք ինձ ընդ
առաջ ելանիցեն։ 'Ի յանդիմանել զնա
ոմանց թէ զի՞ անհեթեթ ուտես 'ի
ճանապարհս և 'ի վաճառատեղոցս,
տայր պատասխանի. քանզի անդ հա-
սանէ ինձ քաղց՝ որպէս և յայլ տե-
ղիս։ 'Ի դառնալն Դիոգինէսի 'ի Լա-
կեդեմոնէ յԱթէնս՝ հարցին ցնա՝ ուս-
տի՞ դաս. ետ պատասխանի՝ դամ 'ի

քաղաքէ արանց, դարձ արարեալ 'ի քաղաք կանանց։ Զպոռնիկ կանայս գեղեցիկս օրինակէր թունաւոր գինւոյ։ Զթադուհիս՝ թագաւորս կոչէր, զի զոր ինչ կամին ընդունին 'ի թագաւորաց։ 'Ի զարմանալ առն ուրումն ընդ յոլովութիւն նուիրացն մատուցելոց 'ի տաճարին Սամոթրակեայ, ասէ Դիոդինէս. շատ ևս լինէր արդեօք թէ նուիրէին ամենեքեան որ կորեանն՝ փոխանակ նոցա որք ապրեցան։ Այս կղզի է յԱրշիպեղագոսն՝ որ այժմ անուանի Սէմէնտրէք. նուիրական էր, և տեղի ապաստանի մեղապարտից, և որք անկանէին անդ՝ ընծայէին նուէրս տաճարին։

Յուտելն երբեմն Դիոդինեայ 'ի հրապարակի՝ խռնեցաւ զնովաւ ժողովուրդն՝ կոչելով զնա շուն. նա ետ պատասխանի՝ դուք ինքնին շունք էք՝ զի ժողովեալ էք առ այր կերակրող։ Այր ոմն ըմբիշ ապիկար՝ որ անբաւական էր հայթայթել զպէտս անձին՝ ձեռն արկ 'ի բժշկութիւն. որում յաւուր միում հանդիպեալ Դիոդինէսի ասէ, արդ քաջ հնարս ճարտարեցեր վրէժ լուծանել 'ի նոցանէ՝ որք յառաջն հարկանէին զքեզ։ 'Ի զգնալն ընդ վայրս ուրեք՝ տեսանէ զմանուկ ոմն պոռնկորդի որ քարաձիգ լինէր 'ի

վերայ բաղմութեան մարդկան՝ 'ի մի վայր խմբելոց. և ասէ ցնա. որդեակ իմ, զդոյշ կաց, մի դուցէ հարկանիցես զհայր քո։ Այր ոմն խնդրեաց 'ի նմանէ զվերարկուն իւր՝ զոր յանօթ տուեալ էր նմա. եւ պատասխանի Դիոգինէս՝ թէ եգու եւ զայն՝ արդ իմ է. և թէ յանօթ եւ՝ տակաւին 'ի վար արկանեմ. համբեր ցոր վայր ջնջէ ինձ պիտոյ։ Հարցեալ՝ զինչ կլթեցեր օգուտ յիմաստասիրութենէդ քումմէ, տայր պատասխանի. թէև ոչ այլ ինչ շահէի՝ բայց անխռով տանել ամենայն պատահարաց. այս և եթէ շատ էր ինձ։

Խնդրեալ զհամբաւել աթենացւոց թէ Աղեքսանդր ինքնին Բաքոսն է, ասէ ցնոսա ընդ կատակս. ընդէր և զիս ոչ առնէք Սերապիս։ Յասել ուրուք ցնա՝ դու ոչինչ գիտես, և ոչպէս ընդ իմաստասէրս համարիս զքեզ. ասէ Դիոգինէս. թէև ես ոչ այլ ինչ գիտիցեմ, բայց զնմանութիւն բերել յիս զիմաստասիրաց, բաւական է իմաստասէր անուանել զիս։ Պատուցին առ նա պատանի մի յաշակերտութիւն, և գովէին զնա իբրև իմաստուն, հրահանգ և գիտուն, որոց ամենայնի հանդարտութեամբ ունկն մատուցեալ Դիոգինեայ, եւ պատասխանի. թէ

այդչափ կատարեալ է մանուկդ՝ ոչ
ևս կարօտ է ինձ. ընդէ՞ր ածէք զնա
այսր։

Յորժամ Դիոնեսիոս բռնաւոր մեր-
ժեալ 'ի թագաւորութենէն Սիրա-
կուսայ առանձնացաւ 'ի Կորնթոս, և
առ աղքատութեանն ձեռն 'ի գործ
արկ ուսուցանել մանկունս՝ զի մի
սովալլուկ կորիցէ, եմուտ յաւուր
միում Դիոգինէս 'ի դպրոց նորա, և
լուաւ զհեծել և զարտասուել ման-
կանց. իսկ Դիոնիսեայ կարծելով թէ
մտանէ Դիոգինէս մխիթար մատու-
ցանել 'ի վիշտս տարագրութեան իւ-
րոյ, ասէ ցնա. Շնորհակալ եմ զքէն,
Դիոգինէս. տե՛ս աւասիկ զայլափոխ
կերպարանս բաղդին։ Եւ պատասխա-
նի Դիոգինէս. Ա՛յ հիգացեալ. սքան-
չացեալ եմ մեծապէս ընդ ապրել քո
ցայս վայր՝ որ այնչափ զեան գործեցեր
'ի թագաւորութեան քում. և արդ
տեսանեմ զի չես ընդհատ 'ի վարժա-
պետութեանդ՝ քան զոր էիր յարքայու-
թեանդ։ Դէպ եղև նմա տեսանել զո-
մանս՝ որք զոհ մատուցանէին դից՝
խնդրելով զծնունդ որդւոց. և ասաց
ցնոսա, հետամուտ էք առաւել ստա-
նալ որդի քան այր առաքինի։ Տե-
սեալ զերիտասարդ անկեալ 'ի բանս
անհամեստս, ասէ. ո՞չ ամաչես ձգել

զսուր կապարեայ՝ 'ի փղոսկրեայ պա-
տենէ։ Որք միանգամ դրուատեն, ա-
սէր, զառաքինութիւն, և ոչ ինչ գոր-
ծեն յորոց ուսուցանեենն՝ նման են
նուագարանաց՝ որք քաղցր ներդաշ-
նակեն, առանց ինչ զգալոյ։ Ասաց
ցնա ոմն. չեմ ես պատկանաւոր յի-
մաստութիւն. ետ պատասխանի Դիո-
գինէս, իսկ ընդէր կեաս՝ թէ վերջա-
ցեալ է քո 'ի յուսոյ բարիոք կենաց։
Ամենայն մարդիկ՝ ասէր, 'ի ստրկու-
թիւն կեան. ստրուկք հպատակք են
տերանց իւրեանց, և տեարքն՝ կրից
իւրեանց։ Ամենայն ինչ 'ի սովորու-
թեան սահմանի։ Այր յօրացեալ 'ի
փափկութիւնս և 'ի հեշտութեան՝ ոչ
ևս կարէ հրաժեշտ տալ անտի. և
ընդհակառակն՝ արհամարհութիւն
հեշտին կենաց քաղցր է որոց զներհա-
կանն վարժեալք իցեն։ Ըստ շնական
անուանն՝ տկարութիւն իմն անուա-
նէր զամօթխածութիւն. և բնաւ ոչ
ամաչէր զանարժանս գործել 'ի հրա-
պարակի։ Թէ ընթրելն՝ ասէր, բա-
րիոք է, ընդէր ոչ կերիցեմ 'ի վաճա-
ռավոդոցս որպէս 'ի սենեկի։ Հարցին
ցնա, թէ մեռանիս՝ ուր թաղեսցուք
զքեզ. ասէ. 'ի բացօթեայ վայրի։ Եւ
որպէս ոչ երկնչիս՝ ասեն, թէ կերիցեն
զքեզ հաւք և գազանք. ետ պատասխա-

նի Դիոգինէս. դիք առ իս գաւազան մի, զի 'ի բաց վանեցից զնոսա թէ գայցեն յիմ վերայ։ Ասեն. այլ դու յայնժամ իմանաս և ոչինչ. յաւել և Դիոգինէս. ապա զի երկնչիցիմ թէ կերիցեն, և կամ ոչ, թէ ես ոչ իմանամ բնաւ։

Ըստ աւանդելոյ ումանց՝ մեռաւ Դիոգինէս 'ի հասակի ամաց իննսնից, առ անմարսողութեանն 'ի սակս ուտելոյ հում զոսն եղին։ Այլք պատմեն՝ թէ տեսեալ զանձն յեցեալ յալիս ծերութեան՝ զիւրովին գնաց՝ արգելս արկեալ տուրևառի շնչոյն։ Յերկրորդում աւուր վաղ քաջ ընդ առաւօտն կանխեցին առ նա բարեկամք նորա, և գտին զնա պատատեալ 'ի վերարկուի իւրում. բացեալ զնա երկմտէին թէ 'ի քուն իցէ, զի արթուն էր նա բնութեամբ. և ահա գտին զնա անշնչացեալ։ Եւ եղև հերձուած 'ի մէջ նոցա՝ թէ ո՞թաղեսցէ զնա, մինչև փոքր մի ևս՝ և կռուով մաքառել. այլ 'ի վերայ հասեալ իշխանաց և աւագաց Կորնթոսի՝ խաղաղացուցին զնոսա։ Մեծաշուք յուղարկաւորութեամբ թաղեցաւ Դիոգինէս մօտ 'ի դուռն քաղաքին՝ 'ի կողմն կրճին Կորնթոսի. և առ գերեզմանաւն կանգնեցաւ սիւն, յորոյ վերայ եդին անդրի շուն 'ի պարոսեան մարմարիոնէ։ Մեռաւ Դիո-

գինէս յաւուր մեռանելոյ Աղեքսանդրի
'ի Բաբելոն 'ի ՃԺԴ ողիմպիադին։
Կանգնեցին յանուն Դիոգինեայ ան-
դրիս բազումն՝ հանդերձ արձանա-
գրութեամբ։

ԿՐԱՏԷՍ

Ժամանակակից Պողեմոնի՝ որ յաջորդն էր Քսենոկրատեայ 'ի պլատոնական դպրոցին, առ ՃԺԴ ողիմպիադաւ։

ԿՐԱՏԷՍ կիւնիկեան էր մին 'ի նշանաւոր աշակերտաց մեծահամբաւն Դիոգինեայ, որդի Ասկոնդոսի՝ թեբացի, յազնուական և 'ի մեծատուն ազգէ։ Առաջիկայ գտեալ նորա ուրեք թատերական ողբերգութեանց՝ յորում տեսանէր զի Տեղեփոս քանէր զամենայն զոր ինչ ունէր ճոխութիւն՝ զի աշակերտեսցի կիւնիկեանց, 'ի նոյն նախանձ վառեցաւ և ինքն, եդ 'ի մտի զայնր ուսման զհետ ընթանալ. վաճառեաց զամենայն ստացուածս իւր, և զոր ինչ հաւաքեացն առաւել քան զերկերիւր տաղանդ՝ յանձն արար սեղանաւորի ումեմն՝ աղաչեալ զնա՝ դարձուցանել զայն առ որդիս իւր՝ թէ կարօտ գտցին և անձեռնհաս. իսկ թէ և նոքա յիմաստասիրութիւն թեւակոխեսցեն՝ բաշխել զայն արծաթ առ քաղաքակիցս իւր առ թեբացիս. քանզի իմաստասէրք չկարօտին և ոչ

խմիք։ Աղերս արկին նմա ազգականք նորա՝ փոխել զտարազ կենացն զոր յանձին կալաւ. այլ նա 'ի բաց վանեաց զնոսա 'ի տանէ իւրմէ՝ սպառնացեալ դանակոծ առնել զնոսա։

Ամարայնի ագանէր վերարկու թանձր, և ձմերայնի նօսր և թեթև՝ զի մարզեսցի ամենայնի հանդուրժել։ Անխտիր անամօթ մոռանէր յամենայն տունս կշտամբել զոր ինչ անդ տեսանէիցէ դժպատեհս. զհետ ընթանայր ամենայնի որոց խեղաթիւր էին կեանք՝ նախատէր և յանդիմանէր զնոսա՝ զի յիւր վերայ շրջեսցէ զցասումն նոցա, և կազմ լիցի տանել ամենայնի ըստ իւրաքանչիւր պատահարաց. դժնդակ էին կեանք նորա՝ որպէս և այլոց կիւնիկեանց. և ջուր միայն էր ըմպելի նորա։

Զայնու ժամանակաւ էր ատենաբան ոմն Մետրոկղ անուն. սա ոչ ևս իշխէր երևել 'ի հրապարակս և 'ի դատաստանս. զի բազում անգամ դէպ լինէր նմա յատենաբանելն փուքս արձակել շառաչմամբ, ընդ որ պատկառէր յոյժ. այնր աղագաւ փակեալ կայր 'ի տան իւրում. եղեալ 'ի մտի՝ անդէն անցուցանել տխրութեամբ զմնացուած աւուրց կենաց իւրոց։ Իմացեալ Կրատեսի զկրսն, անդէն վաղ-

վաղակի առեալ եկեր լուվիաս շատ՝ վիքով ուռուցանել զորովայնն. և յաբուցեալ գնաց 'ի տուն Մետրոկղի. խօսեցաւ ընդ նմա բազում ինչ 'ի հաւանեցուցանել զնա մի ինչ պատկառել ընդ այն, զի ոչ չար ինչ էր եղեալն. այդ, ասէ, ամենայն մարդոյ պատահար է, և չեն ինչ զարմանք թէ և ինձ լինի։ Մինչդեռ բանքն 'ի բերանի էին 'ի յայտ գայր աղդեցութիւն լուվիասին։ Յորինակէ անտի Կրատեսի քաջալերեցաւ Մետրոկղ, և ծանուցեալ զպատճառս վեհերոտութեանն՝ 'ի բաց եթող զամենայն ակնածութիւն. 'ի հուր կիզեաց զամենայն գիրս զմնացեալս նմա 'ի Թէոփրաստեայ յորս պարապեալ էր յընթերցումն. և յաբեցաւ 'ի Կրատէս՝ եղեալ ընդ ձեռամբ նորա քաջանուն կիւնիկեան։ Նա և զկնի նշանաւոր դտաւ Մետրոկղ 'ի կարգի իմաստասիրաց այնր ուսման. և եղեն նորա բազում աշակերտք երևելիք։ Սակայն 'ի ծերութեան իւրում տաղտկացեալ 'ի կենաց՝ անձամբ զանձն խեղդեաց։ Այլ մեք դարձցուք 'ի Կրատէս։

Այր տգեղ էր սա. և զի օտար իմն և սոսկալի երևեաց ի՝ կարէր զվերարկուաւ իւրով մոր թս խոյոց, մինչև զի 'ի տեսանել ուրուք զնա՝ ապշեալ հիա-

նայր, թէ մի գուցէ վայրենի գազան ինչ լցէ։ Դարձեալ և յաջողակ էր յամենայն ազգս հրահանգաց, և իբրև երևէր 'ի կրկէսս և 'ի հրապարակս 'ի գօտէմարտութեան սակս և յայլ ինչ գործ՝ ծաղու զուարթացուցանէր զամենայն հանդիսականս կերպարանօքն իւրովք և այլատարազ պճնութեամբն. թէպէտ ինքն ոչինչ ցասնոյր ընդ այն ամենայն, այլ ամբարձեալ զձեռն աղաղակէր. Համբեր վայրիկ մի ով Կրատէս. զի որք ծիծաղինն զքեզ՝ լացցեն յետ սուղ ժամու, և դու բերկրեսցիս յանձն քո՝ տեսեալ զի երանի տան քեզ, և աւաղ կարդան անձանց վասն վատութեան իւրեանց։

Գնացեալ երբեմն առ վարժապետ ոմն՝ մինչորդ լինել վասն միոյն յաշակերտաց նորա. փոխանակ փարելոյ զծնգոք վարժապետին՝ գիրկս արկ զաղ դերոք նորա։ Անպատեհ իմն համարեալ զայն առնն մինչ փոքր մի ևս 'ի ցասումն բրդէր, ասէ ցնա Կրատէս, և զի՞նչ խտիր է, ո՞չ քո են ազդերքդ իբրև զծունգս քո։

Յանհնարիցն է, ասէր, գտանել այր՝ որ ոչ երբէք յանցուցեալ իցէ. բայց և 'ի նուան թէպէտ իցեն հատք ինչ ապականեալք, ոչ վասն այնր չիցեն դեղեցիկ։

Խրատէր Կրատէս զաշակերտս իւր հրաժարել յամենայն ընչից աշխարհիս. ես զայն ունիմ ասէր, զոր ուսեալն եմ. զայն ամենայն թողի որոց սիրեն զպերճութիւն։ Յորդորէր զնոսա՝ խուսել ամենևին 'ի հեշտալեաց. զի չիք ինչ պատկանաւոր առն իմաստասիրի քան զաղատութիւն. և քան զկամն չիք տէր բռնակալ։ Քաղցն, ասէր, շինչուցանէ զսէր. և թէ ոչ բաւեսցէ այդ դարման, անդ ժամանակն զայն 'ի գլուխ հանէ. ապա թէ ոչ, չինայ ինչ այլ, բայց առնուլ պարան, և խեղդել զանձն։ Երբ բանք լինէին վասն ապականեալ սովորութեան աւուրց իւրոց՝ ստգտանէր և զանմտութիւն մարդկանն՝ որք յիրս ամօթալիս բնաւ յարծաթ ոչ խնայեն, շատ է թէ յագեսցին ցանկութիւնք նոցա. իսկ խուսեն և խորշին եթէ լինիցին վասն օգտակար իրաց։

Կրատեսի է և հռչակեալն այն յիշատակարան, տալ խոհակերի տասն ճնաս, և բժշկի դրամ մի. հինգ տաղանդ մարդելուզի, և ծուխ՝ քաջ խորհրդականի. տաղանդ մի պոռնկի, և դանդ մի իմաստասիրի։

Իբրև հարցանէին ընդ նա՝ յինչ պէտս սատարէ քեզ իմաստասիրութիւն, տայր պատասխանի. զի ընդոմք

շատացայց, և կեցից անհոգ և անխռով։
Յղեաց առ նա Դեմետրիոս փաղերէոս
գինի և հաց։ Ցասուցեալ Կրատեսի
ընդ այն զի կարծեաց Դեմետրիոս կա-
ղոտեալ գինւոյ զայր իմաստասէր,
դարձոյց առ նա զգինին, յոգւոց ե-
հան և ասէ, իցէ՛ թէ գոյին և աղբերք
հացի։ Արձակ համարձակ աղատու-
թիւն Կրատեսի մեծապէս հաճոյ գտաւ
Իպարքեայ քեռ Մետրոկղի. մինչև զի
զանց արարեալ զինդրովք բազմաց,
որք զհետ էին 'ի կնութիւն առնուլ
զնա, սպառնացաւ ծնողաց իւրոց ան-
ձին առնել՝ թէ ոչ ամուսնացուսցեն
զնա ընդ Կրատեսի։ Ջան 'ի գործ ար-
կին ծնողք նորա քաղցրութեամբ 'ի
բաց հանել 'ի նմանէ զայն խորհուրդ.
այլ զի ոչ յաջողեաց նոցա զոր կա-
մէին, դարձեալ 'ի նա ինքն Կրա-
տէս ապաստան եղեն, աղաչեալ զնա
մերժել յաղջկանէն զմտածութիւնն
զայն։ Իսկ նորա յաւուր միում դէպ
ժամանակ գտեալ՝ մերկացաւ առաջի
նորա՝ ցուցանել նմա զսապատոզն և
զանգեղեայ կերպարանս իւր, միան-
գամայն առաջի արար նմա զվերար-
կուն, զմախաղն և զդաւազան, և ա-
սէ. զի մի խաբեսցիս ինչ, ահա այր քո,
և զոր ինչ ունի նա. արդ տես քաջ զոր
ինչ կամիցիս առնել. զի թէ ինձ կին

լեցիս՝ այս միայն լեցի հարստութիւն քո։ Ոչինչ երկմտեցաւ Իպարքիա, ընտրեաց զԿրատէս քան զամենայն ինչ իւր՝ և քան զայն ամենայն որոց ակնունէր. ոչ եթող երբէք զայր իւր, ըզհետ ընթանայր նորա յամենայն տեղիս. և ընդ նմա էր 'ի ժողովս ամենայն։

Մինչդեռ էին սոքա երկոքեան 'ի կոչունս ուրեք առ Լիւսիմաքեայ, Իպարքիա առակս արկ Թէոդորոսի ամպարշտի որ յայնժամ անդ էր, և ասէ. Եթէ Թէոդորոս 'ի գործելն չէ ստգտանելի, ապա նոյնպէս և Իպարքիա 'ի գործելն զնոյն. արդ Թէոդորոս հարկանելով զանձն ոչ գործէ տարաղէպ, ապա և ոչ Իպարքիա 'ի հարկանելն ըզԹէոդորոս. ասաց, և եհան ապտակ Թէոդորոսի։ Ոչինչ պատասխանի ետ Թէոդորոս յայնժամ բանիցն այնոցիկ. այլ կորզեալ 'ի Թիկանց Իպարքեայ զվերարկուն ընդ որ ոչ եցոյց զարմացումն կինն. ասէ, ահա՛ կին՝ որ 'ի բաց եթող զօթոցն և զոստայն։ Ճշմարիտ է՝ ասէ Իպարքիա. այլ կարծիցես դու թէ ես յանխորհուրդս ընտրեցի զնմաստասիրութիւն քան զգործ կանացի։

Յամուսնութենէ երկոցուն 'ի մաստասիրացդ ծնաւ որդի Պասիկլոս անուն, յորոյ 'ի դաստիարակութիւն

խնամ կալան հայր և մայր նորա՝ սնու-
ցանել զնա կիւնիկեան իմաստասիրու-
թեամբ։ Եհարց ցնա Աղեքսանդր. թէ
կամիցիս զի նորոգեցից զհայրենիս քո.
ետ պատասխանի Կրատէս, թերևս ե-
կեսցէ այլ ոք Աղեքսանդր 'ի քակտել
զայն։ Զկան, ասէր, այլ հայրենիք.քան
վաղքատութիւն և զարհամարհու-
թիւն փառաց՝ յորոյ վերայ չկայ իշ-
խանութիւն բաղդի. քաղաքակից եմ,
ասէր, Դիոգինեայ. և վասն այսր
զերծ եմ 'ի նախանձոտաց։ Ճոխու-
թիւնք մեծատանց ծառք են՝ բուսեալ
'ի լերինս և 'ի ժայռս անմատոյցս, զո-
րոց զպտուղսն ցինք և ագռաւք ուտեն.
նոյնպէս մարդելոյք և կանայք պոռ-
նիկք ուտեն զինչս մեծամեծաց։ Մե-
ծատուն շուրջ պատեալ 'ի շողոքոր-
թաց որթ է մատնեալ 'ի բերան գայ-
լոց։

Հարցեալ՝ մինչև ցերբ արժան է
հպատակել իմաստասիրութեան, տայր
պատասխանի. մինչև յայտ յանդիման
լիցի թէ նոքա՝ որոց տուաւ իշխանու-
թիւն առաջնորդութեան զօրու, ա-
րածողք են իշոց։

Արհամարհէր Կրատէս՝ որպէս և
այլ կիւնիկեանք զամենայն գիտու-
թիւնս բաց 'ի բարոյականէն. ապրե-
ցաւ ընդ երկար, և կորացաւ 'ի յե-

տին ամս ծերութեանն։ Խմացեալ ըղ-
մօտել կատարածի կենացն՝ ուշի ուշով
միտ եդեալ 'ի քննութիւն անձին՝ ասէր.
Ա՛հ եղկելի՛ սապատողն. ծերութիւն քո
վարէ զքեզ 'ի գերեզման. տեսցես ընդ
հուպ զդժոխական ապարանսն։ Ա՛ե-
ռաւ առ սպառել ուժոյ զօրութեանն։
Ծաղկեաց զժամանակաք ճաճ, ողիմ-
պիադին, յորում զՀամբաւի հարեալ
էր 'ի Թեբէ քաղաքի, և ստուերածս
ածէր զայլովք իմաստասիրօք որք էին 'ի
նմին ուսմանէ։ Սա ինքն էր վարժա-
պետ Զենոնի՝ առաջնորդի մեծահամ-
բաւ աղանդոյն ստոյիկեանց։

ՊԻՒՌՈՆ

Երիցագոյն ժամանակաւ քան զԵպի-
կուրոս, երևեալ զհարիւրորդ քսան-
որորդ օղիմպիադաւ։

ԱՌԱՋՆՈՐԴ է Պիւռոն՝ ուսման
անուանելոյ պիւռոնեան կամ սկեպ-
տիկեան, որդի էր Պլիստարքոսի ու-
ռուսն Յելէա քաղաքէ 'ի Պեղոպոնե-
սոս. զառաջինն միտեցաւ 'ի նկարչու-
թիւն. յետ այնորիկ աշակերտեցաւ
Դրիսոնի ումեմն, և ապա իմաստասի-
րին Անաքսագորայ, յոր յարեցաւ
սրտի մտաք, և զհետ ընթացաւ զնոցա
մինչև 'ի Հնդիկս։ Յերկարաձիգ ուղևո-
րութեան անդ բովանդակ ջան և գործ
էր Պիւռոնի ելանել և մտանել առ
մոգս, առ մերկիմաստակս, և առ ամե-
նայն իմաստասէրս արևելեայց, զորոց
'ի միտ առեալ բովանդակ զգիտուու-
թիւն նոցա, ոչինչ եգիտ 'ի նոսա ար-
ժանի իմաստասիրութեան. ամենայն
ինչ անըմբռնելի թուեցաւ նմա, ճըշ-
մարտութիւնն թաղուցեալ յան-
դունդս, և ոչ այլ ինչ բանաւոր՝ բայց
յերկմիտս լինել զամենայն իրաց, և

ոչինչ երբէք սահմանել որոշակի։ Ամենայն մարդիկ՝ ասէր, կարգաւորեն զկեանս իւրեանց ըստ կարծեաց կարծեաց. գործեն միշտ առ սովորութեան, և քննեն զամենայն ինչ ըստ օրինաց և ըստ սովորութեանց հաստատելոց յաշխարհս իւրաքանչիւր, այլ գիտէ բնաւ և ոչ ոք զլաւութիւն և զչարութիւն իրացդ այդոցիկ։

Աղքատ ոմն էր Պիւռոն, և 'ի սակաւուց ոմանց ծանուցեալ, պարապեալ նախ յարհեստ նկարչութեան. բազումք յընտիր ընտիր նկարուց նորա ընդ երկար ժամանակ պահեցան յԵլէա։ Մենակեաց էր բնութեամբ, և բնաւ ոչ երևէր 'ի ժողովս ուրեք։ Ստէպ ճանապարհորդէր, և ոչ ումեք ծանուցանէր զտեղին ուր դնայր. հանդուրժէր ամենայնի երկայնմտութեամբ. չէր վստահ 'ի զգայութիւնս իւր, մինչև չկամել խոտորել ո՛չ յաջառաժից, ո՛չ 'ի վախից, և ոչ յայլոց վտանդից. և յանձն առնոյր արդեօք խորտակիլ ընդ կառաք, քան խուսել 'ի բաց. վասն որոյ ոմանք 'ի բարեկամաց նորա ցանգառ նմա կային՝ խնամ ունել նմա։ Անդրդուելի էր բնաւորութիւն նորա. նոյնպէս և հանդերձք նորա յամենայն ժամ միօրինակ։ Յորժամ խօսէր ինչ ընդ ումեք, և այրն թողեալ զնա 'ի

բաց գնայր, ոչ լուէր Պիւռոն 'ի բանից՝ մինչև 'ի գլուխ հանել զխօսն։ ընդ ամենայն մարդկան միօրինակ անխորաբար վարէր։

'Ի սուղ ժամանակի զհամբաւի հարաւ անուն Պիւռոնի ընդ համօրէն Եղլադա. և բազումք զհետ գնացին զուսման նորա։ Ծանուցեալ ելէացւոց զվաստակս Պիւռոնի պատիւ մեծասպաս ձօնեցին նմա, կարգեալ զնա գերագոյն քրմապետ կրօնից պաշտամանց՝ և ռաթենացիք գրեցին զնա քաղաքացի իւրեանց։ Սիրելի էր Եպիկուրոսի՝ կենաց կցորդ լինել ընդ սմա, և սքանչացեալ էր ընդ հանգամանս կենաց սորա։ Յաչս ամենեցուն համարեալ էր այր աղատ, և զերծ յամենայն ամբոխմանց, յունայնութեանց, և 'ի անոտեաց բովանդակ։ Եւ միով բանիւ ասել աստուած ոմն համարեալ էր 'ի վերայ երկրի՝ ըստ հաւաստելոյն Տիմոնի իմաստասիրի. անվրդով անցուցանէր զաւուրս իւր ընդ Փիլիստայ քեռն իւրոյ՝ աշակերտելոյ իմաստասիրութեան։ Գնայր 'ի վաճառանոցս վաճառել ձագս թռչնոց և խոչքորս. և ինքնին աւել ածէր տան իւրոյ։

Յաւուր միում դիմեաց շուն մի 'ի վերայ նորա խածանել զնա, և Պիւռոն 'ի բաց վանեաց զնա. իսկ յաղ-

գել ուրուք ցնա՝ թէ զընդդէմն գործէ զվարդապետութեան իւրոյ, ետ պատասխանի Պիւռոն. որչափ դժուարին է՝ թողուլ զմոլորութիւնն կանխակալ, և ծանր է՝ աղատ կացուցանել զանձն յամենայնէ. սակայն հանդերձ այնու ամենայնիւ՝ պարտ է մեզ բուռն առնել անձանց մերոց, և զմտաց մերոց զօրութիւն 'ի գործ արկանել։ Դարձեալ յանցանել նորա երբեմն ընդ ծով, յարեաւ մրրիկ ուժգին, մինչև նաւն 'ի վտանգի լինել 'ի խորտակիլ. և ամենեքին որք ընդ Պիւռոնի էին՝ ահիւ մեծաւ տագնապէին, միայն Պիւռոն անվրդով կայր 'ի խռովայոյզ պահուն, և ցուցանէր նոցա զխոչքոր մի որ անյագութեամբ ուտէր մօտ նոցա, որպէս թէ 'ի նաւահանգստի կայր նաւն. և ասէր ցնոսա՝ թէ պարտ է իմաստնոց նմանել աներկիւղ հանդարտութեան այդր փոքու կենդանւոյ. և անալէկոծ մնալ 'ի վիշտս ամենայն։

Ունէր Պիւռոն յանձին իւրում կեղս իմն շարաւոտս. և որ խնամէր զնա՝ յաւուր միում կտրեաց և խարեաց որպէս պէտք էին, ընդ որ ոչ ցաւեաց և ոչ տագնապեցաւ Պիւռոն։ Այս իմաստասէր համարէր յանձին իւրում թէ գերագոյն աստիճան կատարելութեան՝ յոր հասանել կա-

լասցէ մարդ յայսմ աշխարհի՝ է զգու-
շութիւն 'ի սահմանելոյ ինչ։ Նոյն-
պէս և աշակերտք նորա զուգաձայն
էին թէ չմարթի հաւաստեաւ գիտել
ինչ. այլ ոմանք 'ի նոցանէ խնդրէին
զճշմարտութիւն՝ յուսով գտանելոյ,
և այլք յուսահատ եղանէին 'ի գտանե-
լոյ երբէք. էին որք կարծէին թէ հնար
է հաւաստել զմի ինչ և ելթ, այս ինքն
զայն՝ թէ գիտեն՝ զի ոչինչ գիտեն,
թող զորս չգիտէին և զանգիտանալն։
Ինչ ինչ 'ի կարծեաց աստի յածէր և
յառաջ քան զաւուրս Պիւռոնի. այլ
զի ոչ ոք մինչև ցայնժամ յայտնու-
թեամբ բանս 'ի մէջ արկեալ էր վասն
ամենայն իրաց յերկմիտս լինելոյ,
յայնմ հետէ և այսր համարեցաւ Պիւ-
ռոն գլուխ ամենայն սկեպտիկեանց։
Իսկ զայդ անուն կալան 'ի յոյն ձայ-
նէ՝ որ մտածող լսի առ նոսա։ Պատ-
ճառ բանից իմաստասիրիս որ յերկ-
բայս արկանէր զամենայն դատաստան
մտաց՝ այս էր, զի մեք հասու լինիմք ի-
րաց իրաց ըստ հայեցուածոյ վերբերու-
թեանն զոր ունին առ միմեանս. զորոց
զներգործութիւնն տգիտանամք մեք։
Օրինակ իմն տերևք ուռենւոյ քաղց-
րաճաշակ են այծից, և դառնահամ 'ի
քիմս մարդկան. մոլեխինդ պարարէ
զլորամարդիս, և զմարդիկ սպոնանէ։

Դեմոփոն խնամածու սեղանոյ Աղեքսանդրի՝ կիզայր 'ի ստուերի, և զոփայր յարևու։ Անտրոն Արգոսացի ընթանայր ընդ աւազուտ անապատն Լիբիոյ՝ ոչ կարօտելով ջրոյ յարբու�։ Որ ինչ իրաւացի է 'ի դաւառի ուրեք, անիրաւ դատեալ է յայլում. և որ ինչ առաքինութիւն համարեալ է 'ի միում, ախտ է անգոսնելի առ այլովք։ Առ Պարսս մտանեն հարք առ դստերս իւրեանց, որ առ Յոյնս յանցուցեալ է դժնդակ։ Մասսագետք ժողովուրդ Սարմատիոյ՝ ջունին խտրութի ամուսնաց. իսկ այլ ազինք բացէ 'ի բաց հրաժարեն յայդմանէ։ Գողութիւն առ կիլիկեցիս քաջութիւն է, և առ Յոյնս պատուհաս կրէր։ Արիստիպպոս զայս ինչ հաճոյական գրեաց, և Անտիսթենէս զայլ ինչ, և Եպիկուրոս զայլ։ Ոմանք հաւատան նախախնամութեան, և կէսք բացէ 'ի բաց մերժեն զայն։ Եգիպտացիք թաղեն զմեռեալս իւրեանց. կիզուն հնդիկք, և պէոփնացիք 'ի լիճս ընկենուն։ Որ ինչ ընդ մի երանդ տեսանի 'ի լոյս արևու, այլ՝ բինակ երևի 'ի նշոյլ լուսնի, և այլ դարձեալ առ լուսով ճրագի։ Պարանոց աղաւնոյ 'ի բազում գոյնս փողփողէ ըստ հայեցուածոց զանազան ըզդիրսն ունելոյ։ Գինի չափով արբեալ՝

զօրավիգն է սրտի. իսկ առաւելու-
թեամբ զեղծեալ 'ի նմին՝ ամբոխէ
զզդայութիւնս, և զմիտս խաւարէ։ Որ
ինչ աջակողմեան է միոյն, ձախակող-
մեան է հանդիպոյ կացելոյն։ Յունաս-
տան որ յարևելից կայ Իտալիոյ. զարև-
մտեան զկողմն ունի առ աշխարհաւն
Պարսից։ Որ սքանչելիք են 'ի տեղւոջ ու-
րեք, սովորական և յաճախեալ է այ-
լուր։ Մի և նոյն այր՝ հայր է ոմանց,
և եղբայր այլոց. ըստ այսմ օրինակի
ներհակութիւնն երևեալ յամենայնի՝
թելադիր լինէր Պիւռոնի և աշակեր-
տաց նորա՝ բնաւ ոչինչ որոշել իբր
հաւաստի. քանզի ասէին չի՛ք ինչ յաշ-
խարհի՝ լի բովանդակ ծանօթացեալ
մեզ՝ մինչև ոչ ևս կարօտել համեմա-
տելոյ զնա ընդ այլոց նմանեաց։ Եւ զի
ընդունէին և ոչ մի ճշմարտութիւն՝
'ի բաց հերքէին և զապացոյցս ամե-
նայն. քանզի ասէին. պարտ է զի ա-
մենայն ապացոյց հիմնեսցի 'ի վերայ
պարզ և բացայայտ իրաց՝ որ ոչ ևս
կարօտ իցէ ապացուցի. արդ յաշխար-
հիս չկայ ինչ մի այդպիսի, զի թէպէտ
և ինչ ինչ յայտնագոյն թուիցին, սա-
կայն տակաւին պարտապան եմք ցու-
ցանել զճշմարտութիւն իրացն զոր
այնպէս հաւատամք։

Պիւռոն՝ որպէս և Հոմերոս, զուգա-

կըշռէր զմարդիկ տերևոց ծառոց՝ որք յաջորդեն զմիմեանս, և նոր սաղարթք բուսանին փոխանակ անկելոցն։ Մեծ եղև պատիւ նորա 'ի կեանս իւրում յամենայն բարեկամաց իւրոց. և մեռաւ 'ի հասակի ամաց ինանից։

ԲԻՈՆ

Աշակերտ էր Թէոփրաստոսի յաջորդին Արիստոտելի 'ի Ճեմարանին. առ ժամանակաւք հարիւրորդ չորեքտասաներորդ ողիմպիադին։

ԲԻՈՆ իմաստասէր աշակերտեցաւ ընդ բազում ժամանակս 'ի պղատոնեան լսարանին. և տաղտկացեալ անտի՝ ծաղրէր և խաղ առնէր զկանոնաւք նորին, մինչև իսպառ հրաժարեաց անտի։ Ստացաւ վերարկու մի, գաւազան և մախաղ, և յարեցաւ յուսումն կիւնիկեանց. այլ զի էր և 'ի նմա ինչ ինչ՝ ոչ ըստ իւր քմաց՝ յաւել 'ի նոյն բազում ինչ 'ի կանոնացն աւանդելոց 'ի Թէոդորոսէ, յաշակերտէ և յաջորդէ Արիստիպպոսի 'ի կիւրենեան դպրոցին։ Յետ ամենայնի աշակերտեցաւ Թէոփրաստոսի՝ որ յաջորդն էր Արիստոտելի։

'Նրբամիտ էր Բիոն, և քաջ տրամաբան. դերապանծ 'ի քերթողութեան և յերաժշտութեան, և մեծապէս յօժարեալ յերկրաչափութիւն։ Ոչ ընդ երկար մնայր 'ի տեղւոջ ու-

րէք. անցանէր քաղաքէ 'ի քաղաք, և գոանիւր 'ի կոչունս ամենայն, յորս հանճարո

տեղւոջ ուրեք, անդ ամուսնացաւ ընդ նմա. և ապա չգիտեմ՝ վասն որոց յանցանաց վաճառեցաւ կնաւ իւրով և որդւովք։ Եւ յայնժամ մանուկ էի վայելչադեղ, գնեաց զիս ատենաբանն ոմն. և 'ի մեռանելն՝ զիս կացոյց իւր ժառանգ. իսկ իմ պատառեալ զկտակն և այրեալ 'ի հուր՝ անցի ՅԱԹԷՆԱ, ուր հպատակեցի իմաստասիրութեան։ Ահա արդ գիտես զանուն իմ, զհայրենի երկիր, զհայր իմ, զմայր, զծագումն որպէս և զիս իսկ գլխովին։ Ոչ ևս քեզ նորանոր առասպելս կարկատեցեն Պերկէոն և Փիլոնիդէս՝ առ 'ի զուարթացուցանել զքեզ։

Հարցաւ Բիոն երբեմն՝ ո՞վ է հիդացեալ քան զամենայն մարդ. ետ պատասխանի. նա որ հնարի երջանկանալ քան զամենայն մարդ, և վարել կեանս հեշտին և անդորր։ Ծերութիւն՝ ասէր, նաւահանգիստ է ամենայն չարեաց, յոր հասանեն ամենայն աղէտք։ Պարտ է 'ի համար արկանել զայն ամս մեայն՝ յորս ոք եհաս փառաց։ Գեղեցկութիւն՝ պարականոն իմն բարի է՝ որ չէ ընդ մերով ձեռամբ։ Ճոխութիւն՝ շաղկապ է ամենայն մեծամեծ գործոց. և առանց նորին՝ ո՛ր չափ և աջողաձեռն իցէ մարդ՝ կատարէ և ոչինչ։

Հանդիպեալ երբեմն առն ումեմն որ վատնեալ էր զամենայն ինչս իւր՝ ասէ ցնա. եկուլ երկիր զԱմիլիարաոս հարցուկ Թեբացի, իսկ դու զերկիր կլեր։ Ատենախօս ոմն՝ այր վայրագ բարոյիւ՝ ասէ ցնա. կամիմ աղերսել զքեզ վասն իրաց ինչ. ետ պատասխանի Բիոն. մոադիւրագոյնս կատարեցիս, միայն Թէ 'ի ձեռն այլոց ասասցես ինձ զոր խնդրես, և ոչ դու քեզէն։ Դարձեալ՝ մինչ անցանէր ընդ ծով նաւու, և բազում արք չարագործք կային անդ, դերի վարեցաւ 'ի հինից նաւն. յայնժամ ասէին ընդ միմեանս եղեռնաւորքն, չեմք ապրանաց եԹէ 'ի ծանօԹուԹիւն դայցեմք։ Եւ ես, ասէ Բիոն, անշուշտ 'ի մահ մատնիմ Թէ անծանօԹ մնացից։

Տեսեալ զայր ոք ադահ զի անցանէր՝ ասէր ցնա. դու ոչ ունիս զՀոխուԹիւնս քո, այլ նոքա գրաւեալ ունին զքեզ։ Դժնդակ չար համարէր զէդիտելն հանդուրժել չարեաց։ Զի՛ արժան, ասէր, անդոսնել զծերուԹիւն ուրուք, քանզի ամենայն մարդոյ հնար է հասանել 'ի դոյն վիճակ։ Լաւագոյն է յիւրմէն տալ, քան զօտարին խնդրել. քանզի առ ձեռն պատրաստ է երջանկուԹիւն՝ նա և 'ի նուազուԹեան ստացուածոց. և ցանկացողն

յամենայնի կարօտեալ է։ Յանձնապատանութիւն չէ միշտ յանցումն ծանր յերիտասարդս. իսկ ծերոց պարտք են ամենայն ուրեք խորհուրդ հարցանել զգօնութեան։ Զբարեկամս ստացեալս միանգամ՝ պարտ է պահել միշտ այնպէս, զի մի թուլցիցի միանալ մեզ ընդ վատ մարդկան, և խորշել 'ի զդաստից։ Խրատ տայր բարեկամաց իւրոց՝ համարել զանձինս յառաջադէմս յիմաստասիրութեան՝ երբ նոքին օրինակաւ ընկալցին զարհամարհանս իբրև զպատիւս։ Զզգօնութիւն այնչափ դեր 'ի վեր դասէր քան զամենայն առաքինութիւնս, որպէս տեսանելիք պատուականագոյն են առ այլոքք զգայարանօք։ Ամբարշտութիւն՝ ասէր, ուղեկից չար է խղճի մտաց. քանզի անհնարին է ումեք համարձակել 'ի բանս՝ երբ խիղճ մտաց նորա ստգտանէ զնա վասն իրաց իրաց, և համարի յանձին իւրում՝ զայրացեալ զնա 'ի վերայ իւր։ Որք միանգամ ոչ կարացեալ վերամբառնալ մինչև յիմաստասիրութիւն՝ զեռան զմարդկեղէն գիտութեամբք՝ են իբրու սիրողք Պենելոպեայ կնոջն Ոդիսեայ, որք շատ համարէին լինել ընդ նաժիշտ նորա՝ առ 'ի չգոյէ տիկնոջն։

Յորժամ 'ի Հռոդոն կղզւոջ էր

Բիոն, տեսեալ զանթենացիս որ անդ՝ ջանացեալ բովանդակ 'ի ճարտասանութիւն և յատենախօսութիւն, սկըսաւ ինքն ուսուցանել զիմաստասիրութիւն։ Եւ 'ի սոդտանել զնա ոմանց՝ թէ զի՞ ոչ նմանիս այլոց, տայր պատասխանի. ցորեան բերի, և դարի՞ վաճառեցից։ Իբրև բանք լինէին առաջի նորա վասն պատուհասի Դանայիսեան դստերաց՝ որոց ըստ առասպելաց պատուհաս 'ի վերայ եղաւ ցանգ ջուր հանել ծակոտեալ սակառեաք, տայր պատասխանի, յաւէտ ևս վշտակից լինէի նոցա՝ եթէ դատապարտեալք էին հանել ջուր անօթիւք որք ոչ ծակ էին։

Կեցեալ Բիոնի կեանս իմն դժնդակս՝ անկաւ 'ի մահիճս 'ի Խալդիս քաղաքի, և ծիւրեալ մաշեցաւ ընդ ժամանակս երկայն։ Եւ զի աղքատ էր յընչից, և չէր բաւական 'ի հատուցումն վարձուց դարմանոյ իւրոյ՝ Անտիգոնոս արքայ յղեաց առ նա ստրուկս երկուս, և պարգևեաց նմա պատգարակ՝ գնալ նովաւ յո՛ և կամիցի։

Աւանդեն թէ ստրջացաւ Բիոն 'ի հիւանդութեան իւրում վասն արհամարհելոյն զդիս. և ապաստան եղև առ նոսա թափել զանձն իւր 'ի տառապանաց անտի. գնայր հոտոտէր զառ

'ի պատիւ նոցա զենեալ զոհսն. խոստովան եղև զյանցանս իւր, և անկաւառ կին ոմն վհուկ ձեռն օգնութեան մաղթել 'ի նմանէ. տարածեաց առաջի նորա զթևս իւր և զպարանոց՝ հմայել հմայիւք իւրովք։ Զառաածեցաւ 'ի սնապաշտութիւնս տարապարտս, գաբնազարդ յօրինեաց զդուռն իւր, և յօժարամտեաց առ ամենայն՝ միայն զի պահեցին կեանք իւր, այլ օգտեցաւ և ոչինչ։ Մեռաւ տառապեալն, ընկճեալ 'ի ցաւոցն զոր աղդեցին 'ի նա խրախուանքն առաջինք։

ԵՊԻԿՈՒՐՈՍ

Ծնեալ յերրորդ ամի հարիւր ինն ոլիմպիադին. մեռեալ յերկրորդ ամի հարիւրորդի քսաներորդի. 'ի հասակի ամաց եօթանասուն և երկուց։

Ի ՅՈՒՆԱՒ Եպիկուրոս յԱթէնս 'ի Տիլափդեայց զարմէ՝ 'ի սերնդոց Այասայ առ ժամանակօք հարիւրորդ իններորդ ոլիմպիադին։ Անդստին 'ի չորեքտասան ամաց հասակէ յարեցաւ յիմաստասիրութիւն. ուսաւ ժամանակս ինչ 'ի Սամոս կղզւոջ՝ առ ոտս Պամփիլոսի պղատոնականի. և առ չքաղցրանալ նմա վարդապետութեան նորա, մեկնեցաւ 'ի դպրոցէ անտի, և այլ ոչ ևս աշակերտեցաւ ումեք։ Եւ՝ որք ասեն թէ ուսոյց զքերականութիւն, այլ փուլթով տաղտկացաւ անտի։ Սիրելի էր նմա ընթեռնուլ զգիրս Դիմոկրիտեայ, յորոց վերայ ամբարձ նա զշինուած վարդապետութեան իւրոյ։

'Ի հասակի ամաց երեսուն և երկուց ուսոյց զիմաստասիրութիւն 'ի Մեթելինէ և ապա 'ի Լամպսակոն։ Յետ

ամաց հնգից դարձ արար ԱԹԷՆՍ և անդ սահմանեաց նոր ուսումն։ Գնեաց դրախտ գեղազարդ զոր ինքնին մշակէր, և 'ի նմին հաստատեաց զդպրոց իւր։ Վարէր անդ անդորր կեանս և խնդամիտ ընդ աշակերտաց իւրոց՝ որոց ուսուցանէր 'ի զգնալն իւրում և 'ի վաստակել, և պատուիրէր նոցա 'ի միտ առնուլ սերտութեամբ զոր ինչ նա դաս ասէր։ Խուռն ընթանային առ նա յամենայն կողմանց Ելլադայ՝ լսել 'ի նմանէ, և տեսանել զնա յաջաքինութեան իւրում։

Այր անկեղծ և անխարդախ էր Եպիկուրոս. քաղցր և ընտել առ ամենեսին։ Սիրէր զաղգականս իւր կամակարուց, և տայր նոցա բովանդակ զոր ինչ ունէրն։ Բազում անգամ խրատ տայր աշակերտաց իւրոց՝ վշտակից լինել առ ստրուկս իւրեանց, և ինքն խնամոտ մարդասիրութեամբ վարէր առ իւրսն. թոյլ առնէր նոցա ուսանել. նա և ինքնին մարզէր զնոսա՝ իբրև զաշակերտս։

Կերակուր էր Եպիկուրոսի՝ աշտուծ հաց և ջուր սոսկ, միրգք և ունդք հասունացեալք յիւրում պարտիզին։ Ասէր երբեմն առ ազգականս իւր. բերէք ինձ կաթն և պանիր՝ զի թէ կամիցիմ խրախուսս յարդարեցից անձին

խոյ։ Այս էին կեանք Եպիկուրոսի ասէ Լաերտիոս, առնն որ համարեալն է մոլեալ 'ի հեշտութիւնս։ Կիկերոն 'ի Տուսկուլեան գիրսն իւր յոգւոց հանէ և ասէ. որպէս սահմանաւորեալ էին ցանկութիւնք Եպիկուրոսի։

Աշակերտք նորա նմանողք զտան ժուժկալութեան վարժապետի իւրեանց, շատացեալ ընդովք և կթովք, ոմանք ըմպէին սակաւ ինչ գինի, իսկ այլք ամենեքին ջրով եթե շատանային։ Ոչ կամէր Եպիկուրոս առնել քսակ հասարակաց աշակերտաց իւրոց՝ իբրև զաշակերտս Պիւթագորայ. քանզի՝ ասէր, այն նշան իմն է երկմտելոյ զմիմեանց, քան սերտ միութեան։ Ոչինչ աղնուագոյն համարէր քան զիմաստասիրութիւն. երիտասարդք, ասէր, վաղագոյն որքան հնար է բուռն հարցեն յիմաստասիրութիւն. իսկ ծերոց չէ արժան երբէք վհատել յայնմանէ. քանզի դիտաւորութիւն մոտաց նոցա է հասանել յերջանկութիւն. ապա ամենայն մարդկան հարկ է 'ի նոյն պնդիլ սրտի մտօք։

Երջանկութիւն՝ զորմէ ճառ արկեալ աւանդեն իմաստասէրք՝ է բնական երջանկութիւն. այս է՝ վիճակ խաղաղութեան յոր հնարաւոր իցէ յաստի կենաս հասանել զօրութեամբ

բնութեան։ Եպիկուրոս դնէ զնոյն ոչ
'ի զգալի հեշտութեան, այլ յանդոր-
րութեան ոգւոց, և յառողջութեան
մարմնոյ։ Ո՛չ այլ ինչ իմանայր զբա-
րին ծայրագոյն, բայց թէ՝ 'ի ձեռին
ունել համանգամայն զերկուս զայսո-
սիկ։ Ուստոյց թէ առաքինութիւն սա-
տար լինի յերջանկութիւն կենաց,
քանզի չկայ ինչ քաղցրագոյն՝ քան
կեալ իմաստութեամբ ըստ օրինաց
զգօնութեան. չունել ինչ տեղի ստգը-
տանաց. ոչ պարանել բնաւ 'ի յան-
ցանս. չվնասել բնաւ ումեք. բարե-
գործել ըստ մարթելոյ. 'ի գլուխ ամե-
նայնի՝ մի պակաս գտանիլ 'ի պատշաճ
պարտուց կենացս։ Զսոցա ամենեցուն
զհետ բերէ՝ թէ միայն մարդ զգօն կա-
րէ լինել երջանիկ. և առաքինութիւն՝
անանջրպետ է յանդորր և 'ի խնդա-
միտ կենաց։

Ոչ լուէր 'ի գովութենէ պարկեշ-
տութեան և ժուժկալութեան՝ որք
յանդորրութեան պահեն զհոգի, պա-
հեն զառողջութիւն մարմնոյ. և 'ի հի-
ւանդանալ նորա՝ խնամարկու լինին։
Պարտ է, ասէր, մարդել զանձն առ 'ի
շատ գրել զսակաւն. և այս իսկ է ճո-
խութիւն մեծագանձ՝ զոր ստանալ
հնար իցէ։ Առ այնու՝ զի իրք սովորա-
կանք և նուազունք զնոյն հեշտութիւն

մատակարարեն՝ յորժամ ոք քաղցեալ
լցէ՝ զոր ինչ համադամ կերակուրք
խահադործաց, նա և անպաճոյճ կեանք
հաստատուն առնեն զառողջութիւն.
գլուխ ոչ ծանրանայ. աղատ են միտք,
և յամենայնի ձեռնհաս 'ի հետապընդ-
ութիւն ճշմարտութեան, և պատ-
ճառին որ վարէ զմեզ ընտրել 'ի դոր-
ծոց մերոց զմին քան զմիւսն: Նա ա-
պաքէն խնջոյք եթէ սակաւ ուրեք լինի-
ցին՝ հաճոյական դատին. և դիւր է
հանդուրժել աղեսից բաղդին՝ այնմ
որ գիտիցէ շատ ասել սակաւուն՝ որ-
չափ ընութիւնն ինքնին խնդրեսցէ,
քան որ սովորեալն է յօրանալ 'ի հեշ-
տութեան և 'ի մեծութեան: Ոչ ոք
գիտէ քաջ խորշել զգոյշ կալ 'ի խրա-
խութեանց որք ապականեն զմարմին,
և զհոգին տգեղացուցանեն. և թէպէտ
ամենայն հեշտութիւն ինքնին ցանկա-
լի իմն բարի է, սակայն բացէ 'ի բաց
հրաժարել պէտք են, մանաւանդ յոր-
ժամ որ կից նմին չարիք առաւել լցեն
քան զոր անտի բերկրութիւն. որպէս
և ընդհակառակն՝ շահեկան իմն է
հանդուրժել չարին՝ զորոյ անվրէպ
զհետ գայցէ հատուցումն բազմապա-
տիկ քան զաղէտսն կրեալ:

Այս կարծիք էին նորա ընդդէմ
կարծեացն կիւրենեանց. թէ անցա-

ւութիւն՝ հեշտութիւն է մշտնջենաւոր. և հեշտութիւնք հոգեղէնք յաւէտ զգալի են քան զմարմնոյն. քանզի՝ ասէր, մարմին զառաջամեան ևեթ զգայ զցաւ. այլ հոգին բաց յառաջիկայ չարեացն՝ դիտէ զանցեալն և զապառնին։ Ըստ Եպիկուրոսի՝ մարմնեղէն է հոգիս մեր՝ զի նա՛ է որ շարժէ զմարմին մեր. կցորդի հոգին ամենայն բերկրութեանց և վշտաց նորա. նա ինքն դրդէ զարթուցանէ զմեզ՝ թէև իցեմք 'ի քուն թանձրութեան ընկղմեալ. նա ինքն այլափոխէ զգոյնս գիմաց ըստ այլ և այլ շարժուածոց իւրոց։ Եւ պնդէր հաստատագոյնս՝ թէ անմարթ է հոգւոյն կցորդութիւն ունել ընդ մարմնոյ՝ թէ չիցէ մարմնեղէն։ Քանզի շօշափել և շօշափիլ՝ մարմնոյ միայն գործ է։ Վարկաւ նա ընդ միտս իւր՝ թէ հոգիս մեր անկուածիմն է երբին նիւթոց՝ սփռելոց ընդ մարմին մեր ողջոյն՝ որոյ մասն է և ինքն, որպէս ոտն, ձեռն, կամ գլուխ. սին համաձայն 'ի վերայ բերէ՝ թէ 'ի մեռանել մերում կորնչի և հոգին, սփռի իբրև զգոլորշի, և ըստ օրինակի մարմնոյ ոչ ևս զգայ. այնոր աղաղաւ երկնչել 'ի մահուանէ չէ արժան. քանզի ոչ է չար. վասն զի բարին և չարն 'ի զգացմանն կան։ Արդ մահն զի դա-

դարումն է ամենայն զգայութեանց, ապա ոչինչ է մեզ ընդ նմա և ոչ իւիք հաղորդութիւն. և երբ կեամք մեք, չիք մահ. իսկ 'ի հասանել մահու՝ ոչ և ես կայ մարդն։ Ապաքէն՝ ցորչափ յաշխարհի դեգերիցիմք՝ բնաւորական է սիրել զյերկարելն 'ի նմին ցորվայր ունի զմեզ հեշտութիւն. սակայն և լքանելն զայն՝ մի ինչ դժուարին թուեսցի, ըստ որում թողումք զսեղանս՝ յետ բաւականութեամբ ուտելոյ յայնմանէ։ Սակաւք ոմանք են ասէր որք գիտասցեն 'ի շահ օգտի վարել զառաջիկայ կենցաղս. ամենայն մարդ դժկամակէ ընդ վիճակն յորում կայ և ցանկայ յաջողուածով վայելել 'ի մնացուած կենացն, այլ ըմբռնին 'ի վերահաս մահուանէ մինչև 'ի դլուխ հանեալ զփափաքումն իւրեանց. այդ իսկ է՝ որ հէգ և թշուառական դնէ ըղկեանս մարդկան։ Յաղագս այնորիկ չիք ինչ առաւել դիպողագոյն՝ քան վայելել յառաջիկայս, ոչ միտ եդեալ բնաւ 'ի գալոցսն. չէ արժան մեծ համարել զերջանկութիւն կենացս ըստ ամացն թուոյ, այլ ըստ հեշտութեանն զոր կթեմք անտի։ Կեանք համառօտ և խնդամիտ ցանկալի է քան՝ զերկայնն և զտաղտկալի։ Կերակրոցն ընտրութիւն՝ յանուշակ համն է, և ոչ 'ի բաղմադէմ

խոհարարութեանն։ Թէ համարիմք մեք թէ յետ աստի կենացս կապուտ ճնասցուք 'ի բովանդակ աստի բերկրութեանց, պարտ է ընդ նմին զմտաւ ածել թէ ոչ ևս այլ փափաքեսցուք ստանալ զայնս, որպէս և ոչ յառաջն ունէաք։

Վատութիւն է երկիւղ ունել 'ի բանից պատմելոց վասն դժոխոց։ Կեղծեալ պատուհասք Տանտաղոսի, Սիսիփոսի, Տիտիոսի, Դանաիսեանց՝ կարկատուն առասպելք են՝ հնարեալք ըստ քմաց, առ 'ի ծանուցանել զյուզմունս և զտապնապ տարակուսի վշտացելոցն 'ի կեանս յայս. յաղագս որոյ պարտ է զանց առնել զամենայն ահաբեկութեամբք՝ որք ամբոխեն զանդորրութիւն և զհեշտութիւն կենաց։

Սահմանէր զաղատութիւն 'ի կատարեալ անհոգութեան. ոչ ընդունէր Եպիկուրոս զճակատագիր. ըզդուշակութեանն արհեստ տղայական իմն համարէր. քանզի և յանհնարիցն է կանուխ դիտել ումեք զլինելոցսն՝ որք յընտրութիւն մարդկան ապաստան են, և ոչ ունին հարկաւոր պատճառս։ Բանք Եպիկուրոսի վասն աստուածութեան յամենայնի մեծարոյ են. այս փափաքումն էր նորա, ունել վասն աստուծոյ մտածութիւնս վսե-

մեկանս. արդելոյր յամենայնի՝ մի ընծայել նմա անարժանս ինչ անմահութեան և ծայրապատար երանութեան նորա։ Ասէր, չէ՛ նա ամպարիշտ որ ոչն ճանաչէ զաստուածս պաշտեցեալս 'ի ժողովրդենէ. այլ որ աստուծոց համարի զտարադէպն ամենայն՝ զորս նոցա գրէ խուժանն։ Խորհեցաւ Եպիկուրոս ընդ միտս իւր թէ պարտ և արժան է երկրպագութիւն մատուցանել աստուածութեան վասն գերազանցութեան բնութեան իւրոյ. և մեզ պարտ է վասն այսր միայն պաշտօն հարկանել նմա, և ոչ առ պատուհասին երկիւղն, կամ յուսով օգտի։ Խոտան և անարժան համարեցաւ զսնոտի պաշտամունս յորս մոլեգնի ուամիկն, որք և բաղում այն է զի սադրեն յեղեռնաւոր յանցումն։ Անկրօն անաստուածութիւնն յորում ինքն ծնեալն էր նշաւակս դնէր զդիս իրաց իրաց մարդկեղէն տկարութեանց. իսկ ինքն Եպիկուրոս դաւանէր զնոսին իբրու էակս ոմանս երջանկացեալս որք բնակին 'ի տեղիս փափկութեան, ուր ոչ հողմք հարկանեն, ոչ անձրևէ, ոչ ձիւնէ, ուր շնչէ օդ քաղցրասիւդ, և ծաղէ լոյս գեղանշոյլ, և յաւերժ 'ի վայելս կան երջանկութեան իւրեանց։ Բովանդակ 'ի բաց տարաւ 'ի նոցանէ

լամենայն որ միանգամ աղօտ և դը-
ժուարահաս թուի մտաց մերոց. եղ
ընոսա անկարօտս մեզ յերջանիկ վայելս
իւրեանց, որք ոչն դրդուին ոչ 'ի բա-
րեաց մերոց, և ոչ 'ի չարեաց. և թէ
ասէր խնամ կալցեն վասն մարդկան,
կամ ձեռն մխեացեն յիրակուլթիւնս
աշխարհի, ամբոխի երջանկուլթիւն
նոցա: Զայսր ամենայնի զհետ բերէ՝
թէ անօգուտ է կարդալ զօգնուլթիւն
նոցա, նուիրել աղօթս և պատարագս.
ոչինչ իրք են ընթանալ ապաստանել
առ դիս, և անկանել առ ոտս սեղա-
նոց նոցա յամենայն անցս որ հանդի-
պին. այլ պարտ է ակնարկել ընդ ա-
մենայն պատահարս անդորը և ան-
խռով աչօք: Յաւել ասել Եպիկուրոս
'ի վերայ այսր՝ թէ ոչ բանիւ եկին
մարդիկ յիմացումն աստուածոց, և եր-
կիւղն զոր երկնչին 'ի խաղաղասէր
էակաց անտի՝ բազում այն է զի յա-
ռաջ գայ 'ի գիշերային երազոց՝ յորս
հանդիպի նոցա տեսանել արհաւիրս
ահաւորս: Թուի իմն թէ այս ցնորք
գիշերականք դժնդակս իմն սպառնայ-
ցեն մեզ՝ զուդաչափս ահագին մեծու-
թեան իւրեանց: Տեսանեմք զնոսա՝ որ-
պէս ինչ երևոյթքն ցուցանեն՝ զի 'ի
գլուխս հանեն գործս մեծահրաշս. և զի
դարձեալ այդ ցնորք երևին յամենայն

ժամանակի, և են իրք բազումք՝ որոց անծանօթ քօղարկին պատճառք, իմա՛ յորժամ տգէտք ոմանք մարդիկ պշուցեալ նային ընդ արև, ընդ լուսին, ընդ աստեղս, և ընդ նոցուն բարեկարգեալ շարժութիւնս, և անդէն հաստատութեամբ պնդեն յանձինս թէ դոքին ամենայն էակք են մշտնջենաւորք և ամենակարողք։ Դնեն ըստ կայս բնակութեան նոցա 'ի միջոցի հաստատութեան՝ յորոց լսեն զթընդիւն որոտմանց, և տեսանեն փայլատակել, կարկտել, անձրևել և ձիւնել. համարին զնոսա վերակացուս 'ի ղեկավարել այսր սքանչելի կազմածոյ աշխարհիս. և 'ի նոսա հանեն զամենայն իրաց զպատճառս որոց գործք անյայտութեամբ թագուցեալ են 'ի նոցանէ։ Ասի, ասէ, սկիզբն կալաւ յաշխարհի յոլովութիւն բազնաց յաճախելոց ընդ ամենայն տեղիս, և պաշտօնն մատուցեալ աստուածոց՝ սկզբնաւորեաց 'ի սուտ և 'ի սնոտի ցնորից յայսցանէ։

Յաղագս հրաշապատում վայրացն յորս բնակութիւն է դից՝ Լուկրետիոս լատին քերթող զակատեալ յեպիկուրեան վարդապետութիւն՝ ասէ թէ չունին բնաւ տեղի զուդակշռութեան ընդ մեծակառոյց ապարանս զորս տե-

սանեմք յայսմ աշխարհի։ Նիւթ գոյացութեան անձանց աստուածոց՝ նրբին է յոյժ. որպէս՝ զի անկանիլ ոչ ընդ զգայութեամբ մերով. նա մանաւանդ և դժուարին ուրեմն է մեզ ակնարկել ընդ նոսա հոգեղէն աչօք։ Հարկ է զի այդ տեղի բնակութեան նոցա պատշաճական գոցի անօսր բնութեան իւրեանց։

Զուգաձայն են ամենայն իմաստասէրք՝ թէ ըստ հաստատուն օրինաց բնութեանս յոչնչէ ոչինչ լինի. և ոչինչ երբէք յոչէութիւն դառնայ. ուսուցանէ մեզ փորձն՝ զի բաղադրին մարմինք իւրաքանչիւր 'ի մնացուածոյ այլոց բաղմաց, ապա է ինչ հասարակաց 'ի նոսա՝ որ կոչի նիւթ առաջին։ Սակայն տարաձայնութիւն է կարծեաց՝ 'ի խնդրել անդ զլինչութիւն այդր առաջին նիւթոյ։ Եպիկուրոս՝ հիւլէ համարեցաւ զայնս, այսինքն մարմինս՝ մանուանս անբաժանելիս, յորոց ասէ յօրինեալ կազմեալ է ամենայն։ Ընդ հիւլէից դնէ և այլ սկիզբն երկրորդ, այն է՝ դատարկ. այլ ոչ թէ իբրու սկիզբն կառուցիչ մարմնոց, այլ իբրև սատար շարժման. քանզի՝ ասէ, եթէ ոչ էին մանր տեղիք դատարկք սփիւռ ընդ ողջոյն բնութիւնս, բովանդակ իսկ այս զանգուած նիւթեղէն ձու-

լեալ միանայր 'ի մի մարմին, վասն որոյ չլինէր և ոչ մի նորոգ գոյացութիւն։ Զհիւլէս մշտնջենաւորս համարէր. և թիւ և հանգամանք ձևոց նոցա արտաքոյ է սահմանի մտաց, թէպէտ յինքեանս սահմանափակք են. սակայն յիւրաքանչիւր ձևս յօրինուածոցն բովանդակին հիւլէք անբաւութեամբ։ Զբնաւորական ծանրութիւն նոցա պատճառ դնէր շարժութեան նոցա՝ որք 'ի բաղխելն ընդ միմեանս՝ կռուին յիրեարս. և ըստ բազմադիմի զուդաւորութեանն կառուցանին յաղդս իւրաքանչիւր, որք և առ հասարակ գործ են դիպուածոյ՝ որք ըստ ձևս ձևս կերպարանէ զմիաւորութիւն նոցա։ Օրինակէր զհիւլէս նշանագրաց աթուլթայից՝ որք շաղկապեն բառս զանազանս ըստ զանազանեալ շարահիւսութեանն. զոր օրինակ՝ կաՊէրՊ. ՊաՊէր, զատուցեալ են 'ի ձայնն, այլ նման 'ի տառսն. նոյնպէս և հիւլէք բաղկացուք մարմնոց՝ ըստ այսմ օրինակի տրամադրութեանն և ըստ այլոյ՝ զանազանս կառուցանեն մարմինս։ Սակայն հանդերձ այսու ամենայնիւ՝ ըստ նորա՝ ոչ ամենայն հիւլէ անխտիր մտանէ 'ի բաղկացութիւն ամենայն մարմնոց։ Օրինակ իմն. որք նիւթեն կծիկ ասուի, ոչ թէ նոյնք պնդիցեն

դարձեալ զանդամանդ. որպէս և 'ի տառս է տեսանել. յորոց ոմանք ոչ մտանեն յամենայն ձայնս։ Զայս մանրամասն մարմինս համարէր նա լինել 'ի հանապազորդ շարժութենէ. յաղագս այնորիկ՝ ոչինչ կայ յիրաց բնութեան որ միշտ 'ի նմին պայմանի մնասցէ. ոմանք նուազեն, և այլք առաւելուն յաւելուածովք նուազելոցն. ոմանք հնանան, և կէսք նորոգին. ուստի ամենայն ինչ մի միայն ժամանակ ունի յաշխարհի. և ըստ չափու ապականութեան իրաց իրաց՝ հիւլէքն զատուցեալք յայնցանէ՝ յաւելուն յայլս, և բոլորեն այլ մարմին՝ աննման առաջնոյն զոր լքին։ Ըստ այսմ օրինակի ոչինչ վատնի կորստեամբ, թէպէտ և ամենայն իրաց մի միայն ժամանակ գոյ. և ամենայնն բովանդակ աներևութացեալ տեսանի՝ իբրու դերևացեալ 'ի գոյութենէ։

Վարկաւ Եպիկուրոս թէ էր երբեմն յորում զատուցեալ անջրպետեալ էին յիրերաց հիւլէքն ամենայն, և ըստ դիպուածոյ հանդիպելոյն առ իրեարս՝ կառուցին աշխարհս անհամարս, որք վատնեալ սպառին յետ իւրաքանչիւր սահմանադրեալ ժամանակին՝ որ հրբով, իբր թէ մօտ քերեալ արևու զեղեկրաւ՝ կիղուցու զնա. որ ահաւոր

թնդմամբ, որպէս զի 'ի քթթել ական տապալել մեծամարմին այսր աշխարհի. և որ այլ ևս ազգի ազգի տարազու, յորս ծախեալ ջնջեսցի աշխարհ, այլ յաւերակաց նորա փուլթանակի կազմեսցի այլ աշխարհ, յորում նոր կենդանասցին կենդանիք։ Իսկ յորում մեքս բնակեմք թուի իմն թէ շեղջակոյտ է աւերածոց մեծի և ահաւոր սասանութեան՝ կանխաւ եղելոյ. որում վկայք են՝ գոգեալ ծոցք, երկայնեալ ձգեալ գոտիք լերանցն երկնաբերձից, խաւ 'ի խաւոյք ապառաժից՝ որոց ոմանք խոտորնակի ձգեալ կան, կէսք ստորէ 'ի վեր, և այլք առ 'ի շեղ. այսմ դարձեալ վկայ է անհարթութիւն ընդերաց երկրի, գեոքն ստորերկրեայք, լիճք և անձաւք. զսոյն ստուդէ անհաւասարութիւն մակերևութի երկրիս, խրամատեալ 'ի ծովուց, 'ի լճաց, 'ի կրճից, 'ի կղզեաց և 'ի լերանց։

Անհուն և անսահման կարծեաց Եպիկուրոս զտիեզերս. և թէ այս բոլոր մեծաղանգուած ոչ մէջ ունի, և ոչ ծայր, և յոր կողմն սահման դիցես աշխարհի՝ տակաւին մնան յընթանալ միջոցք անսպառք՝ առանց զվախճան գտանելոյ։

Պարտ է, ասէ ըստ իւրում հեթա-

նոսութեանն, մոռանալ զանձն և թա-
փել 'ի մոաց՝ որպէս զի հաւատացուս-
ցուք մեզ թէ դիք արարին զաշխարհ
վասն սիրոյ մարդկան. քանզի և ան-
տեղի իմն է թէ կացեալ նոցա անգործ
ընդ ժամանակս բազում՝ այնուհետև
յօժարեսցին փոխել զառաջին հանգա-
մանս կենաց իւրեանց, և 'ի նոյն ձեռ-
նարկել. և այն զի դիւրին է խորհուրդ
ընդ միտ ածել՝ տեսեալ զբազմադէմ
զաշխարհիս այսորիկ զթերութիւնս,
թէ այդ չէ գործած աստուածոց։ Ա-
սաց՝ թէ երկիր ծնոյց զմարդիկ և զայլ
կենդանիս՝ որպէս ծնուցանէ ցայսօր
մկունս, խլուրդս, որդունս և զայլ ա-
մենայն միջատս։ Երկիրս, ասէ, 'ի սկզբ
բնաւորել իւրում՝ յորժամ նոր էր
տակաւին՝ բարգաւաճէր և բորակոտ,
որ տակաւ տակաւ ջեռուցեալ յարե-
ւու՝ դալարեցաւ խոտովք և թփովք.
բազում ուռոյցք մանունք երևեցան
զերեսոք նորա իբրև սունկս, որք յետ
ժամանակաց 'ի վերայ անցանելոյ իբ-
րև հասունացան այն ուռոյցք՝ հեր-
ձաւ որ զնոքօք մաշկն էր. և 'ի դուրս
ելանէր յայնցանէ կենդանի փոքրիկ՝ որ
առ սակաւ սակաւ մեկնեալ 'ի դիձին
տեղւոյն յորում ծնեալն էր, սկսանէր
'ի տուրևառ շնչոյ. իսկ երկիր 'ի վայ-
րաց անտի ծննդեան նոցա հոսեաց

վտակս կաթին 'ի սնունդ այնց մանունց կենդանեաց ։

'Ի յոգնախուռն կենդանեաց աստի՝ էին և հրէշք ոմանք անոտունք, անգլուխք, անբերանք, այլք՝ որոց անդամք մած էին ընդ իրեարս, մինչ ոմանց սպառել վասն անճարակ մնալոյ, և այլոց՝ զի ոչ կարէին բաղմասերիլ զուգաւորութեամբ. մնացին միայն որք բարեկազմք էին մարմնով, և նոցուն սերունդք աճեցին մինչև ցաւուրս մեր ։ Յայն առաջին հանդամանս աշխարհի՝ ցուրտ և տօթ, և յեղանակել օդոց չէին իբրու զայժմուս. բովանդակ ամենայն իրք էին 'ի սկզբան իւրեանց լնաւին այլ ինչ. այն մարդիկ ելեալք յերկրէ հզօրագոյնք քան զոր մեք ենք. և մարմինք նոցա պատեալ էին ստեւով իբրև զվարազուց. ոչ նեղէր զնոսա ոչ կերակրոցն խոտանութիւն, և ոչ եղանակացն խստութիւն. չև ծանուցեալ էր առ նոսա կիրառութիւն հանդերձից. գետնախշտի լինէին մերկս՝ 'ի տեղիսն ուր հասանէր նոցա խաւար գիշերոյ. ամրանային ընդ թըփովք՝ առ 'ի պատսպարութիւն յանձրևէ. միաբան ընկերութիւն չէր կառուցեալ առ նոսա. ամենայն մարդ անձին իւրում միայնոյ դէտակն կալեալ ունէր, և վասն անձին շահու

վաստակէր։ Բուսուցանէր յայնժամ երկիր անտառս ընդարձակս՝ որոց օր զաւուրբ աճէին ծառատունկք՝ յորոց ուտէին մարդիկ կաղինս և այլ ևս միրգս և մեղր վայրենի։ Եւ զի բազում անգամ դէպ լինէր նոցա մարտնչել ընդ կինճս և առիւծս, այնր աղագաւ բաղումք 'ի մի խմբեցան՝ անքոյթ մնալ յերեսաց ամենի գազանաց։ Կանգնեցին խուղս, հետամուտ եղեն որսոյ, և ճարտարամտեցին կազմել հանդերձս 'ի մորթոց անասնոցն զոր սպանանէին։ Այր իւրաքանչիւր ընտրեաց իւր կին, և եկաց ընդ նմա 'ի միասին բնակութեամբ. 'ի զուգաւորութեանց անտի ծնան նոցա որդիք՝ որք գգուանօք իւրեանց և ամոքելով ընդելացուցին ըղվայրագ բնաւորութիւն հարց իւրեանց։ Աւասիկ այս է սկիզբն ընկերութեան։ Բարեկամացան ընդ դրացիս, և դադարեցին 'ի խուելոյ զիրեարս։

'Ի լեզուախօսութեան մասին՝ անբարբառք էին զառաջինն, և մատամբ ցուցանէին զոր ինչ կարևորն էր. յետ այնորիկ առ 'ի պէտս դիւրութեան իւրեանց՝ հնարեցին անուանս իրաց իւրաց ըստ պատեհ ժամուն վարժապետելոյ, յորոց կազմեցաւ նոցա խրթնաձաձուկ իմն բան և լեզու

յարտայայտութիւն խորհրդոց իւրեանց։

Յաղագս հնարագիտութեան արհեստից՝ այսպէս խորհրդաբանէր Եպիկուրոս։ Մինչև գտեալ մարդկան զհուր, յարեգակնէ ուսան զպէտս հրոյ. քանզի առ տապով ճառագայթից արևու խորովէին զմիսն բերեալ յորսոյ. սակայն երբեմն շանթ անկեալ յերկնէ 'ի կիզանուտ խմն նիւթ՝ 'ի կրակ վառեաց զնա, յայնժամ մարդիկ որոց չէր անծանօթ պէտք օգտի կրակին, փոխանակ շիջուցանելոյ զնա՝ խնամ կալան պահպանել զնա, այր իւրաքանչիւր առեալ տարաւ անտի մասն մի 'ի խրճիթ իւր, և յայնմ հետէ եփէր 'ի նոյն զոր ինչ ուտելոցն էր։

Ապա այնուհետև կառուցեալ ամբարձան քաղաքք, և բաշխեցաւ երկիր յիւրաքանչիւր ստացողս, այլ սնհաւասարութեամբ. ոմանց շատ, և ոմանց սակաւ. որք հզօրագոյնք էին և աչալուրջք ընտիր բաժինս անձանց գրաւեցին. զայնու ժամանակօք կարգեցան թագաւորք, և բռնացեալ նուաճեցին զմարդիկ ընդ ձեռամբ իւրեանց. շինեցին ամուրս բերդից՝ ընդդէմ արշաւանաց սահմանակցաց։ Ընդ ժամանակսն ընդ այնոսիկ՝ զէնք էին

մարդկանն՝ ձեռք իւրեանց, եղնգունք, ատամունք, քարինք և գաւազանք. այ-սոքիւք զինուք պայքարէին և մրցէին ընդ իրեարս։ Իբրև դէպ լինէր նոցա ըստ աղդելոյ պատճառաց զանազանից կիզուլ զանտառս ուրեք ուրեք, անդ ընդ առաջ լինէր նոցա տեսանել բովս հալեալս որ 'ի դուրս սորէր յերակաց երկրի, և 'ի փոսս փոսս հոսեալ պրն-դանայր, պայծառութիւն փայլման այնր հրահալ նիւթոյն ապշեցուցա-նէր զնոսա. 'ի հալելոցն հասու գտան՝ թէ զօրութեամբ հրոյ մարթ է վարել զայն յոր պէտս իրաց և լինիցի. ան-դէն առ նմին խորհուրդ կալան 'ի գոր-ծած զինուց պատկանել զայն. այնր աղագաւ առաւ'ել ընտրէին զպղինձ քան զոսկի, քանզի զէնք ոսկեղէնք նուազ կտրէին քան զպղնձիս. ապա շինեցին սանձս երիվարաց, խոփս՝ առ 'ի գործել զերկիր, և զայլ ամենայն ինչ առ հասարակ որոց պէտս ունէին։ Մինչչև գտեալ երկաթոյ՝ գործէին զգեստս յիրաց յիրաց խառնեալս 'ի մի-մեանս. այլ յետ պատկանելոյ նոցա զերկաթ առ ամենայն պէտս. հնարե-ցան գործել կերպաս ասուի և հիւս-կէն 'ի դիւրութիւն մարդկան։

Դարձեալ՝ զարգաւանդութիւն և զմշակութիւն անդաստանաց ինքնին

բնութիւնն գլխովին վարդապետեաց։ Անդստին 'ի սկզբանէ աշխարհի զննեցին մարդիկ՝ թէ կաղինք անկեալ 'ի ծառոյ՝ բուսուցանեն այլ ծառ կաղնի նմանատեսակ. սին հանգոյն 'ի տեղւոջն ուր կամեցան կաղնիս ունել՝ սերմանեցին անդանօր զպտուղս նոցուն։ Զնոյն նոյնպէս տեսին և յայլ ամենայն տունկս. յայնմ հետէ սկսաւ ամենայն մարդ սերմանել զոր ինչ անձին իւրում պիտոյն էր. և զի տեսանէին թէ ամենայն ինչ առաւել ածէ՝ երբ քաջ մշակեալ լցէ դեռինն՝ սկիզբն արարին հպատակել երկրագործութեան։

Մինչև ցայն վայր զօրացեալ կալեալ էր բռնութիւն և յաջողակութիւն. այլ իբրև 'ի հանդէս եկ ոսկի, և մարդիկ խաբեցան 'ի նշոյլ դեղոյ պայծառութեան նորա, ջան 'ի գործ արկին ճոխանալ նովին. և ոմանք հարստացան յոյժ յոյժ, յորոց 'ի փառս և 'ի պերճութիւն զուարթացեալ ժողովրդեան՝ լքին զառաջին զթագաւորն՝ որոց տիրեալն էր ուժով և բռնութեամբ, և յարեցան 'ի մեծատունս։ 'Ի սուր արկեալ սպանան թագաւորք, և կերպարան պետութեան իշխանութեանն փոխեցաւ 'ի ժողովրդական։ Կարդեցան օրէնք և ընտրե-

ցան գատաւորք՝ զգուշանալ 'ի պա-
պանութիւն նորին, և խնամ ունել 'ի
գործ հասարակաց մատակարարու-
թեան։

Որչափ այն առաջին ժողովուրդք
ընդելանային 'ի կատաղի վայրագու-
թենէն իւրեանց, յաւելոյր 'ի նոսա
միաբան ընկերութիւն. ընթրիս և
խնջոյս տային իրերաց և կերեալ յա-
գեցեալ՝ խնդամտէին յունկնդրու-
թիւն քաղցրաձայնութեան թռչնոց,
և ջանացեալ նմանել նոցա՝ յօրինէին
և ինքեանք երգս՝ 'ի նոյն նուագ յար-
մարութեան ուսելոյ 'ի հաւուցն։

Հեշտացուցիչ շնչիւն հողմոյ 'ի
բաղխելն և յանցանել ընդ եղեգունս՝
հնարս ուսոյց մարդկան յօրինուածոյ
սրնգաց. և սքանչացումն ընդ հրաշա-
կերտս երկնից յօժարեաց զնոսա յաս-
տեղագիտութիւն։

Եղծեալ ապականեաց ադահու-
թիւն զընդաբոյս բարութիւն բարուց
նոցա. մարտ եղեալ կռուեցան ընդ մի-
մեանս՝ առ 'ի մերկել զյաղթահարեալն
'ի ճոխութեանցն զոր ունէր։ Այդ
իսկ ծնոյց զբերթողս, որք 'ի չափս բա-
նից հաղներդութեանց նուագելին
զարարուածս դիւցազանց որ 'ի պա-
տերազմունսն անդ։ Դա ինքն ստեղծ
և դեղագործ նկարիչս, որք ճշգրիտ

և Ներսեսեանցիցն զնոսա, Ի վերոյ ասելոցն՝ խոստովանիմ և զանազանիմ՝ զորոյ ասացան զնոցանն, թէ զի որոյին ներգո Ի զրուխ Հաստատելոյն Թեան Հաստատեալ զորՀատն զոր բանադատութիւն Կորուստ Թեանն Հաստատեալ էր. Դեռ և Ի վերոյ ասելոյն ևս Ներսեսեանցիցն Ի ոչՀատութիւն ելեալ։

Ա. ՆերՀակեան ասասցուս ոչ բանից՝ թէ ոչ ևս ոգեմ՝ Ձեռացանել երկիր մարգս, ասիս Ձս, շուն Ձս, ասց պատասխանի Աղիկուրոս, թէ ապատիցուս բնգնատրութիւն երկրի, ելն Ձանգացեալ ասէր՝ ոչ Ձեռնի որդիս, անպտասան՝ Ի բարձանց Հնոյ ոչ Հերիսպորձեալ իրրև Հնաբնոցի՝ ատաւել պտղաբերէ յատաչին ամանն քան զՀին։ Ի խլել զՁատատունկս անտառի՝ ոչ ևս այլ նմանիս իրրև զկորզեալսն բուսացանէ զեռինն, այլ ատունկս անուկատանս և ապտղաս, փուչ և մանատս։ Ո՞ զիարդ թերևս ասկաւ ինձ ինձանէն յերկրէ ճարտարք, նապատակք, ազուէտք, վարագք, և այլ կենդանիք կատարեալք, այլ զի Ի տեղիս Հեռաւորս լինին այդոսիկ, և անձանաթք են մեզ, վասն այն կարծեմք վարկպարագի՝ թէ անՀնարին է լինել երացդ։ Ապա նոքին արենակի թէ տեսանեմք մեք

զմկունս՝ ծնանել 'ի մկանց միայն, ոչ հաւատացուք թէ ծնանին մկունք և 'ի հողոյ երկրի։

Առ այլ իմաստասէրս տարաձայնութիւն է 'ի քննութեան կանոնին որով վարիմք 'ի հետազօտութիւն ճըշմարտութեան. իսկ Եպիկուրոս զսոյն հաստատեալ էր 'ի խորհուրդս իւր՝ թէ չէք ինչ յաւէտ ստուգագոյն քան զոր ընդունիմք մեք 'ի զգայութեանց. համեմատութեամբ ևեթ խելամտեմք իսկութեան իրաց. քանզի և չէք այլ նշանակ յորոշումն ճշմարտին 'ի ստութենէ։ Միտքն, ասէ, զառաջինն անդ չունի և ոչ մի գաղափար, և է տախտակ ինն յղկեալ. արդ յորժամ յօրինեալ կազմին մարմնեղէն գործարանք՝ տպաւորին անդ ճանաչմունք տակաւ տակաւ 'ի ձեռն զգայութեանց, սովին ձգի 'ի հեռագոյնս՝ մտածել զնոսա. և սովին պատրի՝ մօտ կարծելով զհեռաւորս, կամ զոր բնաւ իսկ չկայ. և ընդ հակառակն՝ զգայութիւնք մեր միայն զառաջիկացեալսն ունին ըմբռնել. ապա ընդ գոյութիւն իրաց առաջիկայից ոչ խաբին։ Յաղագս այսր, ասէ, անմիտ է որ ոչ խնդրէ յայսպիսիս զազդեցութիւն զգայութեանց և 'ի պատճառս ապաւինի։

Ընդ օտարոտի շաւիղս 'ի միմեանց

ընթանան իմաստասէրք 'ի բացատրու-
թիւն հանդամանաց տեսութեան. վար-
կաւ Եպիկուրոս՝ թէ միշտ կեղևին պա-
տեանք իմն յիրացն երևելոց և յուղին
ընդ օդս, և դովին օրինակաւ տեսանեմք
մեք զկրս նիւթականս։ Հուր, ջերմու-
թիւն, ձայն, լոյս, և այլ իրք զգալիք,
ասէ, չեն լոկ ըմբռնմունք հոգւոյ, այլ
այս ամենայն՝ իսկապէս արտաքոյ մեր
են՝ ըստ օրինակին որով տեսանին 'ի
մէնջ. և մասն ինչ 'ի նիւթոյ անտի
ձևացելոյ և հասելոյ առ մեզ՝ են հոտ,
ձայն, ջերմութիւն, լոյս, չունելով
ինչ յարաբերութիւն ընդ կենդանիս։
Օրինակ իմն. մասնկունք մանունք զա-
տուցեալք հանապազօր 'ի ծաղկանց
բուրաստանի շուրջ շուրջանակի ընուն
զօդդ անուշակ հոտով, նման այնմ զոր
զգայ մարդ՝ եթէ զգնայցէ յայնժամ
'ի պարտիզի անդ։ 'Ի հնչել զանդակի,
որ շուրջ զնովաւ օդն յերերի կայ՝ նը-
ման ձայնից լսելոց 'ի մէնջ յայնժամ։
Յամբառնալ արևու 'ի վերայ տիեզե-
բացս՝ է յօդդ շողիւն իմն նշուլագեղ՝
նման լուսոյ զոր յայնժամ տեսանեմք։
Դարձեալ՝ յորժամ մի և նոյն իր այլ
օրինակ երևութանայ երկուց զանա-
զան կենդանեաց, յառաջ գայ այդ 'ի
զանազանութենէ ներքին կազմու-
թեան երկուց կենդանեացդ. զոր օրի-

նակ թէ սաղարթք ուռենւոյ դառն են 'ի քիմն մարդոյ, և քաղցր 'ի բերան այծի, քանզի զանազան են ներքին հանգամանք մարդոյ և այծի։

Ստոյիկեանք որք աշակերտեալս դաւանէին զանձինս անմեղկելի առաքինութեան, այլ Իսկապէս՝ լցեալ էին սնոտի ամբարտաւանութեամբ, վառեցան տարապարտ նախանձու ընդ բազմութիւն բարեկամաց և աշակերտաց հետևողաց Եպիկուրոսի, որոյ վարդապետութիւն բազմաք զատուցեալ անջրպետեալ էր 'ի բանից վարդապետութեան նոցա։ Գուն 'ի վերայ եղին ամենայն ոգւոյ պնդութեամբ՝ վատանուն երևեցուցանել զնա, նա և սերմանեցին 'ի գիրս իւրեանց զբպարտութիւն բազում ընդդէմ նորա։ Այսր աղագաւ որք եկին յետոյ ժամանակաւ, և 'ի բանից ստոյիկեանց ծանեան զԵպիկուրոս, խաբեցան 'ի բանից նոցա, և անգոսնեցին իբրև շուայտոտ և հեշտասէր զայրն ժուժկալ, որոյ կեանք և գնացք յամենայնի չափաւորեալ էր։ Սուրբն Գրիգոր Հռովմայ հայրապետ պանծալի վկայութիւն արձանացուցանէ 'ի գովեստ անարատութեան կենաց այսր իմաստասիրի. „Եպիկուրոս, ասէ այս վարդապետ Եկեղեցւոյ, ասաց թէ հեշ-

տուլթիւն նպատակ է առ որ ձգեալ ընլթանան ամենայն մարդիկ. այլ զի մի համարեսցին լթէ զզգայական հեշտուլթեանցն ասիցէ. եկաց ողջախոհ և բարեկարգ կենօք, հաստատելով զոր վարդապետեացն „:

Զի առ յանձն Եպիկուրոս միջամուխ լինել 'ի գործ հասարակաց իշխանուլթեան, միշտ գեր 'ի վեր համարեցաւ զհանդարտուլթիւն կենաց քան զյուզումն գործառնուլթեանց: Արձանք կանգնեալք յաթենացւոց 'ի պատիւ նորա՝ շատ իսկ ցուցանէին զմեծարանս իւրեանց առ այս իմաստասէր: Ամենեքին որք յարեցան 'ի նա՝ ոչ լքին զնա, բաց 'ի Մետրոդորոսէ ումեմնէ. որ լթողեալ զնա անց 'ի պղատոնեան աշակերտուլթիւն յաւուրս Կարնէադեայ. այլ վեց ամիս ևեթ յամեաց անդր. և դարձաւ անտի առ Եպիկուրոս, և մնաց առ նմա մինչև 'ի մահ իւր. զի մեռաւ յառաջ քան զվարժապետ իւր: Դպրոցն Եպիկուրեան անազատ պայծառանայր նա և յորժամ խափանեալ էին այլ ամենայն աղանդք իմաստասիրաց:

Հասեալ Եպիկուրոսի 'ի հասակ ամաց եօթանասուն և երկուց՝ հիւանդացեալ անկաւ 'ի մահիճս յԱթէնս՝ յորում ոչ դադարեաց 'ի վարդապե-

տութենէն. ախտ նորա միզարդելու-
թիւն էր, որ ազդէր 'ի նա ցաւ ան-
հանդուրժելի. սակայն նա երկայն-
մտութեամբ տանէր ամենայնի։ Իբրև
զդաց զմերձենալ մահուն իւրոյ՝ ե-
թող յաղատութիւն զոմանս 'ի ստըր-
կացն. հրաման ետ վասն ստացուա-
ծոց իւրոց. կարգեաց տօն կատարել
յաւուր ծննդեան իւրոյ և ծնողաց իւ-
րոց 'ի տասներորդ աւուր Գամելէոնի
ամսոյ, ըստ ալթենացւոցն համարոյ։
Ետ զպարտէզ իւր և զգիրս Երմակո-
սի մետելենացւոյ՝ որ յաջորդեացն
նմա. պարտս սահմանեալ 'ի վերայ նո-
րա՝ աւանդել զայն ամենայն որոց կալ-
ցեն զայն նախադահութիւն։ Գրեաց
թուղթ առ Իդոմենոս՝ օրինակ զայս.
„Աւասիկ՝ շնորհք աստուածոց, հասի
'ի կատարած և յերջանիկ օր կենաց
իմոց. տանջեալ եմ յաղետից հիւան-
դութեանս իմոյ՝ որ կրծեալ մաշէ զա-
ղիս իմ, քան զոր կարծեմ՝ ջիք ինչ
դառնագոյն։ Սակայն 'ի վիշտս ցաւոց
իմոց ճաշակեմ մխիթարութիւն պա-
տարուն՝ 'ի յիշել անդ իմում զդլուխս
վարդապետութեանցն որովք ճոխա-
ցուցի զիմաստասիրութիւն։ Աղաչեմ
զքեզ վասն սիրոյդ զոր ցուցեր առ իս
և առ վարդապետութիւն իմ՝ խնամ
կալցես որդւոց Մետրոդորոսի„։

Յետ ջորեքտասան աւուրց հիւանդութեանն եմուտ Եպիկուրոս՝ի ջերմ բաղանիս զոր առ՝ի սոյն պէտս ետ պատրաստել. ընդ մտանելն խնդրեաց բաժակ մի գինի անապակ, արբ զայն, և անդէն փչեաց զհոգին՝ խրատելով զբարեկամս իւր և զաշակերտս և զորս մօտ կային՝ յիշատակել զինքն և զխրատս իւր։ Դիպաւ մահ նորա յառաջնում ամի ՃԻԷ ողիմպիադին։ Սգացին զնա համօրէն աթենացիք սուգ մեծ։

ԶԵՆՈՆ

Մեռեալ 'ի ՃԻԹ օղիմպիադին։

ԶԵՆՈՆ գլուխ ստոյիկեանց աղանդոյն էր 'ի Կիտիա քաղաքէ 'ի Կիպրոս կղզւոյ։ Մինչև յօժարեալ յիրս ինչ՝ խորհուրդ եհարց ընդ պատգամախօսն՝ որոմ օրինակաւ հնար ի՞նչ գտանել զերջանկութիւն։ Պատասխանի եղև նմա 'ի դարբիրայէն. փոխարկեսջ՛ը 'ի գոյն մեռելոց։ 'Ի միտ առ Զենոն 'ի բանից աստի թէ հրամանք են դից՝ պարապել յընթերցումն գրոց նախնեաց. կամակար սիրով յօժարեցաւ 'ի սոյն, պարապեցաւ 'ի նոյն ջանս և յուսումն ամենայն փութոյ պնդութեամբ՝ առ 'ի գլխաւորել ըՀրաման պատգամախօսութեանն։

'Ի դարձի իւրում երբեմն 'ի Փիւնիկեայ՝ ուր գնացեալ էր գնել ծիրանի, խորտակեցաւ նաւն յորում էր՝ առ ափամբ նաւահանգստին Պիրէոնի. այս կորուստ ընչից 'ի ծանր տխրութիւն համակեաց զնա. դարձաւ յԱթէնս, եմուտ առ գրավաճառ ոմն, և

առ սփոփել 'ի հոգոց սրտին առեալ ընթեռնոյր զերկրորդ գիրս Քսենոփոնի, յափշտակեցաւ յընթերցումն գրոցն, և մոռացաւ զտագնապ ամբոխելոյ ոգւոցն։ Եհարց ցտէր գրոցն, յո՞ բնակեն արքն զորոց խօսի գիրս. և զի անդէն առ ժամն անցանէր ընդ այն տեղի Կրատէս կիւնիկեան, զնա եցոյց գրավաճառն, և ասէ. Ահաւասիկ. երթ զհետ դորա։ Էր յայնժամ Զենոն ամաց երեսնից. գնաց զկնի Կրատեսի, և անտի յառաջ աշակերտեցաւ նմա։ Ամոթխած և ծանրաբարոյ էր Զենոն, և անհնարին էր նմա հաւասարել տարադէպ լրբութեանց Կիւնիկեանց։ Զգացեալ Կրատեսի՝ թէ այդ կրճիմն արկանէ նմա, կամեցաւ բժշկել զնա 'ի մտացն երկմտութենէ. ետ 'ի ձեռս նորա պոյտն մի լցեալ ոսպամբ, և հրամայեաց նմա տանել զայն ընդ գիւղն Կերամիկոն։ Ամաչէր կորանայր Զենոն, և թաքչէր զի մի՞ ոք տեսցէ զինքն. ասէ ցնա Կրատէս. զի՞ խուսես այ ստահակ, յորժամ զոր արարերդ ոչինչ վնասեաց քեզ։

Հաճոյական էր Զենոնի՝ իմաստասիրութիւն՝ վասն որոյ յաճախ շնորհ ունէր զբաղդէն՝ որ ծովահեղձոյց կորոյս զամենայն ինչս իւր։ Ո՛րպէս յաջողակ էին ինձ, ասէր, հողմք որք ըղ-

նաւն խորտակեցին։ Ուսաւ աւելի քան զամն տասն առ ոտս Կրատեսի, սակայն ոչ անկղնոտացաւ յանամօթութիւն կիւնիկեանց. այլ յորժամ թողոյր զնա՝ զի երթեալ յարեսցի 'ի Ստիլպոն մեգարացի, Կրատէս կալաւ զվերարկուէ նորա, և արդելոյր բռնութեամբ. ասէ ցնա Զենոն. ո՞վ Կրատէս՝ ընդ ունկն միայն կալեալ արդելուն զայր իմաստասէր, համոզեա՛ զիս արդարացի փաստիւք թէ վարդապետութիւն քո լաւագոյն է քան զՍտիլպոնին. ապա թէ ոչ՝ թէև 'ի բանտ արկցես զիս, այո՛ մարմին իմ առ քեզ իցէ, այլ միտք իմ ցանդ առ Ստիլպոնի շրջեսցի։

Դեգերեալ Զենոնի զամն տասն առ Ստիլպոնի, Քսենոկրատայ և Պողեմոնի, ապա մեկնեցաւ 'ի Նոցանէ, և Ճարտարեաց նոր իմաստասիրութիւն. սփռեցաւ ընդ Եղլադայ համբաւ նորա, և 'ի սուղ ժամանակի հռչակաւոր գտաւ քան զամենայն իմաստասէրս աշխարհին։ 'Ի տեղեաց տեղեաց ընթանային առ նա բազումք՝ յարիլ 'ի նա, և աշակերտիլ նմա. և զի ուսուցանէր Զենոն 'ի սրահի ուրեք, որ յունարէն Աղօա լսի. յայնմանէ հետեւողք նորա Ստոյիկեանք անուանեցան, որ թարգմանի Սրահեանք։

Մեծապատիւ էին փառք Զենոնի յաչս աթենացւոց, մինչ զի աւանդապահ կացուցին զնա փականաց քաղաքի իւրեանց. կանգնեցին անդրի յանուն նորա, և նուիրեցին նմա պսակ ոսկի։ Աքանչացեալ էր Անտիգոնոս արքայ ընդ այրդ ընդ այդ. յամենայն նուագի յերթալն իւրում յԱթէնս՝ ոչ զանց առնէր գնալ լսել զդասս վարդապետութեան նորա, նա և յաճախ գնայր 'ի սեղան Զենոնի, կամ ընդ իւր տանէր ճաշել առ Արիստոկղի քնարահարի։ Սակայն յետ այնորիկ հրաժարեցաւ Զենոն գնալ 'ի խնջոյս կամ յերեկոյանս՝ զի մի յոյժ դիւրընտել լինիցի։ Բռնադատեաց զնա Անտիգոնոս բաղում անգամ՝ ընդ իւր տանել զնա. չէառ Զենոն յանձն զայն ուղեղնացութիւն. առաքեաց փոխանակ իւր զՊերսէոս և զՓիլոնիդէս, և արար նմա պատասխանի այսպէս „Այս ինձ բերկրութիւն է՝ տեսանել զքեզ յօժարամտեալ առ դիտութիւնս. քանզի և սէր իմաստասիրութեանն է որ 'ի բաց առնէ զքեզ 'ի հեշտութեանց զգայութեան, և տայ դիրկս արկանել զառաքինութեամբք։ Սակայն թէ ծերութիւն իմ և հիւանդոտ բնութիւն ոչ խափան առնէին ելանելոյ ինձ աստի, ոչ զանդաղէի

դալ առ քեզ որպէս փափաքեսդ. և արդ զի այս անհնար է՝ ահա յղեմ քեզ զերկուս 'ի բարեկամաց իմոց, արս իմաստունս իբրև զիս, և առողջս քան զիս։ Թէ սիրով մտադիւր կենաց կցորդ լինիցիս ընդ դոսա, և անսայցես որոց առ 'ի դոցանէ պատուիրանաց, տեսցես՝ զի ոչինչ պակասէ քեզ առ բովանդակ ստանալ զերջանկութեան վայելս »։

Խորշեալ զդուշանայր Զենոն յամբարհաւաճ պերճութենէ. ոչ շրջէր 'ի հրապարակի ընկերօք աւելի քան զերկուս. մանաւանդ երբեմն դրամ ևս բաշխէր ամբոխին խռնելոյ զնովաւ՝ զի մի նեղեսցեն զանձն իւր։ Եւ եղև յաւուր միում իբրև կուտեցաւ զնովաւ ժողովուրդ բազում 'ի սրահին յորում ուսուցանէր, եցոյց նոցա ձեռամբ զգունտ փայտեայ՝ որ սեղանոյ ինչ հատոր էր, և ասէ. Այդ երբեմն 'ի միջոցի սրահիս էր, այլ զի մի խափան լինիցի՝ բարձաւ 'ի միջոյ։ Նոյնպէս և դուք 'ի բաց ելէք աստի, և մի կրճիմն արկանէք ինձ։

Ըստ մարմնոյն հանդամանացն բարձրահասակ էր, և վոխտ մարմնով, և մորթն թխադոյն. յաղագս այնորիկ ոմանք առին անուանել զնա՝ Արմաւենի Եգիպտոսի։ Գլուխ նորա կորա-

ցեալ էր 'ի մի կողմն ուսոյն, սրունքն թանձունք, և դանդաչոտք. զգենոյր հանդերձ թեթև, դիւրագին՝ որչափ հնար էր գտանել։ Կերակուր էր նորա՝ հաց, թուղ, մեղր, և գինի անոյշ. իսկ եփեալ ինչ ամենևին ոչ ուտէր։ Ժուժկալութիւն նորա մեծ էր և գովեալ. զի և յորժամ բանք լինէին գովել զոք վասն ժուժկալութեան՝ գոգցես յառակս էր ասել. Ողջախոհ է քան զ Զենոն։ Գնացք նորա հանդարտ ընթաց, միտք յաջողակ, և բնաւորութիւն ծանր։ 'Ի խօսելն իւրում կնճռէր վճակատն և ծամածուէր զբերանն։ Սակայն 'ի վերայ այսր ամենայնի յակումբ բազմականաց զուարթուն էր, և բերկրեցուցանէր զամենեսին։ Իբրև հարցանէին ցնա զպատճառ այլափոխութեանս՝ տայր պատասխանի. լովիաս բնութեամբ դառն է, այլ առ վայր մի թողեալ 'ի ջուր՝ քաղցրանայ։ Համառօտ էր 'ի բանս իւր. զորոյ յորժամ զպատճառն խնդրէին՝ ասէր. պարտ է զի և սիւղոբայք բանից իմաստնոց համառօտագոյնս լիցին՝ եթէ հնար ինչ իցէ։ Յորժամ դէպ լինէր նմա կշտամբել զոք՝ յամենայն նուազի սակաւ բանիւք վճարէր, և անուղղակի յայլոյ դէմն։ Դիպաւ ելբեմն 'ի ինչոյս ուրեք որկորեայ առն ումեք՝ ո-

րոյ լափլիղեալ զամենայն զկերա-
կուրսն՝ նքթեալ թողոյր զսեղանա-
կիցսն։ Զենոն կալաւ առաջի իւր
ձուկն մի մեծ, յորմէ ոչ կամէր մասն
հանել ումեք. իբրև տիգոք աչաց նայէր
ընդ նա որկորեայն, ասէ Զենոն.
զի՞նչ կարծիցես զչհանդուրժել սեղա-
նակցացդ, եթէ իմում որկորաժեռու-
թեանս օր մի ոչ ներես։ Իր երբեմն
երիտասարդի ումեմն թախանձանօք
ժտել 'ի նմանէ զպատասխանին բա-
նից ինչ որում ոչ էր բաւեալ 'ի խե-
լամտութիւն. իսկ Զենոն ետ ածել
հայելի մի. և 'ի նայել երիտասարդին
ընդ հայելին, ասէ Զենոն. կարծիցես
թէ այդոքիկ հարցմունք պատշաճա-
կանք դոցին երեսաց քոց։ Անպիտան
զրոյցք ատենաբանից՝ ասէր, նման են
դահեկանաց Աղեքսանդրիոյ, որք գե-
ղեցիկ են ըստ երևութին, այլ նիւթ
բովուցն արժէ և ոչինչ։ Անարդու-
թիւն ծանր է պատանեաց՝ սնուցա-
նել զնոսա յընդունայնամտութեան.
այլ պարտ է 'ի քաղաքականութիւն
և 'ի պարտուպատշաճ գործս մարզել
զնոսա։ Յաւելոյր ասել դարձեալ.
Կափեսոս տեսեալ զմին յաշակերտաց
իւրոց փքացեալ ամբարտաւանու-
թեամբ, ապտակ եհան նմա և ասէ,
թէպէտ և դեր 'ի վեր ամբարձեալ ես

զայլովք, այլ ոչ վասն այդր եղեր մե-
ծարոյ. սակայն թէ դու քեզէն մեծա-
րոյ ի՞ցես, յայնժամ և վերադոյն ի՞ցես
քան զայլս։ Հարցեալ ոմ է բարեկամ
քո. ետ պատասխանի. Ա՛յլ ոչ ես։
Գտաւ 'ի կոչունս ուրեք եղեալս 'ի
պատիւ հրեշտակացն Պտղոմէոսի ար-
քայի. մինչդեռ 'ի բազմականին էին՝
խօսեցաւ և ոչինչ. զարմացան ընդ այն
հրեշտակքն, հարցին ցնա. ունիցիս ա-
սել ինչ ցարքայ Պտղոմէոս. ետ պա-
տասխանի. ասացէք ցնա. է՛ ասա այր՝
որ գիտէ լռել։

Այս առած էր ստոյիկեանց՝ նպա-
տակ դիտաւորութեան գործոց մար-
դոյ՝ է կեալ ըստ բնութեան. կեալ
ըստ բնութեան՝ է չգործել բնաւ ընդ-
հակառակս թելադրութեան բանին՝
որ է օրէնք ընդհանուր և հասարակաց
առ ամենայն մարդիկ։ Ամենայն մար-
դոյ պարտք են ինքնին ջանալ յառա-
քինութիւն՝ առանց հատուցման և
փոխարինի ակն ունելոյ։ Առաքինու-
թիւն միայն կարէ երջանկացուցանել
զմարդ. և որք ճշմարտիւ ճոխացեալքն
են առաքինութեամբք՝ են 'ի վայելս
երջանկութեան՝ նա և 'ի վիշտս նեղու-
թեանց։ Զի՞նչ օգտակար քան ըզ-
պատշաճականն. և չկայ գործ եղեռ-
նաւոր՝ որ շահեկան ի՞նչ։ Զդայական

հեշտութիւնք չեն բարի. քանզի ան-
պատշաճք են և ամենայն որ անպատ-
շաճն է՝ չմարթի լինել բարի։ Այր
իմաստուն՝ չերկնչի ուստեք. չունի
պերճութիւն, զի միօրինակ ակնարկէ
ընդ փառս և ընդ նախատինս։ Նկա-
րագիր է իմաստնոյ՝ ծանրաբարոյ լի-
նել և անկեղծ. իմաստնոյ չեն արդելք
ըմպել գինի, սակայն և արբենալն չէ
օրէն, զի մի բնաւ հեռասցի յաչաց նո-
րա ղեկավարութիւն մտաց իւրոց։
Պարտք են նմա մեծարել զդիս, զոհել
նոցա, և ժուժկալել յամենայն ան-
կարգութենէ։ Մի՛այն իմաստնոյ պատ-
կանաւոր է բարեկամութիւն. պարտ
է նմա միջամուխ լինել 'ի գործս պե-
տութեան առ 'ի խափանել զտարա-
դէպ զօրացեալ անկարգութիւնս, և
յորդորել զքաղաքացիս յառաքինու-
թիւն։ Նմա ևեթ անկ է կցորդել 'ի
գործ հասարակաց մատակարարու-
թեան, զի նորա միայնոյ գործ է որո-
շել սահմանաւ ընդ բարին և ընդ
չարն. նա միայն անստոգիւտ է և ան-
ձեռնհաս ՚ի սխալել ումեք. դարձեալ ի-
մաստունն միայն անվրդով մնայ յիրս՝
յորս այլք պշուցեալ ընդարմանան։
Առաքինութիւնք ամենայն իբրև ա-
դոյզք շղթայից վերերաց ունին անան-
ջըրպետութեամբ, և անհնար է ստա-

նալ զմին՝ առանց և զայլս ստանալոյ։ Զիք միջոց ընդ առաքինութիւն և ընդ ախտ. զի զոր օրինակ հարկաւորաբար ամենայն ինչ ուղիղ է, կամ խեղաթիւր, նոյնպէս և ամենայն գործք կամ բարի են, և կամ չար։ Միայն իմաստունն է բարեբաստիկ. ոչ իմիք կարօտի. պարտ է նմա արկանել զանձն 'ի տանջանս դժնդակս վասն հայրենեաց իւրոց և բարեկամաց. խիթայ և ոչ ուստեք. բարերար է համօրէն աշխարհի. նա միայն բաւական է առ ամենայն՝ յորժամ չգտանիցին մարդիկ բաւական առ այնս։ Օրինակի իմաստունն քաջավարժ դերասանի որ միօրինակ կերպարանէ յանձին զԱգամեմնոն և զԹերսիտէս։

Զամենայն բարի գործս, որպէս և զչարս հաւասար դնէին ստոյիկեանք, որք ոչ առաւելուլ կարեն, ասէին, և ոչ նուազել. քանզի ոչ մի ինչ առաւել ճշմարիտ է քան զոր էն ճշմարտիւ, և ոչինչ առաւել սուտ քան զոր սուտն է իսկապէս։ Եւ զոր օրինակ այր որ խոտորեալ ելցէ յուղիղ ճանապարհէն ասպարիզաւ միով, ոչինչ առաւելութիւն ունի քան զխոտորեալն երկերիւր ասպարիզք, նոյնպէս որ միով ևեթ յանցեաւ մեղք՝ ոչ ասի առաքինի առ այնու որ զԹեաց յեղեռն

չարաչար։ Կամէր Զենոն՝ թէ կանայք հասարակաց լիցեն առ իմաստունս. և իւրաքանչիւր վարիցի ընդ որում և պատահեսցի. զի այս միայն է հնարք խափանելոյ զնախանձ և զկասկածանս շնութեան. և ամենայն ոք համարի զմանկտին իբրև սեփական իւր ծնունդս։

Ստոյիկեանքն մի ևեթ գերագոյն էակ դաւանէին, սակայն զանազան են, ասէին, անուանք նորա. է զի անուանի Նախախնամութիւն. ուրեք Հոգի. և ուրեք երբէք Արամազդ։ Այդ էակ՝ անմահ է, բանաւոր, կատարեալ, երանեալ և անմահն ամենայն չարի։ Դա ինքն է աջն արարիչ՝ ինքնամակալ աշխարհի և որոց 'ի նմա։ Կրկին դնէին սկիզբն արարող և կրող. իմա՝ Աստուած և Աշխարհ։ Համարէին ըզնիւթն բաժանական յանհունս։ Մի միայն է, ասէին, աշխարհս. և այն դնդաձև՝ քաջայարմար 'ի շարժումն։ Համարէին ընդ Պիւթագորայ և Պղատոնի՝ թէ հոգևորեալ է աշխարհս 'ի հոգեղէն իմն գոյացութենէ սփռելոյ ընդ ամենայն մասունս նորա. և այդ գոյացութիւն անանջրպետ է յԱստուծոյ. և այդ հոգի համանդամայն ընդ աշխարհի 'ի մի կենդանի բովանդակի, որոյ գլխաւոր անդամք են եր-

կին և արև։ Զետեղեալ է աշխարհս
'ի միջավայրի անսահման դատարկու-
թեան։ Աշխարհս լի է բովանդակ, զի
նիւթն լուծական որ առ ամենայն
ձևս պատկանի՝ ընու զմիջոցս թափուր
թողեալս 'ի մեծամեծ մարմնոց որք ոչ
կարեն յամենայն կուսէ մածանել յի-
րեարս՝ վասն անհարթութեան մակ-
երևութից իւրեանց։ Ապականացու-
է աշխարհս, քանզի, ասեն, ապակա-
նացու է բոլորն՝ թէ իւրաքանչիւր 'ի
մասանց նորա ապականի. արդ իւրա-
քանչիւր մասն աշխարհի լուծանի յա-
պականութիւն, ապա և աշխարհս հա-
մօրէն։ Հաստատուն աստեղք շարժին
ընդ շարժութեան երկնի։ Արեգակն
մարմին է հրեղէն՝ մեծաքանակ յոյժ
քան զերկիրս, զի կոնոնաձև արկանէ
զստուեր նորա։ Արեգակն և այլ աս-
տեղք մնանին 'ի դոլորշեաց շնչելոց
յերկրէ և 'ի ծովէ։ Հասու եղեն
ստոյիկեանք ճշմարիտ պատճառի խա-
ւարմանց արևու և լուսնի, և որոտ-
մանց և փայլատականց։ Անբնակ կար-
ծէին զզրտային գօտին 'ի սակս սաս-
տիկ սառնամանեաց. նոյնպէս և զայ-
րեցածն վասն անհանդուրժելի տօ-
թոյն։

Ասիտոն Ստոյիկեան խնդրէր անհետ
առնել զտրամաբանութիւն. զորոյ

զնրբին ձեռնարկս օրինակէր յոստայն սարդի, որ հանճարոյ գործ թուի և կարգաւորեալ, այլ ամենևին անօգուտ է։ Ընդ հակառակն Խրիւսիպպոս մեծապէս գովութեամբ ներբողէր զտրամաբանութիւն. մինչև յառակս լինել, ասել՝ եթէ դից պիտոյ լիցի տրամաբանութիւն, զ Խրիւսիպպոսին միայն վարեսցեն 'ի պէտս։

Զգեցան աւուրք կենաց Զենոնի մինչև ցիննսաւն և ութ ամ՝ առանց խօթութեան. ցաւ և սուգ 'ի մահու նորա վարակեաց զամենեսին։ Իբրև լուաւ զայն Անտիգոնոս արքայ վշտացաւ դառնապէս, յոգւոց եհան և ասէ. Դիք արդարք՝ որպիսի սքանչելի տեսարան կորուսի ես։ Եւ իբրև հարցանէին ցնա զպատճառ այնչափ պատուասիրելոյ զիմաստասէրն զայն, ասէր. քանզի բովանդակ զոր ինչ պարգևեցի նմա՝ ոչ կարացին բռնադատել զնա 'ի գործ ինչ վատութեան։ Յղեաց հրեշտակս յԱթէնս՝ զի թաղեսցեն զ Զենոն 'ի Կերամիկոն աւանին։

Ոչ նուազ և աթենացիք աշխարեցին զվախճան Զենոնի։ Գահերիցունք իշխանաց ներբողեցին զնա 'ի հրապարակի յետ մահու նորա. և զի այս հաստատուն օրինօք կատարեսցի, վճիռ հատին օրինակ զայս. „Քանզի Զենոն

որդի Մնասականի կիտիացի զամն բա-
զումն եկաց 'ի քաղաքիս՝ ուսուցանել
զիմաստասիրութիւն, և յամենայնի
վկայեցաւ այր առաքինի, զի ցանդ
իրախուսեաց 'ի հանդէս առաքինու-
թեան զերիտասարդս զորս ունէր ընդ
ձեռամբ, և զի վարք նորա միաբան էին
ընդ վարդապետութեան իւրում, հա-
ճոյ թուեցաւ ժողովրդեան՝ պաշտօն
գովութեան հարկանել նմա 'ի հրա-
պարակի, և պարգևել նմա պսակ ոսկի՝
որում արժանաւոր իսկ էր՝ վասն ըղ-
գօնութեան իւրոյ և ժուժկալութեան.
և կանգնել նմա շիրիմ հասարակաց
ծախիւք 'ի Կերամիկոն աւանի։ Հրա-
մայէ ժողովուրդն՝ ընտրել ոստիկանս
հինգ ՅԱԹԷՆՍ՝ ինամ ունել յորի-
նուածոյ պսակին և շիրմին։ Զայդ
պատուէր հրամանի արձանագրեսցէ
աշխարհամար դպիրն պետութեան 'ի
սիւնս երկու, յորոց մին դիցի 'ի ճե-
մարանին, և երկրորդն 'ի Լիկէոնի։
Յանձն լիցին անյապաղ կարևոր դրամք
առ 'ի սոյն գործ՝ առ որ յանձին ու-
նիցի զհոգ գործոյ հասարակաց մատա-
կարարութեան. որպէս զի ամենայն
մարդ խելամտեսցէ յանձին իւրում,
թէ ամենացիք դիտեն մեծարել զար-
ժանին պատուոյ և 'ի կեանս իւր-
եանց, և յետ մահուն,,։

Տուաւ այս վճիռ հրամանի 'ի ժամանակին երբ իշխան էր յԱթէնս Արրենիդաս, քանի ինչ աւուրքք յետ մահուն Զենոնի, զորոյ զհանգամանս մահուն այսպէս աւանդեն։ Մինչդեռ ելեալ երթայր 'ի դպրոցէն, զարկաւ ուրեք, և բեկաւ մատն նորա։ Համարեցաւ զայս՝ նախապատում ազդեցութիւն 'ի դէց առ դուրս հասելոյ մահուն. եհար զերկիր ձեռամբն և ասէ. Դո՛ւ կոչես զիս, աւասիկ պատրաստ եմ։ Եւ անդէն անյապաղ փոխանակ բուժելոյ զմատնն՝ անձամբ զանձն խեղդեաց։ Քառասուն և ութ ամք էին յորմէ հետէ անխափան ուսուցանէր զիմաստասիրութիւն, և վաթսուն և ութ ամաք յառաջ յերեսնամեայ հասակի աշակերտեցաւ յուսումն իմաստասիրութեան՝ ընդ ձեռամբ կիւնիկեանն Կրատեսի։

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԳԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
*Ա. ՄԱՍԻ

ՑՈՒՑԱԿ

ՎԱՐՈՒՑ ԻՄԱՍՏԱՍԻՐԱՑ

	Էջ
Թալէս.	5
Սոլոն.	18
Պիտակոս.	52
Բիաս.	63
Պերիանդր.	72
Բիդոն.	83
Կղէոբուլոս.	91
Լոպէդեմիդէս.	97
Անաքսարխոս.	105
Պիւթագորաս.	112
Հերակղիդոս.	126
Անաքսագորաս.	133
Դեմոկրիտոս.	144
Լեմբեդոկղ.	153
Սոկրատ.	162
Պղատոն.	197
Անդիսթենէս.	212
Արիստիպպոս.	222
Արիստոտէլ.	238

Բանիոկրատէս . 261
Դիոգենէս . 269
Կրատէս . 301
Մենոն . 310
Ռէոն . 318
Խրիսիպոս . 325
Օնէսն . 354



Tip. ed Edit. i RR. PP. Arm. di S. Lazzaro presso Venezia.

154